53. *Մաղաքյան Ն. Մ.,* Խուլիգանության օրենսդրական հիմնախնդիրները, Պետություն և իրավունք, թիվ 4 (34), Երևան, 2006, էջ 34-39:
54. *Առաքելյան Մ. Վ.,* Թրաֆիքինգի դեմ պայքարի քրեաիրավական երաշխիքները Հայաստանի Հանրապետությունում, Իրավագիտության հարցեր, թիվ 4, Երևան, 2006, էջ 57-64:
55. *Õà÷èêÿí À. Ì.,* Ñðàâíèòåëüíûé àíàëèç îáùèõ ïîëîæåíèé èñïîëíåíèÿ íàêàçàíèÿ â âèäå ëèøåíèÿ ñâîáîäû â Ðåñïóáëèêå Àðìåíèÿ è Ðîññèéñêîé Ôåäåðàöèè. Óãîëîâíî-èñïîëíèòåëüíîå ïðàâî, Íàó÷íûé æóðíàë ÔÑÈÍ Àêàäåìèè ïðàâà è óïðàâëåíèÿ ÐÔ, Ì., N1 (03), 2007.
56. *Õà÷èêÿí À. Ì.,* Îñîáåííîñòè ñîöèàëüíîé ñðåäû â ìåñòàõ ëèøåíèÿ ñâîáîäû. ×åëîâåê: ïðåñòóïëåíèå è íàêàçàíèå, Íàó÷íûé æóðíàë ÔÑÈÍ Àêàäåìèè ïðàâà è óïðàâëåíèÿ ÐÔ, Ì., N2 (57), 2007.
57. *Ջհանգիրյան Կ. Գ.,* Հոգևոր մշակույթը և կանանց հանցավորությունը, Իրավագիտության հարցեր, թիվ 1, Երևան, 2007, էջ 36-39:
58. *Դիլբանդյան Ս. Ա.,* Կրկնակի դատապարտման և պատժման անթույլատրելիության սկզբունքի էությունը և նշանակությունը, Իրավագիտության հարցեր, թիվ 3, Երևան, 2006, էջ 82-85:
59. *Դիլբանդյան Ս. Ա., Ղուկասյան Հ. Հ.,* ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը սահմանադրական բարեփոխումների լույսի ներքո, Պետություն և իրավունք, թիվ 2-3 /32-33/, Երևան, 2006, էջ 33-40:
60. *Դիլբանդյան Ս. Ա., Մելիքյան Ռ. Ն.,* Վերաքննությունը քրեական դատավարությունում, Պետություն և իրավունք, թիվ 1 /35/, Երևան, 2007, էջ 47-53:
61. *Դիլբանդյան Ս. Ա., Մելիքյան Ռ. Ն.,* Վճռաբեկությունը քրեական դատավարությունում, Պետություն և իրավունք, թիվ 1/35/, Երևան, 2007, էջ 53-58:
62. *Ղազինյան Գ. Ս., Մելքոնյան Դ. Մ.,* Քրեական հետապնդման հարուցում, Պետություն և իրավունք, թիվ 1/35/, Երևան, 2007, էջ 23-32:
63. *Ղազինյան Գ. Ս., Թաթոյան Ա. Հ.,* Նախնական դատական լսումները քրեական դատավարությունում, Պետություն և իրավունք, թիվ 1/35/, Երևան, 2007, էջ 41-47:
64. *Ղուկասյան Հ. Հ., Մելքոնյան Դ. Մ.,* Տարբերակված դատավարական ձևը և դրա առանձնահատկությունները, Պետություն և իրավունք, թիվ 1/35/, Երևան, 2007, էջ 32-41:
65. *Հարությունյան Ա. Ռ.,* Հետաքննության և նախաքննության ինստիտուտի որոշ հայեցակարգային հիմնահարցերը ՀՀ քրեադատավարական բարեփոխումների համատեքստում, Պետություն և իրավունք, թիվ 1/35/, Երևան, 2007, էջ 16-23:
66. *Օհանյան Լ. Պ.,* Կրիմինալիստիկական հաբիտոսկոպիա, Գիտելիք, թիվ 24, Երևան, 2006, էջ 27-38:
67. *Îãàíÿí Ë. Ï.,* Íåêîòîðûå âîïðîñû çàêîíîäàòåëüíîãî ðåãóëèðîâàíèÿ, îáíàðóæåíèÿ è èññëåäîâàíèÿ òåëåñíûõ ñâîéñòâ è ïðèçíàêîâ ëè÷íîñòè. Êîíñòèòóöèîííîå ïðàâîñóäèå, íîìåð 2, Ìîñêâà, 2006, ñòð. 49-57.
68. *Åíãèáàðÿí Â. Ã.,* Êðèìèíàëèñòè÷åñêàÿ õàðàêòåðèñòèêà ïîíÿòèÿ ìàññîâûõ áåñïîðÿäêîâ, Ñáîðíèê íàó÷íûõ ðàáîò /Ñîâðåìåííûå òåíäåíöèè óïðàâëåíèÿ ðàññëåäîâàíèåì ïðåñòóïíîñòè/ Ìîñêâà, 2006, ñòð. 52-55:
69. *Åíãèáàðÿí Â. Ã.,* Îñîáåííîñòè ïîíÿòèÿ ìàññîâûõ áåñïîðÿäêîâ: Օրենք և իրականություն, թիվ 12, Երևան, 2006, էջ 43-45:
70. *Ղազինյան Ա. Գ.,* Եվրոպական Միության օրենսդրության կարգավիճակը ԵՄ Սահմանադրության նախագծում, Պետություն և իրավունք, 2-3 /32-33/, Երևան, 2006, էջ 40-53:
71. *Կիրակոսյան Ե. Գ.,* Îáû÷àé â ñèñòåìå èñòî÷íèêîâ ìåæäóíàðîäíîãî ïðàâà: Իրավագիտության արդի հիմնախնդիրները, ԵՊՀ, 2007, էջ 194-219:
72. *Վարդանյան Վ. Վ.,* Ժողովրդավարական կառույցների և իրավունքի գերակայության ամրապնդումը, «Եվրոպական հարևանության քաղաքականությունը. Հայաստանյան որոշ նախապատվություններ», Խմբ. Գ. Նովիկովա, Ս. Սարգսյան /թարգ. Ա. Մելյան/, «Ամրոց գրուպ», Երևան, 2007, էջ 24-46:
73. *Երիցյան Ա. Հ.,* "Ïðîáëåìû ìåæäóíàðîäíîãî ñîòðóäíè÷åñòâà â áîðüáå ñ íàðêîìàíèåé è íåçàêîííûì îáîðîòîì íàðêîòèêîâ" /Âåñòíèê N1 Ìåæïàðëàìåíòñêîé àññàìáëåè ãîñóäàðñòâ-ó÷àñòíèêîâ ÑÍÃ, 2006, ñ. 77-79.

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ *Գևորգյան Էմիլ Սոսի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ*
Դեկանի տեղակալ՝ *Մեմերջյան Հենրիկ Հարությունի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ*

Ֆակուլտետի մասնագիտությունները եւ մասնագիտացումները

Շիֆր	**Մասնագիտություններ՝**
0116	Կենսաբանություն
0122	Կենսաֆիզիկա
0123	Կենսաքիմիա

Մասնագիտացումներ՝ (մագիստրատուրա) կենսատեխնոլոգիա, էկոլոգիա և բնության պահպանություն, սննդակենսաբանություն, բուսաբանություն, կենդանաբանություն, մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա, գենետիկա և բջջաբանություն, կենսաինֆորմատիկա

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ եւ թղթակից անդամներ

1. Դավթյան Միսակ Արշամի
2. Պողոսյան Կարեն Սուրենի
3. Օսիպյան Լիա Լևոնի
4. Գևորգյան Էմիլ Սոսի (թղթակից անդամ)
5. Հարությունյան Ռուբեն Սիքայելի (թղթակից անդամ)
6. Թռչունյան Արմեն Համբարձումի (թղթակից անդամ)

Պատվավոր կոչումներ ունեցողներ

1. Դավթյան Միսակ Արշամի, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ
2. Փաշոսյան Գերասիմ Հարությունի, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ
3. Օսիպյան Լիա Լևոնի, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ
4. Թռչունյան Արմեն Համբարձումի, ՀՀ նախագահի մրցանակի դարփնեկիր

Կրթական աստիճան, մասնագիտություն	*Ուսանողների թիվը՝* 513							
	I կուրս		II կուրս		III կուրս		IV կուրս	
	պպ	վճ	պպ	վճ	պպ	վճ	պպ	վճ
Բակալավրիատ								
Կենսաբանություն	15	43	14	40	14	25	14	31
Կենսաքիմիա	12	15	13	18	11	17	13	8
Կենսաֆիզիկա	12	12	12	14	11	8	10	14
Ընդամենը	39	70	39	72	36	50	37	53
Մագիստրատուրա								
Կենսաբանություն	3	28	3	23				
Կենսաքիմիա	2	17	2	15				
Կենսաֆիզիկա	5	10	1	8				
Ընդամենը	10	55	6	46				

2006/2007 ուստարում հրատարակվել են

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
3	-	-	5	109	170

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ *8*

ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Նանագյուլյան Սիրանուշ Գերասիմի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Օսիպյան Լիա Լևոնի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ամբիոնի պատվավոր վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
2. Աբրահամյան Զուլիետա Հայկի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
3. Բադալյան Սուսաննա Սիշայի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
4. Ավագյան Քնարիկ Գուրգենի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Մուրադյան Լարիսա Գուրգենի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
6. Կարապետյան Նելլի Հակոբի, դասախոս

Համատեղողներ

1. Գրիգորյան Կարինե Մարտինի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ
2. Ջաքարյան Նարինե Հմայակի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ
3. Էլոյան Ինեսսա Սակեդոնի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ
4. Պողոսյան Աստղիկ Վիկտորի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ

5. Շահազիզյան Իռեն Վաչագանի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ

Ոխումնաօժանդակ աշխատակիցներ

1. Բոխյան Մարգարիտա Վարդգեսի
2. Մնացականյան Էլեոնորա Աղաջանի
3. Շահազիզյան Իռեն Վաչագանի
4. Պետրոսյան Աիդա Միքայելի
5. Ջաքարյան Նարինե Հմայակի
6. Պողոսյան Ատոիկ Վիկտորի

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Սննդարդյունաբերության մեջ օգտագործվող համեմունքների մանրէաբանական անվտանգության գնահատականը (պետական ֆինանսավորում):	Գրիգորյան Կ. Մ.
2. Սնկերի կուլտուրայի հավաքածուի հիմնադրումը, պահպանումը սնկաբանական և կենսատեխնոլոգիական հիմնարար ու կիրառական հետազոտություններ իրականացնելու նպատակով (պետական ֆինանսավորում):	Բաղալյան Ս. Մ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Ներմուծվող տարաշխարհիկ համեմունքների մանրէաբանական և թունաբանական տոքսիկոլոգիական հետազոտումը:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է համեմունքների 45 նմուշ՝ ներմուծված տարբեր երկրներից: Անջատված միկրոմիցետները պատկանում են 4 ցեղի՝ Aspergillus, Penicillium, Alternaria, Mucor: Դոմինանտ է հանդիսանում Aspergillus ցեղը: Նշված ցեղից անջատվել է 6 տեսակ, որոնցից ավելի հաճախ հանդիպում են A. niger խմբին պատկանող տեսակները: Ուսումնասիրված 25% նմուշներից անջատվել և իդենտիֆիկացվել է A. carbonarius տեսակը, որը հանդիսանում է օխրատոքսին Ա-ի պոտենցիալ պրոդուցենտ: Alternaria ցեղից անջատված միակ տեսակը՝ A. alternata, օժտված է ածի բարձր ինտենսիվությամբ:

Համեմունքների աղտոտվածության աստիճանը խիստ համահարաբերվում է (կոռելյացիա) ջրի ակտիվության աստիճանի հետ (aw): Նշված տեսակներում չեն հայտնաբերվել Coliforms և Salmonella խմբի բակտերիաներ: Հետազոտված նմուշներում (70%) ընդհանուր բակտերիաների թիվը չի համապատասխանում պահանջարկին ($5x10^5$ cfu/g):

Թեմա 2. Կուլտուրաների հավաքածուն լրացվում է արժեքավոր դեղասնկերի նոր տեսակներով և շտամներով: Շարունակվում են սնկային կուլտուրաների տվյալների բազայի ստեղծման աշխատանքները: Մշակվում և ներդրվում են կուլտուրաների երկարատև պահպանման նոր ու մատչելի մեթոդներ:

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Phylogeographical and systematic investigation of ectomycorrhizal fungi in Armenian forests. (CRDF/NFSAT. Project ARB-1-3230-YE-04).	Նանագյուլյան Ս. Գ.

2. ANSEF Grant No 802-NS-biotech “Tart Cherries as a Possible High Source of Antioxidants”.	Գրիգորյան Կ. Մ.

Թեմա 1. ԱՄՆ-ի Յուտայի նահանգի պետական համալսարանի հետ համատեղ սկսվել են աշխատանքներ Հայաստանում հայտնաբերված էկտոմիկորիզային սնկերի գոյքագրման և գենետիկական կենսաաշխարհագրական ուսումնասիրության վերաբերյալ: Ստեղծվել է մակրոսկոպիկ սնկերի Inocybe ցեղի տեսակների համակարգչային տվյալների բազա: ԴՆԹ-ի անջատման համար ստացվել են նյութեր Ռուսաստանի, Գերմանիայի, Ավստրիայի, Ճապոնիայի, ԱՄՆ-ի հերբարիումներից: Ընթացքի մեջ են ստացված նմուշների ԴՆԹ-ի անջատման աշխատանքները:

Թեմա 2. Անցկացվում է բալի տարբեր թթու սորտերի սննդային արժեքի որոշումը ըստ հետևյալ ցուցանիշների՝ անտոցիանների և ֆենոլային միացությունների գումարային քանակի, հակաօքսիդանտների: Հետազոտվել է տարբեր տեխնոլոգիական ցուցանիշների ազդեցությունը վերամշակված մթերքների /հյութերի, չոր մրգերի, ջեմերի/ գույնի երանգի և ինտենսիվության վրա՝ համաձայն միջազգային ստանդարտների:

Աշխատանքի մի մասը իրականացվում է Միչիգանի համալսարանում և «Cherry-marketing» կազմակերպության լաբորատորիայում՝ կոլլաբորատոր դոկտոր Արա Կիրակոսյանի մասնակցությամբ:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	1	-	-	2	18

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Դանիելյան Ֆելիքս Դանիելի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Ջիվանյան Կարինե Արամի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Յավրույան Էդուարդ Գրիգորի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
3. Եղիազարյան Էդուարդ Սուրազի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Վարդանյան Լուիզա Կոնստանտինի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Հովհաննիսյան Լաուրա Եղիշի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ
6. Կարապետյան Աննա Ֆելիքսի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ

Համատեղողներ

1. Ասլանյան Աշոտ Վարդգեսի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ
2. Պապով Գեորգի Յուրիի, կենս. գիտ. թեկնածու, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Գրիգորյան Աննա Վլադիմիրի

2. Ղազարյան Աստղիկ Սամվելի
3. Պետրոսյան Լիդա Անդրանիկի

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Իմունիտետի համակարգի մորֆոֆունկցիոնալ առանձնահատկությունների փոփոխությունների և էկոհամակարգերի զգայունության աստիճանի գնահատումը միջավայրի տեխնածին աղտոտվածության և էքստրեմալ այլ իրավիճակներում (պետական ֆինանսավորում):	Ջիվանյան Կ. Ա.
2. Հայաստանի սեյսմիկ ակտիվ գոտիներում ողնաշարավոր կենդանիների պոպուլյացիաներում գործող միկրոէվոլյուցիոն պրոցեսների ուսումնասիրությունը (պետական ֆինանսավորում):	Յավրույան Է. Գ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. «Իմունիտետի համակարգի մորֆոֆունկցիոնալ առանձնահատկությունների փոփոխությունների և էկոհամակարգերի զգայունության աստիճանի գնահատումը միջավայրի տեխնածին աղտոտվածության և էքստրեմալ այլ իրավիճակներում» թեմայի գծով կատարվել է Հրազդան գետի տարբեր աստիճանի աղտոտված մասերում բնակվող լճագորտի լյարդի և աղիքի մորֆոֆունկցիոնալ ուսումնասիրություններ: Ստացված տվյալները, մասնավորապես, վկայում են այն մասին, որ միջավայրի բարձր աղտոտվածության պայմաններում բնակվող գորտերի լյարդում ավելի փոքր է պիգմենտային բջիջների թիվը, իսկ հեպատոցիտների ճնշող մեծամասնությունը տետրապլոիդ են, ընդ որում՝ դրանցից 41%-ը հիպերտետրապլոիդ էին և ուսումնասիրված հավաքակազմում դիպլոիդներ չկային: Տվյալներ են ստացվել նաև ջրերի բարձր աղտոտվածության պայմաններում գորտերի աղիքում էպիթելի ֆիզիոլոգիական ռեգեներացիայի ինտենսիվության թուլացման մասին, որն իր դրսևորումն է գտնում էպիթելային բջիջների նորոգման ակտիվության նվազման մեջ:

Թեմա 2. «Հայաստանի սեյսմիկ ակտիվ գոտիներում ողնաշարավոր կենդանիների պոպուլյացիաներում գործող միկրոէվոլյուցիոն պրոցեսների ուսումնասիրությունը» թեմայի գծով ուսումնասիրություններ են կատարվել ՀՀ առավել սեյսմոակտիվ շրջաններում: Նշված վայրերից միջատակերների (Insectivora), ձեռքաթևավորների (Chiroptera) և կրծողների (Rodentia) կարգերի ներկայացուցիչների տեսակային կազմի պարզաբանման նպատակով կատարվել է նմուշների հավաք: Այն տեսակները, որոնց մորֆոմետրիկ չափումները չեն տվել համոզիչ արդյունքներ, ենթարկվել են ԴՆԹ-ի վերլուծության: Հետազոտվել են ուղեղում նոր բջիջների գոյացման և զարգացման երևույթները՝ փորձելով դրանք բացատրել էկոլոգիական (սեյսմոակտիվ) պայմաններում կենդանիների բնակման և հարմարման հետ:

Պարզվել է, որ Plecotus ցեղի երկու ներկայացուցիչներից բացի, ՀՀ-ում հանդիպում է ևս մեկը՝ Plecotus macrobilaris-ը: Միջատակերներից ջրային սրնչակը (Neomy fodiens) ներկայացված է ոչ միայն N.f. leptodactylis տարատեսակով, այլև, ամենայն հավանականությամբ, ինքնուրույն ևս երկու տեսակներով կամ գուցե մեկ տեսակով և մեկ տարատեսակով՝ N.f. schelcovnicovi:

Նախորդ տարիների հետ համեմատած՝ Microtus ցեղի M. arvalis, M. sicialis, M. (C.) nivalis տեսակների գլխաքանակի աճ հետազոտված վայրերում չի արձանագրվել:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	2	10	6

Տ. ՄՈՒՇԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԴՈՒ ԵՎ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՖԻԶԻՈԼՈԳԻԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Մինասյան Միրանուշ Մինասի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Գրիգորյան Վիլենա Հրանտի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Հակոբյան Նիկոլայ Սարգսի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
3. Ադամյան Ծովինար Իշխանի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Սարգսյան Նելլի Վազգենի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Սահակյան Սուսաննա Գարեգինի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Ղազարյան Աշխեն Ղազարի
2. Ամիրյան Սիլվա Վարուժանի
3. Գևորգյան Էմմա Սերգեյի
4. Հովհաննիսյան Կարինե Ռուբենի
5. Անդրեասյան Աիդա Դավիթի
6. Զուրաբյան Քրիստինե Սերժիկի
7. Բաղդասարյան Կարինե Վահանի
8. Խաչատրյան Պեպո Հովհաննեսի
9. Հարությունյան Հրանուշ Նահապետի

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Տարբերակված ուսուցմամբ սովորող I-X դասարանների աշակերտների օրգանիզմի կարգավորիչ մեխանիզմների լարվածության աստիճանի գնահատականը ուսումնական ծանրաբեռնվածության պայմաններում (պետական ֆինանսավորում):	Ադամյան Ծ. Ի.
2. Դեռահասների կոնֆլիկտայնության, դաժանության և բռնության դրսևորումների նյարդաֆիզիոլոգիական ախտորոշումը և դրանց շտկումն ու կանխումը (պետական ֆինանսավորում):	Գրիգորյան Վ. Հ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Ներկայացված թեմայի նպատակն է եղել ուսումնասիրել դպրոցների և վարժարանների սովորողների ուղեղի գործառույթային վիճակի, վեգետամարմնական ֆունկցիաների, հոգեբանական ցուցանիշների, ֆիզիկական զարգացման ու առողջական վիճակի, տարիքային և սեռային փոփոխությունների բնույթը ուսումնառության ընթացքում և քննական լարվածության պայմաններում, մշակել ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման ու սովորողների առողջական վիճակի բալելավմանն ուղղված համալիր միջոցառումներ: Աշակերտների ԷՍԳ-ի համակարգչային գրանցումն ու վերամշակումն իրականացել է Բայևսկու վարիացիոն պուլսաչափման եղանակով, հեմոդինամիկ փոփոխությունները գնահատվել են՝ ըստ զարկերակային ճնշման բաղադրիչների մեծության փոփոխության:

ՈՒսումնական տարվա տարբեր ամիսներին հետազոտվող աղջիկների և տղաների մոտ նկատվել է օրական ուսումնական ծանրաբեռնվածության նկատմամբ միանման օրինաչափություն՝ առաջին դասարանի աղջիկների մոտ առավել արտահայտվածությամբ: ՈՒսումնական ծանրաբեռնվածության և քննական սթրեսի պայմաններում օրգանիզմի վեգետատիվ ցուցանիշների փոփոխություններն առավել արտահայտված են եղել վարժարանային ուսուցման պայմաններում:

Թեմա 2. Հաշվետու տարվա ընթացքում իրականացվել է Երևանի № 29 միջնակարգ դպրոցի VII-X դասարանների աշակերտների կոնֆլիկտայնության և ագրեսիվության շտկումն ու կանխումը՝ օգտագործելով շտկման մի շարք հոգեբանական մեթոդներ և «ագրեսիվ» բովանդակության համակարգչային խաղ: Դեռահասների կոնֆլիկտայնության և ագրեսիվության շտկման և կանխման գործընթացը վերահսկվել է հոգեֆիզիոլոգիական գրանցումների շնորհիվ: Ստացված տվյալներն ու արդյունքները ամփոփվել են 9 տպագրված աշխատանքներում և ներկայացվել միջազգային «Լոմոնոսով 2007» գիտական կոնֆերանսում:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	ՈՒսումնական ձեռնարկ	ՈՒսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
1	-	_	-	23	40

ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Գրիգորյան Կառլեն Վաղարշակի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Եսայան Ալեքսանդր Հրանտի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Նավասարդյան Իրա Արտաշեսի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Կարաքեշիշյան Հենրիետա Սաթենոսի, գյուղատնտ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Վասիլյան Անահիտ Վելլերի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Մովսիսյան Համլիկ Սեդրակի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ

Համատեղողներ

1. Ժամհարյան Հրանտ Գևորգի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ

2. Փարսադանյան Գայանե Աշոտի, դասախոս
3. Սեմերջյան Ինեսա Հենրիկի, դասախոս
4. Գրիգորյան Կարեն Կառլենի, դասախոս

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Իմունիտետի համակարգի մորֆոֆունկցիոնալ առանձնահատկությունների փոփոխությունների և էկոհամակարգերի զգայնության աստիճանի գնահատումը միջավայրի տեխնածին աղտոտվածության և էքստրեմալ այլ իրավիճակներում (պետական ֆինանսավորում):	Ջիվանյան Կ. Ա.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է Դեբեդ գետի ջրահավաք ավազանի տարածքում էկոլոգիական վիճակի ազդեցությունը մարդու առողջության վրա: Կապված շրջակա միջավայրի աղտոտման հետ՝ ավազանի տարածքում նկատվում է հիվանդությունների ցուցանիշների աննախադեպ աճ և դրանց երիտասարդացում:

Դեբեդ գետի ջրահավաք ավազանի տարածքը հանդիսանում է մեր հանրապետության գլխավոր արդյունաբերական կենտրոններից մեկը: Եվ այսօր՝ մի շարք գործարանների վերագործարկումից հետո, ավազանի աղտոտման խնդիրը կրկին հրատապ է դարձել: Այս ամենը իհարկե չէր կարող իր ազդեցությունը չթողնել մարդու առողջության վրա: Ավազանի տարածքում, պայմանավորված էկոլոգիական գործոններով, ներկայումս առանձնանում են հատկապես սրտանոթային, շնչառական ուղիների, քաղցկեղային և ալերգիկ բնույթ ունեցող հիվանդությունները, որոնց դինամիկ աճը նկատվում է սկսած 1997 թ., այսինքն՝ գործարանների վերագործարկումից հետո: Սկսած 1997թ. տարածաշրջանի ընդհանուր էկոլոգիական վիճակն իր բացասական ազդեցությունն է թողել նաև ծննդաբերությունների որակական ցուցանիշների վրա:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	6	9

ՄԱՆՐԷԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՆՐԷՆԵՐԻ ՈՒ ԲՈՒՅՍԵՐԻ ԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Պոպով Յուրի Գեորգիի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Ազարյան Կետի Գուրգենի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Ծովյան Ժաննա Վահանի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Ղազարյան Ֆրիդա Ռուբենի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ

4. Սարգսյան Սվետլանա Հակոբի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Պետրոսյան Մարգարիտ Թորգոմի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ
6. Փանոսյան Հովիկ Հարությունի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ

Համատեղողներ

1. Սկրտումյան Մարինե Կարենի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ
2. Աղաջանյան Ջուլիետտա Արտուշի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ

Ոխտումնաօժանդակ աշխատակիցներ

1. Գալստյան Համլիկ Հենրիկի
2. Սեմերջյան Ինեսա Հենրիկի
3. Կոտիկյան Ժաամինա Մանվելի
4. Վիրաբյան Արինա Ռաֆայելի

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Շաքարասնկերում և բույսերում ֆենիլալանին - ամոնիակ - լիազի համեմատական ուսումնասիրությունը (չֆինանսավորվող):	Պոպով Յու. Գ.
2. BT-մելանինի ազդեցության ուսումնասիրությունը in vivo և in vitro աճեցված բույսերի վրա (չֆինանսավորվող):	Պոպով Յու. Գ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Rhodotorula aurantiaca KM-1 խմորասնկերի բջիջների և նրանցից անջատված ֆենիլալանին-ամոնիակ-լիազի (ՖԱԼ) կիրառմամբ ուսումնասիրվել են տրանս-դարչնաթթվից L-ֆենիլալանինի սինթեզի օպտիմալացման պայմանները: Որոշվել են ելանյութերի օպտիմալ խտությունները՝ 40 մՄ տրանս-դարչնաթթու և 2Մ ամոնիակ, իսկ միջավայրի օպտիմալ pH-ը 10.5 է: Տոլուոլով մշակված Rh. aurantiaca KM-1 բջիջների արտադրողականությունը տրանս-դարչնաթթվից L-ֆենիլալանինի սինթեզի ընթացքում կազմել է 0.23 գ(L-Pha)/գ(թաց բջիջներ):

Հիմնվելով 250նմ և 310նմ ալիքների երկարության դեպքում տրանս-դարչնաթթվի և պ-հիդրօքսիդարչնաթթվի օպտիկական կլանումների տարբերության վրա՝ KM-1-ից անջատված ՖԱԼ-ի կիրառմամբ մշակվել է որոշ կենսաբանական հեղուկներում միաժամանակ L-ֆենիլալանինի և L-թիրոզինի խտությունների որոշման մեթոդ:

L-ֆենիլալանինի և L-թիրոզինի հայտնի քանակություններով պատրաստված մոդելային լուծույթներում այդ ամինաթթուների պարունակության չափման արդյունքների վիճակագրական մշակումը (SPSS 11.5 համակարգչային ծրագրով) ցույց է տվել չափված և նոմինալ արժեքների փոխկապակցվածության բարձր աստիճան: Ընդ որում՝ L-ֆենիլալանինի և L-թիրոզինի արժեքները իրարից անկախ են: Ամինաթթվային վերլուծիչով, ինչպես նաև առաջարկվող եղանակով ստացված տվյալների համեմատական ռեգրեսիոն անալիզը ցույց է տվել երկու եղանակով ստացված արդյունքների համապատասխանություն: Այս մեթոդի մշակումը թույլ կտա ախտորոշել ֆենիլկետոնուրիա հիվանդությունը վաղ շրջանում և վերահսկել հիվանդների վիճակը բուժման ընթացքում:

Թեմա 2. Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են բույսերի աճման խթանիչի՝ բակտերիական ծագման մելանինի ֆիզիոլոգիական ակտիվության ուսումնասիրությունները: Փորձերը դրվել են Armenia Tree Project կազմակերպության Կարին գյուղի տնկարանում: Մի շարք դեկորատիվ ծառատեսակների՝ սոֆորայի, մետաքսակացիայի, թխկու, կատալպայի, արևելյան տուայի սերմերը, փշատենու և բարդու կտրոնները, ինչպես նաև տուայի մեկ տարեկան սերմնաբույսերը մշակվել են մելանինի լուծույթով: Փորձարկված տեսակների սերմերի նախացանքային թրջումը մելանինի 0,1 % լուծույթով մեծացրել է ծլունակությունը, իսկ սերմնաբույսերի ջրումը և կտրոնների թրջումը այդ լուծույթով խթանել արմատագոյացումը և վերգետնյա մասի աճը: Մշակված բույսերի աճման բարձր տեմպերը պահպանվել են վեգետացիայի ամբողջ ընթացքում: Մելանինով մշակված բարդու կտրոններից առաջացած տնկիները դաշտում նույն խտության լուծույթով ջրվելու արդյունքում ցողունի բարձրությամբ և սաղարթի փարթամությամբ զգալիորեն գերազանցել են ստուգիչին:

Մելանինի խթանիչ ազդեցությունը դիտվել է նաև ծիրանի և դեղձի սերմերի ծլման վրա: Մելանինով թրջված ծիրանի 600 սերմերը դաշտային պայմաններում դրսևորել են բարձր ծլունակություն: Ստացված սերմնաբույսերը ցանքսից մեկ ամիս անց դաշտային պայմաններում ջրվել են մելանինի լուծույթով, որի արդյունքում դիտվել է աճի զգալի խթանում: Ստուգիչի համեմատ մշակված բույսերը ծառայել են որպես պատվաստակալ մեկ տարով ավելի վաղ: Պատվաստված բույսերը ցողունի բարձրությամբ և սաղարթի փարթամությամբ զգալիորեն գերազանցում էին ոչ միայն ստուգիչին, այլև նախորդ տարում պատվաստված բույսերին:

Բացի վերոհիշյալից, ուսումնասիրվել է նաև «Ազոտովիտ-1» կենսապատրաստուկի ազդեցությունը բանջարային բույսերի բակտերիոռիզների հարուցիչների վրա: Պարզվել է, որ «Ազոտովիտ-1» կենսապատրաստուկը կարելի է օգտագործել ինչպես բույսերի ազոտային սննդառության բարելավման, այնպես էլ որպես կանխարգելիչ միջոց բանջարային բույսերի պաշտպանության համար:

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Կաթնաթթվային բակտերիաների հակամանրէական և հիպոալերգիկ արգասիկների ուսումնասիրում /SfP 982 164/:	Պոպով Յու. Գ.

Թեմա 1. Հայաստանի տարբեր շրջաններից ընտրվել են մածնի 200-ից ավելի նմուշներ և կատարվում են նմուշների մաքրման աշխատանքներ: Սելեկտիվ սննդամիջավայրերի վրա ցանքի մեթոդով և մանրադիտակային հետազոտության միջոցով ստացվել են կաթնաթթվային բակտերիաների մաքուր կուլտուրաներ: Ստացված շտամների մոտ որոշվում է թթվի առաջացման դինամիկան: Զուգահեռ կատարվում է անջատված կուլտուրաների որոշ տեստ-մանրէների վրա աճի ճնշելու ունակության ուսումնասիրություն: Հաշվետու շրջանում ստեղծված հավաքածուից ընտրվել են բարձր հակամանրէային ակտիվությամբ օժտված ինը շտամներ:

ՈՒսումնասիրվել է մածնից անջատված լակտոբակտերիաների 11 շտամների նատրիումի ազիդի նկատմամբ հակամուտագեն ակտիվությունը: Լակտոբակտերիաների հակամուտագեն ակտիվության որոշումը կատարվել է ըստ Էյմսի տեստի՝ որպես ինդիկատորային բակտերիա օգտագործելով հիստիդինի նկատմամբ աուքսոտրոֆ Salmonella typhimurium- ի TA 1534 շտամը: Լակտոբակտերիաների 11 շտամներից երկուսը (N8 և N9) դրսևորել են հակամուտագեն ազդեցության առավելագույն տոկոս՝ 86% և 96% համապատասխանաբար:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	ՈՒսումնական ձեռնարկ	ՈՒսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	3	17

ԳԵՆԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՋՋԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Հարությունյան Ռուբեն Միքայելի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Բեգլարյան Նադեժդա Պետրոսի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր-խորհրդատու
2. Ազարյան Նոռա Հրաչիկի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Եղիազարյան Ջեմմա Սուրենի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Սիմոնյան Ելենա Հրանտի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Սողոմոնյան Սիմա Արտաշեսի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
6. Հովհաննիսյան Գալինա Գեորգիի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ
7. Գևորգյան Անի Լևոնի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ

Համատեղողներ

1. Գասպարյան Գենադի Հայկի, կենս. գիտ. դոկտոր, դոցենտ

Ասպիրանտներ

1. Կալաչյան Վեհանուշ Գրիգորի
2. Ջիգարջյան Էմմա Մարատի
3. Սահակյան Անժելա Հարությունի
4. Վարդանյան Քնարիկ Հակոբի
5. Ավալյան Ռիմա Էդուարդի
6. Մաթևոսյան Մարգարիտա Բենիամինի
7. Գևորգյան Անի Լևոնի
8. Բունիաթյան Իվետա Գրիգորի
9. Քեչյան Ռիմա Եսայի
10. Զաքոյան Ամալյա Կարոյի

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Նոր մոլեկուլային-բջջագենետիկական կենսամարկերների համալիրի ձևավորումը շրջակա միջավայրի գենոտոքսիկանտների էֆեկտների գնահատման համար (պետական ֆինանսավորում):	Հովհաննիսյան Գ. Գ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. FISH մեթոդով BCR/ABL գոնդերի կիրառմամբ հետազոտվել են քրոնիկ միելոբլաստային լեյկոզով 70 հիվանդներ: 65 Ph-դրական հիվանդներից 11-ի մոտ հայտնաբերվել են անոմալ բջիջների կլոններ՝

լրացուցիչ քանակական և որակական քրոմոսոմային փոփոխություններով: 4 հիվանդների մոտ հայտնաբերվել է ատիպիկ Ph-քրոմոսոմ: Ph-բացասական 5 հիվանդների մոտ հայտնաբերված են քրոմոսոմների քանակական խախտումներ և դելեցիա: Ph-դրական ՔՄԼ-ով հիվանդների մոտ «Գլիվեկ» պրեպարատի ընդունումից առաջ և հետո հաստատվել է Ph-քրոմոսոմի տոկոսային պարունակության հավաստի իջեցում: Ցույց է տրված, որ երկրորդային քրոմոսոմային անոմալիաները, մասնավորապես 8-րդ և 19-րդ քրոմոսոմների տրիսոմիան, լրացուցիչ Ph-քրոմոսոմը, առանձին կամ միասին հանդիսանում են մարկերներ բլաստային կրիզի փուլում: FISH մեթոդի երկու տարբերակների կիրառմամբ՝ SKY (սպեկտրալ կարիոտիպավորում) և MCB (բազմագույն շերտավորում) հայտնաբերվել են երեք տեսակի բջիջների կլոններ տարբեր խաթարումներով: FISH մեթոդի կիրառմամբ քաղցկեղային բջիջներում հայտնաբերվել է առաջին անգամ նկարագրվող քրոմոսոմային խաթարում: Բոլոր անալիզները կատարվել են ամբիոնի աշխատողների և ասպիրանտների կողմից (անվճար):

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. ISTC A-301.2 DNA and Chromosome Alteration Caused by Newly Synthesized Potential Antitumor and Carcinogenic Compounds. Comparison with Radiation Effects (2003թ.-ից մինչև 2007թ. մարտի 31-ը).	Հարությունյան Ռ. Մ.

Թեմա 1. Առաջին անգամ ԴՆԹ-կոմետ մեթոդով գնահատվել են նոր մեզո-տետրա (4N-օքսիէթիլպիրիդիլ) պորֆիրինի և նրա Ag-, Zn-, Co- մետաղական ածանցյալների գենաթունային և մոդիֆիկացնող հատկությունները in vitro (մարդու և Wistar գծի առնետների) և in vivo (մկների և Wistar գծի առնետների) ծայրամասային արյան լեյկոցիտներում:

Մարդու արյան լեյկոցիտներում in vitro պայմաններում բացահայտվել է ԴՆԹ-ի վնասվածքների մակարդակի բարձրացում՝ կապված պորֆիրինների կոնցենտրացիայի հետ: Կատարվել է բջիջների բաշխում՝ համաձայն ԴՆԹ-ի վնասվածության մակարդակի: Բացահայտվել է, որ պորֆիրինները ցուցաբերում են թույլ գենաթունային էֆեկտ: Առնետների արյան լեյկոցիտներում in vivo պայմաններում նույնպես ցույց է տրվել, որ երկարատև պարբերաբար ներարկումների դեպքում պորֆիրինները դրսևորում են թույլ գենաթունային էֆեկտ:

Առաջին անգամ ԴՆԹ-կոմետ մեթոդով մարդու և առնետների արյան լեյկոցիտներում in vitro, միևնույն պորֆիրինների ազդեցությամբ, կատարվել է ԴՆԹ-ի միջտեսակային զգայունության համեմատություն:

Մկների արյան լեյկոցիտներում in vivo պայմաններում դիտվել է ԴՆԹ-ի վնասվածքների մակարդակի կախվածություն պորֆիրինների ազդեցության ժամանակային գործոնից:

Բացահայտվել է, որ in vivo մակածված քաղցկեղի դեպքում պորֆիրինները՝ որպես կանխարգելիչ և թերապևտիկ միջոցներ, քաղցկեղի ինիցիացիայի և պրոգրեսիայի փուլերում առնետների արյան լեյկոցիտներում իջեցրել են ԴՆԹ-ի վնասվածքների մակարդակը: Բացահայտվել են դրանց պաշտպանիչ, մոդիֆիկացնող և գումարային էֆեկտները:

Ստացված տվյալները վկայում են պորֆիրինների՝ որպես պոտենցիալ հակաքաղցկեղային միացությունների հետագա ուսումնասիրության անհրաժեշտության մասին: Առաջարկված մոտեցումը՝ հիմնված Կոմետ մեթոդով ԴՆԹ-ի վնասվածքների համեմատական գնահատման վրա, in vitro և in vivo համակարգերում, ինչպես նաև տարբեր տեսակների պատկանող կենդանիների բջիջներում, կարելի է երաշխավորել նոր, պոտենցիալ քեմոթուժական միացությունների գենաթունության գնահատման համար:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	1	3	2

ԿԵՆՍԱՖԻԶԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Վարդևանյան Պողոս Հովհաննեսի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Փաննոսյան Գերասիմ Հարությունի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ամբիոնի պատվավոր վարիչ
2. Զաքարյան Արմեն Եգորի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
3. Ճավրշյան Ջանիկ Մամիկոնի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
4. Ներկարարյան Անահիտ Վլադիմիրի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Արծրունի Իրինա Գեղամի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ
6. Յավրոյան Ժենյա Վաղինակի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ
7. Անտոնյան Արա Պետիկի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ

Համատեղողներ

1. Գևորգյան Էմիլ Սոսի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
2. Թռչունյան Արմեն Համբարձումի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
3. Վարդապետյան Հրաչիկ Ռաֆայելի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
4. Մատինյան Կարինե Ստեփանի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ
5. Սինասբեկյան Լիա Ալեքսանդրի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ
6. Փոլադյան Աննա Արշակի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ

Ոխտումնաօժանդակ աշխատակիցներ

1. Ներսիսյան Միդա Անդրանիկի
2. Փարսադանյան Մարինե Աշոտի, կենս. գիտ. թեկնածու
3. Սարգսյան Գոհար Գուրգենի
4. Ստեփանյան Սվետլանա Խաչիկի
5. Վանյան Պոլինա Աշոտի, կենս. գիտ. թեկնածու
6. Ասլանյան Ջոյա Սարգսի
7. Այվազյան Նաիրա Մարտինի, կենս. գիտ. թեկնածու
8. Զաքարյան Նաիրա Արմենի

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Թաղանթների և ներբջջային կառույցների ակտիվության կարգավորման ուղիների ուսումնասիրությունը և դրանց գործնական կիրառման առաջարկությունների մշակումը (պետական ֆինանսավորում):	Թռչունյան Ա. Հ.
2. Քնական ծագում ունեցող կենսաբանական ակտիվ նյութերի ազդեցության մոլեկուլային մեխանիզմների ուսումնասիրությունը (պետական ֆինանսավորում):	Վարդապետյան Հ. Ռ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են Escherichia coli, Enterococcus hirae, կաթնաթթվային և այլ բակտերիաների թաղանթային համակարգերում փոխադրող և ֆերմենտային ակտիվության և միջավայրի ֆիզիկաքիմիական գործոնների միջոցով դրանց կարգավորման ուսումնասիրությունները: Դրանք կարևոր են բակտերիաների աճի կառավարման համար: Խմորման պայմաններում տարբեր բնույթի օքսիդիչների և վերականգնիչների, միա- և երկթիոլային ռեագենտների, ինչպես նաև պրոտոնոֆորների օգտագործմամբ տարբեր մուտանտներում ստացված արդյունքների հիման վրա հիմնավորվել է բակտերիաների օքսիդավերականգնողական զգայունության մեջ պրոտոնային ԱԵՖազի դերը: Առաջարկվել է թաղանթային համակարգերում պրոտոնային ԱԵՖազից այլ սպիտակուցների էներգիայի փոխանցման օքսիդավերականգնողական կարգավորման հնարավորությունը: Որոշվել է նաև բակտերիաների թաղանթի պրոտոնային հաղորդականությունը տարբեր պայմաններում և նրա կապը թաղանթով պրոտոնների ակտիվ հոսքերի հետ: Սկսվել են թթվային միջավայրում մրջնաթթվի և չեզոք կամ ալկալիական միջավայրում վերջերս բացահայտված գլիցերինի խմորումից Escherichia coli-ում մոլեկուլային ջրածնի անջատման ուսումնասիրությունները:

Շարունակվել են տարբեր բակտերիաների վրա գերբարձր հաճախականությամբ էլեկտրամագնիսական ճառագայթման (ԷՃ) ազդեցության ուսումնասիրությունները, որոնք հանգեցրել են բակտերիաների աճի և թաղանթային որոշ հատկությունների վրա 51,8 և 53 ԳՀց հաճախության ԷՃ-ի առավել ուժգին ազդեցության ու դրանում նաև ջրի դերի և միջավայրի քիմիական կազմի և pH-ի նշանակության մասին եզրակացության: Կարևոր է այդ գործոնի ներգործությունից տարբեր արգելակիչների և հակաբիոտիկների նկատմամբ բակտերիաների զգայունության բացահայտված փոփոխությունը: Ուսումնասիրվել է նաև գերբարձր հաճախականությամբ ԷՃ-ի ներգործությունը ներբջջային համակարգերի վրա:

Բացահայտվել է Ջերմուկ հանքային ջրի աղբյուրներից անջատված Rhodobacter sphaeroides բակտերիաների տարբեր շտամների մոլեկուլային ջրածին արտադրող ակտիվությունը և դրա կապը թաղանթով պրոտոնների տեղափոխության հետ:

Թեմա 2. Hypericum perforatum և Linum austriacum բույսերում սինթեզվող «գեղձիկային» բջիջներում կուտակվող երկրորդային մետաբոլիտ հանդիսացուղ հիպերիցինը, լինելով լիպոֆիլ, օժտված է բարձր կենսաբանական ակտիվությամբ: Ցույց է տրված, որ այն ցիտոտոքսիկ ազդեցություն է թողնում բակտերիաների, ստաֆիլոկոկների, պրոտոպլաստների վրա: Վերջիններս առավել խոցելի են բջջապատի բացակայության պատճառով: Հիպերիցինը մթության պայմաններում ինկուբացիայի ժամանակից և կոնցենտրացիայից անկախ չի ազդում էրիթրոցիտների կենսունակության վրա: Այլ է հիպերիցինի ֆոտոդինամիկ ազդեցությունը էրիթրոցիտների վրա: Էրիթրոցիտների ֆոտոհեմոլիզը, հիպերիցինի առկայությամբ, կախված է վերջինիս կոնցենտրացիայից և ճառագայթման ժամանակից: Մեր կողմից ուսումնասիրվել են ասկորբինաթթվի և տրիպտոֆանի հակաօքսիդիչ հատկությունները:

Ֆոտոդինամիկ թերապիայում կիրառվող որոշ նոր սինթեզված ֆոտոսենսիբիլիզատորներ օժտված են հակասնկային, հակաբակտերիալ և խթանիչ հատկություններով և մեծ հաջողությամբ կիրառվում են գյուղատնտեսության մեջ: Դրանց թվում են Zn-, Ag-պորֆիրինները և ÒÎÅÐyÐ-ը: Մեր կողմից ուսումնասիրվել է նրանց ազդեցությունը H. perforatum L.-ի կալուսային կուլտուրաների կենսասինթեզի ու մորֆոգենեզի վրա տարբեր պայմաններում:

Ազատ ռադիկալային պրոցեսները ունեն հանգուցային նշանակություն բջջային պրոցեսների կարգավորման և տարբեր ախտաբանական վերափոխումների զարգացման ընթացքում: Կարևոր է համարվել նշված հետազոտություններում բնական և սինթեզված հակաօքսիդիչների դերի բացահայտումը և դրանց ուսումնասիրությունների շարունակությունը տարբեր կենսաբանական ակտիվ նյութերի առկայությամբ՝ այդ թվում դեղանյութերի և էնդեմիկ օձերի թույնի ազդեցությունների մեխանիզմները: Հետազոտություններում կիրառվել են լաբորատորիայում ներդրված քիմլյումինեսցենտային անալիզի, մալոնային դիալդեհիդի

սպեկտրոմետրիկ որոշման, ՍՕԴ-ի ակտիվության սպեկտրոմետրիկ ուսումնասիրման, արհեստական թաղանթների վերակառուցման, նրբաշերտ քրոմատոգրաֆիայի և այլ ֆիզիկաքիմիական մեթոդներ:

Ստացված փորձարարական տվյալները հնարավորություն են տալիս հասկանալու ազատ ռադիկալային պրոցեսների առանձնահատկությունները և դրանց կարգավորման մեխանիզմները, ուղիները: Կատարված փորձարարական աշխատանքների արդյունքները ներկայացված են ստորև բերված հրատարակություններում:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	6	20

ԿԵՆՍԱՔԻՄԻԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Դավթյան Միսակ Արշամի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Աղաջանյան Արամայիս Խաչատուրի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Նավասարդյան Լիպարիտ Հայրապետի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
3. Հովհաննիսյան Սոֆիկ Պետրոսի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
4. Սեմերջյան Հենրիկ Հարությունի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Չուբարյան Սիրվարդ Վարդանի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
6. Թումանյան Լիլիթ Ռուբենի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
7. Բարսեղյան Էռնեստինա Խիկարի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
8. Գաբրիելյան Գոհար Արշալույսի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
9. Խաչատրյան Մեղրա Հարությունի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
10. Կարապետյան Սուսաննա Աղասու, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Մարության Սեդա Վիկտորի, կենս. գիտ. թեկնածու
2. Սեմերջյան Գայանե Հենրիկի, կենս. գիտ. թեկնածու
3. Բաղալյան Իրինա Արտեմի, կենս. գիտ. թեկնածու
4. Նիկոյան Արմինե Ալեքսեյի, կենս. գիտ. թեկնածու
5. Զաքարյան Տաթևիկ Աշոտի
6. Հարությունյան Սիրանուշ Վարդգեսի
7. Զախարյան Անի Ալեքսանի, կենս. գիտ. թեկնածու
8. Ծատուրյան Սվետա Սարգսի
9. Շատիկյան Վետա Աշոտի
10. Կարապողոսյան Հակոբ

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Գլյուտամինաթթվի ընտանիքի ամինաթթուների փոխանակության ֆերմենտները և բջիջների աճը խթանող պրոլինի ածանցյալների անջատումը Հայաստանի դեղաբույսերից (պետական ֆինանսավորում):	Աղաջանյան Ա. Խ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարվող գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Շարունակվում են արգինազայի և պրոլինի կենսասինթեզի ֆերմենտների ակտիվության ուսումնասիրությունները մատուտակով կերակրված և նստանյարդը հատված առնետների մոտ: Մատուտակով կերակրված առնետների տարբեր օրգաններում նշանակալի նվազում է պրոլինի կենսասինթեզի ֆերմենտների ակտիվությունը: Նստանյարդը կտրված և մատուտակով կերակրված առնետների մոտ նկատվում է արգինազայի և պրոլինի կենսասինթեզի ֆերմենտների ակտիվության կտրուկ բարձրացում: Հավանաբար նստանյարդի ռեգեներացիայի ընթացքում ակտիվանում է արգինազայի ոչ ուրեոթելիկ իզոֆերմենտը, որը գործում է պրոլինի կենսասինթեզի ֆերմենտների համակարգում՝ ճեղքելով արգինինը օրնիտինի, որը ծառայում է որպես սուբստրատ պրոլինի կենսասինթեզի ֆերմենտների համար:

Շարունակվում են հետազոտությունները լոբու ընդակերի բզեզների վրա: Հոմոգենատին ՆԱԴՖ+ և օրգանական թթուներ ավելացնելիս հայտնաբերվել է, որ պրոլինի կենսասինթեզի պրոցեսը խթանվում է: Ստացված տվյալներից հետևում է, որ նշված միացությունները (ցիտրատ, ՆԱԴՖ+) շուրջ 8 անգամ, իսկ ֆումարատ ՆԱԴՖ+-ը 4 անգամ խթանում են պրոլինի կենսասինթեզի ֆերմենտների ակտիվությունը, երբ այն զուգակցվում է օքսիդացված ՆԱԴ-ի հետ:

Արգինին 1.15 mM կոնցենտրացիայի դեպքում ճնշում է արգինազի ակտիվությունը: Հավանաբար տվյալ դեպքում ֆերմենտի ակտիվության ճնշումը սուբստրատի բարձր կոնցենտրացիայով կարող է պայմանավորված լինել սուբստրատ-ֆերմենտային ոչ էֆեկտիվ կոմպլեքսների առաջացումով:

Հաստատվել է, որ հազարատերևուկը և սրոհուկը հարուստ են պրոլինով, որով և, հնարավոր է, պայմանավորված լինի դրանց բուժիչ ազդեցությունը:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	3	5

Ֆակուլտետում գործող լաբորատորիաների թիվը՝ *5*

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Օսիպյան Լիա Լևոնի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Օսիպյան Լիա Լևոնի, լաբորատորիայի գիտ. ղեկավար, գլխ. գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ ակադեմիկես
2. Նանագյուլյան Սիրանուշ Գերասիմի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, առաջ. գիտաշխատող
3. Աբրահամյան Ջուլիետա Հայկի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, առաջ. գիտաշխատող
4. Գրիգորյան Կարինե Մարտինի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
5. Էլոյան Ինեսսա Սակեդոնի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
6. Ավագյան Քնարիկ Գուրգենի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ, գիտաշխատող
7. Մուրադյան Լարիսա Գուրգենի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ, գիտաշխատող
8. Սողոյան Եվա Յուրիի, կրտսեր գիտաշխատող
9. Հովհաննիսյան Եվա Խորենի, կրտսեր գիտաշխատող
10. Մնացականյան Էլեոնորա Աղաջանի, ավագ լաբորանտ
11. Սարգսյան Մարիամ Պետրոսի, ավագ լաբորանտ
12. Պետրոսյան Աիդա Միքայելի, ավագ լաբորանտ
13. Պարոնիկյան Արմինե Երվանդի, լաբորանտ
14. Եղիազարյան Էդուարդ Մուրազի, ավագ գիտաշխատող, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
15. Կարապետյան Աննա Ֆելիքսի, ավագ գիտաշխատող, կենս. գիտ. թեկնածու
16. Պոպով Գեորգի Յուրիի, ավագ գիտաշխատող, կենս. գիտ. թեկնածու
17. Առաքելյան Մարինա Սիմոնի, ավագ գիտաշխատող, կենս. գիտ. թեկնածու
18. Հայրապետյան Տիգրան Արթուրի, ուսանող, լաբորանտ
19. Հարությունյան Վաղիմ Վյաչեսլավի, ուսանող, լաբորանտ
20. Սարգսյան Նելլի Հովհաննեսի, ուսանող, լաբորանտ
21. Տեր-Ոսկանյան Հասմիկ Պարույրի, լաբորանտ
22. Մինասյան Սիրանուշ Մինասի, գիտական ղեկավար, կենս. գիտ. դոկտոր
23. Հովհաննիսյան Համասփյուռ Հովհաննեսի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
24. Սահակյան Սուսաննա Գարեգինի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
25. Սարգսյան Սուսաննա Հրաչի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
26. Կարապետյան Մարիետա Արմենակի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
27. Ադամյան Նոնա Յուրիկի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
28. Եղիազարյան Մարինա Լևոնի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող
29. Հարությունյան Ռուբինա Սամվելի, կրտսեր գիտաշխատող
30. Պոպով Յուրի Գեորգիի, կենս. գիտ. դոկտոր
31. Պետրոսյան Մարգարիտ Թորգոմի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
32. Սկրտումյան Մարինե Կարենի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
33. Աղաջանյան Ջուլիետտա Արտուշի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող
34. Փանոսյան Հովիկ Հարությունի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխատող

35. Բազուկյան Ինգա Լևոնի, կրտսեր գիտաշխատող
36. Առաքելյան Անուշ Հայկի, լաբորանտ
37. Սահակյան Նաիրա, լաբորանտ
38. Հարությունյան Ռուբեն Միքայելի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, առ. գիտաշխ.
39. Պողոսյան Վիոլետա Սերոբի, կենս. գիտ. թեկնածու, առ. գիտաշխ.
40. Երվանդյան Սիրունիկ Գերասիմի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխ.
41. Աղաջանյան Էվելինա Արտաշի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխ.
42. Ջալինյան Գայանե Գևորգի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխ.
43. Աթոյանց Անահիտ Լեոնի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխ.
44. Պողոսյան Դավիթ Ալբերտի, կենս. գիտ. թեկնածու, գիտաշխ.
45. Խուդոյան Արմինե Ցոլակի, կրտսեր գիտաշխ.
46. Նեբիշ Աննա Անդրեյի, կրտսեր գիտաշխ.
47. Մանվելյան Մարինե Սողոմոնի, կենս. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխ.
48. Չավուշյան Ստեփան Անդրանիկի, ավագ ինժեներ
49. Վարժապետյան Աննա Սահակի, ավագ լաբ.
50. Մարգարյան Քրիստինե Սերյոժայի, ավագ լաբ.
51. Բաբայան Նելլի Սամվելի, ավագ լաբ.
52. Աբրահամյան Աննա Ֆրունզիկի, ավագ լաբ.
53. Գրիգորյան Կառլեն Վաղարշակի
54. Գրիգորյան Կարեն Կառլենի
55. Ղազարյան Կարեն Արամայիսի
56. Ջաքարյան Հասմիկ Ներսեսի

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Հայաստանի սնկերի կենսաբազմազանության տեսակային, տարածական և ֆունկցիոնալ կառուցվածքը:	Նանագյուլյան Մ.
2. Ողնաշարավոր կենդանիների ֆին պատրիք պոպուլյացաներում գործող միկրոէվոլյուցիոն պրոցեսների ուսումնասիրություն:	Դանիելյան Ֆ.
3. Դեղաբույսերի մեկուսացված կուլտուրաները և Հայաստանի տարբեր հողերից մեկուսացված էքստրեմոֆիլ մանրէների կենսատեխնոլոգիական ներուժի գնահատումը:	Պապով Յու. Գ.
4. Ընդերամարմնական համակարգերի գործառույթների կարգավորման մեխանիզմները էկոլոգիական և տեխնածին գործոնների ազդեցության պայմաններում:	Սինասյան Ս.
5. Հայաստանում տարածված բիոգեն և տեխնոգեն գործոնների գենետիկական ակտիվության ուսումնասիրությունը:	Հարությունյան Ռ.
6. Արփի լճի և նրա ջրահավաք ավազանի էկոլոգիական գնահատականը և տարածքի տնտեսական զարգացման հեռանկարները:	Գրիգորյան Կ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել է ուսումնասիրվել Հայաստանի կենսաբազմազանությունը: Նախատեսված աշխատանքները իրականացվել են մի շարք ֆունդամենտալ հարցերի հետազոտություններով՝ կազմավորման տարբեր մակարդակներ ունեցող կենսահամակարգերում:

ՈՒսումնասիրվել են Հայաստանում տարածված սնկերի և սնկային խմբակցությունների լիարժեք կարգաբանական կազմը, տրվել են դրանց մորֆոլոգիական, ֆիզիոլոգիական և էկոլոգիական բնութագրերը, ուսումնասիրվել ֆիզիոլոգիական ակտիվության օրինաչափությունները:

Շարունակվում է Հայաստանի առանձին տարածաշրջանների և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գլխարկավոր սնկերի և ժանգասնկերի մոնիտորինգը: ՈՒսումնասիրվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տարածված ուտելի բույսերի և սնկերի տեսակները:

Սկսվել են աշխատանքներ Իրանի Իսլամական Հանրապետությունում տարածված սնկերի՝ որոշ մակրո- և միկրոտեսակների գենոտիպիկ ուսումնասիրությունները մոլեկուլային մակարդակով:

Բացահայտվել են Հայաստանի Հանրապետությունում տարածված միկոֆիլ սնկերը և դեղաբույսերի ախտածին միկոֆլորայի տեսակային կազմը:

Ամփոփվել են դիսկոմիցետների և Aspergillaceae ընտանիքի տեսակային կազմի վերաբերյալ եղած տվյալները:

Շարունակվել են սննդամթերքների (գինի, սուրճ, դեղաբույսերից թեյեր) ուսումնասիրությունները՝ որպես քաղցկեղածին օխրատոքսին A միկոտոքսինի կենսասինթեզի հիմնական սուբստրատ, ինչպես նաև այլ սննդամթերքների սնկաբանական հետազոտությունը, որը հնարավորություն կտա հայտնաբերել և իդենտիֆիկացնել տոքսինի հնարավոր պրոդուցենտները:

ՈՒսումնասիրվել են որոշ բազիդիալ մակրոմիցետների բնափայտ քայքայող ակտիվությունը:

Թեմա 2. Թեմայի գծով հաշվետու տարում, ըստ օրացույցային պլանի, շարունակվել են աշխատանքները Darevskia ցեղին պատկանող ժայռային երկսեռ և կուսածին ժայռային մողեսների մի շարք սիմպատրիկ պոպուլյացիաներում: ՈՒսումնասիրությունները ցույց են տվել, որ Darevskia ցեղի պոլիմորֆ խմբին պատկանող ժայռային մողեսների սիմպատրիկ պոպուլյացիաների մեծ մասը, որտեղ նկատվում է հիբրիդացման պրոցեսների ուժեղացում, տեղավորված են սեյսմիկ ակտիվ գոտիների վրա: Այդ պոպուլյացիաներում բազմակի անգամ ավելանում է մուտացիաների քանակը, նկատվում է ներտեսակային գենետիկական բազմազանություն, առաջանում են տրիպլոիդ էգ և արու հիբրիդ առանձնյակներ, որոնց էվոլյուցիոն դերը դեռ պարզ չէ:

Կատարվել է նաև D.dahli տեսակի պոպուլյացիաներում ընթացող միկրոէվոլյուցիոն պրոցեսների ուսումնասիրություն ձևաբանական և գենետիկական բազմաձևության բացահայտման նպատակով: Որոշ պոպուլյացիաներում նկատվել է գլխի վերին մակերեսը ծածկող վահանիկների փոփոխականության հաճախականության բարձրացում: Կորիզային գենոմի երկու (GATA)n պարունակող միկրոլոկուսային լոկուսների ՊՇՌ-հետազոտության արդյունքները համընկնում են վերը նշված տվյալների հետ:

Հետազոտված կուսածին և երկսեռ տեսակի մողեսների ներքին օրգաններում հայտնաբերվել են 58 տեսակի մակաբույծներ, որոնց մեծ մասը պատկանում է կլոր և տափակ որդերի տիպերին: Պարզվել է նաև, որ Darevskia ցեղի մողեսների արյան մեջ մակաբուծում են մի քանի մորֆոլոգիապես իրարից տարբերվող հեմոգրեգարիաներ (Sporozoa, Coccidiomorpha, Adeleida, Haemogregarinidae), որոնց տեսակային պատկանելությունը դեռ լրիվ պարզ չէ: Հեմոգրեգարիաների տարբեր ձևերով վարակված մողեսների էրիթրոցիտները գերաճած են, իսկ կորիզները ձևափոխվել են: Այդպիսի փոփոխություն կրած էրիթրոցիտները դադարում են կատարել իրենց հիմնական ֆունկցիան: Նախկին աշխատանքներում կուսածին և երկսեռ տեսակի ժայռային մողեսների սիմպատրիկ պոպուլյացիաների ուսումնասիրության ժամանակ նկատվել է, որ այդ պոպուլյացիաներում կուսածին տեսակներն ավելի զգայուն են մակաբույծների նկատմամբ, քան երկսեռ տեսակները: Այդպիսի պոպուլյացիաներում հաճախ նկատվում է կուսածին տեսակի քանակական կազմի կտրուկ նվազում, որի հիմնական պատճառը, ըստ երևույթին, նրանց թույլ կայունությունն է մակաբուծային

հիվանդությունների նկատմամբ: Այդ երևույթը իր բացատրությունն է գտնում ըստ Վան Վալենի կողմից առաջ քաշած «Սև թագուհու հիպոթեզը» վարկածի: Ըստ այդ հիպոթեզի՝ երկսեռ տեսակների բազմացման ժամանակ պոպուլյացիաներում պետք է մշտապես առաջանան գենոտիպեր, որոնք դիմակայում են արագ էվոլյուցիա կրող պաթոգեն մակաբույծների նկատմամբ: Դրան հակառակ՝ կուսածին տեսակները կլոնալ բազմացման հետևանքով, առանց փոփոխություն կրելու, ժառանգում են նույն գենոտիպը, որին երկարատև էվոլյուցիայի ընթացքում հասցնում է հարմարվել այս կամ այն մակաբույծը:

Նոր տվյալներ են ստացվել աղտոտվածության տարբեր աստիճաններով բնութագրվող ջրամբարներում ապրող լճագորտերի փայծաղի, լյարդի, հիստոմորֆոլոգիական և բջջաբանական մի քանի առանձնահատկությունների վերաբերյալ, բացահայտվել է, որ լճագորտի հեպատոցիտների կորիզների մեծ մասը տետրապլոիդ է, 41% կազմում են հիպերտետրապլոիդ կորիզները, ոչ մեծ թվով հանդիպում են նաև հիպո-տետրապլոիդ և ԴՆԹ –ի 6c քանակություն պարունակող կորիզներ:

Թեմա 3. A. genevensis-ի ինտակտ բույսի և կալուսային հյուսվածքների լուծամզվածքներում հետազոտվել է ազատ ամինաթթուների պարունակությունը թղթային և նրբաշերտ քրոմատոգրաֆիայի մեթոդներով և ավտոմատ ճհՀ-339 վերլուծիչով: Կալուսային հյուսվածքում հայտնաբերվել է պրոլինի համեմատաբար բարձր քանակ՝ ինտակտ բույսի տերևների համեմատ (չոր քաշում համապատասխանաբար 0,675 մգ/գ և 0,523 մգ/գ): Գլիցինի և ալանինի պարունակությունը կալուսային հյուսվածքում կրկնակի անգամ բարձր է ինտակտ բույսի համեմատ, ինչը հավանաբար վկայում է կալուսներում էկդիստերոիդների սինթեզի ուղու առկայության մասին: Իզոլեյցինի, լիզինի, մեթիոնինի և սերինի պարունակությունը երկու դեպքում էլ նույնն է:

A. genevensis-ի կալուսային հյուսվածքներից, ինչպես նաև ինտակտ բույսերի տերևներից ստացված լուծամզվածքները չեն դրսևորել բջջատոքսիկ հատկություն մոնոցիտար լեյկեմիայով հիվանդ մարդու L-41 բջիջների նկատմամբ:

Հակամանրէական ազդեցության ուղղությամբ շարունակվող աշխատանքները պարզել են, որ կալուսային հյուսվածքներից ստացված լուծամզվածքները ճնշում են որոշ թերմոֆիլ միկրոօրգանիզմների (Bacillus licheniformis subsp. thermophilus և Bacillus subtilis subsp. thermophilus) աճը, որը նոր հեռանկար է բացում կենսատեխնոլոգիայում նրանց կիրառման ասպարեզում:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է դափնեվարդի Nerium oleander կալուսային հյուսվածքների ջրային լուծամզվածքների, ինչպես նաև պոլիսախարիդային ֆրակցիայի հակամուտագեն ակտիվությունը նատրիումի ազիդով, բլեոմիցինով և ցիկլոֆոսֆամիդով ինդուկցված մուտագենեզի դեպքում՝ կիրառելով Էյմսի բակտերիալ թեստի մոդելը (Salmonella typhimurium TA1535, TA100) և մարդու KCL-24 բջջային կուլտուրայում միկրոկորիզների եղանակը:

Ցույց է տրվել, որ կալուսային հյուսվածքների ջրային լուծամզվածքները և պոլիսախարիդային ֆրակցիան նատրիումի ազիդով և բլեոմիցինով ինդուկցված մուտագենեզի դեպքում ցուցաբերել են մինչև 80 % հակամուտագեն ակտիվություն: Պոլիսախարիդային ֆրակցիան հանդես է եկել նաև որպես քեմոպրոտեկտոր (մինչև 76 %) մարդու KCL-24 բջջային կուլտուրաներում հակաուռուցքային հակաբիոտիկներ՝ բլեոմիցինով և ցիկլոֆոսֆամիդով ինդուկցված մուտագենեզի դեպքում:

ՈՒսումնասիրվել է թերմոֆիլ բացիլների աճի և զարգացման վրա մի շարք ծանր մետաղների (Cu^{2+}, Ni^{2+}, Zn^{2+} è Cd^{2+}) ազդեցությունը: Ցույց է տրվել ինչպես առանձին մետաղների, այնպես էլ նրանց համատեղ կիրառման խթանիչ ազդեցությունը մեկուսացված թերմոֆիլ շտամների աճի վրա: Մետաղների 1մգ/լ կոնցենտրացիայի պայմաններում նկատվել է կուլտուրաների ակտիվ աճ ստուգիչի համեմատ, իսկ դրանց կոնցենտրացիայի հետագա բարձրացմանը զուգընթաց՝ աճը ընկճվել է (Արնդ-Շուլցի երևույթ): Մետաղների համալիր (0,5-4 մգ/լ) ազդեցության ուսումնասիրությունը թերմոֆիլ բացիլների ամիլազային ակտիվության վրա ցույց է տվել ամիլազային ակտիվության կտրուկ անկում 1,5 մգ/լ-ից բարձր կոնցենտրացիաների դեպքում:

ՈՒսումնասիրվել է մի շարք հակաբիոտիկների նկատմամբ մեկուսացված մանրէների զգայունությունը: Հակաբիոտիկների նկատմամբ բացահայտված բարձր զգայունությունը վկայում է մետաղների և հակաբիոտիկների նկատմամբ կայունությունն ապահովող գեների փոխկապակցվածության բացակայության և իրարից անկախ տրանսպորտացիայի մասին: ՈՒսումնասիրվել և պարզաբանվել է նաև մետաղակայուն

թերմոֆիլ բացիլների կողմից որոշ մետաղների ակկումուլյացիայի ունակությունը հետևյալ հաջորդականությամբ՝ Cd2+>Cu2+>Zn2+>Ni2+:

Թեմա 4. Ընթացիկ տարում (2007 թ. հունվար-դեկտեմբեր), ըստ նախատեսված օրացույցային պլանի, ուսումնասիրվել են երկարավուն ուղեղի անդաստակային վերին և ստորին կորիզների նեյրոնային ակտիվության փոփոխությունները դելաբիրինթացիայի պայմաններում: Ստացված արդյունքները վկայում են, որ դելաբիրինթացիայի երկրորդ օրը համակողմյան անդաստակային կորիզներում գրանցվում է նեյրոնների միջին հաճախության նվազում, իսկ հակակողմյան կողմում՝ բարձրացում: Դելաբիրինթացիայի 7-12-րդ օրերին վերին և ստորին անդաստակային կորիզներում գրանցված նեյրոնային ակտիվության ալգուգաչափությունը աստիճանաբար հարթվում է դելաբիրինթացիայի 17 օրը, որը վկայում է նշված կորիզներում պլաստիկության գերակշռման վերաբերյալ:

Հետազոտությունների հաջորդ տարբերակում շարունակվել են հետազոտությունները ստորին ձիթապտղի կորիզի նեյրոնային ակտիվության ուսումնասիրության վերաբերյալ թրթռահարման դինամիկայում (5, 10, 15 օրերին): Թրթռահարման 10-րդ օրը դիտվել են նեյրոնների կանոնավորության աստիճանի վիճակագրորեն հավանական տեղաշարժեր, որոնք համահարաբերակցվում են միջազդակային տատանասահմանների գործակցի շեղումների հետ: Գրանցվել է նաև խմբային նեյրոնների քանակության ավելացում, պոլիմոդալ նեյրոնների թվի պակասում ու մոնոմոդալ նեյրոնների թվի ավելացում: Թրթռահարման սկզբնական շրջանում դիտվել է նեյրոնների ազդակահոսքի միջին հաճախության ավելացում, իսկ հետագա օրերին (10-15 օր)՝ աստիճանական վերականգնում:

Թեմա 2. Թեմայի կատարման ուղղությամբ ավարտվել են նյութերի հավաքման և համակարգման աշխատանքները: Հրատարակվել է գիտական 3 հոդված: Նախատեսվում է մինչև տարեվերջ ավարտին հասցնել գիտական թեմայի շարադրանքը:

Թեմա 3. Թեմայի կատարման ուղղությամբ ավարտվել է նյութերի համակարգման աշխատանքները, և ընթացքի մեջ է թեմայի շարադրումը:

Ամբիոնում կատարված այլ աշխատանքների մասին: Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնում իրականացվել են ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքներ: Ամբիոնում վերանայվել են ամբիոնի գծով բակալավրիատում և մագիստրատուրայում դասավանդվող առարկաների ուսումնական ծրագրերը, մշակվել են մագիստրոսական նոր դասընթացների ծրագրեր, քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել թեկնածուական երկու ատենախոսություն:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ.Մարգարյանը զեկուցումներով հանդես է եկել 2007թ հունվարին Երևանում կայացած «Հայոց բանակ-15», 20-րդ դարասկզբին Լեռնային Ղարաբաղի Քաշաթաղի շրջանի հայկական գյուղերի բնակչության տեղահանման հարյուրամյակին նվիրված գիտաժողովներում:

Ամբիոնի դասախոս Ս. Սերոբյանը 2007թ. ապրիլի 12-15-ը մասնակցել է Թբիլիսիում կայացած «Հոլոքոսթի դասեր. տոլերանտություն» միջազգային գիտական սեմինարին, նրան շնորհվել է համապատասխան սերտիֆիկատ:

Ամբիոնում քննարկվել են ուսանողների ուսման առաջադիմության բարձրացման նպատակով՝ նրանց հետ տարվող անհատական աշխատանքների ակտիվացման, դասախոսների դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ խնդիրներ:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	15	-

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Ստեփանյան Ալբերտ Անդրանիկի, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմ

1. Քիլիմջյան Գևորգ Ստեփանի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Հարությունյան Գագիկ Սուրենի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Հարությունյան Հակոբ Ժորայի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Մարգարյան Երվանդ Հրանտի. պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Գասպարյան Արա Սպարտակի, պատմ. գիտ. թեկնածու, ասիստենտ
6. Թինոյան Դավիթ Ֆերդինանդի, պատմ. գիտ. թեկնածու, ասիստենտ
7. Սինասյան Լիլիթ Ռոբերտի, դասախոս

Համատեղողներ

1. Պետրոսյան Վահրամ Սամվելի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Ղազարյան Արտաշես Սոսի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ

Ոխտմնաօժանդակ աշխատակիցներ

1. Սկրտչյան Լիլիթ Սերյոժայի

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Ամբիոնի գիտական հետազոտությունների հիմնական ուղղությունը «Հայաստանը և Արևելք - Արևմուտք քաղաքակրթական առնչությունները /դարաշրջաններ, քաղաքակրթություններ, մշակույթներ/» թեման է: Ամբիոնի դասախոսները շարունակում են աշխատել ինչպես թեմայի համապատասխան հատվածների, այնպես էլ չֆինանսավորվող այլ թեմաների ուղղությամբ՝ «Իրաքյան թուրքոմանները Թուրքիայի իրաքյան

քաղաքականության կոնտեքստում» /դոց. Վ.Պետրոսյան/, «Հայաստանի հարավային երկրամասերը 4-րդ դ.» /դոց. Հ.Հարությունյան/ և այլն:

Ամբիոնում կատարված այլ աշխատանքների մասին: ԵՊՀ-ում հայագիտական կենտրոնի «Ինքնության հարցեր» ենթաբաժինը ղեկավարում է պրոֆ. Ա. Ստեփանյանը: Ամբիոնից ընդգրկված է դոցենտ Գ. Ս. Հարությունյանը: Նախատեսվում է հրատարակել համանուն վերնագրով հոդվածների ժողովածու: Պրոֆ. Ա. Ստեփանյանը մասնակցում է նաև համալսարանի մեթոդական խորհրդի աշխատանքներին:

ԲՈՀ-ի կողմից հաստատված՝ ԵՊՀ-ի պատմության ֆակուլտետի և «Տաթև» գիտակրթական կենտրոնի կազմակերպած «Պատմություն և կրթություն» գիտա-տեսական և մեթոդական հանդեսը /3-4 համարներ/, որի գիտական խմբագիրն է պրոֆ. Ա. Ստեփանյանը, լույս է տեսել 2006 թ. դեկտեմբերին: Հանդեսի շրջանակներում հոդվածներ են տպագրել պրոֆ. Ա. Ա. Ստեփանյանը, դոցենտներ Գ. Ս. Հարությունյանը , Հ. Ժ. Հարությունյանը, Վ.Ս.Պետրոսյանը, Ե.Հ.Մարգարյանը, դասախոսներ Լ.Մինասյանը, Մ. Մ.Մանուկյանը: Այժմ սկսված են հաջորդ համարի /5-6/ աշխատանքները. նախատեսվում է հանդեսը հրատարակել 2007 թ. աշնանը:

Ամբիոնի անդամները /պրոֆ. Ա.Ա.Ստեփանյան, դոցենտներ Գ.Ս.Հարությունյան, Վ.Ս.Պետրոսյան/ մասնակցում են հիմնական դպրոցի 6-9-րդ դասարանների Համաշխարհային պատմության դասագրքերի ստեղծման աշխատանքներին: Հրատարակության է հանձնված 6-րդ դասարանի Համաշխարհային պատմություն / Հին աշխարհ/ և 8-րդ դասարանների Համաշխարհային պատմության /Նոր դարի/ դասագրքերը: Պրոֆ. Ա.Ստեփանյանը դասագրքերի խմբագիրը և հիմնական հեղինակներից մեկն է: Դոց.Գ.Ս.Հարությունյանը մասնակցում է նաև «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիայի» և հայոց պատմության 7-րդ դասարանի դասագրքի ստեղծման աշխատանքներին: Ամբիոնի դոցենտ Ե.Մարգարյանը համահեղինակ է «Կրոնների պատմություն», պրակ Ա. բուհական ուսումնական ձեռնարկի, որն արդեն լույս է տեսել: Նա մասնակցել է միջազգային և հանրապետական գիտաժողովների /Ðóññêèé ÿçûê â êîíòåêñòå ïðîáëåì ÑÍÃ è Áàëòèè, “Bridges as Res Publica: Implications for Modern Self-Gover-nment in Western and Eastern Europe”:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցման թեզիսներ
-	-	-	-	27	-

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՋԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Ղարիբյան Իգիթ Գարեգինի, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Հակոբյան Հայկ Պիոնի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Նահապետյան Ռաֆիկ Ասքանազի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Պետրոսյան Անուշավան Սաղաթելի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Գաբրիելյան Մխիթար Ռազմիկի, պատմ. գիտ. թեկնածու, ասիստենտ
5. Հարությունյան Համլիկ Թելմանի, դասախոս

Համատեղողներ

1. Աբրահամյան Լևոն Հմայակի, պատմ. գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

2. Քալանթարյան Արամ Աշոտի, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
3. Հասրաթյան Մուրադ Մարգարի, ճարտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
4. Ավետիսյան Հայկ Գրիգորի, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
5. Պետրոսյան Համլետ Լենսերի, պատմ. գիտ. դոկտոր
6. Ավետիսյան Պավել Սեդրակի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
7. Բոբոխյան Արսեն Ալեքսանդրի, պատմ. գիտ. թեկնածու
8. Գնունի Արտակ Վարդգեսի, պատմ. գիտ. թեկնածու, ասիստենտ
9. Թադևոսյան Աղասի Վարդգեսի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
10. Մանասերյան Լիլիթ Լևոնի, դասախոս

Ոխումնաօժանդակ աշխատակիցներ

1. Սաքոյան Կարինե Խաչիկի

Գիտական թեմաներ

	Թեմայի անվանումը	Ղեկավար
1.	Բջնի ամրոցի պատմա-հնագիտական ուսումնասիրությունը, համատեղ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի միջնադարի բաժնի հետ (պետական ֆինանսավորում):	Ղարիբյան Ի. Հակոբյան Հ.
2.	Վանի թագավորության (Ուրարտուի) մշակույթը մ.թ.ա. 8-6-րդ դդ. (չֆինանսավորվող):	Ավետիսյան Հ.
3.	Շիրակը անտիկ դարաշրջանում և մյուս ժամանակաշրջաններում (չֆինանսավորվող):	Տեր-Մարտիրոսով Ֆ. Հակոբյան Հ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Պրոֆ. Ի. Գ. Ղարիբյանը, դոց. Հ. Հակոբյանի հետ միասին շարունակել են Բջնի ամրոցի հնագիտական պեղումները: Այդ ուղղությամբ հայտնաբերված նյութական մշակույթի ու մատենագրության հիման վրա կատարել են Բջնի ամրոցի պատմահնագիտական ուսումնասիրությունը: Պեղումները ֆինանսավորվում է համալսարանի կողմից: Արդյունքները զեկուցվել է ԳԱԱ Հնագիտության և ազգարության ինստիտուտի գիտական նստաշրջանում: Բջնիում պեղված բրոնզեդարյան ժամանակաշրջանի դամբարանի նյութերը պատրաստվում են հրատարակության Հ. Հակոբյանի և Ա. Գնունու կողմից: Բացի այդ պրոֆ. Ի. Գ. Ղարիբյանը շարունակել է զբաղվել Քրիստոնյա Հայաստանի մասունքատուփերով և դրանց պատմա-հնագիտական և արվեստաբանական վերլուծությամբ: Մասնավորապես շարադրել է Գրիգոր Լուսավորչի Աջի մասին 5 մամուլ ուսումնասիրություն: Պրոֆ. Ի. Ղարիբյանը նույպես նախապատրաստում է 25 մամուլ ծավալով Լոռի-բերդ քաղաքին նվիրված ուսումնասիրություն, որը կհանձնվի տպագրության տարվա վերջին: Միաժամանակ «Երկիր և մշակույթ» հասարակական կազմակերպության հանձնարարությամբ «Արծափ-Սեղրաձոր» բնակավայրի պատմա-ազգագրական և հնագիտական ուսումնասիրությանը նվիրված աշխատությունը հրատարակվել է 34 մամ. ծավալով, Երևան, 2006: Պատրաստել և հանձնել է վեց քարտեզ Հայաստանի պատմության ատլասի 2-րդ հ. համար:

Թեմա 2. Պրոֆ. Հ. Գ. Ավետիսյանը շարունակել է աշխատանքները բրոզի և երկաթի դարաշրջանի հնագիտական խնդիրների վերաբերյալ՝ ամրաշինություն, թաղման ծես,ռազմարվեստ և այլն: Հատկապես

կարևոր արդյունքներ են արձանագրվել Արամուսի անրոցի պեղումների ժամանակ: Հրատարակել է մեկ մենագրություն և հինգ հոդված:

Թեմա 3. Դոցենտ Հ. Հակոբյանը մասնակցել է Բջնիի հնագիտական արշավախմբի աշխատանքներին, Արցախի Տիգրանակերտ քաղաքի պեղումներին, Հողմիկի տաճարական համալիրի պեղումներին: Նա մասնակցել է նաև Հայաստանի պատմության ատլասի աշխատանքներին 2006-2007 թթ.: Մասնակցել է մեկ միջազգային /2006թ. դեկտեմբեր/ և երկու հանրապետական գիտաժողովների: Հաշվետու հատվածում հրատարակել է վեց աշխատանք:

Պ.գ.թ. Մ. Գաբրիելյանը 2006-2007թթ. շարունակել է ղեկավարել ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում կատարվող «Հայոց սոցիոնորմատիվ մշակույթի զարգացումը 20-րդ դարում» թեման:

Թեմայի և միջազգային կազմակերպությունների /ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ, Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ-Հայաստան/ ֆինանսավորմամբ դաշտային ազգագրական նյութեր են գրառվել ՀՀ Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Արագածոտնի մարզերում /շուրջ 40 քաղաքային և գյուղական համայնքներում/:

Սահմանամերձ գյուղական բնակավայրերում անցկացված դաշտային ազգագրական հետազոտությունների ընթացքում դիտարկվել են արտակարգ իրավիճակում հայտնված հանրույթի /Կոթի, Բարեկամավան, Չինարի, Պառավաքար գյուղերի օրինակով/ վարքն ու գործողությունները պայմանավորող հիմնական մեխանիզմները:

2006-2007 ուստարում մասնակցել է 5 գիտաժողովի, որից 2-ը միջազգային /Ստեփանակերտում և Բաթումում/: Աջակցել է միջազգային ծրագրերին որպես փորձագետ:

Դոցենտ Ռ.Ա.Նահապետյանը հաշվետու տարում ավարտել է դոկտորական ատենախոսության շարադրանքը և 2007 թ. կներկայացնի քննարկման: Թեմայի վերաբերյալ հրատարակել է վեց հոդվածներ և մենագրություն:

Դասախոս Հ. Թ. Հարությունյանը իրականացրել է հետազոտական աշխատանքներ ազգագրության աղբյուրագիտության ոլորտում, մասնավորապես դիտարկելով Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները որպես ազգագրական սկզբնաղբյուր: Հրատարակել է մեկ հոդված, ևս երկուսը ներկայացված են քննարկման ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնում:

Ամբիոնը որպես առաջատար գիտական կազմակերպություն քննարկել և կարծիք է տվել Հ. Մարությանի դոկտորական և Հ. Մարգարյանի թեկնածուական ատենախոսությունների վերաբերյալ:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	3	-	-	26	-

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Չուգասզյան Լևոն Բաբկենի, արվեստագիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Տեր-Մարտիրոսով Ֆելիքս Իվանի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Հարությունյան Լեոնարդ Գրիգորի, արվեստագիտ. թեկնածու, ասիստենտ

3. Պիպոյան Լիլիթ Սուրենի, ճարտ. թեկնածու, ասիստենտ
4. Մանուկյան Սեյրանուշ Սոսի, ասիստենտ
5. Դավթյան Լիլիթ Սարգսի, դասախոս
6. Հակոբյան Զարուհի Ավետիսի, դասախոս
7. Սարգսյան Անի Աստղուրի, դասախոս
8. Վարդանյան Սաթենիկ Վլադիմիրի, դասախոս

Համատեղողներ

1. Հմայակյան Սիմոն Գևորգի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Տեր-Մինասյան Անուշ Աշոտի, ճարտ. թեկնածու, ասիստենտ
3. Բաղդամյան Իրինա Ռուբենի, դասախոս
4. Կալչուրինա Վերա Սեմեոնի, դասախոս
5. Համբարձումյան Տաթևիկ Հենրիկի, դասախոս
6. Վարդանյան Մարիամ Ռուբենի, դասախոս

Ոխտումնաօժանդակ աշխատակիցներ

1. Վարդանյան Մարիամ Ռուբենի

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Գաղափարների և իրականության արտացոլումը հայ արվեստում (պետական ֆինանսավորում):	Չուգասզյան Լ. Բ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Գիտական թեմայի քննության ուղղությամբ հաջողվել է որոշ կարևոր արդյունքների հասնել: Մարդու կերպարը միջնադարյան քրիստոնեական շրջանի հայ արվեստում իր մարմնավորումն է գտել ուշ պալեոլիթի, էնեոլիթի ժամանակաշրջանից: Այդ շրջանի ստեղծագործություններից քննության է առնվել մարդու կերպարի հորինվածային տեղադրությունը հատկապես բրոնզի քանդակներում և կավե անոթների վրայի պատկերներում: Վերջիններիս մեջ նկատվող առանձնահատկությունները դիտելի են նաև հելլենիստական և ուշ անտիկ արվեստում:

Ֆ. Տեր-Մարտիրոսովն ուսումնասիրել է մարդու և արվեստի ծագման կապը, արվեստի ծագման պատճառները և Հին Արևելքի արվեստի զարգացման օրինաչափությունները:

Գաղափարների և իրականության արտացոլումը իր յուրահատուկ դրսևորումն է գտել Իտալիայում մասնագիտական կրթություն ստացած կամ այնտեղ հաստատված հայ նկարիչներ՝ Ա. Դ՝ Աբրոյի, Ա. Ֆեթվաճյանի, Է. Շահինի, Ա. Շաբանյանի, Ա. Մուրադյանի, Ա. Սարգսյանի, Գ. Շիլդյանի, Լ. Մինասյանի, Ժ. Օրագյանի, Օ. Ավետիսյանի, Ա. Զորյանի, Բ. Կոջամանյանի, Ա. Ավանեսյանի, Մ. Գրիգորյանի, քանդակագործ Ն. Զարյանի և այլոց արվեստում: Գաղափարների և իրականության արտացոլումը սփյուռքահայ արվեստում մարմնավորող նշանավոր վարպետներից քննության են արժանացել Իտալիայում հատկապես մեծ ճանաչում ստացած Գ. Շիլդյանի, Լ. Մինասյանի, Ժ. Օրագյանի ու քանդակագործ Ն.

Զարյանի գեղարվեստական աշխատանքները: Այս արվեստագետների երկերը կարևոր երևույթ են Իտալիայի և սփյուռքահայ արվեստի պատմության մեջ:

Հաշվետու ժամանակաշրջանում կատարված հետազոտությունների շնորհիվ հաջողվել է պարզել հատկապես գեղագիտական բնույթի առանձնահատկությունները արվեստագետների ստեղծագործություններում:

Խնդրո առարկա թեմայի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները մասնակիորեն արտահայտվել են 2006-2007թթ. հրատարակված առանձին հոդվածներում:

Գաղափարների և իրականության արտացոլումը նոր ժամանակների հայ արվեստում մարմնավորող հեղինակներից քննության են արժանացել նկարիչներ Զ. Գալֆայանի, Օ. Գալստյանի, Գ. Գափամաջյանի, քանդակագործ Դ. Կամսարականի և այլ արվեստագետների արվեստը:

Թեմայի կատարման աշխատանքներին մասնակցել են ամբիոնի չորս դասախոսներ, այդ թվում՝ մեկ արվեստագիտության դոկտոր և մեկ պատմական գիտությունների թեկնածու:

Ամբիոնում ծավալված է գիտահետազոտական լայն գործունեություն, որն ընդգրկում է հայ արվեստի պատմության տարբեր հիմնահարցերը: Առավել ուշադրության կենտրոնում են նախաքրիստոնեական շրջանի, միջնադարյան, նոր ժամանակների հայ արվեստի բարդ ու քիչ ուսումնասիրված խնդիրները:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	23	-

ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Պետրոսյան Համլետ Լեոների, պատմ. գիտ. դոկտոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Սկրտչյան Ռուզաննա Ալբերտի, պատմ. գիտ. թեկնածու, դասախոս

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Մելքումյան Համլետ Լորիկի

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Մշակութաբանության նորաստեղծ ամբիոնի հիմնական աշխատանքը ընթացել է բաժնի ուսումնական նոր պլանների մշակման ու կազմման ուղղությամբ: Մշակվել է մշակութաբանության բաժնի բակալավրի և մագիստրատուրայի ուսումնական և աշխատանքային պլանները, որոնք քննարկվել և հավանության են արժանացել ֆակուլտետի խորհրդում: Ուսումնական պլանների գերակշիռ մասը նորացվել է, մտցվել են մշակույթի տեսությանը, պատմությանը և քաղաքականությանն առնչվող մի շարք նոր ուսումնական առարկաներ:

Ամբիոնի վարիչ Հ. Պետրոսյանը անցած մեկ տարում հրատարակել է 5 հոդված և 4 զեկուցումների թեզիս:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	5	4

Ֆակուլտետում գործող լաբորատորիաների թիվը՝ *2*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Գիտական ղեկավար՝ *Հարությունյան Բաբկենի Հարությունի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*

Լաբորատորիայի աշխատակիցների կազմը

1. Սխիթարյան Վարդան Գառնիկի
2. Հարությունյան Ռուզաննա Վասպուրականի
3. Եղիազարյան Արման Սամվելի
4. Եսայան Ջուլիետա Հրաչի
5. Դավթյան Դավիթ Հարությունի

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Հայաստանի Հանրապետության պատմության ատլաս /1918-20 թթ./ (պետական ֆինանսավորում):	Հարությունյան Բ. Հ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ լաբորատորիայում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Շարունակվում են աշխատանքներ տարվել Հայաստանի առաջին հանրապետության պատմության ատլասի ստեղծման ուղղությամբ: Ատլասի կազմման աշխատանքներում ներգրավված են հայոց պատմության ամբիոնի մի քանի մասնագետ և օժանդակ աշխատակիցներ /Վ. Սխիթարյան, Գ. Բաղալյան, Ռ. Հարությունյան, Գ. Ղամբարյան, Կ. Հայրապետյան, Ա. Հայրունի, Յու. Հովսեփյան, Է. Դանիելյան, Հ. Գրիգորյան, Կ. Եղիազարյան, Լ. Բաղդասարյան, Ա. Եղիազարյան, Տ. Ապիկյան, Ջ. Եսայան/:

Ջանազան բնույթի նյութեր են հավաքվում ՀՀ արխիվներում ատլասի տարբեր քարտեզները կազմելու համար: Արժեքավոր նյութեր են բերվել նաև արտերկրներից՝ մասնավորապես ԱՄՆ-ի և Ֆրանսիայի արխիվներից: Որպես կարևոր պատմական փաստաթուղթ լաբորատորիայում հրատարակության է պատրաստվում Սևրի պայմանագրով (10.VIII.1920) ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի հանձնարարությամբ Inquiry խմբի կազմած հայ-թուրքական սահմանագծի նախագիծը, որը պատրաստված է եղել 19 քարտեզաթերթերի վրա թուրքական 1:200000 մասշտաբի քարտեզի վրա: Անկախ առանձին

հրատարակությունից՝ այն տեղ կգտնի Հայաստանի Առաջին Հանրապետության պատմական ատլասի հավելվածում:

ՈՒսումնական նպատակների համար լաբորատորիան պատրաստել է 6 քարտեզ՝

- «Տիգրան Մեծի տերությունը»
- «Մեսրոպ Մաշտոցի գործունեությունը և հայ գրերի գյուտը»
- «Հայաստանն ըստ «Աշխարհացոյցի»-ի»
- «Վարդանանց պատերազմը (450 -451 թթ.)»
- «Մեծ Հայքի թագավորությունը IV դարում: Քրիստոնեության հռչակումը պետական կրոն»
- «Հայ Բագրատունիների տերությունը (885-908 թթ.)»:

Ոչ ուսումնական նպատակներով հրատարակվել է «Տիգրան Մեծի տերությունը» քարտեզը, որն անմիջապես վերահրատարկվեց Իրանի հայ համայնքի կողմից:

2007 թվին արդեն պատրաստվել են Հայաստանի Առաջին Հանրապետության ատլասի ներքոհիշյալ քարտեզները՝

- Հայ ժողովուրդը Առաջին աշխարամարտի տարիներին: Հայ կամավորական շարժումը
- Արևմտահայության Մեծ եղեռնը և հայերի ինքնապաշտպանական կռիվները*
- Հայ փախստականների վերադարձը Արևմտյան Հայաստանի ազատագրված տարածքներ
- Հայաստանը 1918 թվին: Թուրքական արշավանքը
- Անդրկովկասի Դաշնակցային Դեմոկրատական Հանրապետությունը և Հայաստանը: 1918 թ. Բրեստի հաշտությունը:

Պատրաստման գործընթացի մեջ են 12 քարտեզներ:

Լաբորատորիայում նշանակալից աշխատանք է կատարվում կադրերի պատրաստման ուղղությամբ: Ա. Եղիազարյանը պաշտպանել է իր թեկնածուական ատենախոսությունը «Արմինիա ոստիկանությունը (պատմա-աշխարհագրական ուսումնասիրություն)» թեմայով: Լաբորատորիայի աշխատակցուհի Ռ. Հարությունյանը պատրաստում է իր դոկտորական ատենախոսությունը «Հայկական մարզպանությունը V-VII դարերում (պատմա-աշխարհագրական ուսումնասիրություն)» թեմայով: Լաբորատորիայի քարտեզագիր Վ. Սխիթարյանն աշխատում է իր «Հայաստանի և Անդրկովկասի ֆրանսիական քարտեզագրությունը» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության վրա: Լաբորատորիայի աշխատանքների մեջ է ներգրավված ասպիրանտ Դ. Դավթյանը, որի ատենախոսության թեման է «Հայաստանն ըստ Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության»»:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	ՈՒսումնական ձեռնարկ	ՈՒսումնամեթոդական ձեռնարկ	Քարտեզ	Ժողովածուների թեզիս
-	-	-	-	10	-

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Լաբորատորիայի ղեկավար՝ *Ավետիսյան Հ. Գ., պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Հնագիտության հետազոտական լաբորատորիան իր աշխատանքային գործունեությունը սկսել է 2007թ. հուլիս ամսից: Հաշվետու վեց ամիսների ընթացքում կատարվել են հետևյալ հետազոտական աշխատանքները.

- Պեղումներ են կատարվել Արամուսի ուրարտական ամրոցում, և հետազոտվել է շրջապատի պատմահնագիտական համալիրները:

- Պեղվել և ուսումնասիրվել է Բջնիի տարածքում միջին բրոնզի դարաշրջանին վերաբերող մեկ ամբողջական դամբարանային համալիր:
- Պեղվել և հետազոտվել է Էրեբունու հարևանությամբ գտնվող բնակավայրը՝ տնտեսական համալիրների հետ:
- ՈՒսումնասիրություններ են կատարվել պատմական Երվանդաշատում և նրա շրջակայքում:
- Վերականգնվել և չափագրվել են վերոհիշյալ հնագիտական համալիրներից պեղված խեցեղենը՝ մետաղից և ոսկորից գտածոները:
- Հրատարակման են պատրաստվել մի շարք հոդվածներ պեղված հնագիտական հուշարձանների վերաբերյալ:

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Մովսիսյան Ա. Ե.,* The writing culture of pre-Christian Armenia, Yerevan university publishers, Yerevan, 2006 (320 էջ):
2. *Մովսիսյան Ա. Ե.,* Սրբազան լեռնաշխարհը. Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում (երրորդ, լրացված հրատարակություն), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2006 (80 էջ):
3. *Մովսիսյան Ա. Ե.,* Le Plateu Sacre, Aix-en-Provence-Erevan, 2006 (80 էջ):
4. *Ղարիբյան Ի. Գ.,* Արծափ - Սեղրաձոր, մենագրություն, Երևան, 2006, 506 էջ 24 ներդիր և քարտեզ:
5. *Ավետիսյան Հ. Գ.,* Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա 11-6 դարերում, մենագրություն, Երևան 2006, 24,75 մամուլ, 395 էջ:
6. *Նահապետյան Ռ. Ա.,* Աղձնիքահայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը /պատմաազգագրական ուսումնասիրություն, մենագրություն, Երևան,2007, ԵՊՀ հրատարակություն, 305 էջ:

Ուսումնական ձեռնարկ

1. *Ժամկոչյան Հ. Գ.,* Հայ ժողովրդի պատմություն. սկզբից մինչև Ք.հ. III դարի վերջը: Ուսումնական ձեռնարկ, 4-րդ բարեփոխված հրատարակություն, Երևան, 2006, 356 էջ, հրատարակության է պատրաստել Պ.Հ.Հովհաննիսյանը:

Հոդված

1. *Հարությունյան Բ. Հ.,* Ե՞րբ է քրիստոնեությունը հռչակվել պետական կրոն, «Հանդէս ամսօրեայ», 2006, թիվ I-XII, էջ 85-200:
2. *Հարությունյան Բ.,* Հայոց գրերի ստեղծման թվականի շուրջ, «Հայկական բանակ», թիվ 1/47/, Երևան, 2006, էջ 6-27:
3. *Հարությունյան Բ. Հ.,* Âîèíñòâóþùàÿ áåçðàçëè÷íîñòü ëæåèñòîðèêà Ô. Ì àì åäîâîé “Ãîëîñ Àðìåíèè”, 9/19429/, 8 èþíÿ, 2006.
4. *Հարությունյան Բ. Հ.,* Հայոց պատմության II և III դարերի ժամանակագրության շուրջ, «Հանդէս ամսօրեայ», 2007, թիվ I-XII , էջ 2-114:
5. *Հարությունյան Բ. Հ.,* Hemsinli Ermenilerin tarihinden, էջ 15-26, Hemsin ve hemsinli Ermeniler (Konferans makaleleri),Yerevan, 2007.
6. *Հարությունյան Բ. Հ.,* Կիլիկիայի և հարակից տարածքների էթնիկական բնակչությունը XII-XIV դարերում, «Հայաստանի Ազգային Արխիվ», Երևան, 2007, քարտեզ, թիվ 99:
7. *Մինասյան Է. Գ.,* Հրանտ Աբրահամյան, Մարտնչող Արցախը 1917-2000 թթ., գիրք Բ (1923-1985), Երևան 2005 /գրախոսություն/, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 2, Երևան, 2006, էջ 264-266:

8. *Մինասյան Է. Գ.,* Արցախյան շարժման պատմության ուսումնասիրության արդի վիճակն ու խնդիրները, ԼՂՀ անցյալը,ներկան և ապագան, միջազգային գիտաժողով, Ստեփանակերտ, 2007, /միջազգային գիտաժողովի հիմնադրույթներ/, Երևան, 2006, էջ 159-174:
9. *Մինասյան Է. Գ.,* Հայրենակցական միությունները և Հայ Դատը, Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, 8, Երևան, 2007, էջ 333-344:
10. *Հովհաննիսյան Պ. Հ., Աղոնց Ն. Գ.,* Երկեր հինգ հատորով, հատոր Բ, Պատմա-բանասիրական ուսումնասիրություններ, Երևան, 2006, 680 էջ (կազմող և ներածության հեղինակ):
11. *Հովհաննիսյան Պ. Հ.,* Գառնիկ Գյուզալյան. Հայ պատմագիտության երախտավոր, տե՛ս «Էջմիածին», ամսագիր, 2006, թիվ 5, էջ 73-91:
12. *Հովհաննիսյան Պ. Հ.,* Բյուզանդագիտական մի նորահայտ արժեք, տե՛ս «Էջմիածին», ամսագիր, 2006, թիվ 10-11, էջ 44-69:
13. *Հովհաննիսյան Պ. Հ.,* Վալտեր Դիլոյան, տե՛ս «Հայկազյան Հայագիտական հանդես», Բեյրութ, 2006, թիվ 26, էջ 430-432:
14. *Հովհաննիսյան Պ. Հ.,* Վարդան Պարսամյան, տե՛ս «Մեր անվանի դասախոսները», մաս երկրորդ, Երևան, 2006, էջ 266-268:
15. *Հովհաննիսյան Պ. Հ.,* Íèêîëàé Àäîíö îá Àðìÿíñêîì âîïðîñå, Ãîëîñ Àðìåíèè, 2007, 31 ìàÿ, N 59.
16. *Հովհաննիսյան Պ. Հ,* Pontus ermenilerinin Golgota'si, ''He msin ve hemsinli ermeniler'', Yerevan, 2007, s. 58-68.
17. *Մովսիսյան Ա. Ե.,* Նախամաշտոցյան Հայաստանի դպրության ավանդույթների շարունակությունը ոսկեդարյան գրականության մեջ, «Հարք» (Հայագիտական հանդես), 2006, N1, էջ 60-73:
18. *Մովսիսյան Ա. Ե.,* Գրային մշակույթի վիճակը IV դարի Հայաստանում, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XXV, Երևան, 2006, էջ 228-238:
19. *Բադալյան Գ. Մ.,* Հայ էթնիկ տարածքները XI-XII դարերում, «Հայաստանի ազգային ատլաս», Երևան, 2007, էջ 98, մասշտաբ 1: 4000000:
20. *Մանուկյան Ժ. Ս.,* Հայաստանի արտաքին քաղաքականությունը և ԱՊՀ ինտեգրացիոն գործընթացները 1991-2001 թթ., «Բանբեր Երևանի համալսարանի», 2/119/, Երևան, 2006, էջ 146-151:
21. *Եղիազարյան Կ. Ա.,* «Սարգիս Կուկունյանի խմբի դատավարությունը և հետագա դեպքերը», «Բանբեր Հայաստանի արխիվների» ամսագիր, 2006թ., թիվ 1, էջ 217- 222:
22. *Աբրահամյան Հ. Մ.,* Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները, «Լրաբեր » հասարակական գիտությունների, ՀՀ ԳԱԱ , Ե., 2006. , թիվ 3, էջ 3-20:
23. *Աբրահամյան Հ. Մ.,* Գրիգորյան Ա., Արդի քաղաքական համակարգի ձևավորումը Ռուսաստանի Դաշնությունում/1991-2005թթ./, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, Ե., 2007, թիվ 1 /30/, էջ 193-207:
24. *Աբրահամյան Հ. Մ.,* Ռուսաց դիվանագիտությունը միջազգային համակարգում /18-19-րդ դդ/ մենագրության /հեղինակներ՝ Մ.Ա.Մուրադյան, Է.Գ.Մինասյան/ գրախոսություն, «Բանբեր Երևանի համալսարանի», Ե., 2006, թիվ 3, էջ 213-214:
25. *Աբրահամյան Հ. Մ.,* Մեր անվանի դասախոսները /Ծ.Պ.Աղայան/, հ.2-րդ, Ե., 2006, էջ 22-23:
26. *Աբրահամյան Հ. Մ.,* Մեր անվանի դասախոսները /Փ.Ի.Ենգոյան/, հ.2-րդ, Ե., 2006, էջ 100-101:
27. *Աբրահամյան Հ. Մ.,* Մեր անվանի դասախոսները /Ռ.Լ.Մովսիսյան/, հ.2-րդ, Ե., 2006, էջ 100-101:
28. *Մարգարյան Հ. Գ.,* Հայոց բանակը Զաքարյանների իշխանության ժամանակաշրջանում, «Հայոց բանակ – 15». Հանրապետական գիտաժողով, Երևան, 2007, էջ 31-33:
29. *Մարգարյան Հ. Գ.,* Խաղբակյանների (Պռոշյանների) տոհմը Արցախում և Սյունիքում ԺԲ դարում - ԺԳ դարի առաջին կեսին, Բերձոր, 2005, էջ 56-69.
30. *Մարգարյան Հ. Գ,* Sahib-Divan Sams Ad-Din Muhammad Juvaini and Armenia, In: "Iran and the Caucasus", vol. 10.2, Leiden – Boston, 2006, p. 167-180.
31. *Մարգարյան Հ. Գ.,* La Grande Armnie (XIIe-XVe siΩcle) – In:"Armenia sacra", Paris, 2007, p. 295-299.
32. *Զոհրաբյան Է. Լ.,* Մեր անվանի դասախոսները / Հ.Մ.Ութմազյան/, հ. 2-րդ, Ե., 2006, էջ 317-318:
33. *Զոհրաբյան Է. Լ.,* Պետության սոցիալական քաղաքականությունը Հայաստանում /1990-2005թթ./, «Հայոց պատմության հարցեր», հ. 8, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատ., Ե., 2007, էջ 359-374:
34. *Զոհրաբյան Է. Լ.,* Մանկավարժների սոցիալական կարգավիճակը կրթական բարեփոխումների համակարգում, «Մանկավարժական միտք», Ե., 2007, էջ 24-38:

35. *Սերոբյան Ս. Վ.,* Ազգային պատմության դասավանդման խնդրի շուրջ, «Հայագիտությունը դպրոցում», ՀՀ Կրթության ազգային ինստիտուտի հրատ., Ե., 2007, էջ 48-50:
36. *Սերոբյան Ս. Վ,* Մեր անվանի դասախոսները /Մ.Ա.Շիմշիրյան/, հ. 2-րդ, Ե., 2006, էջ 257:
37. *Ղարիբյան Ի. Գ., Հակոբյան Հ.,* Բջնի ամրոցի 2005-2006թթ պեղումների արդյունքները,, ԳԱԱ Հնագիտության ինստիտուտի դաշտային հետազոտություններին նվիրված տարեկան ժողովածու, Երևան, 2007, էջ 28-36:
38. *Ղարիբյան Ի. Գ.,* Գագիկ Բ թագավորի կյանքը և վախճանը, «Մոլորակ» Լոս-Անջելես, 15-30 ապրիլի, 2007, մեկ մամուլ:
39. *Ավետիսյան Հ. Գ.,* Արամուսի ուրարտական համալիրների պեղումները, Գիտակիան հոդվածների ժողովածու նվիրված Երևանի պատմությանը,Երևան 2006,էջ 41-46:
40. *Ավետիսյան Հ. Գ.,* Ագարակի պատմամշակութային արգելոցի 2001-2004 թթ. պեղումների արդյունքները, Պատմություն և կրթություն, Երևան 2006, էջ 123-132:
41. *Ավետիսյան Հ. Գ.,* The Fortress of Aramus. Preliminary report of excavations in 2004 and 2005. Aramazd Armenian journal of near Eastern studies, volume 1 2006, Yerevan, 2006, 105-134:
42. *Ավետիսյան Հ. Գ.,* Արարատյան դաշտի ամրոցները մ.թ.ա 11-8 դարերում, Հայ Աստվածաբան, Երևան 2007, էջ 14-20:
43. *Ավետիսյան Հ. Գ.,* Վանի թագավորության մարտակառքերը, ԵՊՀ և ՀՀ ՊՆ ռազմական ինստիտուտի Հայկական բանակ-15, Հանրապետական գիտաժողով, 26 հունվարի 2007, էջ 22-25:
44. *Հակոբյան Հ. Պ.,* Արցախի Տիգրանակերտ. հայտնաբերված է Տիգրան Մեծի հիմնադրած քաղաքը, բուկլետ, Երևան, 2006, 0.5 մամուլ, հեղինակակիցներ Հ.Պետրոսյան և Լ.Կիրակոսյան:
45. *Հակոբյան Հ. Պ.,* Աշխարհի և տաճարի հին արևելյան և անտիկ մոդելը:- «Գիտելիք և խորհրդանիշ, հավատալիք և սովորույթ», Միջազգային առաջին գիտաժողովի հոդվածների ժողովածու, Երևան, 2006, էջ 9-18:
46. *Հակոբյան Հ. Պ.,* Մաշտոցի գործունեության մշակութաբանական հենքը: Միջազգային գիտաժողով՝ նվիրված Հայոց գրերի գյուտի 1600 - ամյակին, զեկուցումների ժողովածու, Երևան, Գիտություն, 2006, էջ 66-78:
47. *Հակոբյան Հ. Պ.,* Le Chirak durant l'npoque antique: II^{e}s.avJ.-C. – III^{e}s.ap.J.-C. Dans les montagnes d'Armnnie.-Musne archnologique de Saint- Raphaul–Musne dnpartemental des Antiquitns –Rouen, 2007, p. 108-112.
48. *Հակոբյան Հ. Պ.,* Le complexe cultuel antique de Hoghmik –IIe- III^{e}siՈcles aprՈs J.-C. Dans les montagnes d'Armnnie.-Musne archnologique de Saint- Raphaul – Musne dnpartemental des Antiquitns –Rouen, 2007 p. 121-123.
49. *Հակոբյան Հ. Պ.,* Արցախի Տիգրանակերտ քաղաքի պեղումների նախնական արդյունքները: Գիտահետազոտական աշխատանքի ուղեծրում:- Երևան, Հրաչյա Աճառյան համալսարան, 2006 էջ 107-112:
50. *Նահապետյան Ռ. Ա.,* Ամուսնահարսանեկան ավանդույթները ուսանողների ընտանեկան արդի կենցաղում, ԲԵՀ, 2006, թիվ 3 /120/, էջ 52-60:
51. *Նահապետյան Ռ. Ա.,* Որդեծնության սովորույթներին ու ծեսերին առնչվող հավատալիքները հայոց մեջ 19-րդ դարի վերջին - 20-րդ դարի սկզբին /ըստ աղծնիքահայերի ազգագրական նյութերի, 2006, փետրվար-մարտ, /ԲԳ/, Էջմիածին, էջ 94-107:
52. *Նահապետյան Ռ. Ա.,* Խ. Աբովյանը որպես ազգագրագետ, Աբովյանագիտական հոդվածների հատընտիր ժողովածու, Երևան, 2007, էջ 123-132:
53. *Նահապետյան Ռ. Ա.,* Քավորը հայոց մեջ /ըստ աղծնիքահայերի ազգագրական նյութերի/, ՊԲՀ, 2007, թիվ 1 /174/, էջ 123-137:
54. *Նահապետյան Ռ. Ա.,* Քավորը հայոց ամուսնահարսանեկան ծիսակատարություններում /ըստ Սասնա գավառի սովորույթների/, Ավանդական բանավոր ժառանգություն, ոչ նյութական մշակույթ, Միջազգային երկրորդ գիտաժողով, Հոդվածների ժողովածու, Երևան, 2007, էջ 92-101:
55. *Նահապետյան Ռ. Ա.,* Խ. Աբովյանի ազգագրական ժառանգության հարցի շուրջ, Էջմիածին, 2007, հունվար-փետրվար, /Ա-Բ/, էջ 88-95:
56. *Գաբրիելյան Մ. Ռ.,* Պարիսպն ու հրապարակը՝ գործառականի և սիմվոլիկի միասնություն.-Գիտական հոդվածների ժողովածու նվիրված Երևանի պատմության հարցերին, Եր., 2006, էջ 47-56 /համահեղինակներ՝ Ա. Գնունի, Ա. Գալոյան/:
57. *Գաբրիելյան Մ. Ռ.,* Երևանը դրսից. «ընկալման» որոշ ազգաբանական առանձնահատկությունների մասին.-Գիտական հոդվածների ժողովածու նվիրված Երևանի պատմության հարցերին, էջ 57-62:

58. *Գաբրիելյան Մ. Ռ.,* Ադրբեջանից բռնագաղթվածների վերաբնակեցման գործընթացը ԼՂՀ-ում.-Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան, ապագան, միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 2006, էջ 171-174:
59. *Գաբրիելյան Մ. Ռ.,* Դերենիկ Սուրենի Վարդումյան /խոսք հիշատակի/.-Հայ ժողովրդական մշակույթ-XIII, Եր., 2006, էջ 5-7:
60. *Գաբրիելյան Մ. Ռ.,* U. Հոբոսյան, Èñòîêè àðìÿíñêîé ýòíîãðàôèè-110-ëåòèå æóðíàëà ''Àçãàãðàôàí àíäàñ'' è 100-ëåòèå Àðìÿíñêîãî ýòíîãðàôè÷åñêîãî îáùåñòâà.-Ì åæäóíàðîäíàÿ íàó÷íàÿ êîíôåðåíöèÿ ''Àðõåîëîãèÿ, ýòíîëîãèÿ, ôîëüêëîðèñòèêà Êàâêàçà'', Áàòóì, 2006, ñ. 367-368.
61. *Գաբրիելյան Մ. Ռ.,* Îñíîâíûå òåíäåíöèè ñîöèîêóëüòóðíîãî ðàçâèòèÿ ñîâðåìåííîãî àðìÿíñêîãî êðåñòüÿíñòâà.-Ì åæäóíàðîäíàÿ íàó÷íàÿ êîíôåðåíöèÿ ''Àðõåîëîãèÿ, ýòíîëîãèÿ, ôîëüêëîðèñòèêà Êàâêàçà'', Áàòóì, 2006, ñ.273-274.
62. *Հարությունյան Հ. Թ.,* Հայոց ավադական ամուսնահարսանեկան արարողակարգի դրսևորումները Հովհաննես Թումանյանի ստեղծագործություններում,ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, գիտական աշխատություններ,19-րդ, Գյումրի, 2006, էջ 52-58:
63. *Պետրոսյան Հ. Լ.,* Ուսումնասերի կերպարը և ուսումնառության թեման հայ միջնադարյան պատկերաքանդակում – Միջազգային գիտաժողով՝ նվիրված հայոց գրերի 1600-ամյակին, Զեկուցումների ժողովածու, Երևան, 2006, էջ 293-299:
64. *Պետրոսյան Հ. Լ.,* Արցախի Տիգրանակերտի և շրջակայքի հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները (համահեղինակներ՝ Ժ. Խաչատրյան, Ա. Փիլիպոսյան, Վ. Սաֆարյան)– Հայաստանի ազատագրված տարածքը և Արցախի հիմնախնդիրը, Երևան, 2006, էջ 361-365:
65. *Պետրոսյան Հ. Լ.,* Հնագիտական հետազոտություններն Արցախում. կազմակերպվածությունը, ձեռքբերումները, բացթողումները, հեռանկարները - Լեռնային Ղարաբաղի հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան, Միջազգային գիտաժողով, Ստեփանակերտ, 2006, էջ 110-112:
66. *Պետրոսյան Հ. Լ.,* Ðîëü öà÷êàðà â îðãàíèçàöèè ñâÿùåííîãî ëàíäøàôòà – *Mythical Landscapes Then and Now,* Yerevan, 2006, p. 251-260, 290-292.
67. *Պետրոսյան Հ. Լ.,* Արցախի Տիգրանակերտի ենթադրվող տարածքի և շրջապատի հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները (համահեղինակներ՝ Ժ. Խաչատրյան, Ա. Փիլիպոսյան, Վ. Սաֆարյան)– Լեռնային Ղարաբաղի հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան, Միջազգային գիտաժողով, Ստեփանակերտ, 2006, էջ 113-115:
68. *Մանուկյան Ս. Ս.,* Îðíàìåíò â ðóáðèêàöèè ðóêîïèñíûõ Âàíñêèõ. Հայ արվեստի հարցեր. Գիտական հոդվածներ ժողովածու. Թիվ 1. Երևան, 2006, էջ 368-373:
69. *Մանուկյան Ս. Ս.,* Տաթևի որմնանկարները (930թ.) և արևմտաքրիստոնեական վաղմիջնադարյան արվեստը: «Բազմավեպ» հանդես, 1-4, Վենետիկ, Սբ. Ղազար, 2006, էջ 293-311:
70. *Մանուկյան Ս. Ս.,* Îðíàìåíò â ðóáðèêàöèè ðóêîïèñíûõ Âàíñêèõ. "Âèçàíòèéñêèé âðåìåíèê", Ò. 65(90), Ì îñêâà, 2006, ñ. 243-247.
71. *Մանուկյան Ս. Ս.,* Հենրի Էլիբեկյան. Գիրք. Խմբագիր և կազմող. Երևան, 2006, էջեր 10-20, 181-183, (հայերեն և ռուսերեն լեզուներով):
72. *Խաչատրյան-Փոլադյան Ն.,* Î õóäîæåñòâåííîé ñèñòåìå Àêîïà Îâàòàíÿíà. Հակոբ Հովնաթանյան. անցում միջնադարից նոր ժամանակ: Գիտաժողով՝ նվիրված նկարչի ծննդյան 200-ամյակին: Զեկուցումների ժողովածու: Երևան, 2006, էջ 9-26:
73. *Թաջարյան Ի.,* Վաչար հարստության գեղանկարչությունը: Հակոբ Հովնաթանյան. անցում միջնադարից նոր ժամանակ: Գիտաժողով՝ նվիրված նկարչի ծննդյան 200-ամյակին: Զեկուցումների ժողովածու: Երևան, 2006, էջ 43-49:
74. *Հակոբյան Զ. Ա,* Միջնադարյան գեղանկարչության սկզբունքները Հակոբ Հովնաթանյանի արվեստում: Հակոբ Հովնաթանյան. անցում միջնադարից նոր ժամանակ: Գիտաժողով՝ նվիրված նկարչի ծննդյան 200-ամյակին: Զեկուցումների ժողովածու: Երևան, 2006, էջ 37-42:
75. *Հակոբյան Զ. Ա.,* Զվարթնոցի խորհրդաբանական կերպարը: «Էջմիածին» հանդես, Էջմիածին, մայիս-հունիս 2006թ., Զ համար, էջեր 76-85:
76. *Հակոբյան Զ. Ա.,* Âîïðîñû äàòèðîâêè è ëîêàëèçàöèè Òðàïèçîíñêîãî Âàíáåëÿ. «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 1, 2007թ., էջ 134-146:
77. *Տեր-Մարտիրոսով Ֆ. Ի.,* Äâîðåö â Åðâàíäàøàò. Ամսագիր «Ճարտարապետություն, շինարարություն», Երևան, փետրվար 2007, էջ 62-64:

78. *Սարգսյան Ա. Ա.,* Ghazarian Gagik Hovhannesi. Saur Allgemeines Kunstlerlexicon, Bd.46, Munchen-Leipzig, 2006, S 124
79. *Սարգսյան Ա. Ա.,* Gizgizian Mkrtič Melkoni. Saur Allgemeines Kunstlerlexicon, Bd.46, Munchen-Leipzig, 2006, S 510.
80. *Սարգսյան Ա. Ա.,* Giloyan Aršaluys Ałasu. Saur Allgemeines Kunstlerlexicon, Bd.46, Munchen-Leipzig, 2006, S 215.
81. *Սարգսյան Ա. Ա.,* Gyanjyan Kamo Nshani. Saur Allgemeines Kunstlerlexicon, Bd.47, Munchen-Leipzig, 2007, S 567.
82. *Չուգասզյան Լ. Բ.,* Արշակ Չոպանյանը Պյուվի դը Շավանի արվեստի մասին (Arshak Chobanian on the art of Puvis de Chavannes): «Ազգ», օրաթերթ, (Երևան), մարտ, 18, 2006, էջ,.2.
83. *Չուգասզյան Լ. Բ.,* Խոսք Բյուզանդ Սեմարյանի արվեստի մասին (On the art of Puzant Meymarian): Puzant Meymarian, Sculptor, Tarzana, California,2006, p. 4.
84. *Չուգասզյան Լ. Բ.,* Galents Armine. Saur Allgemeines Kunstlerlexicon, Bd.46, Munchen-Leipzig, 2006, S 64.
85. *Չուգասզյան Լ. Բ.,* Galents Harootyun. Saur Allgemeines Kunstlerlexicon, Bd.46, Munchen-Leipzig, 2006, S 65.
86. *Չուգասզյան Լ. Բ.,* Galents Saro. Saur Allgemeines Kunstlerlexicon, Bd.46, Munchen-Leipzig, 2006, S 66.
87. *Չուգասզյան Լ. Բ.,* Galstyan Vruyr. Saur Allgemeines Kunstlerlexicon, Bd.46, Munchen-Leipzig, 2006, S 89.
88. *Չուգասզյան Լ. Բ.,* Gojamanyan Byuzand. Saur Allgemeines Kunstlerlexicon, Bd.47, Munchen-Leipzig, 2007, S 344.
89. *Չուգասզյան Լ. Բ.,* Gojabashyan Ervand. Saur Allgemeines Kunstlerlexicon, Bd.47, Munchen-Leipzig, 2007, S 349.
90. *Չուգասզյան Լ. Բ.,* Gurgenyan Abraham. Saur Allgemeines Kunstlerlexicon, Bd.47, Munchen-Leipzig, 2007, S 499.
91. *Մարգարյան Ե. Հ.,* Սեծ Հայքի և Կոմմագենեի հոգևոր առնչությունների պատմությունից (Արքայական հանգստարան), Պատմություն և կրթություն, գիտատեսական և մեթոդական հանդես, թիվ 3-4, Երևան, 2006, էջ 17-24:
92. *Մարգարյան Ե. Հ.,* «Տիգրան Բ-ի աշխարհակալ տերության գաղափարաբանական հայեցակարգի հիմքերի մասին», Հայոց պատմության հարցեր, 8, Երևան, 2007, էջ 3-15:
93. *Հարությունյան Գ. Մ.,* Համակեցությունը և հակադրությունը հայոց կաթողիկոսության և Սյունյաց թեմի փոխհարաբերություններում (1286-1331 թթ.), Պատմություն և կրթություն, գիտատեսական և մեթոդական հանդես, թիվ 3-4, Երևան, 2006, էջ 40-47:
94. *Հարությունյան Գ. Մ.,* Հայոց կաթողիկոսության դավանաբանական կազմակերպման խնդիրները ԺԴ դարի առաջին կեսին, «Հայոց պատմության հարցեր», N 7, Երևան 2006, էջ 13-29:
95. *Հարությունյան Գ. Մ.,* Սյունյաց աթոռը ԺԳ դարի վերջին-ԺԴ դարի առաջին քառորդի դավանաբանական պայքարի հոլովույթում, «Հայոց պատմության հարցեր», N 8, Երևան 2007, էջ 77-94:
96. *Հարությունյան Գ. Մ.,* Հայոց եկեղեցու թեմական կազմակերպումը Կիլիկյան Հայաստանում XIII դ. վերջին-XIV դ. առաջին կեսին, «Լրաբեր», N 2, Երևան 2006, էջ 192-201:
97. *Հարությունյան Գ. Մ., Տեր-Պետրոսյան Լ.,* Խաչակիրները և հայերը, հ. Ա., «Լրաբեր», N 3, Երևան 2006, էջ 245-248:
98. *Հարությունյան Գ. Մ.,* Քաղաքական կողմնորոշման և դավանաբանական այլընտրանքի խնդիրը Կիլիկյան Հայաստանում /XIII դ. երկրորդ կես –XIV դ. սկիզբ/, «Լրաբեր», N 1, Երևան 2007, էջ 126-133:
99. *Հարությունյան Գ. Մ.,* Ադանայի 1317 թ. ժողովը և եկեղեցիների միավորման խնդիրը, «Կանթեղ», N 1, Երևան 2007, էջ 162-169:
100. *Հարությունյան Հ. Ժ.,* Արշակունյաց Հայաստանի սահմաններն ըստ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության»,Հանդես ամսօրեա, Վիեննա, Երևան 2006,թիվ 1-2, 229-250:
101. *Հարությունյան Հ. Ժ.,* Իշխանությունների իրավասությունների սահմանները Հին Հայաստանում ըստ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության», Կանթեղ, Երևան 2006, N3(28), էջ 152-156:
102. *Հարությունյան Հ. Ժ.,* Հայաստան-Մեծ Հայք. Սահմանային իրավասությունների խնդիրը համաձայն Ստրաբոնի «Աշխարհագրության», Օրենք և իրականություն, N 10, Երևան 2006, էջ 31-34:
103. *Հարությունյան Հ. Ժ.,* Արտաշես I և Մեծ հայքի թագավորության հիմնումը, Բանբեր, N 3(120) Երևան 2006, էջ 107-118:
104. *Հարությունյան Հ. Ժ.,* Կլավդիոս Պտղոմեոսի մի վկայության հարցի շուրջ, Կանթեղ, Երևան 2007,N 2, էջ 117-121:

105. *Մանուկյան Մ. Մ.,* Խաղաղություն և բարեկեցություն (Խաղաղապահության ձեռնարկատիրական շահագրգռությունները միջնադարից մինչև քսաներորդ հարուրամյակի սկիզբը), Պատմություն և կրթուրյուն, գիտատեսական և մեթոդական հանդես, թիվ 3-4, Երևան, 2006, էջ 90-94:
106. *Մինասյան Լ. Ռ.,* Պոմպեոսը և քաղաքական իրավիճակը Հռոմում Ք. Ա. 54-51 թթ.(Պրինցիպատի նախափո՞ղը) ,Պատմություն և կրթություն, գիտատեսական և մեթոդական հանդես, թիվ 3-4, Երևան, 2006, էջ 25-39:
107. *Պետրոսյան Վ. Մ.,* Պետությունների ավանդական աստիճանակարգը,Պատմություն և կրթություն, գիտատեսական և մեթոդական հանդես, թիվ 3-4, Երևան, 2006, էջ 83-89:
108. *Ղազարյան Ա. Մ.,* Համաշխարհային պատմությունը քաղաքագիտական կրթության համակարգում (Նոր և նորագույն պատմություն), Պատմություն և կրթություն, գիտատեսական և մեթոդական հանդես, թիվ 3-4, Երևան, 2006, էջ 163-166:
109. *Ստեփանյան Ա. Ա.,* Արտաշեսյան դարաշրջանի Մեծ Հայքի ներքին և արտաքին քաղաքականության մի քանի հիմնախնդիրների մասին, Պատմություն և կրթություն, գիտատեսական և մեթոդական հանդես, թիվ 3-4, Երևան, 2006, էջ 5-16:
110. *Ստեփանյան Ա. Ա.,* Հին Սպարտա (Պոլիսային համակեցության մի հարացույցի մասին),Պատմություն և կրթուրյուն, գիտատեսական և մեթոդական հանդես, թիվ 3-4, Երևան, 2006, էջ 107-122:
111. *Ստեփանյան Ա. Ա., Հարությունյան Հ. Ժ., Կրկաշարյան Ս.,* Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա. VI-մ.թ.IVդդ) , Պատմություն և կրթուրյուն, գիտատեսական և մեթոդական հանդես, թիվ 3-4, Երևան, 2006, էջ 195-200:
112. *Ստեփանյան Ա. Ա.,* Խորենացու «Ողբի» մի հատվածի մեկնաբանության շուրջ, զեկուցումների ժողովածու, միջազգային գիտաժողով՝ նվիրված հայոց գրերի գյուտի 1600-ամյակին, Երևան, ՀՀԳԱԱ «Գիտություն» հրատ., 2006թ., էջ 248-254:
113. *Թիլոյան Դ. Ֆ.,*Կիլիկիայի հայոց թագավորության ներքին և արտաքին իրավիճակը 1320- 1323 թթ. «Բանբեր Երևանի Համալսարանի», Երևան 2006, N 1, էջ 179-185:
114. *Թիլոյան Դ. Ֆ.,* Լևոն բռնակալի գահակալության հարցի շուրջ, Հայոց պատմության հարցեր, Երևան 2007,N 8, էջ 106-113:
115. *Մարգարյան Ե. Հ.,* Ï îëèíûé ïðèíöèï îáùåñòâåííîé îðãàíèçàöèè. Íåêîòîðûå îñîáåííîñòè ïîëèòîâ îáùåæèòèÿ,YSU, NAASR Newsletter, 11(2005/2006), Ñáîðíèê íàó÷íûõ ñòàòåé, ãîäè÷íàÿ êîíôåðåíöèÿ, Èçäàòåëüñòâî ÐÀÓ, 2007,ñ.540,
116. *Մարգարյան Ե. Հ.,* Ñåìàíòèêà ìîñòà â àðìÿíñêîé è ñëàâÿíñêîé ìèôîïîýòèêå, Âåñòíèê ÐÀÓ, 2007, N 1, ñ.64-76.
117. *Մարգարյան Ե. Հ.,* Àðøàêàâàíñêàÿ ýëëèíèñòè÷åñêàÿ ïîëèòèêà è Ãðàä Íåáðîñ Âåëèêîãî, Åðåâàí, 2007, Èçäàòåëüñòâî ÐÀÓ, ñ. 102.
118. *Հարությունյան Բ. Հ.,* Հայաստանը 387-428 թթ.: Սեսրոպ Մաշտոցը և հայոց գրերի գյուտը , ուսումնական քարտեզ, տպագիր ,Երևան, 2006, մասշտաբ 1:1500 000:
119. *Հարությունյան Բ. Հ.,* Հայաստանը ըստ Սևրի պայմանագրի, տպագիր քարտեզ, Երևան, 2006, մասշտաբ 1:1000000:
120. *Հարությունյան Բ. Հ.,* Տիգրան Մեծի տերությունը, տպագիր , Երևան, 2006, մասշտաբ 1:4500000:
121. *Հարությունյան Բ. Հ.,* Կիլիկիայի և հարակից տարածքների էթնիկական բնակչությունը XII-XIV դարերում, «Հայաստանի Ազգային Ատլաս», հատ. Ա, Երևան, 2007, քարտեզ, թիվ 99:
122. *Հարությունյան Բ. Հ.,* Տիգրան Մեծի տերությունը, ուսումնական քարտեզ, տպագիր, Երևան, 2006, մասշտաբ 1:4800000:
123. *Բադալյան Գ. Մ.,* Օտար էթնիկ տարրերի ներթափանցումը (մինչև XIV դար), նույն տեղում, էջ 100, մասշտաբ 1: 3500000:
124. *Բադալյան Գ. Մ.,* Հայերի արտագաղթը և միջնադարյան հայ գաղթավայրերի ձևավորումը (III-XIV դարեր), էջ 101, մասշտաբ 1: 9000000:
125. *Բադալյան Գ. Մ.,* Հայերի տեղաբաշխումը XVII դարի սկզբին, էջ 102, մասշտաբ 1: 7500000:
126. *Բադալյան Գ. Մ.,* Հայերի տեղաբաշխումը պատմական Հայաստանում և հարակից տարածքներում XIX դարի սկիզբը) , էջ 103, մասշտաբ 1: 7500000:
127. *Հարությունյան Բ. Հ., Մխիթարյան Վ.* Գ., Histoire du peuple armenien 2007, France, Editions Privat /20 քարտեզ/:

Զեկուցումների թեզիս

1. *Հովհաննիսյան Պ. Հ.,* Հայկական բանակը Տիգրան 2-րդ Մեծի օրոք (թվաքանակի խնդիրը), տե՛ս «Հայկական բանակ-15», Հանրապետական գիտաժողովի հիմնադրույթներ, Երևան, 2007, էջ 26-27:
2. *Մինասյան Է. Գ.,* Հայաստանի երրորդ հանրապետության ազգային բանակի կազմավորման փուլերը, «Հայկական բանակ-15» հանրապետական գիտաժողովի հիմնադրույթներ, Երևան, 2007, էջ 40-44:
3. *Մինասյան Է. Գ.,* Armenia: on the thorny path to independece, Central Asia and the Caucasus, N 2 (44), 2007.
4. *Պետրոսյան Հ. Լ.,* Հնագիտական հետազոտություններն Արցախում – ԼՂՀ անցյալը, ներկան և ապագան, Միջազգային գիտաժողով, Հիմնադրույթներ, Ստեփանակերտ, 2006, էջ 110-112:
5. *Պետրոսյան Հ. Լ.,* Արցախի Տիգրանակերտի և շրջակայքի հնագիտական հետազոտության առաջին արդյունքները (համահեղինակությամբ) - ԼՂՀ անցյալը, ներկան և ապագան, Միջազգային գիտաժողով, Հիմնադրույթներ, Ստեփանակերտ, 2006, էջ 113-115:
6. *Պետրոսյան Հ. Լ.,* Ուսումնասերի կերպարը և ուսումնառության թեման հայ միջնադարյան պատկերաքանդակում – Միջազգային գիտաժողով՝ նվիրված հայոց գրերի 1600-ամյակին, Զեկուցումների ժողովածու, Երևան, 2006, էջ 293-299:
7. *Պետրոսյան Հ. Լ.,* Արցախի Տիգրանակերտի և շրջակայքի հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները (համահեղինակներ՝ Ժ. Խաչատրյան, Ա. Փիլիպոսյան, Վ. Սաֆարյան)– Հայաստանի ազատագրված տարածքը և Արցախի հիմնախնդիրը, Երևան, 2006, էջ 361-365:

ՌԱԴԻՈՖԻԶԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ *Վարդանյան Յուրի Լազարի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Դեկանի տեղակալ՝ *Մովսիսյան Կարեն Միքայելի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Ֆակուլտետի մասնագիտությունները եւ մասնագիտացումները

Շիֆր	**Մասնագիտություն՝**
011200	Ռադիոֆիզիկա և էլեկտրոնիկա
011300	Կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա

Մասնագիտացումներ՝ (մագիստրատուրա) ԳԲՀ ռադիոֆիզիկա և հեռահաղորդակցություն, ալիքային պրոցեսների տեսություն և տիեզերքի ֆիզիկա, կիսահաղորդիչների ֆիզիկա և միկրոէլեկտրոնիկա

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ եւ թղթակից անդամներ

1. Հարությունյան Վլադիմիր Միքայելի
2. Մարտիրոսյան Ռադիկ Մարտիրոսի

Պատվավոր կոչումներ ունեցողներ

1. Մարտիրոսյան Ռադիկ Մարտիրոսի, ՀՀ և ՈՒկրաինայի Հանրապետության պետական մրցանակների դափնեկիր
2. Հախումյան Արսեն Ալեքսանդրի, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր
3. Աբրահամյան Լեոնարդ Էդուարդի, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր
4. Գազազյան Էդմոնդ Դավիթի, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր
5. Հարությունյան Վլադիմիր Միքայելի, ՀՀ նախագահի մրցանակի դարփնեկիր
6. Առաքելյան Վալերի Միքայելի, ՀՀ նախագահի մրցանակի դարփնեկիր
7. Ադամյան Ջավեն Նիկոլայի, ՀՀ նախագահի մրցանակի դարփնեկիր
8. Մարտիրոսյան Խաչատուր Սարգիսի, ՀՀ նախագահի մրցանակի դարփնեկիր
9. Շահնազարյան Գոհար Էմիլի, ՀՀ նախագահի մրցանակի դարփնեկիր
10. Բաղալյան Սամվել Միքայելի, «Հայաստան» համահայկական հիմնադրամի «Երիտասարդ գիտնականներ - 93» մրցույթի հաղթող
11. Խաչատրյան Կարո Խաչիկի, ՀՀ նախագահի մրցանակի դարփնեկիր, ասպիրանտ

Կրթական աստիճան, մասնագիտություն	*Ուսանողների թիվը՝ 389*							
	I կուրս		II կուրս		III կուրս		IV կուրս	
	պպ	վճ	պպ	վճ	պպ	վճ	պպ	վճ
Բակալավրիատ								
Ռ/ֆ. և էլեկտրոնիկա	41	27	44	23	37	37	41	27
Կիսահաղ. ֆիզիկա և միկրոէլ.	9	6	7	7	9	6	10	6
Ընդամենը	50	33	51	30	46	43	51	33
Մագիստրատուրա								
Ռ/ֆ. և էլեկտրոնիկա	4	16	2	7				
Կիսահաղ. ֆիզիկա և միկրոէլ.	2	10	3	8				
Ընդամենը	6	26	5	15				

Քննաշրջանների արդյունքները

Ձմեռային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		պպ	վճ		
Բակալավրիատ					
Ռ/ֆ. և էլեկտրոնիկա					
1-ին	68	11	12	5	66
2-րդ	67	8	16	4	64
3-րդ	74	11	20	5	58
4-րդ	68	20	17	12	46
Կիսահաղ. ֆիզիկա և միկրոէլ.					
1-ին	15		3	5	80
2-րդ	14	3	4	1	50
3-րդ	15	9	6		0
4-րդ	16	2	2	2	75
Ընդամենը	337	64	80	34	57
Մագիստրատուրա					
Ռ/ֆ. և էլեկտրոնիկա					
1-ին	20	-	1	10	95
2-րդ	9	-	-	4	100
Կիսահաղ. ֆիզիկա և միկրոէլ.					
1-ին	12	-	-	9	100
2-րդ	11	-	-	8	100
Ընդամենը	52	-	1	31	98

Ամառային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		պպ	վճ		
Բակալավրիատ					
Ռ/ֆ. և էլեկտրոնիկա					
1-ին	71	13	17	5	58
2-րդ	62	15	17	6	48
3-րդ	76	11	22	13	57
Կիսահաղ. ֆիզիկա և միկրոէլ.					
1-ին	14	1	2	3	79
2-րդ	14	6	6	-	14
3-րդ	13	7	4	2	15
Ընդամենը	250	53	68	29	52
Մագիստրատուրա					
1-ին					
Ռ/ֆ. և էլեկտրոնիկա	20	-	-	11	100
Կիսահաղ. ֆիզիկա և միկրոէլ.	6	-	4	4	33
Ընդամենը	26	-	4	15	85

Շրջանավարտներ

Մասնագիտություն	*Ընդամենը* 109, *այդ թվում նախորդ տարիներից՝* 6	
	բակալավրիատ (գերազանցության դիպլոմով)	մագիստրատուրա
Ռ/ֆ. և էլեկտրոնիկա	74 (14)	7
Կիսահաղ. ֆիզիկա և միկրոէլ.	17	11
Ընդամենը	91 (14)	18

2006/2007 ուստարում հրատարակվել են

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	2	2	44	34

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ *4*

ԳԵՐԲԱՐՁՐ ՀԱՃԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԴԻՈՖԻԶԻԿԱՅԻ ԵՎ ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ *Մարտիրոսյան Ռաֆիկ Մարտիրոսի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Ներկարարյան Խաչատուր Վլադիմիրի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Ավետիսյան Յուրի Հովհաննեսի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոցենտ
3. Մակարյան Արմեն Հովհաննեսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Մովսիսյան Կարեն Միքայելի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Նիկողոսյան Անահիտ Սերգեյի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
6. Քալանթարյան Վիտալի Պետրոսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
7. Հարոյան Հովհաննես Սամվելի, տեխ. գիտ. թեկնածու, ասիստենտ
8. Թադևոսյան Վահե Ռազմիկի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
9. Մինասյան Հասմիկ Արամի, դասախոս

Համատեղողներ

1. Առաքելյան Արտաշես Կորյունի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Հովհաննիսյան Դավիթ Լևոնի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոցենտ
3. Հախումյան Արսեն Ալեքսանդրի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Աբրահամյան Լեոնարդ Էդուարդի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
5. Զաքարյան Տիգրան Վանիկի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
6. Երզնկանյան Կարեն Հրաչյայի, ասիստենտ
7. Ստեփանյան Կոմիտաս Ժորայի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
8. Մխիթարյան Վոլոդյա Սկրտիչի, դասախոս

Ոխտմնաօժանդակ աշխատակիցներ

1. Աբրահամյան Լեոնարդ Էդուարդի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու
2. Գրիգորյան Նատալիա Գրիգորի
3. Իսաջանյան Անահիտ Թադևոսի
4. Մակարյան Քրիստինե Ժորայի
5. Հովսեփյան Տաթևիկ Անուշավանի
6. Թևոսյան Սուսաննա Ամասիկի
7. Մովսիսյան Մանուշակ Լերմոնտի
8. Անտոնյան Արփինե Էդվարդի
9. Առուշանյան Կարինե Ռոբիկի

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. ՏՀց ալիքների գեներացումը ոչ գծային պարբերական կառուցվածքներում (պետ. ֆինանսավորում):	Ավետիսյան Յու. Հ.
2. Մակերևութային պլազմոն պոլյարիտոնների գրգռումը կոնաձև մակերևույթին և այդ երևույթի կիրառությունները (պետ. ֆինանսավորում):	Ներկարարյան Խ. Վ.
3. Ոչ գծային միջավայրերում մի քանի օպտիկական տատանումների տնողությամբ լազերային իմպուլսների տարածումը մոդելավորող համակարգչային ծրագրային ապահովում (պետ. ֆինանսավորում):	Հովհաննիսյան Դ. Լ.
4. Սիլիմետրային տիրույթի էլեկտրամագնիսական ալիքների կենսաբանական ազդեցությունները (չֆինանսավորվող):	Քալանթարյան Վ. Պ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Հաշվետու ժամանակաշրջանում տերահերցային (ՏՀց) ալիքների գեներացման և գրանցման նպատակով հավաքվել է փորձարարական համակարգ, որն ընդգրկում է ֆեմտովայրկյանային լազեր (250 կՎտ հզորությամբ և 80 ֆվ իմպուլսի տնողությամբ): Հետազոտվել է ՏՀց ալիքների արձակումը LiNbO3 բյուրեղներից և InAs կիսահաղորդչային մակերևույթից: Գրանցվող ՏՀց ճառագայթումը ~ 10^4 անգամ գերազանցում է համակարգի աղմուկները, որը հնարավորություն է ընձեռում կատարելու կլանիչ նյութերի սպեկտրոսկոպիկ հետազոտություններ ՏՀց տիրույթում: Փորձարարական նպատակով հետազոտվել է նաև ենթատերահերցային ճառագայթման դետեկտման հնարավորությունը գազապարպման լամպերի պլազմայում: Ստացվել են նոր և բավական հուսադրող արդյունքներ:

Տեսականորեն հետազոտվել է օպտիկական ղեկավարումով ՏՀց ալիքների մոդուլյացիան GaAs կիսահաղորդչային մակերևույթի օգնությամբ:

Պաշտպանվել է դոկտորական մեկ ատենախոսություն. Ավետիսյան Յու. Հ., «Տերահերցային ալիքների գեներացիան պարբերական կառուցվածքով օպտիկական ոչ գծային միջավայրերում»:

Թեմա 2. Ստացված արդյունքների համաձայն՝ մետաղյա և կիսահաղորդչային հպվող գնդերից կազմված կառուցվածքով տարածվող մակերևութային պլազմոն պոլյարիտոնները (ՄՊՊ) հպման կետի մերձակայքում գերֆոկուսանում են: Ալիքային դաշտերի անսովոր ածի այս մեխանիզմի օգնությամբ կարելի է բացատրել մակերևույթից օպտիկական ոչ գծային արձագանքի անսովոր ուժեղացումը:

Տեսածրող օպտիկական մանրադիտակի համար զննիչ հանդիսացող օպտիկական մանրաթելի բացասական կորությամբ սրածայր մետաղապատ գագաթի մերձակայքում ալիքատարային մոդից գրգռված ՄՊՊ-ները գերֆոկուսանում են՝ ապահովելով ալիքային դաշտերի տեղայնացումը տասնյակ նանոմետրերի սահմաններում:

Գրանցվել է լուսային ճառագայթման առկայծում լուծույթում գտնվող օպտիկական մանրաթելի մետաղապատ կոնաձև գագաթից, երբ լուծույթի դիէլեկտրիկ թափանցելիությունը սահուն փոփոխվում է նրա բաղադրիչներից մեկի գոլորշիացման հետևանքով: Երևույթը բացատրվում է մակերևութային պլազմոն պոլյարիտոնների ռեզոնանսային գրգռմամբ:

Հեղուկից ելնելու ընթացքում օպտիկական մանրաթելի կոնաձև մետաղապատ գագաթին ձևավորված մենիսկի օգնությամբ ստեղծված եռաշերտ համակարգում գրանցվել է ալիքատարային մոդերի միջև լուսային էներգիայի ռեզոնանսային վերամղման երևույթը: Պրոցեսի արտասովոր զգայունությունը գագաթի դիրքից թույլ է տալիս գրանցել նանոմետրական լայնույթով տատանումներ:

Պաշտպանվել է թեկնածուական երկու ատենախոսություն. Աբրահամյան Տ. Ա., «Մակերևութային ալիքների գրգռումը օպտիկական մետաղապատ կոնաձև ալիքատարում», Բաբայան Ա. Ե., «Մակերևութային պլազմոն պոլյարիտոնների գերֆոկուսացումը մետաղապատ և կիսահաղորդչային կոնաձև կառուցվածքներում»:

Թեմա 3. Հաշվետու ժամանակաշրջանում հետազոտվել է ինֆրակարմիր ճառագայթման գեներացիան 3-5մկմ տիրույթում, երբ ոչ գծային բյուրեղով նրա օպտիկական առանցքին ուղղահայաց տարածվում է գծային բևեռացված լազերային իմպուլս մի քանի օպտիկական տատանումների տևողությամբ: Լուծվել է Մաքսվելի հավասարումը FDTD մեթոդով, որը նկարագրել է լազերային իմպուլսի տարածումը: Որպես օրինակ՝ հաշվվել է ինֆրակարմիր ճառագայթման սպեկտրալ պրոֆիլը, որը գեներացվում է 10 ֆվ լազերային իմպուլսով 850 նմ ալիքի երկարությամբ:

Մոդելը կիրառվել է ֆեմտովայրկյանային լազերային իմպուլսի անցումը 375 մկմ հաստությամբ $LiNbO_3$ բյուրեղով հետազոտելու համար: Հետազոտվել է 3,8 մկմ կենտրոնական ալիքի երկարության տիրույթում ինֆրակարմիր ճառագայթման ֆիլտրացիան 412 մկմ երկարությամբ լուսատար Բրեգյան ցանցով: Դիտարկվել է նաև երկու փոխուղղահայաց բևեռացված 10 ֆվ երկարությամբ լազերային իմպուլսների փոխազդեցությունը իզոտրոպ ոչ գծային միջավայրում:

Ստացված է փոխազդող իմպուլսների սպեկտրերի շեղման կախվածությունը հապաղման ժամանակից: Ցույց է տրված, որ հաշված և չափված (տեսական և փորձնական) ՏՀց ճառագայթման դաշտի ժամանակային կախվածությունները իրար լավ են համապատասխանում: Հետազոտվել է նաև ՏՀց իմպուլսի գեներացիայի կինետիկան՝ կախված ոչ գծային բյուրեղի երկարությունից:

3. Ընդհանրացվել է մագնիսահիդրադինամիկայի հավասարումների համակարգը այլասերված և դասական տիեզերական պլազմաներում՝ կապված մագնիսաճայնային, Ալֆվենյան և «0-ձայնի» ալիքների գեներացիայի և ուժեղացման, ինչպես նաև տրանսֆորմացիայի հնարավորության հետ, որոնք կիրառվում են նեյտրոնային աստղերում և Արեգակի լուսոլորտում ընթացող ֆիզիկական երևույթներում և պրոցեսներում:

4. Հետազոտվել են ճառագայթման տեղափոխման խնդիրների նոր դասեր միջավայրի հետ ֆոտոնների փոխազդեցության հնարավոր պրոցեսների, մասնավորապես՝ մեծ էներգիայով ֆոտոնների և տարրական մասնիկների միջև ընթացող ռեակցիաների, զույգերի ծնման, ատոմների միաֆոտոն/բազմաֆոտոն ֆոտոիոնիզացիայի պրոցեսների հաշվառմամբ և հնարավոր մաթեմատիկական մոդելավորմամբ:

Հաշվետու տարում կազմվել է «Աստղաֆիզիկայի լաբորատոր և գործնական աշխատանքների ժողովածու» ուսումնամեթոդական ձեռնարկը, կից՝ «Աստղաֆիզիկայի դիտողական տվյալների շտեմարան» DVD-ներդիրով /ընդհանուր խմբ.՝ Ա. Կ. Ավետիսյան/: Հեղինակային խումբ. ամբիոնի աշխատակիցներ՝ Մ. Ա. Ղազարյան, Է. Լ. Կարապետյան, Ժ. Ռ. Սարտիրոսյան, Գ. Վ. Պետրոսյան և Բյուրականի աստղադիտարանի աշխատակիցներ՝ Հ. Ա. Հարությունյան, Ա. Ա. Հակոբյան, Ա. Մ. Միքայելյան, Տ. Յու. Մաղաքյան, Վ. Հ. Մալումյան:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	1	9

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Գրիգորյան Մարտին Գևորգի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Ավետիսյան Կարեն Լարիկի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Աֆյան Սերգեյ Ղազարի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Կիտբալյան Անատոլի Ալեքսանդրի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Հակոբյան Գագիկ Հովսեփի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Ղազարյան Գայանե Գրիգորի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
6. Ղալումյան Աշոտ Գրիգորի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
7. Պողոսյան Առնակ Վալերիի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
8. Սարգսյան Արշալույս Սարգսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
9. Սաֆարյան Ստելլա Մնացականի, դասախոս

Համատեղողներ

1. Եպիսկոպոսյան Սերգո Արմենակի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Ոչ գծային մոտարկումներ ֆունկցիոնալ տարբեր տարածություններում (պետական ֆինանսավորում):	Գրիգորյան Մ. Գ.
2. Անալիտիկ ֆունկցիաների տարածություններ բազմաչափկոմպլեքս և հարմոնիկ անալիզում, կիրառություններ (պետական ֆինանսավորում):	Ավետիսյան Կ. Լ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Ապացուցված է, որ ՈՒոլշի համակարգը օժտված է ուժեղացված « L_1 -greedy» հատկությամբ: Կառուցված է ընդհանրացված ՈՒոլշի համակարգի այնպիսի ենթահամակարգեր, որոնց գծային թաղանթի փակման յուրաքանչյուր ֆունկցիայի «Greedy» ալգորիթմը տարամիտում է L^1 -նորմով:

Նկարագրված են Ֆաբեր-Շաուդերի համակարգի այն ենթահամակարգերը, որոնց գծային թաղանթի փակման յուրաքանչյուր ֆունկցիայի «Greedy» ալգորիթմը զուգամիտում է C -նորմով: Կառուցված է անընդհատ ֆունկցիայի օրինակ, որի «Greedy» ալգորիթմը ըստ Ֆաբեր-Շաուդերի համակարգի, տարամիտում է համարյա ամենուրեք:

Նկարագրված է L^1 տարածության այն ֆունկցիաների դասը, որի յուրաքանչյուր ֆունկցիայի «Greedy» ալգորիթմը, ըստ Հաարի համակարգի, կզուգամիտի L^1 -նորմով:

Նկարագրված են Հաարի համակարգի այն ենթահամակարգերը, որոնց գծային թաղանթի փակման յուրաքանչյուր ֆունկցիայի «Greedy» ալգորիթմը զուգամիտում է L^1 -նորմով:

Հետազոտված են եռանկյունաչափական, Ուոլշի, ընդհանրացված Ուոլշի, Հաարի և Ֆաբեր-Շաուդերի համակարգերի $L^p[0,1],\ p>0$, և $L^p_\mu[0,1],\ p>0$-կշռային տարածություններում «Greedy» քվազիբազիսության, ունիվերսալության (տարբեր տիպերի) և քվազիունիվերսալության համակարգեր լինելու հարցերը:

Ուսումնասիրված են տարբեր դասերի ֆունկցիաների (միաչափ և բազմաչափ), ըստ նշված համակարգերի, ոչ գծային մոտարկման, որոշ դեպքերում լավագույն մոտարկման, մասնավորապես «greedy» ալգորիթմով մոտարկման հարցեր:

Ուսումնասիրված է տարբեր ֆունկցիոնալ դասերում Ֆուրիեի շարքերի զուգամիտությունը, օրթոգոնալ շարքերով ներկայացումները և ունիվերսալ շարքերը: Ցույց է տրված օրթոնորմալ համակարգի այնպիսի տեղափոխություն, որը օժտված է ուժեղացված L^p – հատկությամբ և հանդիսանում է քվազիբազիս: $C_{[0,1]}$ և $L^p_{[0,1]}$ $(1\le p<2)$ տարածություններում կառուցված է ունիվերսալ օրթոգոնալ շարքեր (մի քանի իմաստներով):

Թեմա 2. C^n կոմպլեքս տարածության միավոր գնդում և պոլիդիսկում հետազոտվել են խառը նորմով և Բերգմանի հայտնի տարածությունները, որոնք պարունակում են անալիտիկ կամ n-հարմոնիկ ֆունկցիաներ: Ստացվել են նրանց նոր բնութագրումներ կոմպլեքս գրադիենտի և շառավղային ածանցյալի միջոցով: Ածանցման և ինտեգրման կոտորակային օպերատորների միջոցով նշված ֆունկցիոնալ տարածություններում, ինչպես նաև Տրիբել—Լիզորկինի տարածություններում ստացվել են Լիթլվուդի և Պելիի L^p-անհավասարություններ: Միավոր պոլիդիսկում ստացվել են Հարդիի և Բլոխի կշռային դասերում Աղամարի լակունար շարքերի լրիվ բնութագրումներ և ճշգրիտ գնահատականներ կոտորակային օպերատորների միջոցով: Այդ արդյունքները ապացուցելու համար Պելիի և Պելի-Կահանե-Խինչինի դասական անհավասարությունները ընդհանրացված են պոլիդիսկի բազմաչափ դեպքի համար:

Ամբիոնում կատարված այլ աշխատանքների մասին: Արագ ալգորիթմների մշակում: Հետազոտվել է ռացիոնալ ֆունկցիաներով մոտարկումների նոր եղանակներ: Աշակվել են ալգորիթմներ որոշ խնդիրների լուծման համար.

ա) Ֆրեդհոլմի և Վոլտերայի երկրորդ սեռի ինտեգրալ հավասարումներ,

բ) եզրային խնդիրներ սովորական դիֆերենցիալ հավասարումների համար,

գ) Ֆուրիեի ձևափոխություն,

դ) Ֆուրիեի գործակիցների հաշվում եռանկյունաչափական համակարգի համար և ֆունկցիայի վերլուծություն,

ե) Ֆուրիեի արագ ձևափոխությունը անհավասարաչափ ցանցերի համար,

զ) վերլուծություններ օրթոգոնալ համակարգերով և Ֆուրիեի գործակիցների հաշվում:

Հիպոէլիպտիկ հավասարումների լուծման ֆունկցիոնալ և թվային մեթոդներ: Հետազոտվել է դիֆերենցիալ հավասարումների լուծումների պատկանելիությունը C^∞ - ին, մասնավորապես Ժևրեի դասերին, որը թույլ է տալիս այդ հավասարումների համար կիրառել վարիացիոն մեթոդներ: Սահմանված է Ժևրեի մուլտիանիզոտրոպ դասերը և ցույց է տրված, որ $P(D)u = f$ հիպոէլիպտիկ հավասարման բոլոր լուծումները ընկած են հիպոէլիպտիկ օպերատորով ծնված Ժևրեի մուլտիանիզոտրոպ դասին: Այս տիպի արդյունքներ ստացված են նաև ոչ հիպոէլիպտիկ հավասարումների մի դասի համար:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	1	22	2

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՖԻԶԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Մեդրակյան Դավիթ Միերի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Աբրահամյան Մարտին Գրիգորի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Բաղալյան Դավիթ Հայրապետի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
3. Երիցյան Հոմերոս Սուրենի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
4. Խաչատրյան Ժյուլվեռն Բաղդասարի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
5. Մինասյանց Միքայել Խնկանոսի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
6. Մուրադյան Ատոմ Ժորայի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
7. Գևորգյան Աշոտ Հարությունի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոցենտ
8. Գաբրիելյան Ռուբեն Յոլակի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
9. Նինոյան Ժիրայր Հովհաննեսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
10. Պապոյան Արգամ Արիստակեսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
11. Պետրոսյան Պետիկ Գրիգորի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
12. Բաղալյան Համլետ Գուրգենի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
13. Գրիգորյան Լյովա Նազարեթի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
14. Տեր-Գևորգյան Էմմա Իվանի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
15. Մխիթարյան Սամվել Արամի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
16. Հարությունյան Սերուժան Ջավենի, ասիստենտ

Համատեղողներ

1. Հայրապետյան Յուրի Նապոլեոնի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Հայրապետյան Սեխակ Վազգենի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ

Ոխտումնաօժանդակ աշխատակիցներ

1. Շառոյան Լենա Արշավիրի
2. Պետրոսյան Ալմաստ Խաչիկի
3. Էյրամջյան Հասմիկ Անդրանիկի
4. Հալաջյան Վարվառա Մամիկոնի
5. Ստեփանյան Մարգարիտա Արամայիսի
6. Ենոքյան Հասմիկ Էդիկի
7. Առաքելյան Հովսեփ Սկրտչի
8. Հովհաննիսյան Վահե Նասլետի
9. Իսրայելյան Էմմա Հարությունի
10. Հարությունյան Գրետա Գևորգի
11. Անտոնյան Սերի Գևորգի
12. Մահտեսյան Վիոլետա Փայլակի
13. Քարաջյան Էլլա Հրաչիկի

14. Կարապետյան Ռուզաննա Միսակի
15. Բաղդասարյան Նորիկ Արամի

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Մագնիսացված միջավայրերի և նրանցում ալիքների տարածման ուսումնասիրությունը (պետական ֆինանսավորում):	Սեդրակյան Դ. Մ.
2. Փոքր չափանի համակարգերի ստացումը և նրանց ֆիզիկական հատկությունների ուսումնասիրությունը տարբեր բնույթի փնջերով (պետական ֆինանսավորում):	Սինասյանց Մ. Խ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Աշակվել է տեսական մոտարկում՝ հենված բիպարաբոլիկ մոտավորության ընդհանրացման վրա, Բոզե-Էյնշտեյնյան կոնդենսատի էներգետիկ սպեկտրի որոշման համար, եթե կոնդենսատը գտնվում է պարբերական և դանդաղ փոփոխվող մագնիսական հորերի միացյալ պոտենցիալային դաշտում:

Ռիմանի դասական էլիպսոիդները ընդհանրացվել են զանգվածի անհամասեռ բաշխման և արագությունների դիսպերսիայի անիզոտրոպության հաշվառմամբ: Ցույց է տրված, որ զանգվածի անհամասեռությունը չի փոխում Մակլորենի էլիպսոիդների դինամիկ և դարավոր անկայունության հայտանիշները, բայց փոփոխում է հավասարակշռության բնութագրերի արժեքները:

ՈՒսումնասիրվել են գրաղիենտային պարամետրերով միաչափ ֆոտոնիկ բյուրեղների օպտիկական հատկությունները և ցույց է տրվել, որ գրադիենտի առկայությունը բերում է բրեգյան տիրույթի էական լայնացմանը և, այսպես կոչված, բոլոր ուղղություններով և ըստ ընկնող լույսի՝ բոլոր բևեռացումների դիֆրակցիոն անդրադարձման տիրույթի ձևավորմանը:

Շերտերի գումարման մեթոդով ճշգրիտ լուծված է լույսի թեք անցման խնդիրը համասեռ և անհամասեռ պարուրային կառուցվածքով միջավայրերով, մագնիսական դաշտի բացակայության և նրա առկայության դեպքում բոլոր սահմաններին բազմակի անդրադարձումների ճշգրիտ հաշվառմամբ:

Թեմա 2. Իրականացվել է ռենտգենյան ճառագայթների միաժամանակյա փոքր և մեծ անկյուններով դիֆրակցիա և ուսումնասիրվել ինֆրակարմիր ճառագայթների ազդեցությունը կենսաբանական երկշերտի վրա:

Տեսականորեն գնահատվել և փորձնականորեն ուսումնասիրվել է ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցությունը կենսաբանական երկշերտի վրա: Այդ ազդեցությունը առաջացնում է կորիզային թաղանթների գործունեության փոփոխություն:

ՈՒսումնասիրված է սիլիկատային ատոմում ձևավորված $CdSe_{1-x}S_x$ նանոբյուրեղների արգելված գոտու էներգիայի ջերմաստիճանային գործակցի վարքը՝ կախված նրանցում նանոբյուրեղների չափսերից: Ցույց է տրված, որ ջերմաստիճանային գործակցի կախվածությունը նանոբյուրեղների չափսերի մաքսիմումով կոր է և այն կարելի է բացատրել տաքացման ժամանակ նանոբյուրեղների չափսերի փոփոխությամբ՝ ի հաշիվ մատրիցայի ընդարձակման:

Առաջարկված և փորձնականորեն իրագործված է եռաբլոկ միաձույլ ռեզոնատոր ռենտգենյան և սինքրոտրոնային ճառագայթման համար: Ցույց է տրված, որ ասիմետրիկ բրեգյան անդրադարձումների միջոցով կարելի է առաջնային ճառագայթը, առանց էներգետիկ կորուստների, մտցնել ռեզոնատոր և ստանալ փակ ցիկլ:

Փորձնականորեն ուսումնասիրվել է Պենինգի տիպի պարպման դեպքում էլեկտրոնների երկայնական փնջերի ձևավորման պայմանները: Ստացված են երկայնական էլեկտրոնների հոսանքի խտության

կախվածությունը կատողի առանձին ռադիալ տեղամասերում պարպման միջակայքից: Կախված պարպման պայմաններից՝ երկայնական հոսանքի խտությունը հասնում է առավելագույն արժեքի ինչպես կատողի մակերևույթի կենտրոնական, այնպես էլ այլ տեղամասերում:

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. CRDF/NFSAT N ARP2-3232/YE-04 "Gravitational waves from isolated superdense stellar configurations".	Սեդրակյան Դ. Մ.

Թեմա 1. Դիտարկվել է բաբախիչների պատյանում գաուսյան փնջերի տեսքով ոչ գծային տարածական ալիքների տարածման խնդիրը մագնիսական գազադինամիկայի շրջանակներում:

Դիտարկված է բաբախիչների պատյանում թորոիդալ մագնիսական դաշտի գեներացիայի խնդիրը: Հետազոտված է մագնիսական դաշտի բաշխումը նեյտրոնային աստղի գունավոր գերհաղորդիչ միջուկում: Ստացված են Գինզբուրգ-Լանդաուի հավասարումները նեյտրոնային աստղի գունավոր գերհաղորդիչ միջուկի մագնիսական և գլյուոնմագնիսական դաշտերի համար դիքվարկների «CFL»- կոնդենսատի առկայությամբ:

Ստացված է երկրորդ կարգի գերհաղորդիչներում մագնիսական քվանտային մրրիկների շարժման հավասարումների համակարգը, երբ T=0: Քննարկված է բաբախիչի անկյունային արագության թռիչքի կենտրոնախույս վերամբարձ ուժով պայմանավորված մեխանիզմը, որը տեղի ունի դիֆերենցիալ պտտվող նեյտրոնային աստղում քիմիական պոտենցիալի անհամասեռ ավելցուկի դեպքում:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	1	21	3

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՖԻԶԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Ցականով Վասիլի Մկրտչի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոցենտ*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Դանագուլյան Ալիտա Սերգեյի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Գրիգորյան Ռոմեն Պետրոսի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոցենտ
3. Ժամկոչյան Վահան Սիքայելի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոցենտ
4. Մարգարյան Ռազմիկ Խալաթի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Բալաբեկյան Անահիտ Ռաֆիկի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
6. Հայրապետյան Իզոլդա Նիկոլայի, դասախոս

Համատեղողներ

1. Սիրունյան Ալբերտ Մկրտչի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոցենտ
2. Բզնունի Սուրիկ Արարատի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ

3. Մալաքյան Յոլակ Համազասպի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ

Ոխումնաօժանդակ աշխատակիցներ

1. Պետրոսյան Լեոնիդ Հենրիկի
2. Խուդավերդյան Աննա Ալֆրեդի
3. Օհանյան Կարապետ Սարիբեկի
4. Կարապետյան Գայանե Սուրենի

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
2. Հեղուկ-գազ փուլային անցում գրգռված միջուկում. կիրառական խնդիրներ (պետական ֆինանսավորում):	Դանագուլյան Ա. Ս.
3. Ենթակրիտիկական միջուկային ռեակտորների կատարելագործում (պետական ֆինանսավորում):	Ժամկոչյան Վ. Մ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են ^{12}C–միջուկ փոխազդեցությունների փորձնական տվյալների մշակումները:

Կիրառական միջուկային ֆիզիկայի բնագավառում շարունակվել են աշխատանքները մասնիկների գրանցման դետեկտորների ստեղծման ուղղությամբ: Որպես բազային տարր՝ օգտագործվում է $Si - SiO_2$ հենքը: Պատրաստված է նմուշ 350մկ հաստության $2x2մմ^2$ մակերեսով: Ի համալրումն ավանդական տեխնոլոգիայով մշակումների, որոնց դեպքում մետաղական բարակ թաղանթով երեսպատվում են դետեկտորի զգայուն տիրույթը սահմանափակող զուգահեռ մակերևույթները, սույն աշխատանքում փորձ է կատարված ստեղծելու կոնտուրային էլեկտրոդով դետեկտոր, որում մուտքային երեսպատման թաղանթը փոխարինված է մակերևույթը սահմանափակող հաղորդիչ կոնտուրով:

Կատարված են նմուշի՝ որպես դետեկտորի, ժամանակային և լայնութային բնութագրերի նախնական ուսումնասիրություններ: Դրանք ցույց են տալիս, որ նշված տեխնոլոգիայով պատրաստված նմուշը էֆեկտիվ գրանցում է ալֆա մասնիկներ: Կատարված աշխատանքների հիման վրա հրատարակության է նախապատրաստվում հոդված:

Հետազոտության դրական արդյունքները հիմք են հանդիսանում շարունակելու դետեկտորի բնութագրերի համակողմանի ուսումնասիրությունները:

Թեմա 2. Հաշվետու ժամանակահատվածում ավարտվել է նեյտրոնային հոսքի դաշտի հավասարեցման էֆեկտի գնահատումը ենթակրիտիկական երկկասկադային ռեակտորներում: Ստացված արդյունքները ցույց են տալիս դիտարկվող համակարգերի ելքային պարամետրերի զգալի բարելավում:

Ավարտված է աշխատանքը՝ նվիրված միջուկային ռեակտորների տեսական հիմունքների շարադրմանը միախմբային մոտավորությամբ, և այն կներկայացվի ուսումնական ձեռնարկի տեսքով: Սա առաջին ձեռնարկն է այս թեմայով, որը կհրատարակվի հայերեն:

Մոտ է ավարտին աշխատանքը՝ նվիրված Ֆերմիի նեյտրոնների «հասակի» և նեյտրոնների դանդաղեցման տեսությունների հիմնադրույթների շարադրմանը (կներկայացվի որպես ուսումնական ձեռնարկ):

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	1	2

ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ՖԻԶԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Դալյան Եվա Բենոյի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Բարխուդարյան Վիգեն Գրիգորի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Մորոզով Վլադիմիր Ֆյոդորի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
3. Վարդանյան Վոլոդյա Իշխանի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոցենտ
4. Ֆարշյան Հրանտ Սոկրատի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Ասլանյան Լարիսա Լեոնտիի, ասիստենտ

Համատեղողներ

1. Հարությունյան Սամվել Գառնիկի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Կարապետյան Նելլի Հրանտի, կենս. գիտ. թեկնածու, ասիստենտ

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Կուծանյան Հրաչ Ռաֆիկի
2. Սինյավսկայա Ալլա Կոնստանդինի
3. Սնգրյան Հակոբ Եգորի
4. Քարամյան Կարինե Կառլենի
5. Բոյաջյան Համլիկ Բենիկի
6. Ալոյան Լուսինե Ռաֆիկի

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Կարգավորվածությունը կենսապոլիմերներում (պետական ֆինանսավորում):	Մորոզով Վ. Ֆ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Դիտարկվել է պարույր-կծիկ անցումը կողք-կողքի փոխազդող երկու մակրոմոլեկուլներում: Տրանսֆեր-մատրիցային պատկերացումների հիման վրա հետազոտված է համակարգի կորրելյացիոն

երկարության և այլ մակրոսկոպիկ բնութագրերի ջերմաստիճանային կախվածությունները: Ցույց է տրված, որ նույնատիպ փոխազդեցության էներգիայի գերակշռումը խառը տիպի փոխազդեցության էներգիայի նկատմամբ հանգեցնում է առավելագույն կորրելյացիոն երկարության կտրուկ աճին, համակարգի հալման ինտերվալի նեղացմանը, հալման ջերմաստիճանի աճին՝ միջդուպլեքսային փոխազդեցության ներդրման աճին զուգընթաց: Ստացված են արտահայտությունները տրանսֆեր-մատրիցի և դարավոր հավասարման համար: Ցույց է տրվել, որ ընդհանրացված ստեկինգի մոդելի համար երկմասշտաբանի մոդելը կարող է բերվել միջինացված փոխազդեցության մասշտաբով միամասշտաբ մոդելի:

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. DNA and chromosome alteration caused by newly synthesized potential antitumor and carcinogenic compounds. Comparison with radiation effects (ISTC # A-301.2).	Հարությունյան Ս. Գ. Վարդանյան Հ.

Թեմա 1. Կատարվել է մի շարք կենսաբանորեն ակտիվ միացությունների /նոր սինթեզված Zn-պարունակող պորֆիրինների/ ազդեցության ուսումնասիրումը ԴՆԹ-ի կառուցվածքի և ֆունկցիայի վրա *in vivo* և *in vitro* պայմաններում: Ուսումնասիրվել են առողջ, ուռուցքակիր և բուժված առնետների հյուսվածքներից անջատված ԴՆԹ-ների հալման կորերը, շրջանային դիքրոիզմի սպեկտրները և պարույր-կծիկ անցման էնթալպիան: Հետազոտման արդյունքները թույլ են տալիս եզրակացնելու, որ ուսումնասիրվող պորֆիրինները դրսևորում են որոշակի հակաքաղցկեղային հատկություններ:

Ցույց են տրվել, որ միլիմետրային էլեկտրամագնիսական ալիքներով ճառագայթման տևողությունից կախված՝ ԴՆԹ-ի ջերմակայունությունը աճում է 1.5 աստիճանով, կրկնակի թորած ջրի խտությունը ոչ մի փոփոխություն չի կրում, մինչդեռ բուֆերի և ԴՆԹ-ի լուծույթի խտությունն աճում է: Ենթադրվում է, որ ճառագայթման հետևանքով ԴՆԹ-ի ջերմակայունությունը և լուծույթի խտության աճը պայմանավորված է լուծույթում առկա Na^+ իոնների հիդրատացիայի աստիճանի նվազմամբ, որի հետևանքով այդ իոնները ավելի արդյունավետ են կայունացնում ԴՆԹ-ի կրկնակի պարույրը:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	6	6

ՊԻՆԴ ՄԱՐՄՆԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Կիրակոսյան Ալբերտ Ավետիսի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Կարախանյան Ռոբերտ Կարապետի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Վարդանյան Արշակ Լյուդվիգի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Ավետյան Կոլյա Թորգոմի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ

4. Առաքելյան Սիլետա Մարտիրոսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
5. Գրիգորյան Արշակ Հրայրի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
6. Մարտիրոսյան Աիդա Հայկազի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
7. Ասատրյան Աննա Լյուդվիգի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ

Համատեղողներ

1. Գևորգյան Սամվել Գերասիմի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ

Ոխտմնաօժանդակ աշխատակիցներ

1. Վերմիշյան Գառնիկ Անդրանիկի
2. Մնացականյան Թամարա Սևոյի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու
3. Խնկոյան Ռոբերտ Կամսարի
4. Հովհաննիսյան Գայանե Մարլենի
5. Ռոստոմյան Ասյա Արտաշի

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. 2D, 1D, 0D էլեկտրոնային համակարգերի ֆիզիկական բնութագրերի տեսական ուսումնասիրություն (պետական ֆինանսավորում):	Կիրակոսյան Ա. Ա.
2. Սիկրոնային չափերի և համակցված բյուրեղային կառուցվածքների ուսումնասիրումը տարամիտված ռենտգենյան ճառագայթման և էլեկտրոնային փնջերի դիֆրակցիայի եղանակով (պետական ֆինանսավորում):	Ավետյան Կ. Թ.
3. Տրված անկյունային պարամետրերով և սպեկտրալ բաղադրությամբ ճառագայթման ձևավորման համար դիֆրակցիոն համակարգերի (ներառյալ ռենտգենաինտերֆերամետրական) ստեղծման նպատակով տեսական և փորձարարական հետազոտություններ (պետական ֆինանսավորում):	Գասպարյան Լ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Բևեռային օպտիկական ֆոնոնային մողերի վրա տարածական սահմանափակության և էլեկտրոնի միջենթագոտիական անցումների հաշվառմամբ ուսումնասիրվել է շարժունությունը կիսահաղորդչային քվանտային լարում էլեկտրոն-բևեռային օպտիկական ֆոնոն փոխազդեցության դեպքում: $Cd_{0.35}Zn_{0.65}Se/ZnSe$ շրջանային կտրվածքով լարի դեպքում ուսումնասիրվել են շարժունության՝ ջերմաստիճանից, լարի շառավղից, համաձուլվածքային կոնցենտրացիայից ունեցած կախվածությունները:

ՈՒսումնասիրվել է ջրածնանման խառնուրդի կապի էներգիայի մեջ էլեկտրոն-բևեռային օպտիկական ֆոնոն փոխազդեցության ներդրումը շրջանային կտրվածքով քվանտային կետում և քվանտային լարում արտաքին էլեկտրական դաշտի առկայության դեպքում: Հետազոտվել է կապի էներգիայի և դրա պոլարոնային շեղման կախումը նանոկառուցվածքի չափերից, էլեկտրական դաշտի լարվածությունից, ինչպես նաեւ խառնուրդի դիրքից: ՈՒսումնասիրվել է տարածական, կուլոնյան և շտարկյան սահմանափակությունների դերը պոլարոնային երևույթներում:

Դիտարկվել է նաև կապի էներգիայի և դրա պոլարոնային շեղման վրա գլանային կետի առանցքով ուղղված մագնիսական և էլեկտրական դաշտերի համատեղ ազդեցությունը:

Ուսումնասիրվել է Վանյե-Մոտի էքսիտոնի կապի էներգիայի մեջ էքսիտոն-բևեռային օպտիկական ֆոնոն փոխազդեցության ներդրումը շրջանային կտրվածքով քվանտային լարում ֆոնոնային սպեկտրի վրա տարածական սահմանափակության ազդեցության հաշվառմամբ: Ծանր և թեթև խոռոչներով էքսիտոնների կապի էներգիայի և դրա պոլարոնային շեղման թվային հաշվարկները կատարվել են GaAs/AlAs և CdSe/ZnSe քվանտային լարերի համար: Հետազոտվել է նշված մեծությունների կախումը լարի շառավղից:

Թեմա 2. Ռենտգենյան ճառագայթման լայն տարամիտված փնջի դիֆրակցիայի եղանակով հետազոտվել են միաչափ դեֆորմացված բյուրեղային ցանցի պարամետրները: Ցույց է տրվել, որ այս եղանակով ստացված դիֆրակտային պատկերն իրենից ներկայացնում է կոնական հատույթների համախումբ: Տվյալ երկրաչափության դեպքում կոնական հատույթներն իրենցից ներկայացնում են հիպերբոլներ: Ուսումնասիրվել են միաչափ դեֆորմացված Al բյուրեղային ցանցի տարրական բջջի աղավաղումները, ցույց է տրվել, որ նիստակենտրոնացված խորանարդային կառուցվածքը ձեռք է բերում որոշ տետրագոնալություն:

Մշակվել և ուսումնասիրվել է Ֆրենկել-Կոնտորովայի նույնանում դիսլոկացիաների շարժումը և փոխազդեցությունը: Ցույց է տրվել, որ փոքր արագությունների դեպքում դիսլոկացիաների միջև փոխազդեցությունն էական է և բերում է մի շարք հետաքրքիր երևույթների առաջացման: Մեծ արագությունների դեպքում փոխազդեցությունը զգալիորեն փոքր է և զգացվում է միայն որոշ ժամանակ անց՝ թույլ վանողության տեսքով: Ձայնի արագության մոտ արագությունների դեպքում դիսլոկացիաների միջև փոխազդեցությունը ձգտում է զրոյի:

Ցույց է տրվել, որ սիլիցիումի բարակ թաղանթների անցումային եղանակով ստացված կիկուչի-էլեկտրոնագրերի վրա դիտվող շրջանագծերի առաջացումը պայմանավորված է ատոմների գծային շարքերի երկայնքով էլեկտրոնների կանալավորման երևույթով:

Հայտնաբերվել է, որ սիլիցիումի բարակ բյուրեղների էլեկտրոնագրերի վրա դիտվող կոր կիկուչի-գծերի առաջացումը կապված է իրենց նորմալ դիրքերից կետային անդրադարձումների շեղման հետ: Եզրակացվել է, որ կիկուչի-գծերի կորացման ուղղությունը համընկնում է կետային անդրադարձումների շեղման ուղղության հետ:

Թեմա 3. Փորձնականորեն ռենտգենյան հաճախությունների տիրույթում հայտնաբերվել է ջերմաստիճանային արհեստական անիզոտրոպություն, և փորձ է կատարվել տեսականորեն բացատրել այդ երևույթը բրեգ-լաուեյան դիֆրակցիայի դեպքում: Փորձնականորեն հաստատվել է, որ իզոտրոպ բյուրեղն ջերմաստիճանային գրադիենտի առկայությամբ վերածվում է օպտիկապես անիզոտրոպ միառանցք բյուրեղի, որի օպտիկական առանցքի ուղղությունը համընկնում է կիրառված արտաքին ազդեցության ուղղության հետ, որն էլ բյուրեղի համաչափության առանցքն է, ինչն էլ առաջ է բերում երկբեկում:

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. "Improvement of properties of shrinkage-compensating cement paste of type K" CRDF Project # ARP2-2610-YE-04.	Հարությունյան Վ.
2. "Energy Relaxation by Multiphonon Processes in Quantum Dots" ANSEF Grant No.05-PS-nano-0811-228.	Կիրակոսյան Ա. Ա.
3. "System for high-resolution magneto-optical measurements" "Instrumentation for Scientific Infrastructure III" Award # ISIPA 01-04.	Գևորգյան Ս. Գ.
4. "Superconductivity precursor and posterior effects" NFSAT-CRDF Graduate Research Support Program, Award # GRASP 30/06.	Գևորգյան Վ. Ս.
5. "Ultra-high sensitivity position sensor for seismometry" NFSAT Scientific Results Commercialization Program (Commercialization of Products/Results Support Program).	Գևորգյան Ս. Գ.

Թեմա 1. Շարունակվել են K-տիպի ցեմենտային մածուկի կառուցվածքային և դեֆորմացիոն վիճակի ռենտգենաֆիզրակտոմետրական և ռենտգենամիկրոսկոպական հետազոտությունները երեք տարբեր տիպի (CSA-S, CSA#20, $C_4A_3\overline{S}$) խառնուրդային նյութերի առկայության դեպքում: Ռենտգենամիկրոսկոպական հետազոտությունները կատարվել են 25 նմ տարածական լուծունակությամբ ռենտգենյան փափուկ ալիքային տիրույթում աշխատող մանրադիտակով (Լոուրենս Բերկլիի լաբորատորիայի սինքրոտրոնային արագացուցիչ, Կալիֆորնիա, ԱՄՆ): Տարբեր ժամանակահատվածներում գրանցված ռենտգենյան պատկերները ցույց են տալիս, որ բոլոր նմուշներում, անկախ խառնուրդային նյութերի հարաբերական տոկոսային պարունակությունից, հիմնականում ձևավորվում են մասնիկներ ասեղնաձև ծողիկների (էտրինգիտի ֆազ) և հարթ հեքսագոնալ բյուրեղիկների (կալցիումի հիդրօքսիդի ֆազ) տեսքով: Այդ մասնիկների ձևավորման (աճի) արագությունն էապես կախված է խառնուրդային նյութերի տիպից և տոկոսային պարունակությունից: Առաջարկված է տեսական մոդել, որի հիման վրա գնահատվել են կալցիումի հիդրօքսիդի և էտրինգիտի բյուրեղական աճի արագությունը, կինետիկ գործակիցը և լուծված մասնիկների դիֆուզիայի գործակիցը: Գրանցված ռենտգենաֆիզրակտոմետրական սպեկտրների նախնական մշակումից հետևում է, որ նշված ֆազերի մասնիկների դեֆորմացիաները 10^{-4} կարգի են: Փորձնական տվյալները ստացված են մոտ 50 նմուշից:

Թեմա 2. Բևեռային օպտիկական ֆոնոնների սպեկտրի վրա տարածական սահմանափակության ազդեցության հաշվառմամբ ուսումնասիրվել է տաք քվազիմիաչափ էլեկտրոնային համակարգում էներգիական ռելաքսացիան՝ հաշվի առնելով այդ պրոցեսում տաք ֆոնոնային համակարգի առաջացման հնարավորությունը: Գնահատվել է էներգիայի ռելաքսացիայի արագության մեջ միջենթագոտիական ցրման ներդրումը: Ստացվել են էլեկտրոնի էներգիայի ռելաքսացիայի արագության՝ էլեկտրոնային ջերմաստիճանից, կոնցենտրացիայից և լարի շառավղից ունեցած կախումները: Ուսումնասիրվել է նաև տաք էլեկտրոնային համակարգի էլեկտրոնային ջերմաստիճանի ռելաքսացիայի ժամանակի կախումն էլեկտրոնային ջերմաստիճանից ինչպես GaAs/AlAs, այնպես էլ ավելի բևեռային $Cd_xZn_{1-x}Se/ZnSe$ քվանտային լարերի համար: Կատարվել է արդյունքների համեմատական վերլուծություն:

Թեմա 3. Նյութերի հետազոտությունների փորձարարական ապահովման նպատակով իրականացվել է «Oxford Instruments» ընկերության մոտ 10մկմ տարածական լուծունակությամբ օժտված ցածր ջերմաստիճանային մագնիսաօպտիկական հետազոտություններ իրականացնող Microstat-BT համակարգի ձեռքբերումը ու գործարկումը (ԳԱՍԱՀ-ի և CRDF-ի ISIPA 01-04 համատեղ ղրամաշնորհի շրջանակներում):

Մշակվել է ձայնային ալիքի հաճախության լայն տիրույթ ապահովող նոր միկրոֆոնի աշխատանքի սկզբունքը, և դրա հիման վրա նոր միկրոֆոնի լաբորատոր մանրակերտ է ստեղծվել ու փորձարկվել: Արդյունքն արդյունավետ կարող է կիրառվել օդանավակայանների անձնագրային հսկողության կետերում՝ ուղևորին ըստ ձայնի նույնացնելու խնդիրը լուծելիս, ինչը արդիական է ահաբեկչության աճի ներկայիս պայմաններում:

Էապես կատարելագործվել է նախորդ տարում առարկաների մակերևույթի հատկությունների զոնդավորման առաջարկված մոտեցումը, որը հիմնված է պինդմարմնային, մոտդաշտային զոնդերը «հեռադաշտայիններով» փոխարինելու վրա: Սկզբունքորեն նոր այդ մոտեցումը հնարավորություն է տալիս ստեղծել նոր դասի մանրադիտակներ, որոնք կունենան, մասնավորապես, հարթ կոճի հիման վրա գործող «հեռահար» և «չխոտորող» զոնդեր: Մակերևույթ զոնդավորող տեխնիկայի այսպիսի կատարելագործումը կարող է հանգեցնել մանրազննման բնագավառում նոր ուղղության զարգացմանը:

Թեմա 4. Հավաքվել է ցածր ջերմաստիճաններում գործող, միաշերտ, հարթ կոճով ինքնագեներատոր: Կատարելագործվել է հարթ կոճերի պատրաստման տեխնոլոգիան, ինչի հիման վրա էլ ստեղծվել են 2-5մմ տրամագծով բարորակ միաշերտ կոճեր: Սկսվել է կրիոգեն համակարգի նախապատրաստումը, հավաքվել և փորձարկվել է վակուումային համակարգ և հեղուկ հելիումի վրայի գոլորշիները նոսրացնող համակարգ:

Թեմա 5. ԳԱՍԱՀ-ի աջակցությամբ կազմվել է բիզնես ծրագիր՝ նախորդող տարում ստեղծված ու զգայունությամբ և աշխատանքի հաճախային տիրույթի լայնությամբ իր նմանակներին էապես գերազանցող

սեյսմական սարքի առևտրայնացման նպատակով: Մարքը կարող է օգտագործվել երկրաշարժին նախորդող երկրակեղևի շատ թույլ արտահայտված տատանումների ֆիզիկական բնույթն ուսումնասիրելու նպատակով:

Էապես կատարելագործվել է լայն հաճախային տիրույթում (0.1–100Հց) տատանվող առարկայի դիրքի փոփոխությունները մոտ 1նմ լուծունակությամբ գրանցող նախկինում առաջարկված մեթոդը (սառեցնելիս մեթոդի զգայունությունը մի կարգով էլ է լավանում): Այն կարող է օգտագործվել միկրո- և նանոէլեկտրոնիկայում մշակվող նմուշի դիրքի փոփոխությունը ճշգրիտ գրանցելու և կարգավորելու համար: Մեթոդը կարելի է օգտագործել նաև նոր ու զգայուն բժշկական սարքեր ստեղծելու նպատակով:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	10	7

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳՈՒՐԳԵՆ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՖԻԶԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Չուբարյան Էդվարդ Վարդանի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Կրյուչկյան Գագիկ Յուրիի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Շահաբասյան Կարեն Սերուժանի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
3. Հարությունյան Գոհար Հրանտի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոցենտ
4. Սահարյան Արամ Ազատի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոցենտ
5. Խաչատրյան Բաբկեն Վաղարշակի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոցենտ
6. Հովսեփյան Աշոտ Վաղարշակի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
7. Հակոբյան Տիգրան Ստեփանի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
8. Երանյան Արմեն Հակոբի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
9. Պետրոսյան Ռուբիկ Գրիգորի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
10. Սադոյան Ավետիս Աբելի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
11. Օհանյան Վադիմ Ռոբերտի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ

Համատեղողներ

1. Գրիգորյան Լևոն Շավիղի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. Ավագյան Ռոլանդ Մամիկոնի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
3. Մարդոյան Լևոն Գրիգորի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոցենտ

Ոհսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Նովիկովա Ալլա Լեոնիդի
2. Հախվերդյան Նաիրա Արշամի

3. Սեդրակյան Գոհար Երեմի

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Գրավիտացիայի տեսության որոշ հարցեր և դրանց ֆիզիկական ու աստղաֆիզիկական կիրառությունները (պետական ֆինանսավորում):	Ավագյան Ռ. Մ.
2. Քվանտային տեղակատվական տեխնոլոգիաների հետազոտումները (չֆինանսավորվող):	Կրյուչկյան Գ. Յու.
3. Ռելյատիվիստիկ մասնիկների ճառագայթումը պինդ մարմիններում ակուստիկ տատանումների առկայությամբ (չֆինանսավորվող):	Գրիգորյան Լ. Շ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Հետազոտված են մակերևութային էներգիա–իմպուլսի թենզորի վակուումային միջինները կորության հետ կամայական կապի պարամետրով սկալյար դաշտի համար, որը բավարարում է Ռոբինի եզրային պայմաններին երկու զուգահեռ բրանների վրա: Ենթադրվում է, որ ֆոնային տարածությունը օժտված է $AdS_{D_1+1}\times\Sigma$, տոպոլոգիայով, որտեղ Σ–ն կոմպակտ ենթատարածություն է: Այդ մակերևութային խտությունները բրանների վրա լոկալիզացված կոսմոլոգիական հաստատունի տիպի գրավիտացիոն աղբյուրի ինչպես արտաքին, այնպես էլ ներքին ենթատարածություններում: Օգտագործելով ընդհանրացված ձետա ֆունկցիայի մեթոդը՝ բրանների մակերևութային էներգիաները ներկայացված են մի բրանին համապատասխանող էներգիայի (երբ երկրորդ բրանը բացակայում է) և երկրորդ բրանի կողմից մակածված էներգիայի գումարի տեսքով: Մի բրանի էներգիային համապատասխանող ձետա ֆունկցիան պարունակում է բևեռով պայմանավորված և վերջավոր ներդրումներ: Անվերջ բարակ բրանի դեպքում աջ և ձախ մասերից եկող բևեռների ներդրումները կրճատվում են և լրիվ ձետա ֆունկցիան վերջավոր է: Քննարկված է մակերևութային էներգիայի վերանորմավորման պրոցեդուրան ու համապատասխան հակաանդամների կառուցվածքը: Մակերևութային էներգիայի երկրորդ բրանով մակածված մասերը վերջավոր են և հետազոտված են խնդրի պարամետրերի արժեքների տարբեր ասիմպտոտիկ տիրույթներում: Մասնավորապես, ցույց է տրված, որ բրանների միջև մեծ հեռավորությունների դեպքում մակածված մակերևութային խտությունները հանգեցնում են բրանի վրա էքսպոնենցիալ փոքր կոսմոլոգիական հաստատունի առաջացման: Ձետա ֆունկցիայի եղանակով հաշվարկված է նաև լրիվ վակուումային էներգիան՝ բաղկացած ծավալային ու մակերևութային մասերից: Հետազոտված է վակուումի հատկությունները բնութագրող լոկալ ու գլոբալ մեծությունների հարաբերակցության հարցը: ՈՒսումնասիրված են Վայթմանի ֆունկցիան, դաշտի քառակուսու ու էներգիա–իմպուլսի թենզորի վակուումային միջինները (D+1)–չափանի Ռինդլերյան տիպի տարածա–ժամանակում երկու համակենտրոն աֆերիկ բրանների վրա Ռոբինի եզրային պայմաններին բավարարող սկալյար դաշտի համար: Այդ տարածա–ժամանակը մոտարկում է երկրաչափությունը սև խոռոչների հորիզոնին մոտ: Բրանների վրա ազդող վակուումային ուժերը ներկայացված են սեփական ու փոխազդեցությունների ուժերի գումարի տեսքով: Քննարկված է փոխազդեցության ուժերի վարքը՝ կախված բրանների դիրքերից ու եզրային պայմաններից: Ցույց է տրված, որ այդ ուժերը կարող են լինել ինչպես ձգողական, այնպես էլ վանողական: Հետազոտված է (D+1)–չափանի գլոբալ մոնոպոլի վերջավոր կորիզի ազդեցությունը սկալյար ու ֆերմիոնային դաշտերի քվանտային հատկությունների վրա: Սֆերիկ համաչափ ստատիկ կորիզի ընդհանուր դեպքում կորզից դուրս տիրույթի համար արտածված են բանաձևեր Վայթմանի ֆունկցիայի, դաշտերի քառակուսիների ու էներգիա–իմպուլսի թենզորների վակուումային միջինների համար: Այդ վակուումային միջինները ներկայացված են կետային գլոբալ մոնոպոլին համապատասխանող ու վերջավոր կորիզով մակածված մասերի գումարի տեսքով: ՈՒսումնասիրված է կորիզով ինդուկցված մասի վարքը մեծ հեռավորությունների վրա, կորիզի մակերևույթին

մոտ, ինչպես նաև ուժեղ գրավիտացիոն դաշտերի համար: Որպես ընդհանուր արդյունքների կիրառություն՝ դիտարկված է մոդել, որում կորիզի ներսի տիրույթը նկարագրվում է Միլնկովսկու տարածա–ժամանակով: Ստացված են համապատասխան կարման պայմանները և կորիզի սահմանին լոկալիզացված մակերևութային էներգիա–իմպուլսի թենզորի տեսքը: Այս մոդելի համար հետազոտված են նաև վակուումային միջինները կորիզի ներսում: Հաշվարկված է գլոբալ մոնոպոլի շրջակայքում դաղարի վիճակում գտնվող կետային լիցքի էլեկտրաստատիկ սեփական էներգիան ու սեփական ուժը գլոբալ մոնոպոլի կորիզի ընդհանուր սֆերիկ համաչափ ստատիկ մոդելի դեպքում: Արտածված է բանաձև՝ համապատասխան Գրինի ֆունկցիայի համար: Կորիզից դուրս տիրույթի համար սեփական էներգիան ներկայացված է կետային մոնոպոլին համապատասխանող մասի ու վերջավոր կորիզով պայմանավորված մասի գումարի տեսքով: Դիտարկված է պարզ մոդել, որում կորիզի ներսում երկրաչափությունը համապատասխանում է հարթ տարածա–ժամանակի: Այդ մոդելի համար հաշվված են նաև սեփական էներգիան ու սեփական ուժը կորիզի ներսում գտնվող լիցքի համար: Հետազոտված են Վայթմանի ֆունկցիան, դաշտի քառակուսու ու էներգիա–իմպուլսի թենզորի վակուումային միջինները կորության հետ ընդհանուր կապի պարամետրով սկալյար դաշտի համար կոսմիկական լարի դաշտում գտնվող համառանցք գլանային մակերևույթի ներսում և դրսում: Ենթադրված է, որ գլանային մակերևույթի վրա դաշտը բավարարում է Ռոբինի եզրային պայմաններին: Աբել–Պլանայի ընդհանրացված բանաձևի կիրառումը հնարավորություն է տալիս վակուումային միջինները ներկայացնել կոսմիկական լարով պայմանավորված ու սահմանով մակածված մասերի գումարի տեսքով: ՈՒսումնասիրված է վակուումի էներգիայի խտության ու վակուումային լարվածությունների վարքը պարամետրերի արժեքների ասիմպտոտիկ տիրույթներում: Արտաքին տիրույթի համար ստացված արդյունքները ընդհանրացված են լարի կորիզը նկարագրող գլանային համաչափ ստատիկ մոդելի համար: Նման խնդիր էլեկտրամագնիսական դաշտի համար հետազոտված է աշխատանքում:

Յորդան-Բրանս-Դիկկե տեսության շրջանակներում դիտարկված է կոսմոլոգիական խնդիրը այն ենթադրությամբ, որ համապատասխան սկալյար դաշտը կատարում է «քվինտէսենցիայի» դերը: Ըստ դիտողական փաստերի՝ Տիեզերքի դանդաղող ընդարձակումը փոխարինվել է արագացող ընդարձակումով: Այս աշխատանքում ցույց է տրված, որ նշված մոդելում հնարավոր է հիմնավորել «մութ» էներգիայի և նյութի գոյությունը՝ համարելով, որ դրանք գեներացվում են սկալյար դաշտի և կոսմոլոգիական սկալյարի միջոցով: Հաշվարկը կատարված է փոշենման նյութի $P = 0$ դեպքում:

Թեմա 2. Դիտարկված են, այսպես կոչված, խճճված վիճակներով լույս գեներացնող լազերային սխեմաներ: Հետազոտվել են նաև խճճվածության քվանտային հատկությունները ինտենսիվ լուսային փնջերի կորելյացիայի համար ժամանակային տիրույթում: Այս արդյունքները օգտագործվել են նոր քվանտային գաղտնագրության սխեմայի մշակման համար՝ հիմնված ֆոտոնների կորելյացիայի վրա:

Թեմա 3. ՈՒսումնասիրված են սֆերիկ խոռոչի ներսում պտտվող ռելյատիվիստիկ լիցքավորված մասնիկի սինքրոտրոնային ճառագայթման առանձնահատկությունները, երբ արտաքին միջավայրը թույլ է կլանում ճառագայթումը և օժտված է մեծ ε դիէլեկտրիկ թափանցելիությամբ: Օրինակ, ստրոնցիումի տիտանատի /$SrTiO_3$/ դեպքում $\varepsilon = 230$ հաճախությունների $\sim 10GHz$ տիրույթում /միկրոճառագայթում/:

Շրեդինգերյան քվանտային մեխանիկայում և գերհաղորդականության մեջ ստացված են հավասարումներ հավանականության խտության համար: Գտնվել են նաև գերհաղորդականության «շարժման» ինտեգրալները արտաքին մագնիսական դաշտի ինչպես բացակայության, այնպես էլ առկայության դեպքում:

Սիաչափ ներդաշնակ օսցիլյատորը թերմոստատում առաջին անգամ դիտարկված է կոհերենտ վիճակների բազիսում: Սեթողը մաթեմատիկորեն պարզ է և ֆիզիկորեն թափանցիկ, որը հնարավորություն է տալիս քվանտային երևույթները դասական լեզվով մեկնաբանելու համար:

Դիտարկված է երկչափ իզոտրոպ օսցիլյատորը թերմոստատում կոհերենտ վիճակների բազիսում, որի առավելությունն այն է, որ հնարավորություն է տալիս հաշվի առնել բոլոր վիճակները:

Կոնդենսացված միջավայրերում, մասնավորապես պլազմայում, դիտարկված է ձայնային և էլեկտրամագնիսական ալիքների փոխազդեցությունը միջավայրի հետ:

Փոխանակային փոխազդեցության հաշվառմամբ դիտարկված է ինչպես ճայնային, այնպես էլ էլեկտրամագնիսական ալիքների տարածումը այլասերված կոնդենսացված միջավայրում:

Ամբիոնում կատարված այլ աշխատանքների մասին: Գրավիտացիոն ալիքները մեկուսացված գերխիտ մարմիններից: Ուսումնասիրվել է գրավիտացիոն ճառագայթումը դիֆերենցիալ պտտվող և նման տատանումներ կատարող սպիտակ թզուկներից: Ենթադրվել է, որ դիֆերենցիալ պտտվող սպիտակ թզուկում դիսիպացված էներգիայի 1%-հանդիսանում է գրավիտացիոն ճառագայթման էներգիայի աղբյուր: Գրավիտացիոն ճառագայթման անչափ ամպլիտուդը ստացվել է հավասար 10^{-27}–ի 50 պարսեկ հեռավորության վրա գտնվող սպիտակ թզուկի համար:

Ստացված են Գինզբուրգ-Լանդաուի հավասարումները մագնիսական և քրոմոմագնիսական տրամաչափային դաշտերի համար ներտրոնային աստղի գերհաղորդիչ քվարկային միջուկում, որը պարունակում է դիքվարկների «CFL» կոնդենսատ: Այդ հավասարումները լուծված են համապատասխան եզրային պայմաններով: Գտնված է մագնիսական դաշտի բաշխումը աստղի հաղրոնային և քվարկային փուլերում: Ցույց է տրված, որ հաղրոնային փուլում տարման երևույթի շնորհիվ ստեղծված մագնիսական դաշտը թափանցում է քվարկային միջուկ քվարկային մրրկային թելերի տեսքով:

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. A-1368. Development of on-line radiation monitoring system in the impact zone of the Armenian NPP.	Ավագյան Ռ. Մ.
2. A -1295. Radiological Characterization and the Databasa Creation in Support of ANPP Decommisioning Planning.	Հարությունյան Գ. Հ.
3. Centre for quantum information technologies and new nonlinear materials.	Կրյուչկյան Գ. Յու.
4. Quantum mechanical models for the higher-dimensional Hall effect, CRDF-NFSAT ARPI-3228-YE-04.	Ներսիսյան Ա. Պ.
5. Extended supersymmetry, string and noncommutativity in field theory, INTAS-05-7928.	Ներսիսյան Ա. Պ.

Թեմա 1. Նախագծի հիմնական խնդիրն ՀԱԷԿ-ի ազդեցության գոտում ռադիացիոն հսկողության գործող համակարգի ստեղծումը, որը հնարավորություն է տալիս ավտոմատ չափումների հիման վրա ռեալ ժամանակում գնահատել վթարային արտանետման չափը, նրա տարածման կանխագուշակումը և սպասվող հետևանքները, ինչպես նաև կանխագուշակել երկարատև հետևանքները, որոնք պայմանավորված են ամենօրյա արտանետումներով՝ ՀԱԷԿ-ի առանձնահատուկ պայմանների հաշվառմամբ:

Թեմա 2. Նախագիծը նախատեսում է կոմպլեքսային ռադիացիոն հետազոտման աշխատանքների կատարում, որի արդյունքում կստեղծվի տվյալների համակարգչային տեղեկատվական բազա՝ հետագայում ՀԱԷԿ-ը շահագործումից հանելու աշխատանքներն ապահովելու համար:

Թեմա 3. Սույն ծրագիրն առաջարկված է հետևյալ նպատակով. Երևանի պետական համալսարանում ստեղծել կենտրոն քվանտային տեղեկատվական տեխնոլոգիաների և ոչ գծային նյութերի բնագավառներում: Այս ծրագիրն ընդգրկում է տեսական և փորձարարական հետազոտություններ նշված բնագավառներում, որոնք մեծ մասում հիմնված են համակարգչային մոդելավորման և ճշգրիտ հաշվարկների վրա Կլաստեր հաշվողական համակարգում:

Թեմա 4. Կառուցվում են և ուսումնասիրվում են քվանտ. մեխանիկական մոդելներ, որոնք կապված են քառաչափ Հոլլի էֆեկտի հետ:

Թեմա 5. Ուսումնասիրված են տարբեր սուպերսիմետրիկ և ոչ կոմուտատիվ մեխանիկական մոդելներ, որոնք առաջանում են քվանտային դաշտի տեսություններում:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	38	10

ՔՎԱՆՏԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Ավետիսյան Համլետ Կարոյի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Հարությունյան Իշխան Գրիգորի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Մուրադյան Լևոն Խաչիկի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Լալայան Աստուր Ալեքսանդրի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
4. Սկրտչյան Գառնիկ Ֆելիքսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ

Համատեղողներ

1. Սեդրակյան Խաչիկ Վազգենի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ

Ուսումնաօժանդակ աշխատակիցներ

1. Խաչատրյան Լուիզա Միքայելի
2. Կիրակոսյան Արթուր Աբրահամի
3. Վարդանյան Սոֆիա Նապոլեոնի

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Ազատ էլեկտրոնային լազեր և էլեկտրոն-պոզիտրոնային զույգերի ծնում հզոր լազերային դաշտերում (պետական ֆինանսավորում):	Ավետիսյան Հ. Կ.
2. Լազերային իմպուլսների ոչ գծային ինքնազդեցության և փոխազդեցության կիրառությունները ֆոտոնիկայում. ֆեմտովայրկյանային ազդակների անալիզ և սինթեզ (պետական ֆինանսավորում):	Մուրադյան Լ. Խ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Ազատ էլեկտրոնային լազերի ուղղությամբ կատարված հետազոտությունները վերաբերում են մեծ պայծառության էլեկտրոնային փնջերով կոհերենտ էլեկտրամագնիսական ճառագայթման գեներացիայի Տ<Հց հաճախությունների տիրույթում՝ հիմնված Սմիթ-Պարսելի էֆեկտի վրա և կարճալիքային տիրույթում (ուլտրամանուշակագույնից մինչև ռենտգեն) Կոմպտոն էֆեկտի վրա: Ազատ էլեկտրոնային լազերի ոչ գծային տեսության շրջանակներում ուսումնասիրվել է սպոնտան ռենտգենյան ճառագայթման ինքնաուժեղացման ոչ գծային քվանտային ռեժիմները հարկադրական կոմպտոնյան հետճառագայթման դեպքում: Հետազոտվել է ռենտգենյան հետճառագայթային կոմպտոնյան ազատ էլեկտրոնային լազերի հնարավորությունը՝ հաշվի առնելով էլեկտրոնային փնջի տարամիտությունները: Ցույց է տրվել կոհերենտ ռենտգենյան ճառագայթման գեներացիայի էապես ոչ գծային քվանտային ռեժիմների հնարավորությունը:

Ուսումնասիրվել է լիցքավորված մասնիկների ռեզոնանսային դիֆրակցիոն ճառագայթումը պարբերական համակարգերում՝ ազատ էլեկտրոնային լազերի տեսանկյունից: Հետազոտվել են Սմիթ-Պարսելյան ազատ էլեկտրոնային լազերի սխեմայում ուժեղացման տարբեր ռեժիմներ: Հաշվվել են Սմիթ-Պարսելի թույլ ճառագայթման ուժեղացման գործակիցները վակուումում լիցքավորված մասնիկների փնջի և մետաղական ցանցի փոխազդեցության ժամանակ, հիդրոդինամիկ անկայունության, փոխազդեցության վերջավոր երկարության, ինչպես նաև կինետիկ անկայունության ռեժիմներում:

Թեմա 2. Հետազոտությունների առարկա են ճառագայթման ինքնա- և կրոսս-մոդուլացման, լուսամակածված ժամանակային ոսպնյակում ճառագայթման սպեկտրալ սեղմման, հաճախային վերալարման, ոչ գծային օպտիկական Ֆուրյե-փոխակերպման, սոլիտոնաձևավորման տիպի երևույթները: Հետազոտությունների համար հիմք է ծառայում գերարագ օպտիկայում ճառագայթման գրանցման և կառավարման խնդիրներին հեղինակների կողմից մշակված նոր մոտեցումը՝ հիմնված լուսամակածված ժամանակային ոսպնյակում ճառագայթման սպեկտրալ սեղմման երևույթի վրա: Հաշվետու ժամանակահատվածում ստացված արդյունքները կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

- Առաջարկվել և մշակվել է գերկարճ լազերային իմպուլսների բնութագրման ավտոկորրելյացիոն մեթոդին այլընտրանք հանդիսացող պարզ մեթոդ՝ հիմնված խորանարդային ոչ գծայնությամբ միջավայրում իմպուլսի ինքնազդեցության արդյունքում ճառագայթման սպեկտրալ հարստացման վրա: Մեթոդը թույլ է տալիս որոշել ճառագայթման տևողությունը և չիրպը:
- Փորձնականորեն իրականացվել է գերկարճ լազերային ազդակների սինթեզ սպեկտրոմետրի սխեմայի հիմքով և մշակվել է այլընտրանքային դիսպերսիոն հապաղման գիծ: Մեթոդի օգնությամբ ձևավորվել են տարբեր տևողության և բարդ ժամանակային պրոֆիլ ունեցող իմպուլսներ:
- Իրականացվել են սպեկտրալ սեղմիչում ժամանակային «մութ» իմպուլսների ձևավորման, մութ սոլիտոնների գեներացման և փոխազդեցության ուսումնասիրություններ՝ սոլիտոնաձևավորման երևույթի ընդհանուր օրինաչափությունների բացահայտման նպատակով: Ցույց է տրվել, որ սպեկտրալ սեղմիչը կարող է ծառայել որպես մութ սոլիտոնների արդյունավետ և հարմար գեներատոր: Ստուգվել և հաստատվել է գեներացված մութ սոլիտոնների մասնիկային հատկությունը՝ բախումների նկատմամբ նրանց կայունությունը:

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
2. Laser Induced Generation of Coherent X-ray and Charged Particles Acceleration, ISTC - # A-1307.	Ավետիսյան Հ. Կ.
3. Ultrafast Optical Oscilloscope, NATO SFP # 978027	Մուրադյան Լ. Խ.

Թեմա 1. Ծրագրի հիմնական նպատակն է զարգացնել նոր մեխանիզմներ և տեսական մոտեցումներ կարճալիքային տիրույթում ինտենսիվ կոհերենտ էլեկտրամագնիսական ճառագայթման աղբյուրների ստացման և լիցքավորված մասնիկների գերբարձր էներգիաների լազերային-պլազմային արագացման համար:

Նախագծում ծրագրված հետազոտությունները տարվել են երեք ուղղություններով: Առաջին՝ ազատ էլեկտրոնային լազերի ոչ գծային ռեժիմների հետազոտություն: Այս պրոբլեմի շրջանակներում ուսումնասիրվել է սպոնտան ռենտգենյան ճառագայթման ինքնաուժեղացման ոչ գծային քվանտային ռեժիմները հարկաղրական կոմպտոնյան և հզոր ստատիկ մագնիսական դաշտերում /վիգլերներում/ օնդուլյատորային ճառագայթման պրոցեսներում:

Երկրորդ ուղղությամբ կատարված հետազոտությունները վերաբերում են լիցքավորված մասնիկների լազերային արագացմանը տարբեր կոնֆիգուրացիաներով գերհզոր էլեկտրամագնիսական դաշտերում:

Ծրագրով նախատեսված երրորդ ուղղությամբ ռելյատիվիստիկ տեսության շրջանակներում ուսումնասիրվել են մեծ միջուկային լիցքով ջրածնանման ատոմների/իոնների բազմաֆոտոն գրգռման պրոբլեմները: ՈՒսումնասիրվել են տարբեր կոնֆիգուրացիաներով էլեկտրամագնիսական դաշտերում եռամակարդակ և քառամակարդակ ատոմների բազմաֆոտոն ռեզոնանսային գրգռման պրոբլեմները կոհերենտ սուպերպոզիցիոն վիճակների ստեղծման տեսանկյունից: Ռելյատիվիստիկ տեսության շրջանակներում ուսումնասիրվել է գերհզոր ճառագայթային դաշտում ջրածնանման ատոմների բազմաֆոտոն վերշեմային իոնիզացիայի և բարձր կարգի հարմոնիկների գեներացիայի պրոբլեմները:

Թեմա 2. Լազերային իմպուլսների ոչ գծային ինքնազդեցության և փոխազդեցության կիրառությունների ուղղությամբ տարված հետազոտությունների նպատակն է լազերային գերկարճ իմպուլսների (ԳԿԻ) ֆեմտովայրկյանային ժամանակային սանդղակում ազդակների գրանցման և կառավարման մեթոդների մշակումը՝ չափիչ սարքերի ստեղծման հեռանկարով: Հաշվետու ժամանակահատվածում ստացված արդյունքները կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

- Առաջարկվել և ֆեմտովայրկյանային ժամանակային սանդղակում փորձնականորեն հետազոտվել է սպեկտրալ սեղմման և Ֆուրյե-փոխակերպման նոր, ոչ աբերացիոն համակարգ՝ հիմնված ճառագայթման հաճախային խառնման երևույթի վրա: Հետազոտված են համակարգի բնորոշ առանձնահատկությունները, մատնանշված են առավելություններն ու կիրառության տիրույթը: Առաջարկվող համակարգի օգնությամբ փորձնականորեն իրականացվել են ֆեմտովայրկյանային իմպուլսների սպեկտրալ սեղմում (12^x, 2.5^x և 1.2^x): Այս ռեժիմներում իրականացվել են նաև տարբեր տևողություններ և ժամանակային տեսքեր ունեցող իմպուլսների Ֆուրյե-փոխակերպում և սպեկտրաժամանակային արտապատկերում: Ստացված արդյունքները հիմք են հանդիսանում օպտիկական ֆեմտովայրկյանային օսցիլոգրաֆի մշակման համար, որի լուծողունակությունը մի քանի կարգով գերազանցում է ներկայիս սարքերի լուծողունակությանը:
- Վերը նշված նոր մեթոդի օգնությամբ իրականացվել է նաև մինչև 0.2 նմ սպեկտրալ սեղմված իմպուլսի հաճախային վերալարումը 16 նմ տիրույթում: Սպեկտրի կենտրոնական հաճախության շեղման կախվածությունն ազդանշանային ու ընդուկ իմպուլսների միջև եղած ժամանակային հապաղումից ունի գծային բնույթ, ինչը կարևոր է մեթոդի սանդղակավորման տեսանկյունից:
- Փորձնականորեն իրականացվել է սպեկտրալ սեղմման երևույթը ֆեմտովայրկյանային ժամանակային սանդղակում՝ ավանդական սխեմայով: Փորձարարական և թվային հետազոտությունների արդյունքում բացահայտվել է միջավայրի խմբային արագությունների դիսպերսիայի կարևոր դերը: Մասնավորապես, սպեկտրալ սեղմման դիսպերսիոն ռեժիմում գեներացվել են ուղղանկյուն, սպեկտրալ սահմանափակ իմպուլսներ՝ հետաքրքիր կիրառական տեսանկյունից:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	ՈՒսումնական ձեռնարկ	ՈՒսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	5	10

ՕՊՏԻԿԱՅԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Չիլինգարյան Յուրի Սերգեյի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Կարայան Համլետ Սուրենի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ
2. Հակոբյան Ռաֆիկ Սերյոժայի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
3. Ալավերդյան Ռոմա Բախշիի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոցենտ
4. Ասլանյան Լևոն Սուրենի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոցենտ
5. Այունց Յուրի Խորենի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
6. Եսայան Գարեգին Լևոնի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
7. Էլբակյան Վաչագան Լևոնի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
8. Մակարյան Անուշավան Հայկարամի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
9. Պախալով Վալերի Բորիսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
10. Քոչարյան Լևոն Մուսայելի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
11. Գրիգորյան Ջուլիետա Խաչատուրի, դասախոս
12. Խուրշուդյան Սուշեղ Հաբեթի, դասախոս

Համատեղողներ

1. Սանթրոսյան Էմին Ազատի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
2. Սահակյան Նաիրա Սարգսի, դասախոս

Ոխտմնաօժանդակ աշխատակիցներ

1. Ներսիյան Սամվել Յոլակի
2. Գալստյան Արթուր Վլադիկի
3. Գալստյան Սուրեն Ռուբենի
4. Վարդանյան Նունե Ֆրունզեի
5. Մարգարյան Գոհարիկ Հրանտի
6. Մուրադովա Սիլվա Գեորգիի
7. Շիգարյան Էդուարդ Գրիշայի
8. Հակոբյան Ռաֆիկ Սերգեյի
9. Սահակյան Նաիրա Սարգսի
10. Կարախանյան Ալվարդ Գուրգենի
11. Մարտիրոսյան Շողիկ Ժորայի

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
Ամբիոնի դասախոս Լ. Աթաբեկյանը պաշտպանել է «Սահմանամերձ տարածաշրջանի բնակչության ուշ հետպատերազմական շրջանի հոգեվիճակների առանձնահատկությունները» թեմայով թեկնածուական ատենախոսությունը:

ՌՈՒՍԱՑ ԵՎ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ *Հակոբյան Աննա Արշալույսի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ*

Դասախոսական կազմը

1. Մարդանյան Աիդա Սերոժի, դասախոս
2. Մարգարյան Էվելինա Իշխանի, դասախոս
3. Մանուչարյան Մելանյա Մուկուչի, դասախոս
4. Էվինյան Սեդա Սերգեյի, դասախոս
5. Հարությունյան Գայանե Աշոտի, դասախոս
6. Այդինյան Անժելա Ժորայի, դասախոս
7. Հարությունյան Լիանա Միխայիլի, դասախոս
8. Զարգարյան Ռուզան Հենրիկի, դասախոս
9. Հովհաննիսյան Սոնա Հայկազի, դասախոս
10. Աբրահամյան Սոնիկ Սուրիկի, դասախոս
11. Հովհաննիսյան Անահիտ Մաքսիմի, դասախոս
12. Մխիթարյան Մարինե Սերգեյի, դասախոս
13. Պետոյան Գոհար Ռոբերտի, դասախոս
14. Դարբինյան Լուսինե Պայքարի, դասախոս
15. Եղիազարյան Սվետլանա Ջավենի, դասախոս

Համատեղողներ

1. Մելիքսեթյան Ռոզա Սեդրակի, դոցենտ
2. Սիրզոյան Ռուզան Վասիլի, ասիստենտ
3. Ավագյան Իզաբելլա Ռոբերտի, դասախոս
4. Հարությունյան Կարինե Ռոբերտի, դասախոս
5. Սինասյան Կարինե Ռոբերտի, դասախոս

Ոխտ մնաոժանդակ աշխատակիցներ

1. Օթարյան Անուշ Սերգոյի

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	2	-

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Մկրտումյան Մ.,* Ճգնաժամային իրավիճակներին դիմակայման անձի հոգեբանական պատրաստության համակարգը, Կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները, միջբուհական գիտական հոդվածների ժողովածու, թիվ 10, Երևան, 2007, էջ 27-33:
2. *Մկրտումյան Մ.,* Ճգնաժամային իրավիճակներում ինքնակարգավորման հոգեբանական մեխանիզմը, միջբուհական գիտական հոդվածների ժողովածու, թիվ 02, Երևան, 2007, էջ 71-80:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան՝ *Խուդավերդյան Նելլի Բաբկենի, տեխն. գիտ. թեկնածու, դոցենտ*
Դեկանի տեղակալ՝ *Ասիլբեկյան Պավել Նորիկի, ասիստենտ*

Ֆակուլտետի մասնագիտությունները

Շիֆր **Մասնագիտություններ՝**

0601 Տեսական տնտեսագիտություն

2305 Սոցիալ-մշակութային ծառայություն և զբոսաշրջություն

Կրթական աստիճան, մասնագիտություն	*Ուսանողների քիվը՝ 233*							
	I կուրս		II կուրս		III կուրս		IV կուրս	
	պպ	վճ	պպ	վճ	պպ	վճ	պպ	վճ
Բակալավրիատ								
Տեսական տնտեսագիտություն	14	40	13	31	13	25	8	20
Սոցիալ-մշակութային ծառայություն և զբոսաշրջություն	8	28	7	18	5	13	5	12
Ընդամենը	**22**	**68**	**20**	**51**	**18**	**38**	**13**	**32**

Քննաշրջանների արդյունքները

Ձմեռային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Դերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		պպ	վճ		
Բակալավրիատ					
Տեսական տնտեսագիտություն					
1-ին	55	3	22	1	57
2-րդ	45	6	23	4	34
3-րդ	38	6	21	4	29
4-րդ	31	3	19	4	29
Սոց.- մշակ. ծառայ. և զբոսաշրջություն					
1-ին	37	-	8	4	76
2-րդ	26	1	11	3	50
3-րդ	18	1	5	8	67
4-րդ	17	1	9	5	41
Ընդամենը	**267**	**20**	**118**	**33**	**48**

Ամառային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Դերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		պպ	վճ		
Բակալավրիատ					
Տեսական տնտեսագիտություն					
1-ին	54	2	31	-	37
2-րդ	44	3	19	2	50
3-րդ	38	4	21	6	34
Սոց.-մշակ. ծառայ. և զբոսաշրջություն					
1-ին	36	1	23	1	33
2-րդ	25	-	8	5	68
3-րդ	18	1	6	7	61
Ընդամենը	**215**	**11**	**108**	**21**	**47**

Շրջանավարտներ

Մասնագիտություն	*Ընդամենը 50, այդ թվում նախորդ տարիներից՝ 5*
	բակալավրիատ (գերազանցության դիպլոմով)
Տեսական տնտեսագիտություն	*33 (5)*
Սոց.-մշ. ծառ. և զբոսաշրջ.	*17 (4)*
Ընդամենը	***50 (9)***

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ *2*

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՏՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ *Հովսեփյան Վոլոդյա Երվանդի, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Խուդավերդյան Նելլի Բաբկենի, տեխն. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Ճաղարյան Արտակ Սիշայի, ասիստենտ
3. Ավետիսյան Գայանե Հրաչիկի, տնտ. գիտ. թեկնածու, ասիստենտ
4. Սարիբեկյան Անուշ Աղվանի, ասիստենտ
5. Էդիլյան Նաիրա Ալբերտի, ասիստենտ
6. Մարգարյան Նազան Մարտինի, ասիստենտ

Համատեղողներ

1. Մուսայելյան Արտակ Վիկտորի, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Պետրոսյան Արսեն Գառնիկի, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Գալստյան Գագիկ Սերգեյի, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. Ներսիսյան Արմեն Ռովելի, ասիստենտ
5. Քառյան Հենրիկ Էլիազի, դասախոս
6. Վիսյան Արևշատ Վաչագանի, դասախոս

Ոխտումնաօժանդակ աշխատակիցներ

1. Եսայան Լաուրա Հրաչիկի
2. Ջախարյան Ալվինա Կոմիտասի

ՏՈՒՐԻԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ *Մմայակյան Սիմոն Գևորգի, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Ոհիխանյան Ալինա Վոլոդյայի, ասիստենտ
2. Ասիլբեկյան Պավել Նորիկի, ասիստենտ
3. Բեկնազարյան Յուրա Իսրայելի, դասախոս
4. Մարգարյան Նարինե Գառնիկի, դասախոս

Համատեղողներ

1. Օհանջանյան Ռուբեն Սամվելի, պատմ. գիտ. թեկ., դոցենտ
2. Ղալթախչյան Գարիկ Էդիկի, դասախոս

Ոխտումնաօժանդակ աշխատակիցներ

1. Բեգինյան Լիանա Գրիշայի

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկանի պաշտոնակատար՝ *Այվազյան Կամո Բենիկի, տեխ. գիտ. թեկնածու*

Ֆակուլտետի մասնագիտությունները

Շիֆր	**Մասնագիտություններ՝**
0523	Կիրառական զարդարվեստ և ժողովրդական արհեստներ
0524	Դիզայն

Կրթական աստիճան, մասնագիտություն	*Ուսանողների քիվը՝ 159*									
	I կուրս		II կուրս		III կուրս		IV կուրս		V կուրս	
	պպ	վճ	պպ	վճ	պպ	վճ	պպ	վճ	պպ	վճ
5-ամյա ուսուցում										
Կիրառական զարդարվեստ և ժողովրդական արհեստներ, դիզայն	13	29	10	33	-	-	-	-	-	-
Կիրառական զարդարվեստ և ժողովրդական արհեստներ	-	-	-	-	4	13	7	12	7	5
դիզայն	-	-	-	-	4	12	5	10	6	8
Ընդամենը	**13**	**29**	**10**	**33**	**8**	**25**	**12**	**22**	**13**	**13**

Քննաշրջանների արդյունքները

Ձմեռային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		պպ	վճ		
5-ամյա ուսուցում					
Կիրառական գարդարվեստ և ժողովրդական արհեստներ, դիզայն					
1-ին	44	6	21	5	39
2-րդ	44	-	25	9	43
Կիրառական գարդարվեստ և ժողովրդական արհեստներ					
3-րդ	16	3	10	2	36
4-րդ	18	5	10	1	17
5-րդ	12	1	4	-	42
Դիզայն					
3-րդ	17	1	7	1	53
4-րդ	16	3	10	2	19
5-րդ	14	2	3	3	38
Ընդամենը	**181**	**21**	**90**	**23**	**36**

Ամառային քննաշրջան

Կրթական աստիճան, մասնագիտություն, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը		Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
		պպ	վճ		
5-ամյա ուսուցում					
Կիրառական գարդարվեստ և ժողովրդական արհեստներ, դիզայն	42	4	25	8	31
1-ին					
2-րդ	43	-	26	12	40
Կիրառական գարդարվեստ և ժողովրդական արհեստներ					
3-րդ	18	3	11	1	22
4-րդ	17	2	10	1	29
Դիզայն					
3-րդ	15	2	10	-	20
4-րդ	16	1	8	3	44
Ընդամենը	**151**	**12**	**90**	**25**	**31**

Շրջանավարտներ

Մասնագիտություն	*Ընդամենը 27, այդ թվում նախորդ տարիներից՝ 2*
	5-ամյա ուսուցում (գերազանցության դիպլոմով)
Կիրառական գարդարվեստ և ժողովրդական արհեստներ	12 (1)
Դիզայն /գեղար/	15 (1)
Ընդամենը	27 (2)

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ *2*

ԴԵԿՈՐԱՏԻՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԵՎ ԴԻԶԱՅՆԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ *Միսիթարյան Համլետ Խաչատուրի, դասախոս*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Բեկնազարյան Օնիկ Յուրայի, դասախոս
2. Չիբուխչյան Անուշ Լյուբիկի, դասախոս
3. Սկրտչյան Սերգեյ Աշոտի, դասախոս
4. Պողոսյան Ռուզաննա Կիմի, դասախոս
5. Գասպարյան Արևիկ Միշայի, դասախոս
6. Դիլբարյան Անդրանիկ Սրաֆիլի, դասախոս

Համատեղողներ

1. Մուղնեցյան Ստեփան Գուրգենի, պրոֆեսոր
2. Բաղդասարյան Լենմիր Միհրանի, պրոֆեսոր

Ոխտմնաօժանդակ աշխատակիցներ

1. Սկրտչյան Սերյոժա Աշոտի
2. Եգանյան Նարեկ Վանիկի
3. Գևորգյան Լուսինե Վիկտորի
4. Աբազյան Անահիտ Աթաբեկի
5. Չիբուխչյան Դոնարա Լևոնի
6. Ասլանյան Լիանա Գրիգորի

ԳԾԱՆԿԱՐԻ, ԳՈՒՆԱՆԿԱՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ *Սարգսյան Սպարտակ Հայկազի, ՀՀ ճկարիչների միության անդամ*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Խաչատրյան Արևիկ Խաչիկի, դասախոս
2. Սիրզոյան Արթուր Համլետի, դասախոս
3. Սխիթարյան Քրիստինե Համլետի, դասախոս

Համատեղողներ

1. Մամյան Հենրիկ Արամի, պրոֆեսոր
2. Հովսեփյան Արարատ Կարապետի, դասախոս
3. Աղաջանյան Նարեկ Կարլի, դասախոս
4. Էվոյան Սիեր Սուրենի
5. Ստեփանյան Սիեր Օգսենի
6. Հովհաննիսյան Սերգեյ Թորգոմի, դասախոս

Ոխտումնաօժանդակ աշխատակիցներ

1. Ասլանյան Գայանե Սարգսի

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՔԱՂ. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՄԱՍՆԱՁՅՈՒՂԱՅԻՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ *Հարությունյան Լարիսա Աշոտի, դասախոս*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Դավիթյան Վալերի Սեմյոնի, դասախոս
2. Պողոսյան Վարդիթեր Գուրգենի, դասախոս
3. Քամալյան Ռոբերտ Վասիլի, դասախոս

Համատեղողներ

1. Մովսիսյան Գայանե Սերյոժայի, դասախոս

ՀԱՄԱՄԱՍՆԱՁՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի վարիչ՝ *Խաչատրյան Տաթևիկ Վասիլի*

ՄԻՆՉՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱԺԻՆ

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կառուցվածքում բացվել է միջհամալսարանական կրթության և հեռակա ուսուցման բաժին:

Առաջին անգամ 2006թ. կատարվել է ընդունելություն հետևյալ մասնագիտությունների գծով.

1. Մաթեմատիկա, ինֆորմատիկա, ֆիզիկա
2. Պատմություն (իրավունքի հիմունքներ)
3. Հայոց լեզու և գրականություն

4. Մանկավարժություն և հոգեբանություն

Մասնաճյուղի ուսանողությունը համալրվել է հեռակա ուսուցման բաժնի 97 ուսանողներով:

Մասնաճյուղի ուսումնական լաբորատորիաների թիվը՝ 8

Արվեստանոցների թիվը՝ 4

Հաշվետու ժամանակաշրջանում մասնաճյուղի ամբիոնների դասախոսական կազմի և ԵՊՀ տարբեր ամբիոններում հայցվորների ջանքերով տպագրվել են շուրջ 50 գիտական հոդվածներ հանրապետական և միջազգային հանդեսներում, որոնք ներգրավված են մասնաճյուղի ամբիոնների 2006-2007 ուստարվա հաշվետվություններում:

ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ

1. Կառուցվել է տնտեսագիտության ֆակուլտետի 200 քառ. մետր մակերեսով երկրորդ հարկի մասնաշենքը, ֆակուլտետի «Սերվիս» մասնագիտության համար նոր գույքով և նյութատեխնիկական բազայով կահավորվել է ուսումնառության նորմալ գործընթացն ապահովող մասնաշենք:
2. Ընդարձակվելով հիմնովին վերանորոգվել է 200 քառ. մետր տարածքով մարզական դահլիճը, որը համալրվել է մարզական նոր գույքով:
3. Հարմարավետ ու ընդարձակ նոր տարածք է տեղափոխվել գրադարանը, ընթերցասրահը: Կահավորվել և նորացվել են անհրաժեշտ գույքով:
4. Գցվել են նոր ջրատարներ, վերանորոգվել է հիմնական և 4 մասնաշենքերի ջեռուցման համակարգը: Նորացվել է ուսումնական գույքը՝ սեղան-նստարաններ, գրատախտակներ, տեխնիկական սարքավորումներ:
5. Բնագիտական ֆակուլտետի անտառագիտության ամբիոնում բացվել են կենսաբանության, քիմիայի, կենսաֆիզիկայի և ռենտգենյան գիտական լաբորատորիաներ:
6. Վերանորոգման աշխատանքներ են կատարվել մասնաճյուղի ամբողջ տարածքում, ինչպես նաև հյուրանոցային «Կոտեջներում»:
7. Գործարկվել են հումանիտար, բնագիտական, կիրառական արվեստի ֆակուլտետների համակարգչային սրահները:
8. Մայրաքաղաքից ժամանող դասախոսների համար կառուցվել և շահագործման է հանձնվել ավելի քան 200 քառ. մետր մակերեսով հյուրանոցային համալիրը՝ 20 տեղով: Հյուրանոցային համալիրը կահավորված է արդիական պահանջներին համապատասխան:

ՎԱՐՉԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ, ԳԻՏԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վարչության պետ՝ *Ժամհարյան Հրանտ Գևորգի, կենս. գիտ. թեկնածու, դոցենտ*

Վարչության գործունեության հիմնական գործառույթներն են՝

- բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի մշակման գործընթացի կազմակերպումը և կատարման վերահսկումը,
- ամբիոնային ծանրաբեռնվածությունների կատարման վերահսկումը,
- ֆակուլտետների դեկանատներին և ամբիոններին մեթոդական օգնության ցուցաբերումը,
- ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական ու մանկավարժական որակների վերաբերյալ հարցման կազմակերպումը,
- ֆակուլտետային մեթոդական խորհուրդների աշխատանքների համակարգումը,
- պետական քննական հանձնաժողովների աշխատանքների կազմակերպումը,
- ուսանողների ավարտական փաստաթղթերի նախապատրաստումը և հաշվառումը,
- ընթացիկ և հանրագումարային քննությունների անցկացման վերահսկումը,
- ուսումնական գործընթացի փաստաթղթային գործավարության ապահովումը և վերահսկումը,
- ուսումնական գործընթացի ժամանակացույցի և դասատախտակների օպտիմալացումը, դասերի կայացման վերահսկումը,
- ուսումնական, արտադրական և մանկավարժական պրակտիկաների կազմակերպումը և վերահսկումը,
- մագիստրատուրայի ընդունելության կազմակերպումը,
- 2-րդ մասնագիտության ընդունելության կազմակերպումը,
- ՀՀ կրթության և գիտության նախարարության համար ուսումնական գործընթացին վերաբերող տեղեկատվական-վիճակագրական տվյալների նախապատրաստումը,
- ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներքուհական կրթաթոշակների հատկացման գործընթացի կազմակերպումը,
- ուսանողների ուսման վարձի զեղչման գործընթացի կազմակերպումը,
- ուսանողների՝ բուհից բուհ տեղափոխման, ազատման և վերականգնման վերաբերյալ փաստաթղթերի ձևակերպումը,
- ուսանողների տվյալների հենքի ստեղծումը և պահպանումը:

Վարչությունը բաղկացած է հետևյալ 5 բաժիններից.

- Բակալավրիատի
- Մագիստրատուրայի
- Կազմակերպչական
- Տեղեկատվավերլուծական
- Պրակտիկայի

2006/2007 ուսումնական տարվա ընթացքում վարչությունն իրականացրել է հետևյալ միջոցառումները.

❖ Ինչպես և անցած տարիներին, այս ուստարում ևս հետևողական աշխատանք է տարվել բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի չափորոշիչների, ուսումնական գործընթացի բարելավմանն ուղղված կանոնակարգերի մշակման և ներդրման ուղղությամբ: ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած չափորոշիչների համաձայն՝ կրճատվել է ուսանողների շաբաթական լսարանային բեռնվածությունը՝ ուսանողների ինքնուրույն աշխատանքներին ավելի մեծ տեղ տալու նպատակով, կրճատվել է կիսամյակների տևողությունը, սահմանափակվել է քննությունների թիվը:

❖ Բակալավրի կրթական ծրագրի ուսումնական պլանը ներկայումս ներառում է չորս հիմնական բաղադրիչ.

- ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացներ,
- ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական դասընթացներ,
- ընդհանուր մասնագիտական դասընթացներ,
- մասնագիտացման դասընթացներ:

Մագիստրոսի կրթական ծրագրի ուսումնական պլանը ներառում է կրթական երկու բաղադրիչ.

- մասնագիտացված պատրաստության դասընթացներ,
- հատուկ դասընթացներ:

Դրանցից բացի, կա նաև մագիստրանտի գիտահետազոտական աշխատանքները կարգավորող բաղադրամաս: ՈՒսումնական նոր պլաններում մեծ տեղ է տրվում ուսանողի կողմից ընտրվող դասընթացներին:

❖ Շարունակաբար կատարելագործվում են ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերը, մասնավորապես 2007/08 ուստարվա համար դասախոսի միջին ծանրաբեռնվածությունը սահմանվել է 640-ից ոչ պակաս ժամաքանակը (նախկին 700ժ փոխարեն):

Զարգացման ներկայիս փուլում համալսարանում ներդրվում է կրթության կրեդիտային համակարգը, որը ԵՊՀ-ն ավելի է մոտեցնելու եվրոպական կրթական միասնական դաշտին:

❖ Հաշվետու տարում էական փոփոխություններ են կրել ֆակուլտետների ուսումնական պլանները. դրանք առավելագույնս հարմարեցվել են առաջիկայում բակալավրիատում ներդրվելիք կրեդիտային համակարգին:

Բակալավրիատի և մագիստրատուրայի բաժինները ԵՊՀ համալսարանական կրթության զարգացման վարչության հետ համատեղ իրականացրել են այդ ուս. պլանների ներդրումը ֆակուլտետներում:

Հաշվետու տարում ևս վարչությունը իր համապատասխան ստորաբաժանումների միջոցով ստուգել է ամբիոնների ծանրաբեռնվածությունները և վերահսկել դրանց կատարումը, ժամանակին ճնակերպվել և հաշվառվել են ժամավճարային հիմունքներով աշխատողները, ստուգվել են դասատախտակները, ուսումնական գործընթացները ապահովվել են լսարանային ֆոնդով, վերահսկվել է դասերի կայացումը, փորձ է արվել օպտիմալացնել դասատախտակները և ուսումնական գործընթացի ժամանակացույցը:

❖ Կրթական համակարգի արդյունավետությունն ապահովելու, ուսումնական գործի առաջընթացը խթանելու և ուսանողների գիտելիքների գնահատման գործում առավել անկողմնակալություն երաշխավորելու նպատակով կիրառվում է գիտելիքների գնահատման կանոնակարգ, որի հիմքում դրված է առավել կարևոր մասնագիտական առարկաներից ընթացիկ քննությունների անցկացման սկզբունքը (բակալավրիատում):

❖ Կրթության որակի վերահսկման և բարելավման, ինչպես նաև բուհի կառավարման գործընթացին ուսանողներին մասնակից դարձնելու նպատակով, սկսած 2002 թվականից, ԵՊՀ ուսանողների շրջանում անց են կացվում անանուն հարցումներ՝ դասավանդող բոլոր դասախոսների վերաբերյալ: Ֆակուլտետների կողմից՝ տվյալ կիսամյակում դասավանդած դասախոսների և առարկաների ներկայացրած ցանկի ու հարցման թերթիկների արդյունքների հիման վրա տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի հետ համատեղ վերամշակվել և ամփոփ տեսքով ֆակուլտետներին ու ամբիոններին է տրվել համապատասխան ինֆորմացիան:

Ըստ գործող կանոնակարգի՝ բոլոր ֆակուլտետներում վարչության կողմից ուսանողական հարցումն իրականացվում է յուրաքանչյուր կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո (հոկտեմբեր, մարտ ամիսներին):

հարցումները կազմակերպվել և անցկացվել են՝ ապահովելով ուսանողության մասնակցության առնվազն 2/3-ը: Ընթացիկ ուստարում արձանագրվել է 74% մասնակցություն:

❖ Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել, վերահսկվել, հաշվառվել է ուսանողական շարժը, և ձևակերպվել են ընդունելության, ազատման, տեղափոխման, վերականգնման, զեղչի և ուսումնական գործընթացներին առնչվող այլ հրամաններ, մասնավորապես՝ բակալավրիատի (շուրջ 2800 հոգի) և 3 փուլով անցկացված մագիստրատուրայի (շուրջ 1200 հոգի) ընդունելությունների, ներբուհական (76 ուսանող) և բուհից բուհ (126 ուսանող) տեղափոխությունների վերաբերյալ և այլն:

❖ Սկսած 2006/07 ուստարվանից՝ ԵՊՀ-ում կիրառվում է ուսանողական նպաստների պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման գործընթացը: Այս ուստարվա սեպտեմբեր ամսին փոխատեղման գործընթացի արդյունքում 2006/07 ուստարվա 1-ին և 2-րդ կուրսերի ուսանողներին՝ 1310 հոգու, հատկացվեց նպաստ, որից 659-ը՝ 1-ին կուրսում, 651-ը՝ 2-րդում: 1-ին կուրսում 214 ուսանող (32.5%), իսկ 2-րդ կուրսում 143 ուսանող (21.9%) ենթարկվեցին համակարգի փոփոխման:

Այս գործընթացը կազմակերպելու համար յուրաքանչյուր քննաշրջանի ավարտին մուտքագրվել են բոլոր քննական տեղեկագրերը և ճշտվել ուսանողների տվյալների հենքի հիման վրա: Հաշվետու տարում կատարվել են աշխատանքներ քննական տեղեկագրերը համակարգչում ավտոմատ մուտքագրման ուղղությամբ, ինչի արդյունքում 2007/08 ուստարվա 2-րդ կիսամյակից բոլոր ֆակուլտետներում, նոր ծրագրերի և տեխնոլոգիաների ներդրմամբ, կգործի քննական տեղեկագրերի մուտքագրման ավտոմատացված տարբերակը:

Աշխատանքներ են տարվում ամբիոնային բեռնվածության և աշխատանքային ուսումնական պլանների ավտոմատացման ուղղությամբ:

❖ 2006/07 ուստարում շուրջ 3400 շրջանավարտների համար պատրաստվել և հանձնվել են դիպլոմներ, վերականգնվել են 37 հոգու կորցրած դիպլոմներ:

Սկսած 2006/07 ուսումնական տարվանից՝ վճարովի համակարգ ընդունված և ուսման ընթացքում առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին հնարավորություն է ընձեռվում սովորելու անվճար՝ ստանալով նպաստ և կրթաթոշակ: Բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների համար սահմանված են նաև ուսման վարձի զեղչեր:

Հաշվետու ժամանակաշրջանում, ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի համաձայն, շարունակվել է ուսման վարձավճարների զեղչման գործընթացը: Զեղչվել է շուրջ 1700 ուսանողի վարձավճար, որի գումարը կազմել է մոտավորապես 250, 8 մլն. դրամ:

❖ Աշխատանքներ են տարվել ԵՊՀ-ում հեռակա ուսուցման վերաբացման ուղղությամբ: 2007/08 ուսումնական տարվանից ԵՊՀ 16 ֆակուլտետներում 26 մասնագիտությունների գծով վերաբացվեց հեռակա ուսուցումը: Կատարվեց զգալի նախապատրաստական աշխատանք. կազմվեցին ուսումնական պլանները, ԵՊՀ գիտական խորհրդի 2007թ. մարտի 22-ի նիստում ընդունվեց որոշում ԵՊՀ-ում բակալավրի ծրագրով հեռակա ուսուցում կազմակերպելու մասին, մշակվեց հեռակա ուսուցման կազմակերպման կարգը:

Հեռակա ուսուցման ընդունելության քննությունների արդյունքով ԵՊՀ ընդունվել է ավելի քան 600 դիմորդ:

❖ 2006/07 ուստարվա ավարտից հետո պատրաստվել և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության է ներկայացվել պետական վիճակագրական հաշվետվությունը (3-ԳՍ), որում արտահայտված են անվճար և վճարովի համակարգում սովորող ուսանողների (այդ թվում՝ ԱՊՀ և այլ երկրի քաղաքացիների) և պրոֆեսորադասախոսական կազմի թվերը, որոնք տարբերակված են ըստ տարիքի և սեռի, ինչպես նաև հիմնական հաստիքային անձնակազմի թվային բաշխվածությունը, ուսանողների բաշխվածությունն ըստ վճարաչափի, ուսումնական շենքերի և հանրակացարանների առկայությունն ու օգտագործումը:

Ընթացիկ ուստարվա ավարտին հավաքագրվել և մշակվել են առաջադիմության, քննաշրջանների արդյունքների և շրջանավարտների վերաբերյալ տվյալները և համապատասխան հաշվետվությունների ձևով ներկայացվել ՀՀ կրթության և գիտության նախարարություն:

❖ 2006/07 ուստարում ԵՊՀ ուսումնական և արտադրական պրակտիկան անցկացվել է՝ համաձայն հաստատված ուսումնական պլանի, կնքված համաձայնագրերի, ինչպես նաև բանավոր համաձայնությունների: Պայմանագրերը կնքվել են պետական և ոչ պետական տարբեր հիմնարկների և նրանց ստորաբաժանումների հետ (օրինակ, ՀՀ նախագահի աշխատակազմ, ՀՀ կառավարություն, ՀՀ Ազգային ժողով,

ՀՀ Սահմանադրական դատարան, ՀՀ նախարարություններ, ՋԼՄ խմբագրություններ, դպրոցներ, միջազգային կազմակերպությունների հայաստանյան ներկայացուցչություններ և այլն): Ընդհանուր առմամբ կնքվել է 84 պայմանագիր:

Արտադրական պրակտիկա (այդ թվում՝ մանկավարժական) անցել է 4039 ուսանող (բակալավր և մագիստրոս), ուսումնական պրակտիկա՝ 1574 ուսանող, որից 569-ը՝ դաշտային:

Մեծ ուշադրություն է դարձվել պրակտիկայի նախապատրաստական աշխատանքներին, պայմանագրերի կնքմանը, պրակտիկայի անցկացման հրամանների նախապատրաստմանը, ֆակուլտետներում կազմակերպչական ժողովների անցկացմանը, ընթացքի հսկմանը և պրակտիկայի ամփոփմանը (ընդունող կողմի համար ֆինանսական փաստաթղթերի լրացում, օրագրերի և մատյանների հավաք), ուսումնական գործընթացին առնչվող գործավարության ապահովմանը և վերահսկմանը, պրակտիկայի հետ կապված մեթոդական գրականության նոր ձյութերի հայթայթմանը, ուսումնասիրմանը և մշակմանը: Վերանայվել են պրակտիկայի ծրագրերը, մշակվել են պրակտիկայի անցկացման նոր տեխնոլոգիաներ:

❖ Հաշվետու տարում շարունակվել են աշխատանքները մի շարք կրթական դրամաշնորհային նախագծերի շրջանակներում: Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական բաժանմունքի կողմից ֆինանսավորվել է «ԵՊՀ կրթության որակի գնահատման, ապահովման և վերահսկման համակարգի զարգացում» դրամաշնորհային ծրագիրը, որի իրագործման արդյունքները հիմք կծառայեն ԵՊՀ-ում կրթության որակի բարձրացման ուղղությամբ տարվող աշխատանքների համար:

Նշված աշխատանքները 2007/08 ուստարվանից կշարունակվեն Եվրամիության «Տեմպուս» ծրագրի կողմից օժանդակվող «Ներքին որակի ապահովման համակարգը ՀՀ բարձրագույն կրթության հաստատություններում» (Միասնական եվրոպական ծրագրի շրջանակներում) և «ECTS-ի հիման վրա կրեդիտային համակարգի ներդրումը Հայաստանում» երկու դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում, որոնք կիրականացվեն ՀՊՃՀ-ի և արտասահմանյան մի շարք համալսարանների հետ համատեղ:

Արտասահմանյան դրամաշնորհ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. ԵՊՀ կրթության որակի գնահատման, ապահովման և վերահսկման համակարգի զարգացում (ԲՀԻՕՀ -15115):	Գրիգորյան Ա. Կ.

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վարչության պետ՝ *Կարապետյան Սամվել Բորիսի, բան. գիտ. թեկնածու*

Համալսարանական կրթության զարգացման վարչությունը ստեղծվել է 2006 թ-ի սեպտեմբերի 1-ին՝ համալսարանում կրթական բարեփոխումների ընթացքը խթանելու և համակարգված կերպով կազմակերպելու նպատակով: Մեկ տարվա ընթացքում վարչությունում մշակվել և համալսարանի գիտական խորհրդի քննարկմանն են ներկայացվել մի շարք առանցքային նախագծեր, որոնք ուղղված են եղել կրթական համակարգի զարգացման ինչպես առաջնահերթ, այնպես էլ հեռանկարային խնդիրների լուծմանը:

• 2007 թ. փետրվարի 6-ի որոշմամբ՝ ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատվել է «Երևանի պետական համալսարանում մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը»՝ ինովացիոն նշանակալի արժեք ներկայացնող հայեցակարգային բնույթի փաստաթուղթը, որը 2007/2008 ուստարվանից համալսարանում իրականացվող բոլոր մասնագիտությունների գծով մագիստրոսական կրթությունը կրեդիտային միավորների հաշվարկի հենքով կազմակերպելու համար մեթոդաբանական հիմք հանդիսացավ: Համալսարանական ամբիոնների կողմից մշակվել և հաստատվել է 118 մագիստրոսական ծրագիր՝ 44 մասնագիտությունների գծով, որոնցից այս ուսումնական տարում գործարկվել է 98-ը, իսկ դրանցում ընդգրկված մագիստրանտների թիվը կազմել է ավելի քան 1000 ուսանող:

• Հաստատվել են բոլոր մագիստրոսական ծրագրերի՝ կրեդիտային համակարգի չափանիշներին համապատասխանող նոր ուսումնական պլանները, ըստ մասնագիտությունների՝ պատրաստվել են մագիստրոսական ծրագրերի ուղեցույցները, որոնք ներառում են ծրագրերում ընդգրկված դասընթացների բովանդակության, կառուցվածքի, գնահատման եղանակների, կիսամյակային բաշխման և վարող դասախոսի մասին անհրաժեշտ տվյալները:

• Մշակվել և գործողության մեջ է դրվել նաև մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրով կրեդիտների կուտակման եղանակով ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակավոր կարգը, որը ներառում է նաև գիտելիքների գնահատման սկզբունքորեն նոր կարգ:

• Զգալի աշխատանք է տարվել նաև բակալավրի պատրաստման կրթական գործող ծրագրի կառուցվածքը օպտիմալացնելու, վերջինիս հիմնական կառուցվածքային և կազմակերպչական պարամետրերը կրեդիտային համակարգի պահանջներին աստիճանաբար ադապտացնելու և հաջորդ ուսումնական տարում կրեդիտային համակարգը բակալավրիատում նույնպես գործարկելու ուղղությամբ:

• Հստակ սահմանվել է ուսումնական պլանների բաղադրիչների համամասնությունը, որը նախատեսում է կրթական ծրագրի մինչև 25%-ը հատկացնել ընդհանուր կրթական դասընթացներին, 65-70%-ը՝ ընդհանուր մասնագիտական դասընթացներին և կրթական ծրագրի 5-10%-ը՝ հատուկ մասնագիտական դասընթացներին: Շաբաթական ընդհանուր ծանրաբեռնվածությունը ծրագրի բոլոր կիսամյակներում (ներառյալ ինքնուրույն աշխատանքին հատկացվող ժամաքանակը) 54 ժամից նվազեցվել է մինչև 45 ժամ, կրճատվել է նաև ուսումնական կիսամյակների տևողությունը (17 շաբաթից՝ 16 շաբաթ), իսկ ուսանողների շաբաթական լսարանային ծանրաբեռնվածությունը նվազեցվել է միջինը 4 ժամով:

• ԵՊՀ գիտական խորհրդի կողմից 2007 թ. հունիսի 28-ին հաստատվել է «Երևանի պետական համալսարանում կրթության որակի ապահովման հայեցակարգը», որը սահմանում է որակի վերահսկման ներքին համակարգի կազմակերպման մեթոդաբանական հիմքերը և նախանշում կարճաժամկետ հեռանկարում կրթական գործընթացի որակի ապահովմանն ուղղված ընթացակարգերի ներդրման և կատարելագործման ռազմավարությունը:

• Թողարկվող մասնագետների պատրաստման որակը բարելավելուն ուղղված ռազմավարության շրջանակներում մշակվել և հաստատվել է նաև համալսարանի ուսանողների լեզվական պատրաստության նոր հայեցակարգը, որը նախատեսում է օտար լեզուների դասավանդման որակի շեշտակի բարձրացում և այդ նպատակով համալսարանում լեզուների ուսուցման կենտրոնի ստեղծում:

ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վարչության պետ՝ *Աղասյան Ժաննեն Արտաշեսի*

Կրթական ծրագրերը՝ *որակավորման բարձրացում*
մասնագիտական վերապատրաստում
կրթական ծառայություններ

2006/2007 ուսումնական տարում Հետբուհական լրացուցիչ կրթության վարչության կողմից երեք կրթական ծրագրերով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ա. ՈՒՍՈՒՑՈՒՄ

1. ԵՊՀ եւ այլ բուհերի պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացում ըստ մասնագիտությունների

Հ/հ	Մասնագիտության անվանումը	Ունկնդիրների թիվը			
		ընդա-մենը	ԵՊՀ դասախոսներ		այլ բուհերի դասախոսներ
			ԵՊՀ-ում	ԵՊՀ-ից դուրս	
1.	Մաթեմատիկա	20	20	-	-
2.	Ֆիզիկա	29	28	1	-
3.	Կենսաբանություն	9	9	-	-
4.	Աշխարհագրություն	6	6	-	-
5.	Տնտեսագիտություն	26	24	-	2
6.	Քաղաքագիտություն	6	5	-	1
7.	Հոգեբանություն	11	8	-	3
8.	Հայոց լեզու	12	10	-	2
9.	Գրականագիտություն	17	17	-	-
10.	Ռուսաց լեզու	13	13	-	-
11.	Ռուս գրականություն	7	7	-	-
12.	Անգլիական բանասիրություն	18	10	1	7
13.	Ֆրանսիական բանասիրություն	9	9	-	-
14.	Իսպանական բանասիրություն	5	5	-	-
15.	Իրանագիտություն	12	12	-	-
16.	Արևելագիտություն	8	8	-	-
17.	Իրավագիտություն	16	2	14	-
18.	Ֆիզիկական դաստիարակություն	6	6	-	-
19.	Սոցիալական աշխատանք	13	13	-	-
	Ընդամենը	**243**	**212**	**16**	**15**
20.	Մանկավարժություն և հոգեբանություն	57	56	-	1
21.	Կրեդիտային համակարգ	44	43	-	1
	Ընդամենը	**101**	**99**	**-**	**2**
	ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ				

22.	Ռուս բանասիրություն	7	7	-	-
23.	Ֆրանսիական բանասիրություն	5	5	-	-
24.	Հայոց լեզու	7	7	-	-
25.	Հայ գրականություն	5	5	-	-
	Ընդամենը	**24**	**24**	**-**	**-**
	ԸՆԴԱՄԵՆԸ	**368**	**335**	**16**	**17**

2. Մասնագիտական վերապատրաստում ըստ կրթական ծրագրերի

Հ/հ	**Կրթական ծրագրի անվանումը**	**Ունկնդիրների թիվը**
1.	ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստում	628
2.	«Անշարժ գույքի գնահատում» որակավորման դասընթաց	108
3.	«Հոգեբանություն» մասնագիտությամբ վերապատրաստում	17
	ԸՆԴԱՄԵՆԸ	**753**

3. Կրթական ծառայություններ

Հ/հ	**Մասնագիտության անվանումը**	**Ունկնդիրների թիվը**
1.	Համակարգչագիտություն	19
2.	Գործավարություն	5
3.	Սոցիալական աշխատանք	1
	ԸՆԴԱՄԵՆԸ	**25**

Բ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ըստ կրթական ծրագրերի

Հ/հ	**Կրթական ծրագրի անվանումը**	**Ժամաքանակը**		
		ընդա-մենը	**բեռն-ված.**	**ժամա-վճար**
1.	**Ա. Դասախոսների որակավորման բարձրացում**	**3 491**	**856**	**2 635**
2.	**Բ. Մասնագիտական վերապատրաստում** ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստում	**3 237** 1 670	- -	**3 237** 1 670
3.	«Անշարժ գույքի գնահատում» որակավորման դասընթաց	384	-	384
4.	«Հոգեբանություն» մասնագիտությամբ վերապատրաստում	1 183	-	1 183
5.	**Գ. Կրթական ծառայություններ**	**60**	**-**	**60**
	ԸՆԴԱՄԵՆԸ	**6 788**	**856**	**5 932**

2. Ըստ մասնագիտությունների

Հ/h	Մասնագիտության անվանումը	Ժամաքանակը		
		ընդամենը	բեռնված.	ժամավճար
1.	Մաթեմատիկա	328	288	40
2.	Ֆիզիկա	420	328	92
3.	Քիմիա	132	132	-
4.	Կենսաբանություն	222	108	114
5.	Աշխարհագրություն	133	-	133
6.	Տնտեսագիտություն	848	-	848
7.	Փիլիսոփայություն	152	-	152
8.	Հոգեբանություն	1 374	-	1 374
9.	Սոցիոլոգիա	170	-	170
10.	Միջազգային հարաբերություններ	144	-	144
11.	Քաղաքագիտություն	8	-	8
12.	Իրավագիտություն	138	-	138
13.	Հայոց լեզու	184	-	184
14.	Գրականագիտություն	170	-	170
15.	Մանկավարժություն	24	-	24
16.	Ժուռնալիստիկա	13	-	13
17.	Ռուս բանասիրություն	313	-	313
18.	Անգլիական բանասիրություն	235	-	235
19.	Ֆրանսիական բանասիրություն	195	-	195
20.	Գերմանական բանասիրություն	42	-	42
21.	Իսպանական բանասիրություն	58	-	58
22.	Արևելագիտություն	156	-	156
23.	Թուրքագիտություն	60	-	60
24.	Ֆիզիկական դաստիարակություն	130	-	130
25.	Համակարգչագիտություն	60	-	60
26.	Կրեդիտային համակարգ	60	-	60
27.	Քաղաքացիական ծառայություն	1 019	-	1 019
	ԸՆԴԱՄԵՆԸ	**6 788**	**856**	**5 932**
	որից՝ ԵՊՀ դասախոսներ	**5 487**	**856**	**4 631**
	հրավիրված դասախոսներ	**1 301**	**-**	**1 301**

Գ. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

1. Ըստ մասնագիտությունների եւ գիտական աստիճանի

Հ/h	Մասնագիտության անվանումը	Դասախոսների թիվը			
		ընդա-մենը	գիտու-թյունների դոկտոր	գիտու-թյունների թեկնածու	գիտական աստիճան չունեցող
1.	Մաթեմատիկա	5	3	2	-
2.	Ֆիզիկա	7	7	-	-
3.	Քիմիա	5	4	1	-

4.	Կենսաբանություն	8	7	1	-
5.	Աշխարհագրություն	9	6	3	-
6.	Տնտեսագիտություն	18	7	11	-
7.	Փիլիսոփայություն	2	1	1	-
8.	Հոգեբանություն	11	2	7	2
9.	Սոցիոլոգիա և սոցիալական աշխատանք	6	1	3	2
10.	Միջազգային հարաբերություններ	2	-	2	-
11.	Քաղաքագիտություն	1	-	1	-
12.	Իրավագիտություն	2	-	2	-
13.	Հայոց լեզու	4	4	-	-
14.	Գրականագիտություն	13	9	4	-
15.	Մանկավարժություն	1	1	-	-
16.	Ժուռնալիստիկա	2	1	1	-
17.	Ռուս բանասիրություն	19	1	16	2
18.	Անգլիական բանասիրություն	8	3	5	-
19.	Ֆրանսիական բանասիրություն	8	-	5	3
20.	Գերմանական բանասիրություն	1	1	-	-
21.	Իսպանական բանասիրություն	4	-	4	-
22.	Արևելագիտություն	7	1	6	-
23.	Թուրքագիտություն	2	-	1	1
24.	Ֆիզիկական դաստիարակություն	4	2	2	-
25.	Կրեդիտային համակարգ	3	-	3	-
26.	Համակարգչագիտություն	1	-	-	1
27.	Քաղաքացիական ծառայություն	36	5	12	19
28.	Անշարժ գույքի գնահատում	4	-	4	-
	ԸՆԴԱՄԵՆԸ	**193**	**66**	**97**	**30**
	որից՝ ԵՊՀ դասախոսներ	**172**	**65**	**96**	**11**
	հրավիրված դասախոսներ	**21**	**1**	**1**	**19**

2007 թ. ապրիլի 27-ին կազմակերպվել է հանրապետական գիտագործնական սեմինար՝ «Հետբուհական լրացուցիչ կրթություն. հիմնախնդիրները և զարգացման միտումները» թեմայով՝ նվիրված վարչության ստեղծման 5-ամյակին: Կարևորելով լրացուցիչ մասնագիտական կրթության՝ որպես ժամանակակից որակյալ կադրերի պահպանման, զարգացման և վերարտադրման գործոնի դերը մրցունակ տնտեսություն և կրթության համակարգ ստեղծելու, ինչպես նաև կրթության բարձր որակ ապահովելու ասպարեզում՝ Երևանի պետական համալսարանը գործընկեր բուհերին առաջարկել է համադրել բոլոր ուժերը լրացուցիչ մասնագիտական կրթության զարգացման ուղղությամբ:

2007 թ. մայիսին գիտխորհրդում ամփոփվել է ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման հնգամյա հեռանկարային պլանի (2002-2007 թթ.) կատարումը, իսկ հունիսին ընդունվել է «Երևանի պետական համալսարանում հետբուհական լրացուցիչ կրթության կազմակերպման հայեցակարգը»:

2006/2007 ուսումնական տարում որոշակիորեն համալրվել է վարչության նյութատեխնիկական բազան, որն աստիճանաբար հիմք է ստեղծում ուսուցումը նոր տեխնոլոգիաներով կազմակերպելու համար:

ՀՀ քաղաքացիական ծառայության համակարգի կայացման գործում ներդրած ավանդի համար և ՀՀ քաղաքացիական ծառայության համակարգի ներդրման 5-ամյակի առթիվ ԵՊՀ հետբուհական լրացուցիչ կրթության վարչության պետը արժանացել է շնորհակալագրի:

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վարչության պետ՝ *Պողոսյան Գեորգի Սամվելի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, դոցենտ*

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ գիտահետազոտական վարչությունում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Համակարգվել են ԵՊՀ ֆակուլտետների գիտահետազոտական աշխատանքների փաստաթղթերը (հաստիքային ցուցակների ստուգում և ընդունում):
- ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն է ներկայացվել ԵՊՀ 2006 թ. պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական թեմաների վիճակագրական հաշվետվությունը:
- Կազմակերպվել, ստուգվել և ՀՀ ԿԳՆ է հանձնվել 2007 թ. պետական բյուջեից բազային ֆինանսավորման լաբորատորիաների ֆինանսավորումը շարունակելու վերաբերյալ հիմնավորումները:
- ՀՀ ԿԳՆ է ներկայացվել բազային ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերում ներգրավված գիտական աստիճաններ ունեցող գիտաշխատողների մասին տվյալները:
- Մշակվել և ֆակուլտետներ է ուղարկվել ԵՊՀ 2006-2007 ուստարում ԵՊՀ-ում իրականացված գիտական գործունեության հաշվետվության նոր ձևը:
- Հաշվառվել են գիտահետազոտական լաբորատորիաների գիտական սարքերն ու սարքավորումները:
- Կազմակերպվել է պետական ֆինանսավորմամբ գիտահետազոտական թեմաների տարեկան և ընթացիկ հաշվետվությունների ներկայացումը:
- ԳՀՎ-ի առաջարկությամբ՝ 2007 թ. գիտական թեմաների և գիտահետազոտական լաբորատորիաների աշխատակիցների կազմից հանվել են այլ հիմնարկներում աշխատողները, ինչը հնարավորություն է տվել թեմաների կատարման աշխատանքներում ընդգրկել համալսարանի նոր աշխատակիցների:
- ԳՀՎ-ն հետևել է, որ գիտահետազոտական աշխատանքների մեջ ընդգրկվեն ավելի շատ ասպիրանտներ և ուսանողներ (հաշվետու տարում գիտական աշխատանքների մեջ ընդգրկված են եղել 21 ասպիրանտ և 43 ուսանող):
- Ընթացիկ տարում ԵՊՀ աշխատակիցները ստացել են գյուտերի 7 արտոնագրեր:
- Ապագայում ԵՊՀ-ում տեխնոպարկի անցնելու կապակցությամբ ուսումնասիրվել են հանրապետությունում և արտերկրում գործող մի շարք տեխնոպարկերի կանոնադրությունները:
- ԳՀՎ-ն համակարգել է Երևանի պետական համալսարանի կողմից կազմակերպված և անցկացված միջազգային ու հանրապետական հետևյալ գիտաժողովների աշխատանքները.
  1. Joint European and National Astronomy Meeting, JENAM-2007, 20-25.08.2007, Yerevan, Armenia.
  2. Հայոց ազգային բանակի կազմավորման 15-ամյակին նվիրված գիտաժողով, 26.01.2007 թ., Երևան:
  3. Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողով, 21-23.06.2007 թ., Շուշի, Ստեփանակերտ:
  4. «Ալպ-Հիմալայան գոտու լեռնային շրջանների կիրառական աշխարհագրության և երկրաբանության հարցերը» թեմայով միջազգային գիտաժողով, 25-28.04.2007 թ., Երևան:
  5. «Ժուռնալիստիկայի արդի հիմնախնդիրները» թեմայով հանրապետական գիտաժողով, 2-3.05.2007 թ., Երևան:
  6. «Փոքրամասնությունները և կոնֆլիկտները Հարավային Կովկասում» թեմայով գիտաժողով, 29.06.2007 թ., Երևան:
  7. «Բոլոնիայի գործընթացի շրջանակներում բարձրագույն կրթության մեջ ինստուցիոնալ բարեփոխումների վերաբերյալ» թեմայով ազգային սեմինար, 21-22.06.2007 թ., Երևան:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վարչության պետ՝ *Մարգարով Ալեքսանդր Ալեքսանդրի, փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Միջազգային համագործակցության վարչության հիմնական նպատակն է մշակել համագործակցության ծրագրեր ու նախագծեր՝ ուղղված կրթական և գիտական աշխատանքի որակի բարձրացմանը:

Միջազգային համագործակցության վարչության հիմնական խնդիրներն են.

- Երևանի պետական համալսարանում ուսման և գիտական աշխատանքների որակի ապահովում, համաշխարհային գիտակրթական գործընթացներում ԵՊՀ-ի ինտեգրում,
- հետագա գործընկերության կազմակերպման նպատակով այլ համալսարանների հետ պայմանագրերի կնքում և առկա համագործակցության հետագա ընդլայնում,
- համալսարանի դասախոսներին և ուսանողներին միջազգային տարբեր գիտական ծրագրերում ներգրավելու աշխատանքներ, այդ թվում՝ դասախոսների և ուսանողների փոխանակման ծրագրերի կազմակերպում,
- համատեղ գիտական և ուսումնական միջոցառումների, այդ թվում՝ սեմինարների, աշխատանքային հանդիպումների, գիտաժողովների և գիտակրթական ցուցահանդեսների կազմակերպում:

2006/2007 ուսումնական տարվա ընթացքում իրականացվել են աշխատանքներ՝ ուղղված տարբեր բուհերի և գիտական-ուսումնական հաստատությունների հետ համագործակցության զարգացմանը: Համագործակցությունը իրականացվել է հետևյալ ուղղություններով.

- Երևանի պետական համալսարանը սկսել է համագործակցություն Հարավային Կովկասի Ամերիկյան հետազոտական ինստիտուտի (The American Research Institute of South Caucasus) հետ, որին անդամակցում են Չիկագոյի, Ինդիանայի, Իլինոյսի, Տեխասի համալսարանները, ինչպես նաև Կալիֆորնիայի համալսարանը Բերկլիում, Կալիֆորնիայի համալսարանը Լոս Անջելեսում, Բրաունի համալսարանը և Նյու Յորքի պետական համալսարանը Սթոունբրուքում:
- Բաց հասարակության ինստիտուտի բարձրագույն կրթության օժանդակության ակադեմիական կրթաթոշակի ծրագրի շրջանակներում համագործակցություն է ծավալվել ԵՊՀ հետևյալ ամբիոնների հետ՝ կիրառական հոգեբանության, քաղաքագիտության և տնտեսագիտության տեսության: 2008/2009 ուսումնական տարում նախատեսվում է համագործակցությունը շարունակել կիրառական հոգեբանության և ԵՊՀ մի շարք այլ ամբիոնների հետ:
- Համագործակցությունը առկա է KIMEP, TEMPUS, DAAD, CRDF, IREX, ACIE և Fullbright ծրագրերով, Վարշավայի համալսարանի Արևելյան Եվրոպայի հետազոտական կենտրոնի, Հայաստանի հետ ընկերության ռուսական միության (Ðîññèéñêîå Îáùåñòâî Äðóæáû ñ Àðìåíèåé), NATO-ի ժողովրդական դիվանագիտության վարչության, Եվրոպական ժողովրդավարության հիմնադրամի (Բրյուսել), USAID CAPS Project-ի, Հայկական բարեգործական ընդհանուր միության հիմնադրամի (AGBU) հետ, ինչպես նաև Բրիտանական խորհրդի (British Council) և «Յասոն» ծրագրի շրջանակներում:
- Շարունակվում է համագործակցությունը տարբեր միջազգային կրթական կազմակերպությունների, այդ թվում՝ Եվրոպական համալսարանների ասոցիացիայի (European University Association), Համալսարանների միջազգային ասոցիացիայի (International Association of Universities), Բարձրագույն կրթության մեջ որակի ապահովման Եվրոպական ասոցիացիայի (European Association For Quality Assurance In Higher Education), Եվրասիական համալսարանների ասոցիացիայի (Евразийская Ассоциация Университетов), Եվրասիական քաղաքական հետազոտությունների ցանցի (European Political Studies Network) հետ:
- Համագործակցությունը շարունակվում է նաև Ամերիկյան Խորհուրդներ (American Councils), OSI AF, CRRC, վերջինիս հետ համատեղ և EERC (Economic Education Research Consortium) անցկացված դասընթացներ՝ Էկոնոմետրիկայի և Միկրոէկոնոմիկայի ոլորտներում՝ ԵՊՀ ուսանողների և ասպիրանտների համար:
- Պատրաստվում է պայմանագրի ստորագրում Հունաստանի Թրակիայի համալսարանի, Լուգանսկի Տարաս Շևչենկոյի անվան ազգային մանկավարժական համալսարանի, Լիոն 3-ի (Ֆրանսիա),

Բուրգոսի համալսարանի (Իսպանիա), Թբիլիսիի Ի. Ջավախիշվիլիի անվան պետական համալսարանի (Վրաստան), ինչպես նաև Վորոնեժի համալսարանի հետ (Ռուսաստանի Դաշնություն):

- Ստորագրվել է հուշագիր Ռուսաստանի Դաշնության Հարավային Դաշնային պետական համալսարանի հետ:
- Միջազգային համագործակցության վարչության շնորհիվ՝ ԵՊՀ ուսանողների առջև ելույթներ են ունեցել Հայաստանում հավատարմագրված միջազգային կազմակերպությունների և դեսպանատների ներկայացուցիչներ (Հնդկաստան, Ֆրանսիա, Միացյալ Նահանգներ), ՄԱԿ-ի զարգացման ծրագրի և Transparency International ծրագրի ներկայացուցիչներ:

Համագործակցության շրջանակներում Երևանի պետական համալսարանում ուսանել են ուսանողներ ԱՄՆ-ից, Նորվեգիայից և այլ երկրներից: Համալսարանում դասավանդել են մասնագետներ Գերմանիայից, Իսպանիայից, Միացյալ Նահանգներից, Բուլղարիայից:

Համալսարանում շարունակվում է բուլղարերենի դասավանդման ծրագիրը ռուս բանասիրության ֆակուլտետում:

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետում 2007/2008 ուսումնական տարում կսկսվի պորտուգալերենի դասավանդումը: Հետագայում նախատեսվում է ստեղծել բրազիլիական գրականության կաբինետ:

- ՈՒսանողների փոխանակում է տեղի ունեցել Ժնևի, Կալիֆորնիայի, Արիզոնայի համալսարանների միջև: Արիզոնայի համալսարանի CLI (Critical Language Institute) ուսանողները սովորել են ԵՊՀ-ում ոչ միայն ուսումնական տարվա, այլև ամառվա լեզվական պրակտիկումի ընթացքում: Նրանք անցել են նաև հայագիտական պրակտիկա:
- ԵՊՀ-ում ամառվա ընթացքում վերապատրաստում և դասընթացներ են անցել Ֆրեզնոյի համալսարանի և Գլենդելի քոլեջի 31 ուսանողներ:
- 2007/2008 ուսումնական տարում նախատեսվում է սկսել փոխանակման ծրագիր Կոնեկտիկուտի համալսարանի հետ: Այս համագործակցության շրջանակներում նախատեսվում է ինչպես ԵՊՀ ուսանողների այցը, այնպես էլ ԵՊՀ դասախոսների դասավանդումը հայագիտական մասնագիտություններով: Հեռանկարում նախատեսվում է կազմակերպել նաև համատեղ ամառային դասընթաց Կոնեկտիկուտի համալսարանի հնագիտություն մասնագիտությամբ մասնագիտացող ուսանողների համար:
- Շարունակվում են փոխանակման ծրագրերը Եգիպտոսի, Սիրիայի հետ:
- ՈՒսանողները վերապատրաստվել են Հունաստանում, Բուլղարիայում, Ռուսաստանի Դաշնությունում և Եգիպտոսի Արաբական Հանրապետությունում:

Երևանի պետական համալսարանը աջակցել է քսանից ավելի միջոցառումների հաջող անցկացմանը: Միջազգային համագործակցության վարչության կողմից անց են կացվել.

- 2006 թ. նոյեմբերին Պոլ Վալերի Մոնպելիե III համալսարանի հետ համատեղ «Հայ-ֆրանսիական պատմական առնչություններ» խորագրով գիտաժողով:
- 2007 թ. փետրվար-ապրիլին ԵՊՀ-ի և Երևանի պետական ճարտարագիտական համալսարանի հետ համատեղ իրականացվել է ԲՀԻ № 15509 «Հայաստանում որակյալ բարձրագույն կրթության մեխանիզմի զարգացումն ու արմատավորումը» նախագիծը:
- 2007 թ. մարտին տեղի է ունեցել «Ժողովրդավարության զարգացումը 21-րդ դարում. Տեսական երկխոսություններ և գործնական քաղաքականություն» խորագրով գիտաժողով:
- 2007 թ. ապրիլին տեղի է ունեցել Ս. Պ. Բալյանի 90-ամյակին նվիրված «Ալպ-Հիմալայան գոտու լեռնային շրջանների աշխարհագրության և երկրաբանության կիրառական հարցերը» խորագրով գիտական կոնֆերանս:
- 2007 թ. ապրիլին Միջազգային համագործակցության վարչության կողմից կազմակերպվել է «Օրակարգ 2011: Ժողովրդավարական զարգացման քսան տարիները. Ընտրությունների դերը ժողովրդավարացման գործընթացում» խորագրով գիտաժողով:
- 2007 թ. մայիսին տեղի է ունեցել «Ռուս-հայկական հարաբերությունները և Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը ընտրություններից առաջ և հետո» խորագրով գիտաժողովը:

- 2007 թ. մայիսին տեղի է ունեցել «Ընտրությունների նշանակությունը ժողովրդավարացման գործընթացում» խորագրով միջազգային գիտաժողով և կլոր սեղան:
- 2007 թ. հունիսին Սորբոնի համալսարանի հետ համատեղ կազմակերպել է "Minorities and Conflicts in South Caucasus" խորագրով գիտաժողով:
- 2007 թ. հունիսի 21-22-ին UNESCO-ի Կրթության ծրագրավորման միջազգային ինստիտուտի Մոսկվայի UNESCO-ի գրասենյակի հետ համատեղ ԵՊՀ-ում անց է կացվել «Բոլոնիայի գործընթացի շրջանակներում բարձրագույն կրթության մեջ ինստիտուցիոնալ բարեփոխումները» (National Seminar on Institutional Restructuring in Higher Education) խորագրով միջազգային սեմինար:
- 2007 թ. հուլիսին անց է կացվել լրագրության ամառային դպրոց՝«Ժուռնալիստական կրթության նոր մոդել» խորագրով:
- 2007 թ. հուլիս-օգոստոսին ԲՀԻ ֆինանսական օժանդակությամբ անց է կացվել «Կրթության որակի ապահովման ներքուհական մեխանիզմների մշակումն ու ներդրումը Հայաստանում» խորագրով ամառային դպրոցը:
- Միջազգային համագործակցության վարչությունը օժանդակել է նաև ԵՊՀ մշակութաբանության մասնագետների մասնակցությունը UNESCO-ի կողմից կազմակերպված միջմշակութային երկխոսությանը նվիրված և «Կովկասը: Միջմշակութային երկխոսության հեռանկարները» խորագիրը կրող միջազգային գիտաժողովին:
- 2007 թ. օգոստոսին ԵՊՀ-ում կայացավ Եվրոպական և ազգային աստղագիտական ընկերությունների միացյալ համաժողովը՝ «JENAM-2007»-ը:
- Էապես բարելավվել է ԵՊՀ «Օտարերկրյա հյուրերի տան» սպասարկման որակը: Ընդլայնվել է ծառայությունների ցանկը, տեխնիկական միջոցների ներդրմամբ կատարելագործվել է գիտաժողովների, սեմինարների և կլոր սեղանների կազմակերպումը: Այս ամենի արդյունքում զգալի միջոցներ են փոխանցվել ԵՊՀ բյուջե:

Միջազգային համագործակցության վարչությունը ԵՊՀ ստորաբաժանումներին և մասնագետներին ներկայացրել և տեղեկացրել է տարբեր ոլորտներում՝ մաթեմատիկա, քաղաքագիտություն, իրավագիտություն, սոցիոլոգիա և այլն, համագործակցությունների, ծրագրերի, միջազգային գիտաժողովների վերաբերյալ, ինչպես նաև օժանդակել է հայտերի լրացման հարցում՝ ներառյալ Fullbright ծրագիրը և Fullbright ամառային ինստիտուտը:

- 2007 թ. մարտին նախապատրաստվել և ներկայացվել է Եվրոպական գիտական խորհրդի կողմից հաստատված «Գիտական և տեխնոլոգիական զարգացման 7-րդ Շրջանային Ծրագիր» (The Seventh Framework Programme for research and technological development, FP7) նախագիծը: Այն գործելու է 7 տարի (2007-2013 թթ.) և իրականացվում է 4 հատուկ ծրագրերով՝ գիտական համագործակցություն, եվրոպական արժեքների գաղափարախոսական ծրագրեր, մարդկային ռեսուրսներ, գիտություն-արտադրություն: Հայտարարված մրցույթին հայտեր չեն ներկայացվել:
- 2007 թ. ապրիլին ֆակուլտետներին ներկայացվել է երկու ծրագրերի մրցույթ՝ «Եվրոպական գիտահետազոտական համագործակցություն» (EUROpean COllaboration RESearch, EUROCORES) «EUROCORES թեմաներ 2007» ծրագիրը, որն ընդգրկում է հումանիտար և բնագիտական գիտությունների լայն ոլորտներ, և «Առաջատար գիտահետազոտական աշխատանքների բնույթն ու առավելությունը» (Science and Transcendence Advanced Research Series, STARS, ԱՄՆ): Ծրագիրը աջակցում է համատեղ բնական և հումանիտար (փիլիսոփայություն, աստվածաբանություն) գիտությունների հետազոտական խմբերի աշխատանքին: Վերջինիս մրցույթին մասնակցելու հայտեր են ներկայացրել ֆիզիկայի ֆակուլտետի մոլեկուլային ֆիզիկայի և օպտիկայի ամբիոնների աշխատախմբեր: Մրցույթի պատասխանը հայտնի կլինի 2007թ. նոյեմբեր ամսին:
- 2007 թ. մայիսին ԵՊՀ բնագիտական ֆակուլտետներին ներկայացվել է Ecole Polytechnique ֆրանսիական տեխնիկական ինստիտուտի և ԵՊՀ-ի միջև համատեղ մագիստրատուրայի ուսանողների (մինչև 26 տարեկան) փոխանակման ծրագիրը՝ 3 ամսից մինչև մեկ ակադեմիական տարի ուսման տևողությամբ: Ծրագրի նախապատրաստումը ընթացքի մեջ է:

Դրամաշնորհներ

- 2006 թ. դեկտեմբերին Երևանի պետական ճարտարագիտական համալսարանի հետ համատեղ ներկայացվել և ֆինանսավորման է արժանացել «ՀՀ բուհերում ներքին որակի հսկիչ համակարգ» (Internal Quality Assurance System in Aimenian HEIs) նախագիծը, համատեղ իրականացվել է Ջենովա

(Իտալիա) և Միդլսեքսի (Մեծ Բրիտանիա) համալսարանների հետ և արժանացել է TEMPUS JEP-ի ֆինանսավորման:

- 2007 թ. հունվար-փետրվար ամիսներին նախապատրաստվել և ներկայացվել է Եվրոպական Միության «TEMPUS» ղրամաշնորհի Erasmus Mundus "External Cooperation Window" ծրագրի 5 նախագիծ՝ Hacettepe համալսարանի (Անկարա, Թուրքիա), Centre for East European Studies (Վարշավա, Լեհաստան), Ghent University (Բելգիա), Stanislaw Staszic School of Public Administration (Բյալիստոկ, Լեհաստան), University of Rousse "Angel Kanchev" (Բուլղարիա), University of Tuscia (Իտալիա), Polytechnic Institute of Viana do Castelo (Պորտուգալիա), HAS Den Bosch University of Applied Sciences (Նիդերլանդներ), Alexander Technological Educational Institution of Thessaloniki (Հունաստան): Վերջին նախագիծը Ֆինանսավորման է արժանացել: Ծրագրի նպատակն է ընդլայնել և զարգացնել շարժունակության հնարավորությունները, փորձի փոխանակումը, բարձրացնել որակավորումը ինչպես կրթության բարձրագույն հաստատությունների դասավանդող կազմի, այնպես էլ ուսանողության (բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա, դոկտորանտուրա) Եվրոպական Միության և ՀՀ տարածաշրջանի համալսարանների միջև: Համագործակցության շրջանակներում նախատեսվում է նաև լավագույն գիտական հետազոտությունների արդյունքների փոխանակում, միջազգային կապերի ընդլայնում և ամրապնդում: Ծրագիրը գործելու է 2008թ. ապրիլից:
- 2007 թ. փետրվարին NFSAT, YSU և CRDF կողմից նախապատրաստվել և ներկայացվել է համատեղ «Բարձրագույն կրթության և գիտական հետազոտությունների կենտրոն» (UCEP) ծրագիրը, որի նպատակն էր ստեղծել և ֆինանսավորել ԵՊՀ-ում հետազոտական կենտրոններ, որոնք կաջակցեն բնական գիտությունների զարգացմանը: Մրցույթին ներկայացվել էր 10 նախագիծ ԵՊՀ ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի, կենսաբանության և քիմիայի ֆակուլտետների տարբեր ամբիոններից: Ֆինանսավորման են արժանացել ֆիզիկայի ֆակուլտետի տեսական (թեմա՝ Algebraic and geometric studies for condensed matter physics, ղեկավար՝ ֆիզմաթ. գիտ. դոկտոր, ավագ գիտ. աշխ. Տ. Հակոբյան, թեմա՝ Centre for quantum information technologies and new nonlinear materials, ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ-ի թղթակից անդամ Գ. Կրյուչկյան) և պինդ մարմնի ֆիզիկայի (թեմա՝ Superconductivity &Scientific Instrumentation, ղեկավար՝ ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ավագ գիտ. աշխ. Ս. Գևորգյան) ամբիոնների 3 նախագիծ: Ծրագիրը գործելու է 2007-2009թթ. ընթացքում:
- Երևանի ճարտարագիտական համալսարանի, Կրթության և գիտության նախարարության, Շվեդիայի Լունդ (Lund) և Բելգիայի Անտվերպենի համալսարանների հետ համատեղ Երևանի պետական համալսարանին շնորհվեց TEMPUS-TASIS-ի (T047B06-2006) ECTS Based Credit Framework for Armenia ղրամաշնորհը:

«Գալուստ Գյուլբենկյան հաստատության» կողմից հատկացված ֆինանսական միջոցներով 2006/07 ուստարում հրատարակվել են գիտական մենագրություններ և ուսումնական ձեռնարկներ (ընդամենը՝ 12 (տասներկու)):

2006/07 ուսումնական տարում ԱՄՆ հայկական հիմնադրամների կողմից Երևանի պետական համալսարանի բարձր առաջադիմություն ունեցող և սոցիալապես անապահով 49 ուսանողների հատկացվել է միանվագ կրթանպաստ 4900 ԱՄՆ դոլար գումարի չափով:

«Գալուստ Գյուլբենկյան հաստատության» կողմից համալսարանում սովորող 49 (45 հայաստանցի և 4 սփյուռքահայ) ուսանողների հատկացվել է կրթաթոշակ՝ տարեկան ուսման վարձերի չափով 31894 ԱՄՆ դոլար գումարի չափով:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Վարչության պետ՝ *Գրիգորյան Կարեն Հովիկի, բան. գիտ. թեկնածու*

ԵՊՀ վարկանիշի և հեղինակության բարձրացմանը նպաստող տեղեկատվության պատրաստմանը, կրթօջախի խորհրդանշանների և այլ քարոզչական նյութերի տարածմանն է միտված ԵՊՀ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության գործունեությունը: Վարչությունը հիմնադրվել է 2006 թ-ի հունիսի 6-ին:

Վարչության գործունեության հիմնական ուղղություններն են՝

- հասարակության շրջանում համալսարանի մասին դրական կարծիքի ձևավորումը, ներհամալսարանական ընթացակարգերի, աշխատատեղի, ներքին էթիկայի և վարվելակերպի, ինչպես նաև այլ խնդիրների վերաբերյալ մեթոդական ուղեցույցների մշակումը,
- քաղաքացիներին հուզող հարցերին, առաջարկություններին, բողոքներին, նամակներին, դիմումներին արագ և պատշաճ կերպով արձագանքումը,
- ՋԼՄ-ների, ՀԿ-ների և այլ կազմակերպությունների միջև համագործակցության ապահովումը,
- լրատվամիջոցներում (տեղական և արտերկրի) համալսարանի, կրթության և գիտության ոլորտի կարևոր հարցերի վերաբերյալ հրապարակված նյութերի վերլուծումը,
- համալսարանի տպագիր տեղեկատվության տարածման միջոցների զարգացումը (պաշտոնաթերթ, ամսագիր, տեղեկատվական թերթիկներ, բուկլետներ, ալբոմներ, բացիկներ և այլն),
- ԵՊՀ ինտերնետային կայքի զարգացումը, կայքում օպերատիվ կերպով տեղեկատվության տեղադրումը, on-line հետադարձ կապի ապահովումը,
- համալսարանի մասին տեսա և աուդիո նյութերի պատրաստումը ու դրանց տարածումը:

Վարչության բնականոն գործունեությունն ապահովում են հետևյալ 5 բաժինները.

- ՋԼՄ-ների հետ աշխատանքի,
- Տպագիր լրատվամիջոցների,
- Էլեկտրոնային լրատվամիջոցների,
- Մեթոդական,
- Ֆոտո-կինո:

2006/2007 ուսումնական տարվա ընթացքում վարչությունն իրականացրել է հետևյալ միջոցառումները.

- կապեր են հաստատվել զանգվածային լրատվության բոլոր միջոցների հետ,
- հավատարմագրվել են կրթության ոլորտն ու համալսարանական խնդիրները լուսաբանող բոլոր լրագրողներն ու օպերատորները,
- կազմակերպվել են ԵՊՀ ռեկտորի մամուլի ասուլիսները, ինչպես նաև թեմատիկ քննարկումներ լրատվամիջոցների բազմաթիվ աշխատակիցների հետ,
- քանակական և որակական վերլուծության են ենթարկվել ԵՊՀ-ի մասին բոլոր հրապարակումները, հեռուստատեսային և ռադիո նյութերը, լրատվական գործակալությունների և ինտերնետային պարբերականների անդրադարձները,
- արխիվացվել են դրանք և հրատարակվել առանձին ալբոմներով ու բրոշյուրներով,

- համալսարանական խնդիրները լուսաբանող լրագրողների համար 2006թ. դեկտեմբերի 2-3-ը, ինչպես նաև 2007թ. սեպտեմբերի 9-10-ը կազմակերպվել են «ԵՊՀ-ն ՋԼՄ-ում» և «Բոլոնիայի գործընթացը ԵՊՀ-ում» թեմայով սեմինար-քննարկումներ Ծաղկաձորի «Համալսարան» ուսումնասարտաղրական բազայում,
- մշակվել և մասսայականացվել են ԵՊՀ խորհրդանշանները (գերբ, լոգո, դրոշ, հիմն),
- հաշվետու ժամանակահատվածում վարչությունը տպագրել է ԵՊՀ պատմությունը, ուսումնական գործընթացը, գիտական նորությունները, միջազգային համագործակցությունը, ուսանողական կյանքը, ինչպես նաև ԵՊՀ ֆակուլտետները, գիտական գրադարանը և Իջևանի մասնաճյուղը ներկայացնող բուկլետ հայերեն և անգլերեն,
- վարչությունը օտարերկրյա քաղաքացիների համար հրատարակել է նաև ԵՊՀ պատմությունը, ուսումնական և գիտական գործընթացները, միջազգային համագործակցությունը, ուսանողական կյանքը, օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կանոններն ու վարձավճարները ներկայացնող բուկլետ ռուսերեն լեզվով,
- 2006 և 2007 թթ. հուլիս-օգոստոս ամիսներին մշակվել և տպագրվել է «Առաջին կուրսեցու ուղեցույցը», որը ներկայացնում է ԵՊՀ ռեկտորի շնորհավորական ուղերձն ու համալսարանականի երդման տեքստը, բուհի կառավարումն ու կառուցվածքը, ուսումնական գործընթացի կազմակերպումը, ֆակուլտետները, ուսանողական և մշակութային կառույցները, ԵՊՀ կանոնադրությունն ու կանոնագրերը, ինչպես նաև օգտակար խորհուրդներ ուսումնառությունը ճիշտ կազմակերպելու վերաբերյալ,
- տպագրվել են համալսարանի խորհրդանշաններով թղթապանակներ, նոթատետրեր, գրիչներ և այլ քարոզչական նյութեր,
- 2006 և 2007 թթ. սեպտեմբեր ամիսներին վարչությունը կազմակերպել է առաջին կուրսեցիներին նվիրված միջոցառումներ ֆակուլտետներում և բոլոր առաջին կուրսեցիներին բաժանվել են «Առաջին կուրսեցու փաթեթներ»,
- 2007 թ. մարտին տպագրվել է ԵՊՀ հեռախոսահամարների վերաթարմացված տեղեկատուն, ԵՊՀ քարտեզը,
- 2007 թ. օգոստոսին տպագրվել են տեղեկատվական 15 թերթիկներ, որոնցից յուրաքանչյուրը տեղեկացնում է ԵՊՀ պատմության, ուսումնական գործընթացի, գիտական գործունեության, միջազգային համագործակցության, ֆակուլտետների, գրադարանի, արհկոմիտեի, ուսանողական և մշակութային կառույցների և այլ ոլորտների մասին:
- իր պարբերականությունն է շարունակել «Երևանի համալսարան» ամենամյա պաշտոնաթերթը՝ անդրադառնալով ուսումնական, գիտակրթական, ուսանողական և մշակութային ոլորտներին:
- տասնամյա ընդմիջումից հետո՝ 2006 թ. սեպտեմբերից սկսել է գործել ԵՊՀ պաշտոնական ինտերնետային կայքը՝ www.ysu.am հասցեով,
- կայքում օպերատիվ կազմակերպվել է տեղեկատվության տեղադրումը, on-line հետադարձ կապի ապահովումը,
- մշակվել և վերլուծվել են էլեկտրոնային փոստով եկած բոլոր նամակները,
- տեսանկարահանվել և լուսանկարահանվել են ԵՊՀ-ում անցկացված միջոցառումները,
- ամբողջ նյութը թվանշայնացվել և արխիվացվել է DVD սկավառակների վրա,
- պատրաստվել են համալսարանական անցուդարձը ներկայացնող տեսահոլովակներ,
- վարչության համապատասխան բաժնի աշխատակիցները լուսանկարներով ապահովել են ինչպես համալսարանական, այնպես էլ հանրապետական մամուլը,
- DVD սկավառակների վրա են արխիվացվել թվանշային ֆորմատով նկարահանված բոլոր արխիվային նյութերը,
- թվանշայնացվել և արխիվացվել են VHS և SVHS ֆորմատով նկարահանված արխիվային նյութերը,
- թվանշայնացվել և արխիվացվել են 1990-2005 թթ. գունավոր ֆոտոժապավենով լուսանկարահանված նյութերի 80-90%-ը,

- իրականացվել է ԵՊՀ-ում ուսանող-դասախոս փոխհարաբերությունների մասին մեկնարկային հետազոտություն, որը, ելնելով համապատասխան նպատակից և խնդիրներից, հետագայում հնարավորություն կընձեռի այս ոլորտում իրականացնել լայնածավալ ուսումնասիրություն: Մեկնարկային հետազոտության համար կիրառվել են ինչպես սոցիոլոգիական որակական և քանակական, այնպես էլ սոցիալ-հոգեբանական հետազոտական մեթոդներ: ՈՒսանող-դասախոս փոխհարաբերությունների վերաբերյալ հետագա ուսումնասիրությունների համար ստեղծվել են համապատասխան հետազոտական գործիքներ՝ հարցաթերթ քանակական հարցման և ֆոկուս խմբերի հարցաշար որակական տեղեկատվության ստացման համար,
- լայնածավալ հետազոտական, ինչպես նաև տեխնիկական տարաբնույթ աշխատանքների իրագործման համար ստեղծվել է կամավորների խումբ, որում ներգրավված են ԵՊՀ սոցիոլոգիայի, ինչպես նաև փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի հոգեբանության բաժնի ուսանողները,
- վարչության աշխատակիցները մասնագետների դիտարկումների և ուսումնասիրությունների արդյունքում ԵՊՀ ղեկավարությանն են ներկայացրել ԵՊՀ-ում իրականացվող շինարարական աշխատանքների, ԵՊՀ հեռախոսահամարների նոր տեղեկատուի, ուսանողական միջոցառումների ընթացքում ուսանողներին տրվող փաթեթների, ԵՊՀ տարբերանշանի, լոգոյի, «Առաջին կուրսեցու ուղեցույցի» պատրաստման, հետագայում ուղեցույցում տեղ գտած տեղեկատվության նորացման և թարմացման, ինչպես նաև այն ուսանողների պահանջներին համապատասխանեցման, վարչության կողմից կազմված տարաբնույթ տեղեկատվական թերթիկների և բուկլետների մասին մասնագիտական գնահատականներ:

ՍԱՐԳԻՍ ԵՎ ՄԱՐԻ ԻՇՄԻՐԼՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Տնօրեն՝ *Ալեքսանյան Աշոտ Մեյրանի, քաղ. գիտ. թեկնածու, դոցենտ*
Տնօրենի տեղակալ՝ *Միրզոյան Եզնիկ Սահակի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու*

Գրադարանի բաժինների կատարած աշխատանքների ընդհանուր ուղղությունները

Աշխատանքային ցուցանիշները

Բաժին՝ 7
Ընթերցասրահ՝ 4
Գիտական կաբինետ՝ 4
Աշխատողների թիվը՝ 88

Գրքային ունեցվածքը՝ 1975532
Ընթերցող՝ 13200
Հաճախում՝ 923170
Գրքատացք՝ 1 156 830

ՀԱՄԱԼՐՄԱՆ ԵՎ ՄՇԱԿՄԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Մխիթարյան Անահիտ Մաքսիմի*

Հաշվետու շրջանում բաժինը իրականացրել է ֆոնդերի նպատակային համալրում՝ ելնելով ուսումնական ծրագրերի և համալսարանի գիտական գործընթացի պահանջներից: Գրադարան է մուտք գործել 4254 անուն 14173 միավոր գրականություն, որից 637 անուն 4833 միավորը ուսումնական է: Համալրումն ընթացել է հետևյալ աշխատափուլերով՝

- պլանավորում և աղբյուրների ընտրություն,
- գրականության ընդունում,
- հաշվառում - բաշխում:

Գրականության ընտրության ժամանակ հաշվի են առնվել ընթերցողի պահանջները (ըստ մերժումների քարտարանի) և ֆակուլտետների մասնագետների կարծիքները: Համալրումը կատարվել է դրամական փոխանցումների, միջազգային, ԱՊՀ գրքափոխանակության, նվիրատվության, ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, Միջազգային դրամական ֆոնդի հատկացումների միջոցով: Բաժինը իրականացրել է գրադարանի տեղեկատու ապարատի՝ այբբենական և կարգային գրացուցակների, վերնագրային, թեմատիկ և այլ քարտարանների պահպանման և շարունակական ձևավորման գործընթացը: Բաժինը կատարել է նաև նոր գրականության էլեկտրոնային քարտագրում:

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Սարգսյան Միդա Ստեփանի*

Բաժինը շարունակել է իրականացնել գրադարանային գործընթացների լիակատար ավտոմատացման երկարամյա ծրագիրը: Հայաստանյան մի քանի խոշոր գրադարանների հետ մասնակցել է էլեկտրոնային համահավաք գրացուցակի ստեղծման և գործարկման աշխատանքներին: Այս օրվա դրությամբ էլեկտրոնային քարտարանում առկա 1397508 գրառումներից 669085-ը ստեղծվել է ԵՊՀ գրադարանի աշխատակիցների կողմից: Հաշվետու տարում բաժնում կատարվել է շուրջ 11200 գրառում:

Նախկին «Ալեֆ - 14» համակարգը փոխարինվել է առավել արդյունավետ «Ալեֆ - 16» տարբերակով, թարգմանվել է վերջին հինգերորդը: Ընթացքի մեջ է ինչպես գրքերի, այնպես էլ ամսագրային հավաքածուների մատենագիտական նկարագրությունների ձևավորումը:

Դրամաշնորհները

1. NESAT - 021 (ԳԱՏԱ հիմնադրամ, 20 հազար ԱՄՆ դոլար, 2006-2008 թթ. համար, «Գիտական գրականության կարիքների անհատույց բավարարում» թեմայով ծրագրի համար (ղեկ.՝ Ի. Օհանյան, մասնակիցներ՝ Մ. Հակոբյան, Ն. Բժշկյան)):
   Գումարը նախատեսված է ինտերնետային ծախսերի փակման, հրատարակիչներից հոդվածների ստացման, ծրագրի մասնակիցների հոնորարների, հիմնադրամի կողմից տրամադրված տեխնիկական (2 համակարգիչ, բազմացնող մեքենա, տպիչ) աշխատունակ պահելու, ինչպես նաև թղթի ձեռքբերման համար: Խմբի կողմից եռամսյակում միջին հաշվով կատարվել է 800-1000 պատվեր:
2. JEP 25008 (Եվրամիության «Տեմպուս» ծրագիրը, որը սկսվել էր 2005 թ-ին և ավարտվեց 2007 թ-ին):
3. Գերմանական հետազոտական ընկերությունը (DFG), որով նախատեսվում է ստանալ գերմանալեզու գրականություն՝ քաղաքագիտություն, միջազգային հարաբերություններ, սոցիոլոգիա, սոցիալական աշխատանք, հոգեբանություն և հանրային կառավարում մասնագիտություններով:

ԵՊՀ դասախոսական կազմից, վարչական անձնակազմից և գրադարանի աշխատակիցներից 10 մարդ այցելել է եվրոպական գործընկեր համալսարաններ՝ Լոնդոնի, Միդլսեքսի և Հանովերի՝ տեղում ծանոթանալու եվրոպական համալսարանական գրադարաններում առկա փորձին և նվաճումներին: Ծրագրով ստացվել է 33 «Պենտիում-4» անհատական համակարգիչներ, որոնք տեղադրվել են գրադարանում և նախատեսված են ուսանողների համար: Մեկ համակարգիչ՝ իր համապատասխան օժանդակ սարքերով, հատկացվելու է կույր ուսանողների սպասարկմանը: Ծրագրով նախատեսված մեկական համակարգիչ է տրվել աստվածաբանության, միջազգային հարաբերությունների և պատմության ֆակուլտետներին:

Հաշվետու տարում Հանովերի և Միդլսեքսի համալսարանների 7 առաջատար գրադարանավարներ և տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի մասնագետներ այցելել են ԵՊՀ և կարդացել մասնագիտական դասախոսություններ ուսանողների, գրադարանավարների և դասախոսների համար: Ծրագրով նախատեսված է նաև հեռուսուցման միջավայրի ներկայացումը ԵՊՀ դասախոսական կազմին: Ընտրվել է «Մուդլ» համակարգը, որն աշխարհում ունի լայն կիրառում, թարգմանված է բազմաթիվ լեզուներով: Ներկայումս ընթացքի մեջ է նաև դրա հայերեն թարգմանությունը: Պատրաստվել է ուսուցիչների վերապատրաստման դասընթաց՝ «Ինչպե՞ս պատրաստել դասընթաց հեռուսուցման «Մուդլ» միջավայրում» թեմայով, որին մասնակցել են ԵՊՀ տարբեր ֆակուլտետներից ավելի քան 48 դասախոսներ ու ասպիրանտներ:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Ավետիսյան Արմինե Ալբերտի*

Բաժինն իրականացրել է բազմապլան տեղեկատվություն հետևյալ գործառույթների միջոցով.

հրատարակչական գործ հայաստանյան գրադարանների համահավաք քարտարանում, հեղինակային գրառումների ստեղծում, գրականության սպասարկում և գրական տեղեկատվություն:

Հրատարակչական գործը բաժնի հիմնական գործառույթն է: Պարբերաբար հրատարակվող «Երևանի պետական համալսարանի հրատարակությունների մատենագիտությունը» ամփոփում է համալսարանի, իսկ առանձին դեպքերում նաև ամբիոնների կամ դասախոսների նախաձեռնությամբ հրատարակված 5 տարվա նյութերը (գիրք, միջբուհական ժողովածու, հանդես, գիտական հոդվածներ): Հաշվետու տարում շարունակվել է հերթական սրբակի (9-րդ) նյութերի հավաքումն ու քարտագրումը, կազմվել է 997 քարտ:

Բաժինը կատարել է նաև գրադարանի վերաբերյալ հրատարակվող նյութերի (գիրք, հոդված, հաշվետվություն), 1990-1994թթ. թեկնածուական ատենախոսությունների, պաշտոնական գրությունների,

հանրապետական կարգի գիտագործնական նշանակության փաստաթղթերի և նյութերի պատրաստման, խմբագրման, համակարգչային շարման աշխատանքներ:

Հայաստանյան գրադարանների համահավաք քարտարանում *հեղինակային գրառումների ստեղծումը* էլեկտրոնային մատենագիտական աշխատանք է, որը համակարգում է մուտքագրված գրականության հեղինակային դաշտերը և հեշտացնում «փնտրումը»: Համահավաք քարտարանի մասնակից գրադարանների մեջ այս ասպարեզում հիմնադիր-առաջատարը այժմ մեր գրադարանն է: Հաշվետու տարում կատարվել է 1020 հեղինակային գրառում:

ՀՆԱՏԻՊ ԵՎ ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Դուրգարյան Համլիկ Աշոտի ֆիզմաթ. գիտ. թեկնածու*

ՈՒՆի առանձնացված ֆոնդեր, որոնցում առկա հնատիպ, հազվագյուտ գրքերը, պատմամշակութային և թանգարանային արժեք ունեցող ձեռագրերի լուսապատճենները, արտերկրի արժեքավոր նվիրատվությունները, պարբերականներն ու հանդեսները պահպանվել են, նաև սպասարկվել ընթերցողին: Հաշվետու տարում բաժնում կատարվել են գրականության, տեղեկատու ապարատի վերականգնման, գրքերի վերադասավորման աշխատանքներ: Ներկայումս գրապահոցից այդ բաժին են տեղափոխվել ավելի քան 5000 միավոր գրքեր՝ արվեստի, մշակույթի և իրավունքի վերաբերյալ:

ԱԲՈՆԵՄԵՆՏԻ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Գրիգորյան Աննա Վարուժանի*

Ընթերցողին գրադարանի մյուս բաժինների հետ կապող հիմնական օղակն է: Հաշվետու տարում կատարել է ընթերցողների գրանցում, ուսումնական առձեռն ֆոնդերի համալրում, որոշ աշխատափուլերի ավտոմատացում: Ընթերցողական տվյալները մուտքագրվել են համակարգիչ, գրանցումը և գրքատացքը, թղթային ձևերին զուգահեռ, կատարվել են նաև էլեկտրոնային տարբերակով: Ներդրվել է ընթերցողական տոմսերի նոր համակարգ, որն ավելի արդյունավետ կդարձնի սպասարկումը:

Հաճախումների քանակը՝ 47000:

Գրքատացքը՝ 58637:

ԳՐԱՊԱՀՈՑ

Բաժնի վարիչ՝ *Առաքելյան Մարինա Ալեքսանդրի*

Նոր ստացված գրքերի դասակավորմանը զուգընթաց՝ կատարվել են նաև գրականության տեղափոխման աշխատանքներ. մուտքագրման ենթակա գրքերն ուղարկվել են ավտոմատացման բաժին, ետ բերելուց հետո՝ վերադասավորվել: Վերացվել են գրքակույտերը: Ամբիոնների հետ համաձայնեցված՝ կատարվել է արդիականությունը կորցրած և քայքայված 2986 միավոր գրականության զտում:

Առկա դասագրքային ֆոնդի հիման վրա ստեղծվել է շրջանառու և առձեռն դասագրքային ֆոնդ՝ շուրջ 80 հազար միավոր գրքերով: Սպասարկումը կատարվում է ինքնասպասարկման սկզբունքով:

Հաշվետու տարում գրապահոց է մուտք գործել 51374 պատվիրաթերթ, որից 40112-ի պահանջները բավարարվել են, 11262-ինը՝ մերժվել գրքի զբաղվածության պատճառով: Կազմատանը վերանորոգվել է 270 միավոր գրականություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՄՈՒԼԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Առաքելյան Մելանյա Սահակի*

ա) Հասարակական և բանասիրական գիտությունների գրականության սպասարկման 2 ընթերցասրահ, 1 գիտական կաբինետ, մամուլի սրահ,

բ) Ճշգրիտ և բնական գիտությունների գրականության սպասարկման 2 ընթերցասրահ, 2 գիտական կաբինետ:

Ընթերցասրահներում տեղադրվել են համակարգիչներ, որոնք ծառայում են ընթերցողին ինչպես գրականության փնտրման, այնպես էլ անհատական աշխատանքներ կատարելու համար:

Կատարվել է ֆոնդերի զտում, պահանջարկ ունեցող ուսումնական գրականության համալրում: Վերանայվել և կարգի են բերվել քարտարանները:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են աշխատանքները պարտք ունեցող դասախոսներից գրականության վերադարձման ուղղությամբ: Այդ նպատակով կազմվել են այդ դասախոսների ցուցակները և ներկայացվել համապատասխան ֆակուլտետներ:

Գրադարանում սպասարկման գործառույթներ են իրականացվել նաև հունագիտության գիտաուսումնական կենտրոն-գրադարանի, ՍԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, Միջազգային դրամական ֆոնդի պահոցների միջոցով: Վերջիններս նախատեսված են հանրապետության ընթերցողական ողջ համակազմի սպասարկման համար:

Գիտական գրադարանը համալսարանի կարևոր ստորաբաժանումներից է, որի գործունեության հիմնական նպատակը գիտաուսումնական գործընթացը գրական տեղեկատվությամբ ապահովելն է:

Չնայած արդի աշխարհում գործող տեղեկատվական էլեկտրոնային միջոցների լայն տարածմանը՝ մեզանում դեռևս առաջնային է մնում գիտաուսումնական պահանջները բավարարող գրքային ունեցվածքի առկայությունը, ուրեմն և գրքային ֆոնդի համալրումը:

ԵՊՀ գրադարանի գրքային ֆոնդը կազմում է մոտ 2 մլն միավոր գրականություն, որից 1154428 միավորը գիտական է, 767953-ը՝ ուսումնական: Օտար լեզվով գրականությունը կազմում է 283528 միավոր: Պահեստային և գրափոխանակման ֆոնդում հաշվվում է 37688 միավոր գիրք և ամսագիր:

Հաշվետու տարում գրադարանի գրքային ֆոնդ է մուտք գործել 4254 անուն 14173 միավոր գրականություն, այդ թվում՝ 9285 միավոր գիրք, 4279 ամսագիր, 83 գիտական թեզ, թերթերի 526 հավաքածու: 75 միավորով համալրվել է նաև CD – ROM պնակիտների ֆոնդը: Համալրման հիմնական աղբյուրներն եղել են դրամական փոխանցումները և միջազգային գրափոխանակումը: Գրքային ֆոնդը համալրվել է Բոննի, ԱՄՆ Կոնգրեսի գրադարանների, ՍԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, Միջազգային դրամական ֆոնդի օժանդակությամբ: Արժեքավոր գրականություն է ստացվել Ամերիկյան գրադարանային միությունից, նվիրատվություն՝ Փամբուկչյանի կողմից: Համալրմանն օգնել են նաև ՀՀ-ում բրիտանական և ֆրանսիական դեսպանատները: Վերջինիս առաքած գրականության քանակը կազմում է շուրջ 2500 միավոր:

Գրադարանային աշխատափուլերի՝ գրականության համալրման, մշակման, պահեստավորման և սպասարկման ավանդական ձևերի կողքին հաշվետու տարում կիրառվել են նաև այդ գործընթացներից մի քանիսի ավտոմատացված տարբերակները. մի իրողություն, որը համալսարանական գրադարանի համար կարելի է գնահատել որպես դրական տեղաշարժ արդիականացման, համաշխարհային տեղեկատվական տարածքին ինտեգրման ոլորտում:

Ավտոմատացման նախնական փուլը՝ գրականության տվյալների մուտքագրումը, լինելով գրադարանի թվայնացմանն ուղեկցող մշտական գործընթաց, ավտոմատացման այլ աշխատափուլերին զուգընթաց շարունակվել է նաև հաշվետու շրջանում: Մուտքագրվել է 14000 անուն 61375 միավոր գրականություն: Ավտոմատացման բաժնի աշխատանքներն ավելի շատ ունեցել են որակական ուղղվածություն. հիմնվելով այս ասպարեզում ձեռք բերած փորձի վրա՝ ստուգվել, վերամշակվել, վերակարգավորվել և նորացված պահանջներին են համապատասխանեցվել նախորդ տարիներին մուտքագրված էլեկտրոնային քարտերը: Միաժամանակ կատարվել է աշխատանքային գործընթացների վերաբաշխում: Առանձին պատասխանատուներ են կարգվել՝ ընթերցասրահներում տեղադրված համակարգիչները գրադարանային

աշխատանքի համապատասխան պահանջներով գործարկելու նպատակով: Արդյունքում սպասարկման ոլորտի այնպիսի աշխատափուլեր, ինչպիսիք են գրականության տացքի, վերադարձի, ընթերցողական օգտաքարտերի գրանցումները, իրականացվում են էլեկտրոնային եղանակով:

ԵՊՀ գրադարանն իր ուրույն դերն ունի նաև հայաստանյան գրադարանների համահավաք գրացուցակի ստեղծման և դրա գործարկման աշխատանքներում: Համալսարանական ընթերցողին համահավաք քարտարանները մատչելի դարձնելու նպատակով հաշվետու տարում ստեղծվել և ընթերցողին է տրամադրվել «Էլեկտրոնային պաշարներ» խորագրով «Օգտվողի համառոտ ուղեցույցը», որտեղ հանգամանորեն նշված են մատենագիտական որոնման անհրաժեշտ համակարգչային որոնման քայլերը: Արդեն շատ ընթերցողներ դարձել են թվային գրադարանի մշտական այցելուներ, օգտվում են ոչ միայն Հայաստանի գրադարանների պաշարներից, այլև արտերկրի էլեկտրոնային լրիվ-տեքստային շտեմարաններից (օրինակ, «Շպրինգեր» հրատարակչության ավելի քան 1200 լրիվ-տեքստային ամսագրերից, «ՈՒիլի» հրատարակչության մի շարք բնագավառների էլեկտրոնային գիտական գրքերից և այլն):

Հաշվետու ժամանակաշրջանում գրադարանում նպատակաուղղված աշխատանք է տարվել նաև գրքի պահպանման, վերականգնման ուղղությամբ: Հաշվի առնելով Հայաստանում մշակութային արժեքների պահպանմանն ուղղված չափորոշիչները՝ կատարվել է հնատիպ և հազվագյուտ գրականության բաժնի և հատուկ գրականության ենթաբաժնի ֆոնդերի ստուգում, գրքերի վերադասավորում:

Հաշվետու տարում գրադարանը մասնակցել է համալսարանում իրականացվող դրամաշնորհային 6 ծրագրերի («Էլեկտրոնային գիտական հոդվածներ հայաստանյան գիտնականներին», «Տեղեկատվական տեխնոլոգիաների ուսուցում», «Գրադարանային հավաքածուների համալրում», «Հայաստանյան համահավաք քարտարանի ստեղծում», «Թվային կրթական ծառայությունների և կրթական պաշարների կենտրոնի ստեղծում ԵՊՀ գրադարանում»):

Գրադարանի տեխնիկական պաշարը համալրվել է Pentium 4 դասի 38 համակարգիչներով (Եվրամիության «Tempus/Tocis» ծրագրի շրջանակներում), որոնցից մեկը նախատեսված է կույր ուսանողների համար:

Իրականացվող աշխատանքների համատեքստում կարևոր է նաև գրադարանի անդամակցումը «ԼԻԲԵՐ» եվրոպական գրադարանների լիգային, որը հնարավորություն կտա առավել արդյունավետ կերպով ստանալ մասնագիտական խորհրդատվություն գործընկեր գրադարաններից:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Տնօրեն՝ *Մանուկյան Ժակ Սամվելի, պատմ. գիտ. թեկնածու*

ՖՈՆԴ

Հաշվետու ժամանակաշրջանում, ելնելով թանգարանի կողմից մշակված հավաքագրման աշխատանքների նպատակներից, ֆոնդում իրականացվել է նպատակային համալրում: Մշտական պահպանության համար ֆոնդ է մուտք գործել 46 առարկա:

Ֆոնդում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Կազմվել է ֆոնդի կառուցվածքային պլան, որի հիմքի վրա ֆոնդի ներսում ստեղծվել են առանձին ենթաբաժիններ: Յուրաքանչյուր ենթաբաժնին համապատասխան՝ ստեղծվել են գիտական գույքագրման մատյաններ:
- Կազմվել է ԵՊՀ պատմության թանգարանի ֆոնդային չորս տիպի ակտ: Հաշվետու շրջանում ֆոնդում կատարվել են զտման և համակարգման աշխատանքներ: Թանգարանային առարկաների պահպանման նպատակով հաշվառվում են 1991թ. թանգարան մուտք գործած, սակայն չհաշվառված առարկաները /հաշվառվել է 150 թանգարանային առարկա/:

2007թ-ի հունիսից ԵՊՀ պատմության թանգարանը պատմության ֆակուլտետի հետ համատեղ իրականացրել է թանգարանի հնագիտական ֆոնդի ուսումնասիրման աշխատանքներ: Կատարված աշխատանքի շնորհիվ հնագիտական նյութը բաժանվել է մի քանի հատվածների.

ա) Ամբողջական նյութեր, որոնք չեն պահանջում վերականգնողի միջամտություն (բացի պահպանությունից): Այս խմբի բոլոր նյութերը չափագրվել են և անձնագրավորվել՝ թվով 40 խեցեղեն:

բ) Մասնակիորեն վնասված նյութեր: Նյութի այս խմբում ներկայացված են խեցանոթներ, որոնք կարելի է լիարժեքորեն ուսումնասիրել միայն վերականգնման աշխատանքներից հետո: Այս նյութը զատվել է պահպանվող ամբողջական նյութերից:

գ) Բեկորային նյութեր: Այժմ կատարվում են աշխատանքներ բեկորային նյութերը համակարգելու և անձնագրավորելու ուղղությամբ:

դ) Թանգարանում գոյություն ունի բացառիկ հնագիտական ֆոտոարխիվ: Այդ լուսանկարների բնագրերը պահպանվում են Մոսկվայի և Սանկտ-Պետերբուրգի թանգարաններում: Լուսանկարների պատճենները համակարգվում են:

ԱՐԽԻՎ

Հաշվետու տարում պատմության թանգարանի արխիվը համալրվել է նոր փաստաթղթերով, մասնավորապես Արցախյան պատերազմում զոհված համալսարանական ազատամարտիկներին վերաբերող նյութերով:

Ազգային արխիվից թանգարանի արխիվ են տեղափոխվել անհատի պաշտամունքի տարիներին զոհ դարձած ԵՊՀ դասախոսներին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

Արխիվում նա կատարվել են զտման և համակարգման աշխատանքներ. ցուցակագրվել է թանգարանում առկա գրականությունը /1434 անուն/:

Հաշվետու շրջանում Վարդաշենի առաջին հատուկ դպրոցի 13 սաների համար թանգարանը ԵՊՀ-ում կազմակերպել է ճանաչողական դաս-էքսկուրսիա:

ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ պատմության թանգարանում ստեղծվել է գիտահետազոտական և մեթոդական լաբորատորիա, որի գիտահետազոտական աշխատանքների ընդհանուր ուղղություններն են.

1. ԵՊՀ պատմության 1940-60թթ. ուսումնասիրում.

ա/ ԵՊՀ տարեգրության կազմում,

բ/ ԵՊՀ ֆակուլտետների պատմության ուսումնասիրում,

գ/ ԵՊՀ անվանի դասախոսների գործունեության ուսումնասիրում,

դ/ Արցախյան պատերազմում զոհված համալսարանականների կյանքին և գործունեությանը վերաբերող նյութերի հավաքագրում և ուսումնասիրում,

ե/ Կատարվում է ուսումնասիրություն բուհական թանգարանների առանձնահատկությունների վերաբերյալ:

Շարունակվում են աշխատանքները «Մեր անվանի դասախոսները» մատենաշարի III հատորի հրատարակման ուղղությամբ: Այդ նպատակով ստեղծվել է հանձնաժողով, որը հաշվետու շրջանում գումարել է երկու նիստ. արդյունքում մշակվել են չափանիշներ՝ վաստակաշատ դասախոսներին մատենաշարի III հատորում ընդգրկելու համար:

Հրատարակության է պատրաստված ԵՊՀ պատմությանը վերաբերող երկու գիտական հոդված:

ԱՐՀԿՈՄԻՏԵ

Նախագահ՝ *Արմեն Ռուդիկի Ավետիսյան*

Հաշվետու տարում արհկոմիտեն իր կանոնադրական խնդիրները առավել արդյունավետ լուծելու նպատակով շարունակել է նախորդ տարիներից ավանդույթ դարձած սոցիալական ուղղվածության միջոցառումները համալսարանի աշխատողների և ուսանողների համար:

Համալսարանի աշխատակիցների աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական և այլ շահերն ու իրավունքները ներկայացնելու և պաշտպանելու նպատակով, արհկոմիտեի և ռեկտորատի կողմից հավասար անդամության սկզբունքով ստեղծվել էր 6 հոգուց բաղկացած հանձնաժողով: Հանձնաժողովը շուրջ 5 ամսվա ընթացքում իրականացրեց համալսարանի կոլեկտիվ պայմանագրի՝ նախագծի մշակում, և բանակցությունների արդյունքում կողմերի փոխադարձ համաձայնությանը այն կնքվեց 2007 թվականի հունվարի 5-ին՝ Արհկոմիտեի նախագահի և ԵՊՀ ռեկտորի կողմից:

2006 թ. դեկտեմբեր ամսին արհկոմիտեն իր արտահերթ նիստում լսեց արհկոմիտեի նախկին նախագահի հրաժարականի դիմումը և նույն նիստում միաձայն արհկոմիտեի նախագահ ընտրեց արհկոմիտեի փոխնախագահ Արմեն Ռուդիկի Ավետիսյանին:

Հաշվետու ժամանակահատվածում արհկոմիտեն առավել ուշադրություն է դարձրել համալսարանի աշխատակիցների և ուսանողների հանգստի, առողջության պահպանման, սոցիալական լարվածության մեղմացման խնդիրներին ուղղված ծրագրերի իրականացմանը: Այդ նպատակով արհկոմիտեն իր միջոցներից օգնության կարգով համալսարանի ավելի քան 500 աշխատակիցների հատկացրել է տասնհինգ միլիոն երեսունհինգ հազար դրամ: Առավել կարիքավոր աշխատակիցների և ուսանողների ամառային հանգստի համար օգնության կարգով հատկացվել է մեկ միլիոն հինգ հարյուր հազար դրամ:

2006 թ-ի սեպտեմբերի 1-ից Երևանի պետական համալսարանը անցավ հնգօրյա աշխատանքային շաբաթի՝ 40 ժամ տևողությամբ, 8 ժամ աշխատանքային օրով:

Հարկ է նշել, որ 2006/2007 ուստարվա ընթացքում միջինը 30%-ով բարձրացել է պրոֆեսորադասախոսական անձնակազմի, իսկ ավելի քան 12%-ով՝ ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատավարձերը:

Կազմակերպվել և իրականացվել է արդեն ավանդույթ դարձած աշխատակիցների և ուսանողների երեխաների համար Ամանորյա միջոցառումները, ինչպես նաև կանանց միջազգային օրվան նվիրված միջոցառումները: Նշված միջոցառումների համար հատկացվել է ինը միլիոն չորս հարյուր հազար դրամ:

Հաշվետու տարում արհկոմիտեն կազմակերպել է համալսարանի աշխատակիցների և նրանց ընտանիքի անդամների, ինչպես նաև ուսանողների ամառային հանգիստը համալսարանի ուսումնաարտադրական բազաներում և մարզառողջարարական ճամբարում (Ծաղկաձոր, Հանքավան, Բյուրական, Դիլիջան): Ընդհանուր զբաղվածությունը հուլիս-օգոստոս ամիսներին կազմել է 4834 մարդ օր: Ծաղկաձորի «Համալսարան» ուսումնաարտադրական բազայում այն կազմել է 7020 մարդ օր: Ի տարբերություն երկու ուսումնաարտադրական բազաների Ծաղկաձորի «Համալսարան» ուսումնաարտադրական բազան աշխատում է տարվա բոլոր օրերին:

Օրակարգային է մնում համալսարանի սոցիալապես անապահով աշխատողների և ուսանողների համապարփակ դատաբազա ստեղծելու հարցը: Աշակման փուլում է գտնվում և մինչև տարեվերջ կավարտվի համալսարանի աշխատողներին և ուսանողներին սոցիալական օգնություն տրամադրելու համակարգչային ծրագիրը, որը հնարավորություն կտա ցանկացած պահի իմանալ համալսարանի ցանկացած ստորաբաժանմանն ու ֆակուլտետին տրված ֆինանսական օգնություն ստացած մարդկանց թիվը և գումարի չափը, ինչպես նաև այլ անհրաժեշտ ինֆորմացիա:

Դրվատանքի է արժանի Արհկոմիտեին կից գործող «Անի» ուսանողական-տուրիստական ակումբը, որը իր վրա է վերցրել ԵՊՀ ուսանողության հայրենագիտական, ճանաչողական և ռազմահայրենասիրական դաստիարակության խնդիրները: Հաշվետու ժամանակահատվածում Արհկոմիտեի «Անի» ուսանողական-տուրիստական ակումբը կազմակերպել և հաջողությամբ իրականացրել է ԵՊՀ ավելի քան 850 ուսանողների ճանաչողական արշավները դեպի մեր հանրապետության տեսարժան վայրեր: Արշավների ընթացքում ուսանողները ծանոթացել են մեր հայրենիքի պատմամշակութային արժեքների ժամանակագրությանը, ինչպես նաև հայրենապաշտպանության հարցում նրանց ունեցած մեծ դերի մասին: Արշավները կրում են շարունակական բնույթ և Արհկոմիտեն այն գնահատում է որպես ռազմահայրենասիրական դաստիարակության և հայրենագիտությանը նպաստող լավագույն միջոց:

Շարունակվել է ակտիվ համագործակցությունը ինչպես ՀՀ պետական բուհերի, այնպես էլ ԱՊՀ երկրների համալսարանների հետ՝ Եվրասիական դասական համալսարանների արհեստակցական կազմակերպությունների ասոցիացիայի շրջանակներում, ինչպես նաև Արհմիությունների եվրոպական ասիոցիացիայի և Արհմիությունների համընդհանուր կոնֆեդերացիայի հետ:

Համալսարանի արհեստակցական կազմակերպության անդամներն արդեն ունեն առավել ակտիվ շփման հնարավորություն Արհկոմիտեի հետ: Հայաստանի Հանրապետության արհմիութենական կառույցներում առաջինը ԵՊՀ արհկոմիտեն շահագործման հանձնեց իր պաշտոնական ինտերնետային կայք էջը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Կայք էջի հասցեն է http://www.ysutu.am :

«ՍԻՆՔՐՈՏՐՈՆԱՅԻՆ ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

(CANDLE-ՔԵՆԴԼ)

Տնօրեն՝ *Յականնով Վասիլի Սկրտիչի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր*

«ՔԵՆԴԼ» գիտահետազոտական ինստիտուտը 2007 թ-ի հունվարի 16-ից Երևանի պետական համալսարանի առանձնացված կառուցվածքային ստորաբաժանում է: Ինստիտուտը ստեղծվել է «CANDLE» Հայաստանյան մասնաճյուղի հիմքի վրա՝ ԵՊՀ գիտական խորհրդի 2006 թ-ի նոյեմբերի 22-ի որոշմամբ, և այդ կարգավիճակով շարունակել է գործել 2007 թ-ի ապրիլի 1-ից: Այն ունի 5 գիտահետազոտական խմբեր՝ փնջերի ֆիզիկա, բարձր հաճախականության ռադիոտեխնիկական համակարգեր, վակուումային և մագնիսական համակարգեր, ռենտգենյան հետազոտությունների ուղղություններով և նախագծային բյուրո:

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Լիցքավորված մասնիկների փնջերի ֆիզիկայի ժամանակակից պրոբլեմների հետազոտումը սինքրոտրոնային ճառագայթման և ինքնամակածված լազերների գեներացիայի ռեժիմներում:	Յականնով Վ. Մ.

Արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Նավախելային դաշտերի և իմպեդանսների հետազոտությունը պայծառ լույսի աղբյուրներում (ARP2-3233-YE-04):	Իվանյան Մ. Ի.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ինստիտուտում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

2006-2007 ուստարին ԵՊՀ «ՔԵՆԴԼ» գիտահետազոտական ինստիտուտի կայացման անցումային շրջանն էր: Այդ ընթացքում ինստիտուտի գործունեության հիմնական ուղղություններն էին.
արագացուցչային ֆիզիկա և տեխնիկա,

- էլեկտրոնային և ֆոտոնային փնջերի ֆիզիկա,
- ինտենսիվ ռենտգենյան ճառագայթման աղբյուրներ,
- արագացուցչային տեխնիկայի նոր տարրերի մշակում,
- փորձնական սթենդների մշակում և փորձարարական բազայի ստեղծում,
- գիտական կադրերի պատրաստում,
- արագացուցչային ֆիզիկայի և տեխնիկայի բնագավառներում միջազգային համագործակցություն:

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներն ուղղված էին Հայաստանում «CANDLE սինքրոտրոնային լույսի արդի աղբյուրի» նախագծի զարգացմանը՝ հաշվի առնելով գիտության և տեխնիկայի ժամանակակից նվաճումները: Ուսումնասիրվող խնդիրների շարքում էին՝

1. արագացուցչի վակուումային խցիկի հետ էլեկտրոնային փնջերի փոխազդեցության ուսումնասիրումը փնջի անկայունությունների շտկման նպատակով,
2. փնջի ճշգրտման համակարգի մշակումը 1-3 մկմ մակարդակով արագացուցչի ուղեծրի կայունացման դիագնոստիկայի գծով ժամանակակից նվաճումների հիման վրա,
3. սինքրոբետատրոն տատանումների ուսումնասիրումը անընդհատ ներարկման ռեժիմում արագացուցչի աշխատանքի դեպքում,
4. էլեկտրոնային փնջի լազերային մոդուլյացիայի ուսումնասիրումը արագ գործընթացների դինամիկայի ուսումնասիրման նպատակով ճառագայթման գերկարճ իմպուլսների ստացման համար,
5. օնդուլյատորային ճառագայթման առաջացման ուսումնասիրումը փոքր ապերտուրայով մագնիսական պարբերական համակարգերում,
6. փնջի դիագնոստիկայի նոր մեթոդների զարգացումը բարձր ժամանակային և տարածական կետայնությամբ,
7. էլեկտրոնային արագացուցիչներում կոհերենտ ռենտգենյան ճառագայթման գեներացիա,
8. բարձր հաճախականության տեխնիկայի փորձարարական սթենդի մշակում,
9. փոքր կիզակետային տարածությամբ ռենտգեն-օպտիկական նոր համակարգերի մշակում և ստեղծում,
10. վակուումային համակարգի նոր տարրերի մշակում:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	6	16

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Հոդված

1. *Ivanyan M., Tsakanian A.,* Analytical Presentation of Resistive Impedance for the Laminated Vacuum Chamber, Phys. Rev. ST Accel. Beams 9, 034404, 2006.
2. *Avagyan V.,* Development of technology for brazing and diffusion welding of copper accelerating structures, Phys. Rev. ST Accel. Beams 9, 083501, 2006.
3. *Àâàêÿí Â.,* Èññëåäîâàíèå è ðàçðàáîòêà òåõíîëîãèè äèôôóçèîííîé ïàéêè è ñâàðêè ìåäíûõ óñêîðÿþùèõ ñòðóêòóð, Èçâ. ÍÀÍ ÐÀ è ÃÈÓÀ. Ñåð ÒÍ, , ò. 1, Åðåâàí, 2007, ñ. 9-15.
4. *Àâàêÿí Â., Ìèêàåëÿí Ð., Ïåòðîñÿí À.,* Äèôôóçèîííîå ñîåäèíåíèå ôëàíöà ñ îêíîì, Âåñòíèê ÌÀÍÝÁ, ò. 11, N 8, Ñàíêò-Ïåòåðáóðã, 2006, ñ. 94-96.
5. *Âàçàçÿí Å., Êàëàíòàðÿí Ä., Õîâæîÿí Ì.,* Ðàçâåðòêà óêüòðàêîðòîêîãî ñãóñòêà â ïîëå ìîíîõðîìàòè÷åñêîé âîëíû, Èçâ. ÍÀÍ Àðìåíèè, Ôèçèêà, ò. 41, 3, Åðåâàí, 2006, ñ. 170-177.
6. *Àâàêÿí Â.,* Îñîáåííîñòè äèôôóçèîííîé ñâàðêè ìåäè, Âåñòíèê ÌÀÍÝÁ, ò. 11, N 8, Ñàíêò-Ïåòåðáóðã, 2006, ñ. 118-121.

Զեկուցումների թեզիս

1. *Tsakanov V.,* Status and Highlights of CANDLE Synchrotron Light Source Project in Armenia, AIP Conf Proc., Volume 879, 2007, pp. 202-207.
2. *Avagyan V., Mikaelyan R., Petrosyan A.,* Vacuum Diffusion Bonding of Flange-foils for X-ray Windows, AIP Conf Proc., Volume 879, 2007, pp. 1046-1048.

3. *Amatuni G., Tsakanov V., Decking W., Brinkmann R.,* Single bunch emittance preservation in XFEL linac, Proc. FLS-2006, Hamburg, 2006, WG324, pp. 1-3.
4. *Tsakanov V., Ivanian M., Martirosian Yu.,* Beam physics issues in CANDLE Synchrotron Light Source Project, Proc. FLS-2006, Hamburg, 2006, WG101, pp. 1-3.
5. *Sanosyan K., Ushakov A., Elsen E., Flottmann K., Riemann S.,* Radiation levels and activation at the ILC positron source, EUROTEV-2006-052, Proc. EPAC-2006, Edinburgh, 2006, pp. 2478-2480.
6. *Kalantaryan D., Martirosyan Y., Tsakanov V.,* Space Charge Tune Shift and Quantum Lifetime, EPAC 2006, Edinburgh, 2006, Abstracts, p. 290.
7. *Ivanyan M., Laziev E., Tsakanian A.,* Impedance of Laminated Vacuum Chamber AC Conductivity, EPAC 2006, Edinburgh, 2006, Abstracts, p. 394.
8. *Altarelli M. et al. (eds.),* The European X-Ray Free Electron Laser Technical Design Report, DESY 2006-097, Hamburg, 2006.
9. *Khachatryan V.,* Ring X-Ray Transition Radiation Detectors on the Basis of Charge Coupled Device Array, in Advanced Radiation Sources and Applications, NATO Science Series II: Mathematics, Physics and Chemistry, v. 199, 2006, p. 293-299.
10. *Grigoryan B., Amatuni G., Tsakanov V., Brinkmann R., Decking W.,* Single Beam Dynamics in XFEL Linac, EPAC2006, Edinburgh, 2006, Abstracts, p. 273.
11. *Ivanyan M., Laziev E., Tsakanian A.,* The External Radiation in Vacuum Channel, EPAC2006, Edinburgh, 2006, Abstracts, p. 422.
12. *Tsakanov V.,* CANDLE Synchrotron Light Source, in Brilliant Light In Life and Material Sciences, NATO Science Series: Physics and Biophysics, Springer, 2007, pp. 69-81.
13. *Aslyan Z., Madatyan K., Vardanyan J., Tsakanov V., Mikaelyan R.,* Rubi Based Detector in UV and VUV Spectral Range, in Brilliant Light In Life and Material Sciences, NATO Science Series: Physics and Biophysics, Springer, 2007, pp. 491-494.
14. *Aghasyan M., Grigoryan A., Toneyan A., Tsakanov V.,* Use of Multi-Beam Scattering Radiation for the Absolute X-Ray Calibration, in Brilliant Light In Life and Material Sciences, NATO Science Series: Physics and Biophysics, Springer, 2007, pp. 479-484.
15. *Ivanyan M., Laziev E., Tsakanov V., Vardanyan A., Tsakanian A., Wanzenberg R.,* Investigation of the PETRA 3 Resistive Wall Impedance, DESY-M-07-01, 2007.
16. *Kalantaryan D., Streun A.,* Calculation of THz spectra from FEMTO laser slicing of electron bunches in SLS, SLS-TME-TA-2007-0301, June, 2007.

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Գիտական ղեկավար՝ *Հովհաննիսյան Հայկազ Ժորայի, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Կենտրոնի աշխատակիցների կազմը

1. Սիմոնյան Հրաչիկ Ռուբենի, պատմ. գիտ. դոկտոր
2. Սիմոնյան Արամ Հրաչիկի., պատմ. գիտ. դոկտոր
3. Մաղալյան Վլադիմիր Սարգիսի, բան գիտ. թեկնածու
4. Դարիբյան Ալիկ Ավետիքի, պատմ. գիտ. թեկնածու
5. Ագլյան Վահագն Ռոբերտի, պատմ. գիտ. թեկնածու
6. Հարությունյան Ավագ Արամայիսի, պատմ. գիտ. թեկնածու
7. Մադոյան Արշակ Գևորգի, բան գիտ. թեկնածու
8. Մադոյան Գևորգ Արշակի, բան գիտ. թեկնածու
9. Սարգսյան Նորիկ Արմենակի, պատմ. գիտ. թեկնածու

10. Կոնդակչյան Կատարինա Ասատուրի
11. Աղաբաբյան Ալվինա Սամվելի
12. Բաբայան Էմմա Հարությունի
13. Ղուկասյան Էլոնորա Ռուբենի
14. Մակարյան Էվելինա Անդրանիկի
15. Գևորգյան Սուսաննա Պարույրի
16. Սաֆարյան Սուսաննա Գարիկի
17. Մադոյան Հակոբ Սամվելի

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Հայագետների կենսամատենագիտական բառարան (պետական ֆինանսավորում):	Պետրոսյան Ա.
2. Ցեղասպանության հանցագործությունը (պետական ֆինանսավորում):	Սարգսյան Ն.
3. Հայաստանի պատմական և արդի տեղանունների բառարան (պետական ֆինանսավորում):	Բարսեղյան Հ.
4. Փոխատեղական համանուները արդի հայերենում (պետական ֆինանսավորում):	Գևորգյան Կ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ հայագիտական հետազոտությունների կենտրոնի կատարած գիտական աշխատանքների ամփոփում

Թեմա 1. Իրականացվել են հայագիտական գրքերի հավաքագրումը, մատենագիտական նկարագրության աշխատանքները:

Թեմա 2. Վերլուծվել են Հայոց ցեղասպանության առնչվող միջազգային պայմանագրերը և իրավական ակտերը:

Թեմա 3. Կատարված է եռահատորյակ բառարան մտնող բոլոր հոդվածների խմբագրումը:

Թեմա 4. Պատրաստ են աշխատության երկրորդ և երրորդ գլուխները: Ստացված արդյունքներն ունեն գիտական ու գործնական նշանակություն:

Կենտրոնում կատարված այլ աշխատանքների մասին: Հայագիտական հետազոտությունների կենտրոնը ստեղծվել է համալսարանում հայագիտական հիմնական հետազոտությունները համակարգելու, դրանց գերակա ուղղություններով գիտական որոշակի ուսումնասիրություններ կատարելու նպատակով: ԵՊՀ ղեկավարության և լաբորատորիայի գիտական խորհրդի կողմից խնդիր է դրվել ուշադրություն դարձնել հետևյալ ուղղությունների վրա.

1. Հայ ազգային ինքնություն
2. Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն, պատմագրություն և մատենագիտություն
3. Մաթեմատիկական մեթոդների և մոդելավորման կիրառում հայագիտական հետազոտություններում
4. Հայագիտության դասականների ժառանգության ուսումնասիրություն

Հայագիտական կենտրոնի ուսումնասիրության կարևորագույն ուղղություններից մեկը շարունակում է մնալ Հայոց մեծ եղեռնի թեման: Կենտրոնը նպատակադրված շարունակելու է իր ուսումնասիրություններն այս ուղղությամբ՝ շեշտը դնելով մատենագիտական աշխատանքի, Եղեռնի զոհերի ցուցակները ճշտելու, ինչպես նաև ցեղասպանության ականատեսների վկայությունները հավաքելու, դրանք դասակարգելու և հրատարակելու վրա:

Կենտրոնի հետաքրքրությունների շրջանակներում շարունակում է մնալ հայոց ինքնության խնդիրը, ընդսմին՝ հատուկ շեշտադրվում են հայոց պատմության շրջադարձային փուլերը: Դրանք արտահայտող մշակութային տեքստերը նախատեսվում է լուսաբանել ազգային ինքնության արդիականացման շարունակ կրկնվող գործընթացի դիտանկյունից:

Հայոց արդի ազգային ինքնության հետազոտման դիտանկյունից մենք առանձնակի կարևորություն ենք տալիս երկու պատմական դարաշրջանների փորձին: Դրանք 4-5-րդ և 18-20-րդ դարերն են: Որքան էլ հեռու և տարբեր միմյանցից, վերջիններս ունեն էական ընդհանրություններ: Այդպիսով հնարավոր կլինի հայոց պատմություն ներբերել պատճառականության և ապացույցի նոր հարացույցներ ու ըմբռնումներ՝ տարածելով դրանք նաև այլ դարաշրջանների ու հիմնախնդիրների վրա: Միայն այս պարագայում կարելի է հուսալ, որ կբացահայտվեն հայոց պատմական ճակատագրի այնպիսի ծալքեր, որոնք ցայժմ մնացել են անհաղթահարելի:

Կենտրոնը զբաղվում և այսուհետ զբաղվելու է նաև մեզանում քիչ հայտնի, սակայն հույժ կարևոր աղբյուրագիտական այնպիսի հարցով, ինչպիսին է «Ռուսական կայսրության վիճակագրությունը Հայաստանի և հայերի մասին» թեման: Ընդ որում՝ ուսումնասիրությունները ընթանալու են մաթեմատիկական մեթոդների և մոդելավորման ամենալայն կիրառմամբ, որը հնարավորություն կտա խորությամբ ուսումնասիրելու 19-րդ դարի և 20 դ. սկզբի մեր ժողովրդի տնտեսական, սոցիալական և մշակութային պատմության շատ էջեր: Արդեն իսկ հավաքվել, տեսակավորվել և ուսումնասիրության համար պատրաստվել են շուրջ 800 վիճակագրական աղբյուրներ: Ըստ այսմ՝ հայ-ռուսական հարաբերությունների ուսումնասիրությունը ևս կշարունակի մնալ կենտրոնի գերակա ուղղությունների շարքում:

Կենտրոնի պատմաբանասիրական խումբը աշխատանքներ է կատարել հայոց լեզվի և մատենագիտության ուսումնասիրության ուղղությամբ, պատրաստել է հոդվածներ միջնադարյան գրականության ժանրային համակարգի մասին, աշխարհաբարով գիտական հանրության է ներկայացրել միջնադարյան մատենագիրների աշխատությունները: Գերմաներենից թարգմանվել են Հայկական հարցի մասին աշխատություններ, գեղարվեստական երկեր, ուսումնասիրվում է նաև օտարազգի գիտնականների հայագիտական ժառանգությունը:

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Մենագրություն

1. *Ներսիսյան Վ., Մադոյան Գ., (խմբագիր Մադոյան Ա.),* «Շարական» (ժողովածու), Անթիլիաս, 2007, 674 էջ:
2. *Մադոյան Ա.,* Հովհաննես Սարկավագ, Աղոթագիրք, (աշխարհաբար թարգմանություն), Էջմիածին, 225 էջ:
3. *Մադոյան Ա.,* Հովհաննես Գառնեցի, Աղոթագիրք, (աշխարհաբար թարգմանություն), Էջմիածին, 180 էջ:

Ուսումնամեթոդական ձեռնարկ

1. *Հովհաննիսյան Հ.,* Ինչպես գրել ավարտական և կուրսային աշխատանք պատմությունից, ԵՊՀ հրատ., Երևան, 2007, 46 էջ:
2. *Հովհաննիսյան Հ.,* Կուրսային և դիպլոմային աշխատանքների ավարտական փուլի առանձնահատկությունները, «Կրթությունը և գիտությունը Արցախում», թիվ 1-2, 2006, էջ 31-35:

Հոդված

1. *Պարսամյան Ա.,* Շուշան Վարդենի, (առաջաբանը Ա. Մադոյանի), Էջմիածին, 2007, 4 էջ:
2. *Մադոյան Ա.* (առաջաբանը), Մովսես Խորենացի, Աստվածաբանական երկերը, Էջմիածին, 2007, 4 էջ:
3. *Մադոյան Գ.,* Ցեղասպանագիտություն (գրախոսություն), Արծիվ, Պեյրութ, 2007, թ. 2, էջ 27-38:

4. *Մարոյան Գ., Խրլոպյան Գ. Ա.,* Ցեղասպանագիտություն (գրախոսություն), Նոր Հայաստան, թ. 12, 2007, էջ 22-24:
5. *Մարոյան Ա.,* Գր. Չուբարյանի անտիպ հոդվածը համալսարանի պատմության վերաբերյալ, «Բանբեր Երևանի համալսարանի», թ. 3, Երևան, 2006,էջ 170-185:
6. *Մարոյան Ա.* (առաջաբանը), «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության», գիրք ԺԵ, Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Երևան, 2007, էջ 21-24:
7. *Ղուկասյան Է.,* Հայոց պատմության հարցերը հայագետ Լըվայան դը Ֆլորիվալի մեկնաբանությամբ, Էջմիածին, 2007, թ. Բ-Գ, էջ 150-157:
8. *Գևորգյան Ս.,* Նույնիմաստությունը փոխատեղական համանուններում, «Բանբեր Երևանի համալսարանի», թ. 2, Երևան, 2007,էջ 169-172:
9. *Գևորգյան Ս.,* Հայերենի նույնաբաղադրիչ փոխատեղությունների հնչյունակազմական քննություն, «Պատմաբանասիրական հանդես», թ. 2, Երևան, 2007,էջ 169-179:
10. *Գևորգյան Ս.,* Նույնաբաղադրիչ փոխատեղությունների քննությունը (ըստ խոսքի մասերի), «Լրաբեր» հասարակական գիտությունների, թ. 2, 2007, էջ 141-151:
11. *Սարգսյան Ն., Սարգսյան Դ.,* Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման կանխարգելման Թուրքիայի հերթական փորձը, «Հայոց լեզու և գրականություն» ամսագիր, h. 3-4, Երևան, 2007:
12. *Հովհաննիսյան Հ.,* GENOCIDO: Krimo forgesita., Monato Internacia magazine sendependa. Antwerpen, Belgio, 2006, N 1, p. 14- 15:
13. *Հովհաննիսյան Հ.,* Ղարաբաղը ռուսական աղբյուրներում /18-րդ դարի վերջ-19-րդ դարի սկիզբ/, Էջմիածին, h. Դ, 2007, էջ 75-83:
14. *Ղարիբյան Ա.,* Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը Փարիզի խաղաղության վեհաժողովում 1919-1920 թթ., Գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2007, էջ 115-120:
15. *Ղարիբյան Ա.,* Վուդրո Վիլսոնը և Հայկական մանդատի խնդիրը, Արևելագիտական ժողովածու, Երևան, 2006, էջ 115 -121:
16. *Ագլյան Վ.,* Ñîâðåìåííûå âëàñòíûå ýëèòû Ðîññèè: òðàíñôîðìàöèè â ñòðàòåãè÷åñêîì ìûøëåíèè, ԵՊՀ քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, Բյուլետեն 1, Երևան, 2007, էջ 13-16:
17. *Ագլյան Վ.,* Կասպյան մրցապայքարի «երկրորդ փուլը», ԵՊՀ քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, Բյուլետեն 2, Երևան, 2007, էջ 22-31:
18. *Ագլյան Վ.,* Ամերիկյան ռազմավարության մարտահրավերները Կենտրոնական Ասիայում, Հանրապետական, թիվ 7(49), Երևան, 2007, էջ 16-20:
19. *Մկրտչյան Տ.,* Վրաստանի մասնակցությունը «Wider Black Sea» («Ընդարձակված Սև ծով») ծրագրում, ԵՊՀ քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, Բյուլետեն 1, Երևան, 2007, էջ 17-22:
20. *Մկրտչյան Տ.,* Մեծ Մերձավոր Արևելք. ամերիկյան և եվրոպական մոտեցումներ, ԵՊՀ քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, Բյուլետեն 2, Երևան, 2007, էջ 31-39:

Գիտաժողովի թեզիս

1. *Հովհաննիսյան Հ.,* Հայ զորավարական արվեստը 19-դարում, Հայկական բանակ-15, Գիտաժողովի նյութեր, Երևան, 2007, էջ 57-59:
2. Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը Փարիզի խաղաղության վեհաժողովում 1919-1920թթ., Գիտաժողովի նյութերի ժողովածու, Ստեփանակերտ, 2006, էջ 76-81:
3. Լեռնային Ղարաբաղի ինքնապաշտպանական ուժերը 1917թ., Հայկական բանակ-15, Գիտաժողովի նյութեր, Երևան, 2007, էջ 57-59:

ՎՐԱՑԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ *Բայրամյան Հրաչիկ, բան. գիտ. թեկնածու, ավագ գիտաշխատող*

Գիտական թեմաներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. Վրաց գրականության պատմություն (պետական ֆինանսավորում):	Բայրամյան Հ.

Թեմա 1. Շարադրվել է 1921-1960- ական թթ. վրաց գրականության պատմությունը՝ հասարակական-քաղաքական և գրական-մշակութային կյանքը, տպագրվել են թեմային վերաբերող հոդվածներ, հայերեն-վրացերեն և ռուսերեն- վրացերեն զրուցարաններ:

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

Ուսումնամեթոդական ձեռնարկ

1. *Áàéðàìÿí Ã.,* Ðóññêî-ãðóçèíñêèé ðàçãàâîðíèê, ,,Àðåâ", Åðåâàí, 2006, 128 ñ.
2. *Բայրամյան Հ.,* Վրաց գրականությունը V-XIX դդ., ԵՊՀ հրատ., 2007, 234 էջ:

Հոդված

1. *Բայրամյան Հ.,* Ակադ. Գուրգեն Սևակի վրացագիտական գործունեությունը (Հայ-վրաց բառարանագրական-լեզվաբանական առնչություններ), «Հայագիտական հանդես», 2007, թիվ 2:

ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ *Հովհաննիսյան Դավիթ Արտաշեսի, բան. գիտ. թեկն., դոցենտ*

ՔՄՀԿ աշխատակազմը

1. Ագլյան Վահագն Ռոբերտի, պատմ. գիտ. թեկն., ավագ գիտաշխատող
2. Հովհաննիսյան Հովհաննես Վահագնի, պատմ. գիտ. թեկն., ավագ գիտաշխատող
3. Մաթոսյան Տիգրան Սամվելի, պատմ. գիտ. թեկն., ավագ գիտաշխատող
4. Քոչարյան Հայկ Սկրտչի, պատմ. գիտ. թեկն., ավագ գիտաշխատող
5. Սկրտչյան Տաթևիկ Սոկրատի, կրտսեր գիտաշխատող
6. Գրիգորյան Սոնա Նորայրի, մագիստրանտ, ավագ լաբորանտ

Գիտահետազոտական թեմաներ

Թեմայի անվանումը	Հետազոտող
1. Ռուսաստանի արտաքին քաղաքականության փոխակերպումները:	Ագլյան Վ. Ռ.
2. Ադապտացիոն մեխանիզմները Սերձավոր Արևելքում՝ Սիրիական տարբերակ:	Քոչարյան Հ. Մ.
3. Եվրոպական հայ հանրային դիսկուրսում 2000-2007թթ:	Մաթոսյան Տ. Ս.
4. Միջնադարյան հայ առաքելական եկեղեցու ներկայացուցիչների բանավեճային արգումենտացիոն համակարգը:	Հովհաննիսյան Հ. Վ.
5. Շիական ումմա. ադապտացիոն մոդելներ:	Սկրտչյան Տ. Ս.
6. Սուննիական արմատականության գաղափարախոսության մոտեցումները քաղաքակրթական և մշակութային հիմնահարցերին:	Գրիգորյան Ս. Ն.

Քաղաքակրթական եւ մշակութային հետազոտությունների կենտրոնում կայացած քննարկումներ, զեկույցներ, կլոր սեղաններ եւ սեմինարներ

- **Ապրիլի 10, 2007**

Սեթոդաբանական դասախոսություն՝ նվիրված սոցիոլոգիական կոնտենտ վերլուծության խնդիրներին («Սոցիոմետր» սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնի տնօրեն, սոցիոլոգ Ահարոն Ադիբեկյան):

- **Ապրիլի 17, 2007**

Քննարկում՝ «Հայ-թուրքական հարաբերությունները. քաղաքական և տնտեսական ասպեկտներ» թեմայով:

- **Ապրիլի 26, 2007**

Սեթոդաբանական դասախոսությունների շարք՝ նվիրված ժամանակակից քաղաքակրթական տեսությունների մեկնաբանմանը (Դավիթ Հովհաննիսյան):

- **Մայիսի 1 2007, «Բյուլետեն 1»-ի պատրաստում**
- **Մայիսի 8, 2007**

Սեմինար՝ «Ռուսաստանի Դաշնության հարավկովկասյան քաղաքականության շուրջ» թեմայով, Ռուսաստանի ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի ԱՊՀ բաժնի վարիչ Սկակով Ա. Յու.:

- **Մայիսի 22, 2007**

Սեթոդաբանական դասախոսությունների շարք՝ նվիրված գլոբալ սոցիոմշակութային գործընթացների վերլուծությանը (Դավիթ Հովհաննիսյան):

- **Հունիսի 15, 2007**

Կլոր սեղան՝ «Տարածաշրջանային զարգացումները և Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության առջև ծառացած նոր մարտահրավերները» թեմայով՝ ՀՀ առաջատար փորձագետների և գիտնականների մասնակցությամբ:

- **Հունիսի 28, 2007**

Զեկույցներ՝ «Ինքնության հիմնախնդիրներ» թեմայով. «Եվրոպական հայ հանրային դիսկուրսում. ընդհանուր ուրվագիծ» (Տիգրան Մաթոսյան, պ.գ.թ., ԵՊՀ քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն,) և «Ժամանակակից հայ հարսանիքը և ինքնությունը» (Գայանե Շագոյան, ՀՀ ԳԱԱ, Ազգագրության և հնագիտության ինստիտուտ):

- **Հուլիսի 10, 2007**

Զեկույց՝ «Շիիզմի և սուննիզմի սոցիալական ծագումը» թեմայով (Խաչիկ Դեր-Ղուկասյան, Սան Անդրեսի համալսարանի պրոֆեսոր, Հումանիտար գիտությունների բաժին):

- **Հուլիսի 11 2007, «Բյուլետեն 2» պատրաստում**
- **Հուլիսի 17, 2007**

Զեկույցներ՝ «Ինքնության հիմնախնդիրները» թեմայով. «Բեռլինի հայ համայնքը» (Աննա Հարությունյան, Բեռլինի Ազատ համալսարան, ասպիրանտ) և «Հայ երիտասարդությունը Թբիլիսիում» (Սաթենիկ Սկրտչյան, ՀՀ ԳԱԱ, Ազգագրության և հնագիտության ինստիտուտ):

• **Հուլիսի 19, 2007**

Զեկույց-քննարկում՝ «Cultural Hybridity in the Age of Racism: Armenia, Iran, and India amid Europe's Universalistic Debates»/ «Մշակութային զանազանություն ռասիզմի դարաշրջանում. Հայաստանը, Իրանը և Հնդկաստանը Եվրոպայի համընդհանուր դիսկուրսում» թեմայով (Թալին Գրիգորյան, Ֆլորիդայի պետական համալսարան, Արվեստի պատմության ամբիոն, դոցենտ):

• **Հուլիսի 31, 2007**

Զեկույց՝ «Հայագիտության հիմնախնդիրները և հայագիտությունն ԱՄՆ-ում» թեմայով (հայագետ Փիթեր Քաուի, UCLA, Հայագիտության Նարեկացու անվան ամբիոնի վարիչ):

• **Օգոստոսի 2, 2007**

Զեկույց՝ «Ինքնության հիմնախնդիրներ» թեմայով. «Հունգարիայի հայ համայնքը» (Բենեդեկ Ժիգմոնդ, Institute for Science Promotion, Հունգարիա, Բուդապեշտ):

ԵԳԻՊՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Տնօրեն՝ *Քրիստիան Թութունջյան դր Վարդավան*
Աշխատակիցներ՝ *փոխտնօրեն՝ Նազենի Ղարիբյան, ավագ գիտաշխատող*
գործավար-օպերատոր՝ Գայանե Գրիգորյան

Կենտրոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Եգիպտագիտության կենտրոնը փաստացի ստեղծվել է 2007 թ. մայիսի 28-ին, գիտական աշխատանքը սկսվել է հուլիսի 1-ից: Կենտրոնի ներկայացրած հնգամյա ծրագրով նախատեսված է մի քանի թեմաներով կատարել գիտաշխատանքներ, որոնցից առաջինը «Հին Եգիպտոսի բուսական աշխարհը» մեծածավալ երկհատորյակի պատրաստումն ու հրատարակումն է: Գրքում զետեղվելիք 500 հայտնի բուսական տեսակներից մինչ այժմ հավաքվել և մշակվել են 10-ին վերաբերող տեղեկատվական, պատկերագրական և գիտական նյութեր, որոնցից 5-ի մասին հոդվածներն արդեն գրվել են:

ՀՈՒՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ *Հակոբյան Լևոն Գեորգիի, բան. գիտ. թեկնածու, դոցենտ*

ԵՊՀ հունագիտության կենտրոնի գիտական աշխատանքի ուղղություններն են լեզվաբանությունը և գրականագիտությունը:

Հաշվետու ժամանակաշրջանում Հունագիտության կենտրոնում կատարվել է հետևյալ գիտական աշխատանքը.

լեզվաբանություն

• Կազմվում է «Հունարեն-հայերեն բառարան», որը պարունակելու է շուրջ 25000 բառ (Լ. Հակոբյան):

• Կազմվում է հայ-հունարեն և հունարեն-հայերեն զրուցարան (Լ. Հակոբյան):

Տպագրության է պատրաստվել «Հունարենի գործնական քերականություն» ուսումնական ձեռնարկը:

գրականագիտություն

- Տպագրության է պատրաստվել «Վազգեն Եսայանը և նրա «Հելլենական քնար» ծաղկաքաղը» հոդվածը (Լ. Հակոբյան):
- Տպագրության է պատրաստվել «Հայկական թեման Կ. Կավաֆիսի ստեղծագործության համատեքստում» հոդվածը (Լ. Հակոբյան):

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի աշխատակազմը բաղկացած է իրավաբաններից, տնտեսագետներից և քաղաքագետներից, ովքեր ղեկավարվում են տնօրենի (իրավաբան) և փոխտնօրենի (տնտեսագետ) կողմից: Կենտրոնի բոլոր փորձագետներն ունեն գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և վերապատրաստվել են Ֆլորենցիայի, Վիեննայի, Պրահայի ու Պարմայի հեղինակավոր համալսարաններում և մասնագիտացված կենտրոններում, ինչպես նաև մասնակցել են Ծաղկաձորում կազմակերպված Եվրոպական Միության վերաբերյալ վերապատրաստման 10-օրյա դասընթացներին, որոնք իրականացվել են եվրոպական առաջատար համալսարանների պրոֆեսորների կողմից: Վերապատրաստման դասընթացները առավելապես ևվիրված են եղել Եվրոպական Միության իրավունքին և ԵՄ-Հայաստան փոխհարաբերություններին: Բացի կենտրոնի մշտական աշխատակիցներից, աշխատանքների կազմակերպմանը մասնակցում են նաև իրավագիտության ֆակուլտետի եվրոպական-իրավական մասնագիտացման մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանողները: Կենտրոնի հետ սերտորեն համագործակցում են Հայաստանում գործող եվրոպական իրավունքի գրեթե բոլոր մասնագետները:

Կենտրոնի հիմնական խնդիրները

Կենտրոնիհ հիմնական խնդիրներն են.

1. Համապարփակ տեղեկատվական տվյալների բազաների (գրքերի, հետազոտական փաստաթղթերի, պորտալների, ԵՄ պաշտոնական փաստաթղթերի, վիճակագրության և այլն) ստեղծում և զարգացում, որոնք անվճար պետք է տրամադրվեն բոլոր հետաքրքրված անձանց:
2. Եվրոպական ուսումնասիրությունների ոլորտում գիտական հետազոտությունների նախաձեռնում, իրականացում և համակարգում:
3. Ստեղծել Հայաստանում ԵՄ վերաբերյալ հետազոտողների ցանց՝ հետագայում նրանց՝ կենտրոնի և իր գործընկերների կողմից նախաձեռնվող Եվրոպական ինտեգրման հարցերին վերաբերող տարբեր ծրագրերում ներգրավելու նպատակով:
4. Աջակցել Եվրոպական ուսումնասիրությունների տարբեր բնագավառներին վերաբերող դասընթացների ներդրմանը Երևանի պետական համալսարանում և իրականացնել վերապատրաստման կարճաժամկետ ծրագրեր շահագրգիռ բոլոր կողմերի համար:
5. Համապատասխան մարմինների և շահագրգիռ կողմերի հետ համատեղ մասնակցել օրենսդրության ԵՄ չափանիշներին մոտարկման գործընթացներին՝ ՀՀ օրենսդրության նախագծման և փորձաքննության միջոցով:
6. Եվրոպական ճանաչված համալսարանների և գիտահետազոտական կենտրոնների հետ համատեղ ծրագրերի իրականացում:

Գործունեության ուղղությունները

1. **Ռեսուրս կենտրոնի ստեղծում՝ ներառյալ գրադարանը և Եվրոպական փաստաթղթային կենտրոնը:** Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոնը ստեղծել է Եվրոպական Միության ռեսուրս կենտրոն, որտեղ կարելի է գտնել միությանը վերաբերող էլեկտրոնային տվյալների բազա և ռեսուրսների լայն շրջանակ: Գրադարանը ներառելու է Եվրոպական իրավունքի և ինտեգրման խնդիրներին վերաբերող ավելի քան 700

անուն գրականություն, որը կմատակարարվի մոտակա ժամանակաշրջանում: Կարևոր է նաև Եվրոպական փաստաթղթային կենտրոնի ստեղծման գաղափարը /EDC/, որի ստեղծման մասին Հանձնաժողովի պատվիրակությանը ներկայացվել է համապատասխան առաջարկություն, ինչն ընդունվել է, և շուտով այն կստեղծվի կենտրոնի շրջանակներում: Դա թույլ կտա ստեղծել ամբողջական տեղեկատվական կենտրոն, որը կպարունակի ինչպես գիտնականներին և հետազոտողներին, այնպես էլ քաղաքացիական ծառայողներին հետաքրքրող նյութեր: Ռեսուրս կենտրոնը համալրված է նաև արագագործ ինտերնետին միացված համակարգիչներով, որոնք թույլ են տալիս ամբողջապես կիրառել ԵՄ իրավական էլեկտրոնային բազաները, հետազոտական նյութերը, հոդվածները և այլն: Այսպիսի ռեսուրս կենտրոնը բաց է բոլոր հետաքրքրված անձանց համար, գործում է անվճար հիմունքներով և, ըստ էության, կարող է իրականացնել ԵՄ տեղեկատվական կենտրոնի գործառույթը Հայաստանում:

2. **Մասնակցություն օրենսդրության մոտարկման գործընթացներին:** Կենտրոնը, գործելով ԵՊՀ շրջանակներում, կարող է օժանդակել ՀՀ օրենսդրությունը և որոշակի ոլորտներում օրենքները միության չափանիշներին համապատասխանեցնելու գործընթացին, որին կարող են աջակցել ԵՊՀ համապատասխան ֆակուլտետները (իրավագիտություն, տնտեսագիտություն, քաղաքագիտություն և այլն): Մասնավորապես կենտրոնը կարող է ծառայել որպես փորձագիտական օղակ՝ եզրակացություններ տալով օրենքի նախագծերի ԵՄ օրենսդրությանը համապատասխանելու մասին: Կենտրոնը հետազոտություն է իրականացրել ԵՄ անդամ պետություններում և Եվրոպական Հանձնաժողովում իրավական ակտերի նախագծերի ազդեցության գնահատման իրականացման ոլորտում և մշակել ու ՀՀ արդարադատության նախարարությանն է ներկայացրել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը, որով ՀՀ հանրապետական գործադիր մարմինների կողմից մշակվող և ՀՀ կառավարություն ներկայացվող իրավական ակտերի նախագծերը կենթարկվեն տնտեսական, սոցիալական և բնապահպանական ազդեցությունների գնահատման: ՀՀ արդարադատության նախարարության հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել օրենսդրական ակտերի նախագծերի՝ ԵՄ օրենսդրության համապատասխանության վերաբերյալ փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ:

3. **Համագործակցություն ՀՀ ԱԺ մշտական հանձնաժողովների հետ:** Կենտրոնը արդյունավետ համագործակցություն է հաստատել ՀՀ ԱԺ պետահիրավական և եվրոինտեգրման մշտական հանձնաժողովների հետ, որի շրջանակներում իրականացնում է օրենսդրական ակտերի փորձաքննություն ԵՄ չափանիշներին համապատասխանության վերաբերյալ: Փորձաքննությունը իրականացվում է կենտրոնի փորձառու իրավաբանների և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի տեսաբանների կողմից, որին ակտիվորեն մասնակցում են մագիստրատուրայի եվրոպական իրավական մասնագիտացման ուսանողները: Շատ կարճ ժամանակահատվածում ակնկալվում է վերջիններիս մասնագիտացնել օրենքների փորձաքննության ոլորտում և դրանով իսկ բարձրացնել կենտրոնի արտադրողականությունը:

4. **ԵՄ վերաբերյալ հանրային իրազեկում և տեղեկատվության տարածում:** Կենտրոնը ներկայումս իրականացնում է ԵՄ-ի վերաբերյալ ՀՀ հանրային իրազեկման և տեղեկատվության տարածման ռազմավարության մշակում, որի ընթացքում ուսումնասիրվում է միությանը նոր անդամակցած և թեկնածու հանդիսացող պետությունների փորձը: Ռազմավարությունում նախանշված միջոցառումների իրականացման արդյունքում զգալիորեն կբարձրանա հասարակության իրազեկվածությունը միության կողմից իրականացվող քաղաքականությունների վերաբերյալ:

5. ԵՄ-Հայաստան հարաբերությունների վերաբերյալ տարբեր թեմաներով սեմինարների, կոնֆերանսների և կլոր սեղանների կազմակերպում գիտնականների և քաղաքական գործիչների համար:

Ծրագրավորված կոնկրետ միջոցառումներ

Մոտակա ամիսների ընթացքում կենտրոնը ծրագրավորել է հետևյալ միջոցառումները՝

- «ՀՀ կառավարության կողմից ընդունվող և ՀՀ ԱԺ ներկայացվող իրավական ակտերի նախագծերի ազդեցության գնահատման հնարավորությունը ՀՀ-ում» թեմայով կլոր սեղանի կազմակերպում:
- «Հայկական ՋԼՄ-ներում Եվրամիության և ԵՄ-Հայաստան փոխհարաբերությունների լուսաբանման ներկայիս մակարդակը և բարձրացման հնարավորությունները» թեմայով կլոր սեղանի կազմակերպում: Կլոր սեղանին հրավիրված են լինելու ՋԼՄ-ների ղեկավարները և քաղաքականություն մշակողները:

- Եվրոպական հարևանության քաղաքականությանը նվիրված կոնֆերանսի կազմակերպում հոկտեմբերի 28-30-ը: Կոնֆերանսը կազմակերպվում է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի հետ համատեղ:
- ԵՄ հիմնադիր պայմանագրերի տպագրություն հայերենով:
- «Եվրոպան այսօր» հանրամատչելի տեղեկատվական պարբերականի երկրորդ հանդեսի տպագրում:
- Եվրոպական ընկերակցության դատարանի կարևոր որոշումների թարգմանություն և տպագրություն:
- ՈՒսանողական էսսեների մրցույթ ԵՊՀ ուսանողության համար:
- ԱԺ Եվրաինտեգրման մշտական հանձնաժողովի հետ համատեղ խորհրդարանական լսումների կազմակերպում՝ նվիրված ԵՄ-Հայաստան համագործակցության հեռանկարներին:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի գիտական ղեկավար՝ *Շուքուրյան Սամվել Կիմի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս*

Կենտրոնի գործադիր տնօրեն՝ *Թոփչյան Ռուբեն Վարդանի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ*

SS կրթական և հետազոտական կենտրոնը ստեղծվել է 2007 թ. փետրվարին ԵՊՀ ռեկտորի առաջարկով և ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ: Կենտրոնի հիմնական խնդիրներն են՝

- SS-ների ոլորտում կրթական, մարզման, շարունակական կրթության ծրագրերի և առանձին դասընթացների իրականացում,
- SS-ների բնագավառում գիտահետազոտական աշխատանքների կատարում,
- համալսարանական կրթության կառավարման և որակի ապահովման տեղեկատվական համակարգերի մշակում և ներդրում,
- ԵՊՀ տեղեկատվական ցանցի շահագործում և զարգացում:

Կենտրոնի կազմում գործում են երկու բաժիններ, մեկ ամբիոն և մեկ լաբորատորիա:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԻՆ

Հաշվետու տարում բաժինն իրականացրել է հետևյալ աշխատանքները.

1. Կազմակերպվել է «Համակարգչից օգտվելու հմտություններ» ընդհանուր դասընթաց ոչ մասնագիտական ֆակուլտետների բակալավրիատի (ցերեկային և հեռակա ուսուցում) 3000-ից ավելի ուսանողների համար:
2. Մշակվել է «Համակարգչից օգտվելու հմտություններ» ձեռնարկ:
3. Ապահովվել է ասպիրանտների համակարգչային մարզման դասընթաց 1000-ից ավելի ունկնդիրների համար:
4. Մշակվել է տեստային համակարգ ասպիրանտների համակարգչային մարզման ստուգարքի անցկացման համար:
5. Մշակվել են մասնագիտական վերապատրաստման ծրագրեր SS ոլորտում որակավորման բարձրացման համար:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱԺԻՆ

Հաշվետու տարում բաժինն իրականացրել է հետևյալ աշխատանքները.

1. Նախագծվել, ներդրվել և սպասարկվել է ԵՊՀ փաստաթղթային շրջանառությունը կարգավորող միասնական տեղեկատվական համակարգ:
2. Նախագծվել, ներդրվել և սպասարկվել է գիտելիքների գնահատման միասնական վարկանիշային կարգով ուսանողների ակադեմիական տվյալների գրանցումը, մշակումը և ուսման որակի հավաստացումը ապահովող տեղեկատվական համակարգ:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Շուքուրյան Սամվել Կիմի, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս*

Պրոֆեսորադասախոսական կազմը

1. Կոստանյան Արմեն Հրաչի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Մանուկյան Մանուկ Գարուշի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
3. Վասիլյան Աշոտ Մորիսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ

Համատեղողներ

1. Թոփչյան Ռուբեն Վարդանի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. Վարդանյան Վալերի Արտաշեսի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, ասիստենտ
3. Ավագյան Արթուր Արամայիսի, տեխն. գիտ. թեկնածու, ասիստենտ
4. Տիտանյան Անուշ Ալբերտի, դասախոս

Ոխտումնաօժանդակ աշխատակիցներ

1. Տիտանյան Անուշ Ալբերտի, ավագ լաբորանտ

Գիտական թեմաներ եւ արտասահմանյան դրամաշնորհներ

Թեմայի անվանումը	Ղեկավար
1. ISTC A-1451 Development of Scientific Computing Grid on the Base of Armcluster for South Caucasus Region 2007-2009 (արտասահմանյան դրամաշնորհ):	ԵՊՀ խմբի ղեկավար՝ Շուքուրյան Ս. Կ.
2. Բաշխված միջավայրերում պրոցեսների ղեկավարման խնդիրներ (պետական ֆինանսավորում):	Շուքուրյան Ս. Կ.

Ըստ ընդհանուր ուղղությունների՝ ամբիոնում կատարված գիտական աշխատանքների ամփոփում

Ուղղություն 1. **Բաշխված միջավայրերում պրոցեսների նախագծման խնդիրներ**

- Հետազոտվել է պրոցեսների համարժեքության խնդիրը, որը պրոցեսների օպտիմիզացիայի ալգորիթմների կարևոր բաղկացուցիչ մասն է: Ստացվել է խնդրի լուծումը պրոցեսների մի դասի համար: Առաջարկված լուծման հիմքում ընկած է բազմաչափ ժապավեններով ավտոմատների համարժեքության որոշման ալգորիթմը, որի միջոցով կարելի է լուծել նաև չվերասերված օպերատորներով ծրագրերի սխեմաների համարժեքության խնդիրը 1 ռանկի դեպքում: Այս խնդիրը ձևակերպվել էր 70-ական թվականներին, կան բազմաթիվ աշխատանքներ խնդրի լուծման ուղղությամբ, բայց մինչ օրս խնդրի լուծումը հայտնի չէր:
- Հետազոտվել են մի ընդլայնվող տվյալների մոդելի կառուցման որոշ խնդիրներ: Բովանդակային բառարանների մեխանիզմը դիտարկվում է որպես միջոց՝ իրականացնելու համար առաջարկված տվյալների մոդելի կոնցեպցիան: Կառուցվել է ընդլայնվող տվյալների մոդելի մի նախատիպ: Դիտարկվող տվյալների պահոցը հենվում է ռելացիոն ֆորմալիզմի վրա: Առաջարկվել է ընդլայնվող տվյալների մոդելի մի ռելացիոն արտապատկերում:
- Կատարվել են հետազոտություններ Workflow պրոցեսների մոդելի շրջանակներում: Մասնավորապես՝ պրոցեսների վերիֆիկացիայի համար նախկինում առաջարկված շաբլոնների մեթոդը կիրառվել է Workflow պրոցեսների ղեկավարող ծրագրերի ճշտությունը մասնակիորեն ստուգելու համար: Ստացված արդյունքը ենթադրվում է կիրառել IBM մասնագետների կողմից ստեղծված SS ղեկավարման պրոցեսների գրադարանի տարրերի ճշտությունը ստուգելու համար:

Ուղղություն 2. Չիպ-համակարգերի տեստավորման խնդիրներ

Առաջարկվել են մինիմալ *March* տեստերի կառուցման ալգորիթմներ հիշողության սարքերի ստատիկ և դինամիկ անսարքությունների տեստավորման համար (անսարքությունների հայտնաբերում, տեղայնացում և դիագնոստիկա), ինչպես նաև դիտարկվել են հիշողության չիպերի արտադրության օգտակար ելքի բարելավման ալգորիթմների մշակման հարցեր:

Ստացվել է ԱՄՆ պատենտ՝ հիշողության վերանորոգման մեթոդի համար: Ձևակերպվել և ներկայացվել է հիշողության մոդելավորման հետ կապված 2 հայտ ԱՄՆ պատենտ ստանալու համար:

Ուղղություն 3. **Էլեկտրոնային ուսուցման տեսական և գործնական խնդիրներ:**

Մշակվել է «Հայկական վիրտուալ քոլեջ» նախագիծ-առաջարկը, որը ներկայացվել է Հայկական բարեգործական ընդհանուր միություն /ՀԲԸՄ/: Առաջարկը ՀԲԸՄ վարչության կողմից հաստատվել է ֆինանսավորման համար:

Դիտարկվել են տվյալների բազաների կոնցեպցիան օգտագործող և էլեկտրոնային ուսուցմանը աջակցող տարբեր ֆորմալիզմներ: Ենթադրվում է Sakai միջավայրում մշակել և իրականացնել «Վիրտուալ-դպրոց» համակարգը:

Ամբիոնում կատարված այլ աշխատանքների մասին: Կառուցվել է «Տեղեկատվական համակարգերի մշակում» նոր մագիստրոսական ծրագիր, մասամբ վերամշակվել է «Տեղեկատվական համակարգերի կառավարում» մագիստրոսական ծրագիրը: Բոլոր դասընթացները աջակցվում են նյութի էլեկտրոնային մատուցման տեքստային և գրաֆիկական միջոցներով:

Մշակվել է էլեկտրոնային ուսումնական ձեռնարկ՝ միջնակարգ դպրոցի 9-րդ և 10-րդ դասարանների «Ինֆորմատիկա» առարկան խորացված ուսուցման համար:

Հրատարակություններ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	2	-	9	11

Մասնակցություն միջազգային գիտաժողովների աշխատանքներին

Շուքուրյան Ս. Կ.

- *IEEE խորագրով անցկացվող EWDTS 2006, EWDTS 2007 (East-West Design and Test Symposium) գիտաժողովի ծրագրային կոմիտեի նախագահ:*
- *IEEE խորագրով անցկացվող VTS 2008 (VLSI Test Symposium) գիտաժողովի ծրագրային կոմիտեի անդամ:*
- *IEEE խորագրով անցկացվող PEREL 2007, PEREL 2008 (Pervasive E-Learning) գիտաժողովի ծրագրային կոմիտեի անդամ:*
- *CSIT 2007 (Computer Science and Information Technologies) միջազգային գիտաժողովի ծրագրային կոմիտեի անդամ:*

Սամուկյան Մ. Գ.

- *ACM խորագրով անցկացվող ADBIS 2006, ADBIS 2007 (On Advances in Databases and Information Systems) եվրոպական գիտաժողովի ղեկավար մարմնի և ծրագրային կոմիտեի անդամ:*

Գիտական եւ ուսումնամեթոդական հրատարակությունների ցանկ

1. *Կոստանյան Ա.*, *Սամուկյան Մ.*, Ինֆորմատիկա /մաս 2-3/, էլեկտրոնային ուսումնական ձեռնարկ միջնակարգ դպրոցի 9-րդ և 10-րդ դասարանների աշակերտների համար:
2. *Âðèãîðÿí À. À., Øóêóðÿí Ñ. Ê.,* "Ýêâèâàëåíòíîñòü äâóìåðíûõ ìíîãîëåíòî÷íûõ àâòîìàòîâ", Êèáåðíåòèêà è ñèſòåìíûé Àíàëèç, №6, 2007.
3. *Grigorian H. A., Shoukourian S. K.,* "The Equivalence Problem of Multidimensional Multitape Automata", submitted to Journal of Computer and System Sciences.
4. *Shoukourian S., Zorian Y.,* Hierarchical Silicon Aware Test and Repair IP: Development and Integration Flow Reducing Time to Market for Systems on Chip, Invited paper, 4th IEEE East-West Design and Test Workshop, Sochi, Russia, September 2006.
5. *Harutunyan G., Vardanian V. A., Zorian Y.,* "Minimal March Test Algorithm for Detection of Linked Static Faults in Random Access Memories", Proc. IEEE VLSI Test Symposium, Berkeley, CA, USA, pp. 120-125 , 2006.
6. *Harutunyan G., Vardanian V. A., Zorian Y.,* "Minimal March Tests for Dynamic Faults in Random Access Memories", Proc. IEEE European Test Symposium, Southampton, UK, pp. 43-48, 2006.
7. *Harutunyan G., Vardanian V. A., Zorian Y.,* "Minimal March-Based Fault Location Algorithm with Partial Diagnosis for all Static Faults in Random Access Memories", Proc. IEEE Workshop on Design and Diagnostics of Electronic Circuits and Systems, DDECS, Prague, Czech Republic, pp. 260-265, 2006.
8. *Gyonjyan T. A., Harutunyan G., Vardanian V. A.,* "A March-Based Algorithm for Location and Full Diagnosis of All Unlinked Static Faults", Proc. IEEE International Workshop on Memory Technology, Design, and Testing (MTDT), Taipei, Taiwan, pp. 9-14, 2006.
9. *Harutunyan G., Vardanian V. A.,* "A March Test for Full Diagnosis of All Simple Static Faults in Random Access Memories", IEEE East-West Design and Test Workshop, Sochi, Russia, September 15-19, 2006, 4 p.
10. *Aleksanyan K., Vardanian V. A.,* "Efficient Implementation of Physical Addressing for Testing and Diagnosis of Embedded SRAMs for Yield Improvement", IEEE East-West Design and Test Workshop, Sochi, Russia, September 15-19, 2006, 4 p.

11. *Gyonjyan T., Vardanian V. A.,* "An Efficient Algorithm for Generating Minimal March Tests for Fault Detection and Diagnosis in Static Random Access Memories", International Design and Test Workshop, Dubai, November 19-20, 2006.
12. *Zorian Y., Torjyan G., Harutyunyan A., Vardanian V.,* Apparatus, method, and system to allocate redundant components with subsets of the redundant components, US Patent, No. 7,149,921, USA, 2006.
13. *Harutunyan G., Vardanian V. A., Zorian Y.,* "Minimal March Tests for Dynamic Faults in Random Access Memories", Journal of Electronic Testing: Theory and Applications, Vol. 23, Number 1, February 2007, pp. 55-74.
14. *Gjonjyan T. A., Sargsyan J. T., Vardanian V.,* "Fast Generation of March Tests for Fault Detection and Diagnosis in Static Random Access Memories", Proceedings of IEEE East-West Design & Test International Symposium, Yerevan, Armenia, 2007.
15. *Harutunyan G., Kocharyan H., Vardanian V. A.,* "An Efficient 2-Phase March Algorithm for Full Diagnosis of All Simple Static Faults in Random Access Memories", Proceedings of IEEE East-West Design & Test International Symposium, Yerevan, Armenia, 2007, 4 p.
16. *Aleksanyan K., Vardanian V. A.,* "Yield Improvement Based on Full Repair of SRAMs with Defective Redundancies", Proceedings of IEEE East-West Design & Test International Symposium, Yerevan, Armenia, 2007, 4 p.
17. *Harutunyan G., Vardanian V. A., Zorian Y.,* "A March-Based Fault Location Algorithm for All Simple Static Faults in Random Access Memories", Proc. IEEE Workshop on Design and Diagnostics of Electronic Circuits and Systems, DDECS, Krakow, Poland, 4 p., 2007.
18. *Aleksanyan K., Amirkhanyan K., Shoukourian S., Vardanian V., Zorian Y.,* Memory Modeling Using an Intermediate Level Structural Description, filed for US Patent, September, 2007.
19. *Aleksanyan K., Amirkhanyan K., Karapetyan S., Shoukourian S., Shubat A., Vardanian V., Zorian Y.,* Memory Modeling Using Structural Primitive Verification for Memory Compilers, filed for US Patent, October 2007
20. *Manukyan M., Karapetyan S.,* "Some Poblems of an Extensible Data Model", In Proc. of 2-nd Annual Scietific Conference of RAU, Yerevan, 2007.
21. *Òîï÷ÿí Ð. Â., Åâîðãÿí Ê. Ã., Ìåëêîíÿí À. À., Ïåòðîñÿí Ã. À.,* Ðàñïîçíàâàíèå ïðîöåññà íàïèñàíèÿ áóêâ ïî ðàñòðîâîìó èçîáðàæåíèþ. Ãîäè÷íàÿ íàó÷íàÿ êîíôåðåíöèÿ. Ñáîðíèê íàó÷íûõ òàòåé, ñòð. 178-185, Ðîññèéñêî-Àðìÿíñêèé óíèâåðñèòåò, Åðåâàí, 2006.
22. *Òîï÷ÿí Ð. Â., Åââîðãÿí Ê. Ã.,* Äèíàìè÷åñêèé ìåòîä ðàñïîçíàâàíèÿ ÷àòêèõ ðóêîïèñíûõ áóêâ. Òðóäû êîíôåðåíöèè Computer Science and Information Technologies, CSIT 2007, 24-26 ñåíòÿáðÿ, 2007, 4 ñòð.

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Ղեկավար՝ *Մանուկյան Մանուկ Գարուշի, ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ*

Լաբորատորիայի աշխատակազմը

1. Կոստանյան Արմեն Հրաչի, ավագ գիտաշխատող
2. Մանուկյան Մերի Համլետի, կրտսեր գիտաշխատող
3. Կարապետյան Նարեկ Հրաչիկի, կրտսեր գիտաշխատող

Հաշվետու տարում բաժինն իրականացրել է հետևյալ աշխատանքները.

1. Դիտարկվել են էլեկտրոնային ուսուցմանն աջակցող տարբեր միջավայրեր: Մանրամասն ուսումնասիրվել է Sakai միջավայրը: Անմիջական կապեր են հաստատվել վերջինիս համար նախագծման և տեստավորման աշխատանքներ իրականացնող խմբի հետ: Համաձայնություն է ձեռք բերվել համակարգի որակի հավաստման աշխատանքներին մասնակցելու վերաբերյալ:
2. OCR տեխնոլոգիայի օգտագործմամբ մշակվել է ծրագրային գործիք անկետաների և դեկանատների ամփոփագրերի մուտքագրման համար:

ՄԻՆՉՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Մինչհամալսարանական կրթության կենտրոնը ԵՊՀ համակարգում գործում է 2007 թ-ի հունվարից:
Կենտրոնի ստեղծման նպատակներն են՝

- ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների՝ ԵՊՀ ընդունելության և դիմորդների նախապատրաստման ուղղությամբ իրականացվող աշխատանքների համակարգումը,
- ԵՊՀ-ի և ՀՀ հանրակրթական հաստատությունների (դպրոցներ, քոլեջներ, վարժարաններ, նախնական մասնագիտական հաստատություններ) միջև փոխադարձ կապի ամրապնդումը, դպրոցբուհ համակարգի շարունակական կրթության սկզբունքի ապահովումը,
- առկա և հեռակա համակարգերի դիմորդների հետ շուրջտարվա տեղեկատվական և կազմակերպչական աշխատանքների իրականացումը,
- բազմամակարդակ նախապատրաստական դասընթացների կազմակերպումը:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի դիմորդների հետ տարվող աշխատանքների բաժինը, ԵՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի աջակցությամբ, մայրաքաղաքի և մարզերի շուրջ 40 դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար տարբեր մասնագիտությունների գծով կազմակերպել և անցկացրել է ակնարկային դասախոսություններ, որոնց ակտիվորեն մասնակցել են պատմության, ռուս բանասիրության, արևելագիտության, ժուռնալիստիկայի, ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի, մաթեմատիկայի, մեխանիկայի, աշխարհագրության, երկրաբանության ֆակուլտետների ղեկավարները:

ՀՀ հանրակրթական հաստատությունների ավարտական դասարանների աշակերտների և սովորողների՝ դեպի Մայր բուհ մասնագիտական կողմնորոշման նպատակով պատրաստվել և 2000 տպաքանակով հրատարակվել է «Դիմորդի ուղեցույց 2007» ձեռնարկը, որը պարունակում է համառոտ տեղեկություններ ԵՊՀ ֆակուլտետների, մասնագիտությունների և մասնագիտացումների, հեռակա ուսուցման համակարգի, նախապատրաստական դասընթացների և Իջևանի մասնաճյուղի մասին: Ձեռնարկն անվճար բաժանվել է հանրապետության հանրակրթական բոլոր դպրոցներին և վարժարաններին:

Կենտրոնի նախապատրաստական դասընթացների բաժնի կողմից մշակվել և 2007թ. ապրիլին ԵՊՀ գիտխորհրդում հաստատվել է «ԵՊՀ նախապատրաստական դասընթացների կազմակերպման և իրականացման կանոնակարգ»-ը: Այն հնարավորություն է տալիս կատարելագործելու նախապատրաստական դասընթացների համակարգը, մշակելու բազմամակարդակ կրթական ծրագրեր, որոնք բուհական ընդունելությանը նախապատրաստվելու լավագույն միջոցներից են:

Նախապատրաստական դասընթացների կրթական ծրագրերի բովանդակությունն ու որակը ապահովելու, ինչպես նաև ունկնդիրների համար ավարտական քննություններ անցկացնելու նպատակով, ըստ հանրակրթական առարկաների, ձևավորվել է փորձագիտական խորհուրդ, որտեղ ընդգրկված են ԵՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի հմուտ և փորձառու ներկայացուցիչներ:

Փորձագիտական խորհուրդը 2007թ. հունիսին կազմակերպել և անց է կացրել նախապատրաստական դասընթացների ունկնդիրների ավարտական քննությունները, որոնց հիման վրա վերջիններիս տրվել են ավարտական վկայականներ:

Կարևորելով բուհի և դպրոցի կրթական համատեղ գործունեությունը, երկու համակարգերի ներդաշնակ փոխկապակցվածությունը, կրթական երկու աստիճանների բովանդակության համալիր համակարգվածության ապահովումը՝ կենտրոնը հանրապետության մի շարք հանրակրթական դպրոցների և վարժարանների հետ համատեղ կրթական գործունեություն ծավալելու վերաբերյալ ձեռք է բերել համաձայնություն: Այդ նպատակով նախապատրաստվել է կենտրոնի և դպրոցների միջև կնքվելիք համաձայնագրի նախագիծը, որը ԵՊՀ ղեկավարության կողմից հաստատվելուց հետո 2007-2008 ուստարվա հոկտեմբերից կիրառության մեջ կդրվի:

Կենտրոնի աշխատակիցները բազմաթիվ հանդիպումներ են ունեցել Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 9-րդ դասարանների աշակերտների հետ՝ 2007-2008 ուստարում ԵՊՀ նախապատրաստական դասընթացները համալրելու նպատակով:

Մի շարք դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար կազմակերպվել են ճանաչողական այցելություններ համալսարանի մի շարք ֆակուլտետներ, պատմության թանգարան, գիտական և ուսումնական լաբորատորիաներ:

ԵՊՀ առկա և հեռակա ուսուցման համակարգերի դիմորդների համար կազմակերպվել են մշտական տեղեկատվական աշխատանքներ:

Կենտրոնի դիմորդների հետ տարվող աշխատանքների բաժինը մեծապես օժանդակել է ԵՊՀ 2007թ. առկա և հեռակա ուսուցման ընդունելության քննությունների կազմակերպման գործընթացին:

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ *Վարդանյան Քրիստինե*

Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը ստեղծվել է 2006 թ-ի հունիսի 1-ին՝ ԵՊՀ գիտական խորհրդի որոշման համաձայն: Սա աշխարհի առաջատար համալսարաններում ընդունված միջոց է՝ կարիերայի կառուցման հարցում ուսանողներին և շրջանավարտներին աջակցելու համար: Կենտրոնի գործունեության հիմնական նպատակն է նպաստել աշխատաշուկայում ԵՊՀ շրջանավարտների և ուսանողների մրցունակության բարձրացմանը, շրջանավարտների և համալսարանի միջև մշտական կապի ամրապնդմանն ու համագործակցության աճին, շրջանավարտներին առնչվող խնդիրների լուծմանը:

Վերջին տասնամյակների ընթացքում ՀՀ աշխատաշուկան կրել է հսկայական փոփոխություններ: Ներկա տնտեսական ճկուն համակարգը թե' երկրի ներսում և թե' միջազգային ասպարեզում *աշխատանք ունենալու*, *մասնագիտությանը նվիրված լինելու*, *աշխատանքի մեջ ոչ միայն նյութականը տեսնելու* ժամանակակից ընկալումները և մի շարք այլ գործոններ աշխատաշուկային հաղորդել են նոր երանգներ և զարգացման ուղենիշեր:

Նկատի ունենալով երկրում առկա իրավիճակը՝ կենտրոնն իր առջև խնդիր է դրել հնարավորինս օգնել ԵՊՀ շրջանավարտներին աշխատանք գտնելու, աշխատանքային հմտությունների, կարիերայի կառուցման, ինչպես նաև կարիերայի պլանավորման տեխնոլոգիայի տիրապետման, անհատական ներուժի գնահատման, սեփական կենսական հեռանկարների կառուցման, մասնագիտական և անհատական ոլորտում ինքնահաստատման գործընթացի ծավալման հարցերում:

Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը իր աշխատանքային գործունեությունը սկսել է հուլիս ամսից՝ անձնակազմի մասնակի համալրումից հետո: Կենտրոնը նախապատրաստել է «Շրջանավարտների գրանցման» թերթիկ, որի հիման վրա հետագա համագործակցության շրջանակները ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով ստեղծվել է շրջանավարտների տվյալների համակարգչային բազա: Այն ընդգրկում է 2005-2006, 2006-2007 ուստարիների մագիստրատուրայի և բակալավրիատի շրջանավարտների տվյալները: Ստացված տվյալները փաստում են, որ համալսարանում ուսանող շրջանավարտներից միայն 1/10 մասն ունի աշխատանքային որոշակի փորձ, ինչն էլ վկայում է, որ կենտրոնի առջև դրված խնդիրները մեծ արդիականություն են վայելում:

Կենտրոնի աշխատակազմն ուսումնասիրել է ԱՊՀ և արևմտյան երկրների եվրոպական բարձրագույն ուսումնական հաստատություններում գործող տասնյակ հազարավոր շրջանավարտներին համախմբող, համախումբիոնալ կառույցների փորձը, վերլուծել նրանց գործունեությունը: Սեպտեմբերին կատարված երկամսյա ուսումնասիրության և վերլուծության արդյունքում մշակվել է կենտրոնի կանոնադրությունը:

Կենտրոնը նախապատրաստել է տեղեկատվական բուկլետ, որը հակիրճ տեղեկատվություն է տրամադրում ուսանողներին, պրոֆեսորադասախոսական կազմին, ինչպես նաև բոլոր շահագրգիռ անձանց:

Հաշվետու տարում կենտրոնը համագործակցության պայմանավորվածություն է ձեռք բերել բազմաթիվ կազմակերպությունների հետ, որոնք մշտապես թափուր աշխատատեղերի մասին հայտ են ներկայացնում նաև

կենտրոնին: Կենտրոնն իր ունեցած տվյալների բազայի շրջանակներում տարածում է աշխատանքային հայտերը: Այդ կերպ աշխատանքի են տեղավորվել ԵՊՀ բազմաթիվ շրջանավարտներ:

Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը նախաձեռնել է «Համալսարանական կրթությունը և կարիերայի կառուցման հեռանկարները» ծրագիրը, որի հիմնական նպատակն է ընդլայնել ուսանողների պատկերացումները աշխատաշուկայի ներկա վիճակի մասին, ակտիվ ուսանողներին ներգրավել Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կողմից իրականացվող միջոցառումների նախաձեռնման և կազմակերպման աշխատանքներում: Ծրագրի շրջանակներում առաջին միջոցառումը՝ *«Կարիերայի կառուցման փուլերի հաջորդականությունը և հաջողված կարիերայի գաղտնիքը»* խորագրով առաջին սեմինար-դասախոսությունը, տեղի ունեցավ 2006թ-ի դեկտեմբերի 21-ին ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի մասնաշենքի Արէտ և Մօնիք Երկանեանների անվան սրահում: Միջոցառմանը հրավիրված բանախոսներն էին «Հայաստան 2020» ծրագրի ներկայացուցիչները և Միջազգային հետազոտությունների փոխանակման խորհրդի կրթական ծրագրերի (IREX) խորհրդատուն: Սեմինար-դասախոսությանը ներկա ուսանողներն ու շրջանավարտները մասնակցեցին էքսպրես հարցմանը: Հարցման նպատակն էր առավել արդյունավետ դարձնել ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի աշխատանքները ու դրանցում հաշվի առնել ուսանողների և շրջանավարտների ակնկալիքներն ու առաջարկությունները կենտրոնի գործունեության վերաբերյալ:

2007 թ-ի մարտին «Համալսարանական կրթությունը և կարիերայի կառուցման հեռանկարները» ծրագրի շրջանակներում կենտրոնը համագործակցության պայմանավորվածություն է ձեռք բերել «ԼԻՆԿ» ընկերության հետ: Համագործակցից ընկերության հետ կենտրոնը ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողների և շրջանավարտների համար նախաձեռնեց *«Հաշվապահական ծրագրերի ուսուցում»* երկփուլ ծրագրի I փուլը՝ «Հաշվառման ավտոմատացումը որպես բիզնեսի կառավարման գործիք» խորագրով սեմինար դասախոսությունը, որի բանախոսներն էին «ԼԻՆԿ» ընկերության աշխատակիցները: Սեմինար-դասախոսությունն ուղղված էր տնտեսական գործունեության ավտոմատացման առկա տեխնոլոգիաների, ձեռնարկության գործունեության տարբեր հատվածների ավտոմատացման ծառայություններ առաջարկող ընկերությունների 1C համակարգի տարբերիչ առանձնահատկությունների ուսումնասիրությանը: Սեմինար-դասախոսության մասնակիցներից «Լինկ» ընկերության և ԵՊՀ «Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի» կողմից ընտրվեցին և կազմավորվեցին խմբեր՝ «ԼԻՆԿ Ստանդարտ» ծրագրի ուսուցման դասընթացներին մասնակցելու համար:

2007 թ-ի ապրիլի 4-16-ը ընտրված 10 մասնակիցներ վերապատրաստվեցին «Լինկ» ընկերությունում: Միջոցառումների արդյունքում «ԼԻՆԿ» ընկերությունը այսուհետ կօժանդակի վերապատրաստում անցած շրջանավարտներին աշխատանքի տեղավորմանը հարցում:

2007 թ. ապրիլ ամսին Երևանի պետական համալսարանի և Էյչ-Էսբի-Սի բանկ Հայաստան ՓԲԸ համատեղ նախաձեռնությամբ ԵՊՀ 3-րդ կուրսի ուսանողների համար իրականացվեց «Ռիսկային պրակտիկայի կազմակերպում Էյչ-Էսբի-Սի բանկում» ծրագիրը: Ծրագրի նախապատրաստական փուլում ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում տեղի ունեցավ սեմինար դասախոսություն՝ «Ինչպես աշխատանքի անցնել Էյչ-Էսբի-Սի բանկում» թեմայով: Դասախոսությունը վարեց համանուն բանկի կադրերի բաժնի աշխատակից Աստղիկ Դավթյանը: Հանդիպման ընթացքում մասնակիցներին հնարավորություն ընձեռվեց ծանոթանալ պրակտիկայի անցկացման մասին ընթացակարգին, իրավասության շրջանակներին, նպատակներին ու ընտրության չափանիշներին, դիմելու կարգին, ժամկետներին, ընտրական կարգին, վարձատրությանը: Համատեղ ծրագրի արդյունքում *2007թ-ի հուլիս-օգոստոս* ամիսներին ԵՊՀ տնտեսագիտության, փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետների 10 ուսանողներ բացառիկ հնարավորություններ ստացան աշխատանքային ակտիվ միջավայրում ձեռք բերել նոր հմտություններ և գիտելիքներ, որոնց շնորհիվ նրանք հետագայում կդառնան առավել մրցունակ և կվայելեն բարձր պահանջարկ: Իսկ իրենց լավագույնս դրսևորած ուսանողները աշխատանքի անցան վերոհիշյալ բանկում:

Հաշվետու տարում կենտրոնը քայլեր է նախաձեռնել նաև միջազգային համագործակցության զարգացման ուղղությամբ, որի արդյունքում *2007թ-ի հունիսի 22-ին* ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից ֆինանսավորվող «Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում»

(ՄՄՀՀ) ծրագրի ֆինանսավորմամբ ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահում անցկացվեց «*Տեղեկատվական տեխնոլոգիաների կարիերայի առաջին տոնավաճառ-2007*» ցուցահանդեսը, որին մասնակցեցին տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հայտնի մոտ 30 կազմակերպություններ («Բումերանգ սոֆտվեր» ՍՊԸ, «Բրոքովեյ» ընկերությունը, «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ, Սի քյու ջի, Հայաստանի կրեդենս համակարգեր, «ԷպիջիԱրմ» ՍՊԸ, «Տեղեկատվական ինտեգրացիայի խումբ (ԻԻԳ)» ՍՊԸ, «Ինֆոտեք» ամսագիր, «Ինստիգեյթ» ՓԲԸ, Ինտեգրիեն միջազգային կորպորացիայի Երևանի մասնաճյուղ, «Այ թի ի» ՓԲԸ, «Ռ-Տելեկոմ» ՓԲԸ, «Լինկ» ՍՊԸ, Ազգային գործիքներ, «Նորք տեղեկատվական-վերլուծական կենտրոն» ՓԲԸ, «Սմարթ համակարգեր» ՍՊԸ, «Սուրսիո» ՓԲԸ, Համատեղ գործունեության միջազգային համակարգեր կորպորացիա-Հայաստան, «ՍիստրոՏեք» ՍՊԸ, Վիրաժ լոջիք ինտերնեշնլ, «ՎԵԲ» ՍՊԸ, ՎեսթՍոֆթ, Երևանի հեռահաղորդակցության հետազոտության ինստիտուտ, «Արմինկո» ՍՊԸ) ներկայացրեցին իրենց կազմակերպությունները և մանրամասն տեղեկատվություն տրամադրեցին թափուր աշխատատեղերի վերաբերյալ՝ այսպիսով ուսանողներին, շրջանավարտներին հնարավորություն տալով հանդիպել SS ոլորտի լավագույն գործատուին, իսկ գործատուներին՝ լավագույն մասնագետներին: Ծրագրի նպատակն է զարգացնել երիտասարդների և ուսանողների՝ աշխատանքային շուկայում կողմնորոշվելու և մրցունակ լինելու ունակությունները, ծրագրի թիրախ խմբի անդամներին աջակցել համապատասխան մասնագիտական որակավորում պահանջող աշխատանք գտնելու խնդրում, ապահովել գործատու-աշխատակից (աշխատանք փնտրող) անմիջական կապերն ու շփումները և նպաստել համապատասխան տեղեկատվության տարածմանը: Միջոցառման ընթացքում ԵՊՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնը (որպես կազմակերպիչ կողմ) կազմակերպեց և անցկացրեց գործընթացի գնահատում՝ մոնիթորինգ, ներկայացված կազմակերպությունների՝ գործատուների, և աշխատանք որոնողների՝ շրջանավարտների և ուսանողների հետ: Հարկ է նշել, որ հարցմանը մասնակցած գործատուների շուրջ կեսից ավելին նախկինում երբևէ չէր մասնակցել նման նատիպ միջոցառման, ուստի նրանք պատկերացում չունեին այն մասին, թե ինչպես է արվում կարիերայի ցուցահանդեսը: Այդ առումով միջոցառումն ուներ նաև ինֆորմատիվ-լուսաբանող նշանակություն: Արդյունքում որպես միջոցառման առավելություններ հարցվողները նշել են վերջինիս աննախադեպ լինելը՝ որպես առաջընթաց քայլ: Թե' գործատուների և թե' ուսանողների կողմից որպես միջոցառման առավելություն նշվել է աշխատակից-ճեռնարկատեր շփումը (այս հանգամանքը մեծապես կարևորվում է նաև ուսանողների և շրջանավարտների կողմից), հատկապես այն դեպքում, որ նման միջոցառումը հեշտացնում է գործատուի աշխատանքը աշխատակիցների որոնման հարցում, իսկ մյուս կողմից երիտասարդ շրջանավարտներին աշխատանք գտնելու լավ հնարավորություն է ընձեռում: Ըստ էության, միջոցառումը երկուստեք փոխշահավետ գործընթաց էր, քանի որ մյուս կողմից էլ այն բարձրացրեց SS ոլորտի երիտասարդ մասնագետների տեղեկացվածությունը իրենց բնագավառում գործող հայ գործատուների, նրանց կողմից առաջարկվող թափուր աշխատատեղերի վերաբերյալ:

2006-2007 ուստարում կենտրոնի կողմից կազմակերպված միջոցառումների և համագործակցության պայմանավորվածությունների արդյունքում աշխատանքի են տեղավորվել մոտ հարյուր շրջանավարտներ:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ *Դավթյան Կարինե*

ԵՊՀ մշակույթի կենտրոնը, ԵՊՀ գիտխորհրդի որոշմամբ, կազմավորվել է 2006 թ-ի հունիսի 6-ին: Կենտրոնի գործունեության հիմնական նպատակներն են.

- համակարգել բուհի մշակութային կյանքը,
- ստեղծել գեղարվեստական համույթներ,
- ի հայտ բերել ստեղծագործող և շնորհալի ուսանողների, դասախոսների,
- բարձր կազմակերպվածությամբ անցկացնել մշակութային միջոցառումները,
- խթանել ուսանողների ակտիվությունը,
- ուսանողական կյանքը դարձնել հետաքրքիր ու բովանդակալից:

Հաշվետու ժամանակաշրջանում կենտրոնը կազմակերպել և անցկացրել է հետևյալ միջոցառումները.

1. 2006 թ-ի հունիսի 14-ին անցկացվեց «Լավագույն ուսանող» ամենամյա մրցանակաբաշխությունը:
2. 2006-2007 թթ. ուստարվա սկզբին՝ սեպտեմբերի 12-ին, ԵՊՀ պատմության մեջ առաջին անգամ մեծ շուքով կազմակերպվեց և անցկացվեց «ԵՊՀ մեծարման և առաջին կուրսեցիների երդման օր» միջոցառումը:
3. Կենտրոնի նախաձեռնությամբ 2006 թ-ի սեպտեմբերի 28-ին բացվեց «Անկախությունն իմ աչքերով» խորագիրը կրող նկարչական մրցույթը, որը նվիրված էր ՀՀ անկախության հռչակման 15-րդ տարեդարձին:
4. 2006 թ-ի դեկտեմբերի 18-ին անցկացվեց գրական ստեղծագործությունների մրցույթ, որին մասնակցում էին 60 ուսանողներ: Լավագույնը ճանաչված ստեղծագործությունները տպագրվել են Հայաստանի գրողների միության կողմից:
5. Մշակույթի կենտրոնը և ուսխորհրդի հոգևոր մշակույթի հանձնաժողովը համատեղ փետրվարի 14-ին համալսարանականներին ներկայացրին Ս. Սարգսի և Տեառնընդառաջ տոնի ամբողջ ծիսակարգը:
6. Հայ մեծանուն բանաստեղծ Եղիշե Չարենցի ծննդյան 110-ամյակի կապակցությամբ կենտրոնը ներկայացրեց գրական-երաժշտական միջոցառում, որն անցկացվեց բանաստեղծի արձանի մոտ:
7. ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի ճեմասրահում մարտի 14-ին կայացած՝ Նիկոլ Աղբալյանի կիսանդրու տեղադրման հանդիսավոր արարողության մշակութային մասն ապահովել է ԵՊՀ երգչախումբը:
8. Հունիսի 15-ին կազմակերպել և անցկացրել է «Լավագույն ուսանող» հերթական մրցանակաբաշխությունը: ՈՒսանողներին գեղարվեստական կատարումներով շնորհավորել են կենտրոնի երգչախումբը, պարի համույթը և նվագախումբը:
9. ԵՊՀ մշակույթի կենտրոնն իր գործունեության շրջանակներում լայն աջակցություն է ցուցաբերել ԵՊՀ ՈՒՀԱ թիմին, որը 2007 թ-ի մայիսի 27-ին նվաճեց «ՈՒՀԱ ուսանողական լիգայի» հաղթողի կոչումը:

10. Մշակույթի կենտրոնի երկու սաներ մայիսի 4-ին մասնակցել են «Սլավոնական տուն» հ/կ-ի և Սլավոնական համալսարանի կազմակերպած «Մենք կարդում, խոսում և երգում ենք ռուսերեն» միջբուհական 4-րդ մրցույթին:
11. Կենտրոնի «Համալսարանական» թատրոն-ստուդիան երկու ներկայացումներով («««Հե՞յ, ո՞վ կա»… «Պատասխանում է Ջիմ Դենդին»», «Քաջ Նազար») մասնակցել է հոկտեմբերի 4-14-ին Երևանում անցկացված միջազգային թատերական փառատոնին:
12. Մշակույթի կենտրոնը հաշվետու ժամանակաշրջանում նախատեսել և անցկացրել է մի շարք հանդիպումներ մշակութային գործիչների ու ճանաչված անձանց հետ: Այդ հանդիպումների շրջանակներում ԵՊՀ-ն հյուրընկալել է ՀՀ աշխարհահռչակ լեռնագնաց Կարո Հովասափյանին, ժողովրդական արտիստուհի Հասմիկ Պապյանին, ՀՀ վաստակավոր արտիստ Մուրադ Ջանիբեկյանին, հայ մեծանուն բանաստեղծ Եղիշե Չարենցի դստերը՝ Անահիտ Չարենցին:

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՊՀ մշակույթի կենտրոնն իրականացրել է նախապատրաստական լայնածավալ աշխատանքներ, մշակել է վերոնշյալ միջոցառումների անցկացման կարգը, ծրագրերը, գրվել են համապատասխան սցենարներ, պատրաստվել են տարաբնույթ մրցույթներին ԵՊՀ ուսանողների մասնակցության հայտեր, որոշակի աշխատանք է տարվել կենտրոնի բուկլետի պատրաստման ուղղությամբ:

Իր գործունեության ընթացքում Մշակույթի կենտրոնը սերտորեն համագործակցել է նաև ԵՊՀ մյուս ստորաբաժանումների և մասնավորապես Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության հետ: Այդ համագործակցության շրջանակներում կենտրոնը մասնակցել է ԵՊՀ առաջին կուրսեցիների համար նախատեսված նվեր-փաթեթների պատրաստման և բաժանման, Դիլիջանի մարզաառողջարանային համալիրի վերակառուցման համար անցկացված հեռուստամարաթոնի տեսահոլովակների նկարահանման աշխատանքներին:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի կազմում գործել են գեղարվեստական հետևյալ խմբակները.

- «Համալսարանական» թատրոն-ստուդիա, գեղ. ղեկավար և բեմադրիչ՝ Կարինե Դավթյան,
- ԵՊՀ պարային համույթ, գեղ. ղեկավար՝ Իռէն ՈՒլիխանովա,
- ԵՊՀ երգչախումբ և նվագախումբ, գեղ. ղեկավար՝ ՀՀ վաստակավոր արտիստ Կարեն Սարգսյան, խմբավար՝ Ռուբեն Կարասեֆերյան,
- ԵՊՀ գրական ստուդիա, ղեկավար՝ բան. գիտ. թեկնածու Սարգիս Սխիթարյան,
- ԵՊՀ ՈՒՀԱ ակումբ:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲԱԺԻՆ

Բաժնի վարիչ՝ *Հակոբյան Միհրան Տարոնի*

Հաշվետու ժամանակաշրջանում ՈՒսանողների հետ տարվող աշխատանքների բաժինը իրականացրել է ուսանողական կյանքի ակտիվացմանը, ուսանողների հասարակական, մշակութային և ինտելեկտուալ զարգացմանն ուղղված մի շարք ծրագրեր:

Հաշվետու ժամանակաշրջանում ՈՒսանողների հետ տարվող աշխատանքների բաժինը նախաձեռնել և կազմակերպել է ԵՊՀ բոլոր ֆակուլտետների ուսանողների հանդիպումները ռեկտոր Ա. Սիմոնյանի և պրոռեկտոր Ա. Քարամյանի հետ:

2007 թ. մարտ-ապրիլ ամիսներին ՈՒսանողների հետ տարվող աշխատանքների բաժինը կազմակերպել է «Առաջնորդություն և ուսանողական աշխատանքների կազմակերպման հիմունքները» թեմայով եռօրյա արտագնա ուսուցողական դասընթացների 4 շարք ԵՊՀ Ծաղկաձորի ուսումնասարտաղրական բազայում: Դասընթացներին մասնակցել են 214 ուսանողներ:

2007 թ. մարտ-մայիս ամիսներին բաժնի նախաձեռնությամբ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի հետ համատեղ կազմակերպվել է «ԵՊՀ ուսանողների կրակային պատրաստության» դասընթաց, որին մասնակցել են շուրջ 600 ուսանողներ:

2007 թ. հունիսի 15-ին կազմակերպվել է «Լավագույն ուսանող 2007» ավանդական մրցանակաբաշխությունը:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են 37 ծրագրեր, այդ թվում.

- «ՍԻԱՎ/ՁԻԱՀ-ի սպառնալիքը ժամանակակից աշխարհում» սեմինար (Եկեղեցիների համաշխարհային միության հետ համատեղ, 20.02.2007թ.)
- «Ինտերակտիվ ընտրություններ» («Երիտասարդական նվաճումներ» հ/կ-ի հետ համատեղ, 22.02.2007թ.)
- «Ժողովրդավարության խրախուսումը 21-րդ դարում. տեսական բանավեճեր, գործնական քաղաքականություն» խորհրդաժողով (ԱՄՆ-ի Քորնել և Ջ. Վաշինգտոնի անվան համալսարանների պրոֆեսորներ Վ. Բանսի և Շ. Վոլչիկի հետ համատեղ, 10.03.2007թ)
- «Հայաստան և Եվրոպական միություն. ապագայի համագործակցություն» սեմինար («Հայաստանում Եվրոպական շարժում» հ/կ-ի հետ համատեղ, 20.06.2007թ.)
- ՀՀ անկախության 15-ամյակի միջոցառումների շրջանակներում «Անկախության ընկալումը» խորագրով հանդիպում-քննարկում Պարույր Հայրիկյանի հետ (20.09.2006թ.)

ՈՒսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի վարիչ Մ. Հակոբյանը 2007 թ. հունվարի 23-30-ը գործուղվել է Մ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարան՝ մասնակցելու «ՈՒսանողական և երիտասարդական կազմակերպությունների առաջնորդների» ֆորումի 1-ին մասին, իսկ հուլիսի 17-19-ը՝ Յ. Իմաստունի անվան Նովգորոդի պետական համալսարան՝ մասնակցելու ֆորումի 2-րդ մասին:

Հաշվետու ժամանակաշրջանում բաժինը մշակել և ավարտին է հասցրել նաև «ՈՒսանողների իրավունքների և պարտականությունների հայեցակարգը» և «Լավագույն ուսանող ամենամյա մրցանակաբաշխության կանոնակարգը»:

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԵՊՀ ՈՒԽ նախագահ՝ *Մանուկյան Համլետ*

Հաշվետու ժամանակահատվածում ՈՒսանողական խորհուրդն իրականացրել է կանոնադրային պահանջներից բխող գործառույթներ ու քայլեր, ինչպես նաև ուսանողական կյանքը ակտիվացնելուն ու բովանդակալից դարձնելուն, ուսանողների հասարակական, մշակութային, մարզական, ինտելեկտուալ, հոգևոր զարգացմանն ուղղված մի շարք ծրագրեր:

Մարզական միջոցառումներից ՈՒսանողական խորհուրդը հաշվետու ժամանակահատվածում կազմակերպել է բազկամարտի համահամալսարանական անհատական առաջնություն, բասկետբոլի միջֆակուլտետային առաջնություն և շախմատի միջֆակուլտետային թիմային առաջնություն:

Մշակութային ոլորտում ՀՀ ականավոր մշակութային գործիչների հետ կազմակերպվել են մի շարք հանդիպումներ, որոնք տեղի են ունեցել հանդիպում – քննարկումների, համերգ - քննարկումների ձևաչափով: Բացի այդ, ԵՊՀ ՈՒԽ մշակույթի և սպորտի հանձնաժողովը նախաձեռնել է ՀՀ ականավոր մշակութային, մարզական գործիչներին, արվեստագետներին հոբելյանների կապակցությամբ շնորհավորական բացիկներ ուղարկելու ակցիա:

ԵՊՀ ՈՒԽ-ն նաև համագործակցություն է ծավալել Երևանի մի շարք թատրոնների հետ, ինչպես նաև մի քանի թատրոնների հետ համաձայնություն է ձեռք բերվել ԵՊՀ ուսանողներին տոմսերը 25% զեղչով տրամադրելու շուրջ:

Հոգևոր մշակույթի զարգացման առումով ՈՒսանողական խորհուրդը մի քանի անգամ կազմակերպել է հոգևորականի հետ հանդիպում–քննարկումներ, որոնք նվիրված են եղել Հայ ազգային, եկեղեցական տարբեր տոների, ինչպես նաև նման հանդիպում–քննարկումներ են կազմակերպվել ուսանողների ցանկությամբ՝ համապատասխան ոլորտում իրենց հետաքրքրող թեմաների շուրջ:

ԵՊՀ ՈՒԽ հոգևոր մշակույթի զարգացման հանձնաժողովը առանձին ֆակուլտետային ուսանողական խորհուրդների հետ կազմակերպել է այցելություններ մանկատներ: Հանձնաժողովը կազմակերպել է նաև մի շարք ուխտագնացություններ դեպի Էջմիածին /ոտքով/, Ծաղկազարդ, Դիլիջան /Հաղարծին/, Գոշավանք, Նորավանք: Հանձնաժողովի կազմակերպած միջոցառումներին ակտիվորեն մասնակցել են մեծ թվով ուսանողներ:

ԵՊՀ ՈՒԽ գիտակրթական հանձնաժողովը ուսումնասիրել է բոլոնյան գործընթացին վերաբերող փաստաթղթեր ու վերլուծություններ և կազմակերպել քննարկում:

ԵՊՀ ՈՒԽ արտաքին կապերի հանձնաժողովի նախագահը երկու անգամ գործուղվել է արտերկիր /Մինսկ, Նովգորոդ/, որոնց միջոցով ապահովվել է ԵՊՀ ՈՒԽ մասնակցությունը ԱՊՀ ուսանողական միջազգային կառույցների աշխատանքներին: Արդյունքում գործում աշխատանքային հարաբերություններ են ձևավորվել ԵՊՀ ՈՒԽ ԱՊՀ գործընկերների հետ:

ԵՊՀ ՈՒԽ-ն ակտիվ մասնակցություն է ունեցել Հայոց բանակի կազմավորման 15-ամյակին նվիրված միջոցառումներին:

2007 թ-ի փետրվարին ՈՒսանողական խորհուրդը կազմակերպել է 1988 թ-ին Սումգայիթում հայերի դեմ իրագործված ցեղասպանության տարելիցին, ապրիլին՝ Հայոց մեծ եղեռնի տարելիցին նվիրված երթեր: ԵՊՀ ՈՒԽ-ն կազմակերպել է երթ, որը նպատակ ուներ բողոքի ձայն բարձրացնել և հարգանքի տուրք մատուցել Հրանտ Դինքի հիշատակին:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ ՈՒԽ-ն իրականացրել է երկար սպասված և մեծ ջանքեր ու ժամանակ խլած ԵՊՀ ՈՒԽ «Մեր ժամանակը» պարբերականի հիմնումն ու պարբերական տպագրությունը:

Տվյալ ժամանակահատվածում ՈՒսանողական խորհուրդը կազմակերպել է մի շարք քննարկում-բանավեճեր, որոնց արդյունքում ձևավորվել և ԵՊՀ ՈՒԽ-ին կից գործում է բավավեճ ակումբ: Քայլեր են ձեռնարկվել ԵՊՀ ՈՒԽ-ին կից «մաֆիա» խաղի ակումբ ձևավորելու ուղղությամբ:

2007 թ. կազմակերպվել են բազմաթիվ ֆակուլտետային միջոցառումներ ու առաջնություններ, ուսանողական օլիմպիադաներ, սեմինարներ, այցելություններ թանգարաններ, Եռաբլուր:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ ՈՒԽ-ը կազմակերպել է ավելի քան 100 միջոցառումներ:

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Տնօրեն՝ *Ստեփանյան Պերճ Գառնիկի*

2007 թ. համալսարանի հրատարակչությունը և տպարանը, ՀՀ կառավարության որոշմամբ, ստացան Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կարգավիճակ, որը ինքնուրույն և արդյունավետ գործունեություն ծավալելու հնարավորություններ է տալիս: Հիմնադիրը հանդիսանում է ԵՊՀ-ն:

Հաշվետու տարում հրատարակչությունը լույս է ընծայել 133 անուն գիրք՝ 2050 հրատ. մամուլ ծավալով, ընդհանուր տպաքանակը՝ 35200 օրինակ:

Նկատելիորեն ավելացել է բուհական դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, բառարանների թիվը: Հրատարակված գրքերի ճնշող մեծամասնությունը նախատեսված է ուսանողների համար:

Ավելացել է ԵՊՀ պատվերով լույս տեսնող գրքերի թիվը: Տարվա ընթացքում ֆակուլտետների խորհուրդների կողմից հրատարակության երաշխավորված բոլոր գրքերը լույս են տեսել (35 անուն գիրք): Կոտրվել է այն մտայնությունը, թե համալսարանն ի վիճակի չէ ֆինանսավորել դասախոսների հեղինակած գրքերը:

Հրատարակչությունը շարունակում է արդյունավետ համագործակցությունը Լիսաբոնում գործող Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության հայկական բաժանմունքի և նրա տնօրեն դր Զավեն Եկավյանի հետ: Հաշվետու տարում լույս է տեսել 15 անուն հայագիտական գիրք: Կյուլպենկյան հիմնարկության հովանավորությամբ վերջին տարիներին հրատարակվել է հայագիտության համար մեծ արժեք ներկայացնող ավելի քան 70 անուն գիրք:

Տարվա ընթացքում տպագրված գրքերից պետք է առանձնացնել Դորա Սաքայանի «Արևելահայերենը անգլիախոս աշխարհի համար՝ զուգադրական մոտեցմամբ» դասագիրքը օտարների և անգլիախոս հայերի համար, ինչպես նաև Նիկողայոս Ադոնցի բացառիկ արժեք ներկայացնող երկերի 2-րդ և 3-րդ հատորները, ԵՊՀ դասախոսների կողմից հեղինակած «Արևելագիտության հարցեր» ծավալուն ժողովածուն, Ա. Խառատյանի «Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV- XVll դարեր)», Վ. Բոյնագրյանի «Հայկական լեռնաշխարհի լճերը» (ռուսերեն): Լույս է տեսել «Հայ ժողովրդի պատմության քրիստոմատիա» վեցհատորյակի առաջին հատորը (կազմողներ՝ Պ. Հովհաննիսյան, Ա. Մովսիսյան):

Գ. Կյուլպենկյան հիմնարկության առաջարկով հրատարակվում է «Մատենագիրք Հայոց» մատենաշարի բազմահատորյակը: Հաշվետու տարում լույս են տեսել 6-րդ, 7-րդ և 8-րդ հատորները՝ ավելի քան երեք հազար էջ ծավալով: Տպագրությունն իրականացվում է Լիբանանում:

Հիշատակության արժանի են իրավագիտության ֆակուլտետի ուսանողության համար լույս տեսած մեկ տասնյակից ավելի դասագրքերը և ուսումնական ձեռնարկները, հայ բանասիրության, ռուս բանասիրության, քիմիայի, կենսաբանության ֆակուլտետների խորհուրդների կողմից հրատարակության երաշխավորված գրքերը:

Հրատարակչությունը մասնակցել է ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ արտասահմանում (Ֆրանկֆուրտ, Մոսկվա, Աշխաբադ) կազմակերպված գրքերի տոնավաճառներին և ցուցահանդեսներին:

Գրքերի նվիրատվություն են կատարվել Արցախի և Հայաստանի դպրոցներին, զինվորական ստորաբաժանումներին, արտասահմանյան համալսարանների հայագիտական ամբիոններին:

Պատշաճ մակարդակով և պարբերականությունը չխախտելով՝ հրատարակվում են ԵՊՀ հանդեսները՝ «Բանբեր Երևանի համալսարանին» և «Գիտական տեղեկագիրը»: «Բանբերի» խմբագրությունը հրատարակեց հանդեսի 40 տարվա մատենագիտությունը, որը բանասիրության համար մեծ արժեք է ներկայացնում:

2006/2007 ուստարում հրատարակչության կողմից լույս ընծայված գրքերի ցուցակ

1. *Աբրահամյան Լևոն-Հարություն*, Նամակներ մեծ բարոյախոսների մասին, 190 էջ, տպ. 200:
2. *Աբրահամյան Մ.*, Մեխանիկայի ֆիզիկական հիմունքները, դասագիրք, 430 էջ, տպ. 300:
3. *Առոնց Նիկողայոս*, Երկեր, հինգ հատորով, հատ. Բ, պատմաբանասիրական ուսումնասիրություններ, 680 էջ, տպ. 500, տպագրվել է Գ. Կյուլպենկյան հիմնարկության հովանավորությամբ:
4. *Ազարյան Ն. Հ.*, Մոլեկուլային գենետիկայի գործնական աշխատանքներ, 52 էջ, տպ. 100:
5. *Ակադեմիկոս Էդուարդ Աթայան*, Կենսամատենագիտություն, 38 էջ, տպ. 100:
6. *Ակադեմիկոս Էդուարդ Աթայանին* նվիրված գիտաժողովի նյութերը, 88 էջ, տպ. 100:
7. *Այվազյան Սարգիս*, Վանի թագավորության սեպագիր արձանագրությունները, գիրք 2-րդ, 390 էջ, տպ. 250:
8. *Աչոյան Ժ.*, Մելիորատիվ ջրաերկրաբանություն, ուսումն. ձեռնարկ, 258 էջ, տպ. 250:
9. *Ավետիսյան Դավիթ*, Մարդու իրավունքներ և հիմնարար ազատություններ, ուսումն. ձեռնարկ, 204 էջ, տպ. 500:
10. *Ավետիսյան Կ. Լ.*, Ասիմտորական մեթոդներ, ուսումն. ձեռնարկ, 120 էջ, տպ. 150:
11. *Ավետիսյան Հ. Գ., Ավետիսյան Պ. Ս.*, Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. XI-VI դարերում, մենագրություն, 400 էջ, տպ. 200:
12. *Ավետիսյան Յու. Ս.*, Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն, 290 էջ, տպ. 1000:
13. *Ասլանյան Լ. Ս., Հակոբյան Ռ. Ս., Չիլինգարյան Յու. Ս.*, Ոչ գծային ֆիզիկայի ներածություն, ուսումն. ձեռնարկ, 180 էջ, տպ. 200:
14. *Ավագյան Արծրուն*, Սփյուռքահայ դասական պատմվածքը, 288 էջ, տպ. 500:
15. Աստվածաբանության ֆակուլտետի տարեգիրք, Ա., գիտ. հոդվածների ժողովածու, 400 էջ, տպ. 500:
16. Արևելագիտության հարցեր, հատ. VI, գիտ. հոդվածների ժողովածու, 380 էջ, տպ. 300, տպագրվել է Գ. Կյուլպենկյան հիմնարկության հովանավորությամբ:
17. Աշխարհագրության արվեստն ու գիտությունը, կազմող և թարգմանիչ Կամո Ալեքսանյան, 100 էջ, տպ. 150:
18. Ասպիրանտական ժողովածու, ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների հոդվածները, 200 էջ, տպ. 200:
19. *Բակունց Ակսել*, Սթնաձոր, Կյորես, 390 էջ, տպ. 500:
20. *Բարխուդարյան Վ.*, Մակրոմոլեկուլները լուծույթներում, ուսումնական ձեռնարկ, 130 էջ, տպ. 100:
21. *Բաղդասարյան Հ. Հ., Գանձապետյան Մ. Ա., Մակարյան Ա. Հ., Մինասյան Հ. Ա.*, Էլեկտրականություն և մագնիսականություն, 146 էջ, տպ. 150:
22. *Բայրամյան Հրաչյա*, Վրաց գրականությունը V-XIX դարերում, ուսումն. ձեռնարկ, 350 էջ, տպ. 300:
23. *Բառլեզիգյան Արամ*, Արդի ֆրանսերենի բառագիտության ձեռնարկ, 150 էջ, տպ. 300:
24. *Բարսեղյան Տ. Կ.*, Գործարարական իրավունք, ուսումն. ձեռնարկ, 258 էջ, տպ. 500:
25. *Բեքմեզյան Ալվարդ*, Սիֆակիրառության բնույթը արդի հայ արձակում, մենագրություն, 158 էջ, տպ. 500:
26. *Բոյնագրյան Վ. Ռ.*, Հայկական լեռնաշխարհի լճերը (ռուսերեն), մենագրություն, 258 էջ, տպ. 150:
27. Բնական ջրերի անալիզի մեթոդներ, ուսումն. ձեռնարկ, 98 էջ, տպ. 100:
28. Բայական կապակցությունների անգլերեն-ռուսերեն-հայերեն բառարան, 120 էջ, տպ. 300:
29. *Գաբրիելյան Վազգեն*, Սփյուռքահայ գրականություն, ուսումն. ձեռնարկ, 2-րդ բարեփոխված հրատարակություն, 300 էջ, տպ. 500:
30. *Գաբուզյան Կարինե*, Քաղաքական մշակույթ, հատուկ դասընթաց, 92 էջ, տպ. 100:
31. *Գրիգորյան Ա. Կ., Սիմոնյան Ա. Հ.*, ՈՒսանողական հարցումների կազմակերպման փորձը Երևանի պետական համալսարանում, 55 էջ, տպ. 300:
32. *Գրիգորյան Սուսաննա*, Հայերեն գունանունները բույսերի և կենդանիների անվանումներում, 78 էջ, տպ. 200:
33. *Գրիգորյան Վ. Հ.*, Հոգեֆիզիոլոգիա, դասագիրք, 278 էջ, տպ. 300:
34. *Գևորգյան Է. Ս., Յավրոյան Ժ. Վ.*, Սննդամթերքի ֆիզիկաքիմիական հատկությունները, ուսումնամեթոդական ձեռնարկ, 102 էջ, տպ. 100:
35. *Գրիգորյան Ս. Կ., Ադամյան Ռ. Խ.*, Թթվածին և օզոն, ուսում. մեթոդ. աշխատանք, 48 էջ, տպ. 150:
36. *Դալալյան Մանանա*, Կոմիկականի լեզվաբանաստեղծական վերլուծության առանձնահատկությունները, դիդակտիկ մեթոդական ձեռնարկ, 42 էջ, տպ. 100:

37. *Դենի դը Ռուժմոն*, Սերը և արևմուտքը, ֆրանսերենից թարգմանեց Ալ. Թոփչյանը, 430 էջ, տպ. 500, հրատարակվել է Գ. Կյուլպենկյան հիմնարկության հովանավորությամբ:
38. *Դիլբանդյան Ս. Ա., Հարությունյան Ա. Ռ., Ղազինյան Գ. Մ., Ղուկասյան Հ. Հ.*, ՀՀ դատարանակազմությունը և իրավապահական մարմինները, ուսումն. ձեռնարկ, 3-րդ բարեփոխված հրատարակություն, 480 էջ, տպ. 500:
39. *Դիլբարյան Ն., Խաչատրյան Ա.*, Հայերենի բնիկ և փոխառյալ բառերը, դասախոսություն, 92 էջ, տպ. 200:
40. Երևանի պետական համալսարանում պաշտպանված ատենախոսությունների մատենագիտություն (1990-1994թթ.), պրակ 6, 150 էջ, տպ. 200:
41. *Ենգիբարյան Վ. Գ.*, Դատական փորձաքննությունների արդի հիմնախնդիրները, մենագրություն, 280 էջ, տպ. 500:
42. ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի պիդ մարմնի ֆիզիկայի ամբիոն – 50 տարի, 115 էջ, տպ. 100:
43. *Զատիկյան Ա. Թ.*, Անգլերեն լեզվի ուսումնական ձեռնարկ տնտեսագիտական բուհերի համար, 230 էջ, տպ. 500:
44. *Զաքարյան Լիլիթ*, Աղջոց սուրբ Ստեփանոս վանքը, հայերեն և ֆրանսերեն, 280 էջ, տպ. 300:
45. *Թաթայան Ա. Հ.*, Գործի քննությունը քրեադատավարական գործառույթների համակարգում (համեմատահիրավական վերլուծություն), մենագրություն, 280 էջ, տպ. 300:
46. *Թումանյան Ս. Ռ.*, Անգլերենի դասագիրք ֆիզիկայի, ռադիոֆիզիկայի ֆակուլտետների ուսանողների համար, 200 էջ, տպ. 200:
47. Ժուռնալիստիկա, պրակ Ը, հոդվածների ժողովածու, 338 էջ, տպ. 300:
48. *Ժամկոչյան Հայկազ*, Հայ ժողովրդի պատմություն, հին շրջան, 358 էջ, տպ. 500, հրատարակվել է Գ. Կյուլպենկյան հիմնարկության հովանավորությամբ:
49. Իրավագիտության արդի խնդիրները, հեղ. խմբ., հոդվածների ժողովածու, 330 էջ, տպ. 500:
50. *Խաչատրյան Ա., Մարգարյան Շ.*, Քիմիա յում գործածվող ֆիզիկական մեծությունների նշանակությունը, ուսումն. ձեռնարկ, 42 էջ, տպ. 200:
51. *Խառատյան Ալբերտ*, Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախի պատմություն, XV – XVll դարեր, 358 էջ, տպ. 500, հրատարակվել է Գ. Կյուլպենկյան հիմնարկության հովանավորությամբ:
52. *Խաչատրյան Հ. Լ., Մանուկյան Խ. Վ., Խառատյան Ս. Լ.*, Քիմիական խթանման երևույթը ԲԻՍ պրոցեսներում և նրա կիրառությունները, ուսումնամեթոդական աշխատանք, 98 էջ, տպ. 100:
53. Կիսահաղորդչային միկրո և նանոէլեկտրոնիկա, 6-րդ միջազգային գիտաժողովի նյութերը, 194 էջ, տպ. 110:
54. *Հակոբյան Թ.*, Պատմական Հայաստանի աշխարհագրություն, 5-րդ հրատարակություն, տպագրվել է պետական պատվերով, 530 էջ, տպ. 500:
55. *Հաջի-Հակոբյան Ա. Ե., Գրիգորյան Լ. Լ.*, Անգլերեն-հայերեն բառարան, միջազգային հարաբերությունների, քաղաքագիտության ու դիվանագիտության առնչվող տերմինների և արտահայտությունների, 210 էջ, տպ. 500:
56. Հայ ժողովրդի պատմության քրիստոմատիա, 6 հատորով, հատ. 1, հին շրջան, կազմողներ՝ Պետրոս Հովհաննիսյան, Արտակ Մովսիսյան, 578 էջ, տպ. 500, տպագրվել է Գ. Կյուլպենկյան հիմնարկության հովանավորությամբ:
57. *Հարությունյան Ռ. Մ., Հարությունյան Լ. Ռ.*, Ջրային միջավայրում ՍՄՆ-ի միգելագոյացման և սոլյուբիլացման գործընթացի ուսումնասիրությունը, ուսումնամեթոդական աշխատանք, 38 էջ, տպ. 100:
58. *Հայրապետյան Ֆ.*, Ֆենոլոգիայի հայերեն-ռուսերեն-անգլերեն բառարան, 130 էջ, տպ. 500, տպագրվել է Գ. Կյուլպենկյան հիմնարկության հովանավորությամբ:
59. *Հովհաննիսյան Գ. Գ., Գևորգյան Ա. Լ.*, Մարդու մոլեկուլային բջջագենետիկա, ուսումնամեթոդական ձեռնարկ, 98 էջ, տպ. 100:
60. *Հովհաննիսյան Լ.*, Կաթնասունների անատոմիան առնետների օրինակով, ուսումնամեթոդական աշխատանք, 75 էջ, տպ. 100:
61. *Հովակիմյան Լուսիկ*, Լեզվաբանական մոզաիկա, ուսումն. ձեռնարկ, 132 էջ, տպ. 200:
62. *Ղազարյան Սերոբ*, Հայոց լեզվի պատմություն, 3-րդ հրատարակություն, տպագրվել է Լիբանանում, 550 էջ, տպ. 1000:
63. *Ղուկասյան Հրայր*, Քրեական գործերով պաշտպանության իրականացման տակտիկան և մեթոդիկան, դասախոսություն, 82 էջ, տպ. 100:
64. *Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Հ. Մ.*, Նորահայտ բառեր գրաբարում, 112 էջ, տպ. 300, տպագրվել է Գ. Կյուլպենկյան հիմնարկության հովանավորությամբ:

65. *Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Հ. Ս.,* Գրաբարի ձեռնարկ, 7-րդ հրատարակություն, 450 էջ, տպ. 500:
66. *Մարգարյան Մ.,* Գերմաներեն տեքստերի ժողովածու գրականագետ մանգիստրոսների համար, 108 էջ, տպ. 150:
67. *Մալխասյան Արմեն* (կազմող), Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի, հատ. Գ, 438 էջ, տպ. 500, տպագրվել է Գ. Կյուլպենկյան հիմնարկության հովանավորությամբ:
68. *Մալխասյան Ա. Ա.*, Հեղինակային իրավունքի միջազգային իրավական նորմերը և ՀՀ հեղինակային օրենսդրությունը, 250 էջ, տպ. 200:
69. *Մանասյան Կ. Ա.*, Սիրտ-թոքային վերակենդանացման մինչբժշկական մեթոդների ուսուցում, ուսումնամեթոդական աշխատանք, 40 էջ, տպ. 200:
70. *Մինասյան Մ.*, Քաղաքական գործունեություն և անհատ, մենագրություն, 270 էջ, տպ. 500:
71. Մնացականյան Լարիսա, Հոդվածներ, ուսումնասիրություններ, 250 էջ, տպ. 200:
72. *Մելքոնյան Ա.* (կազմող), Արդի արևմտյան սոցիոլոգիայի քրիստոմատիա, ուսումն. ձեռնարկ, 320 էջ, տպ. 300:
73. *Մելքոնյան Նվարդ*, Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդները PR-ում, ուղեցույց, 50 էջ, տպ. 100:
74. *Մելքոնյան Նվարդ*, Քաղաքական PR և իմիտացիա, ուղեցույց, 70 էջ, տպ. 100:
75. *Միրզոյան Հրաչուհի*, Սեղիա պլանավորում և PR տեքստեր, ուղեցույց, 82 էջ, տպ. 100:
76. *Միրաքյան Ռ.*, Հաղիսագիտության հիմունքներ, ուսումն. ձեռնարկ, 180 էջ, տպ. 200:
77. *Հովսեփյան Վ. Ե.*, Տնտեսագիտության տեսություն, ուսումնական ձեռնարկ, 88 էջ, տպ. 300:
78. *Մելիքյան Ռուբեն*, Վերաքննությունը արտակարգ իրավիճակներում, 228 էջ, տպ. 500:
79. *Մկրտչյան Նելլի*, Հունարեն-հայերեն բառարան, 398 էջ, տպ. 500:
80. *Մխիթարյան Լ.*, Ազգային ինքնաճանաչողությունը Հովհաննես Թումանյանի հրապարակախոսություններում, մենագրություն, 150 էջ, տպ. 100:
81. *Մուրադյան Սամվել*, Գրական հանգրվաններ, 2-րդ գիրք, 380 էջ, տպ. 500, տպագրվել է պետական պատվերով:
82. *Մատենագիրք Հայոց*, մատենաշար, հատ. Զ, Ը դար, 1100 էջ, տպ. 1000, տպագրվել է Գ. Կյուլպենկյան հիմնարկության հովանավորությամբ:
83. *Մատենագիրք Հայոց*, մատենաշար, հատ. Է, Ը դար, 1000 էջ, տպ. 1000, տպագրվել է Գ. Կյուլպենկյան հիմնարկության հովանավորությամբ:
84. *Մատենագիրք Հայոց*, մատենաշար, հատ. Ը, Շարակնոց, 870 էջ, տպ. 1000, տպագրվել է Գ. Կյուլպենկյան հիմնարկության հովանավորությամբ:
85. Սինչբժշկական օգնությունը բնակչության արտակարգ իրավիճակներում, հեղ. խմբ., 228 էջ, տպ. 150:
86. *Նազարյան Կարինե*, Երեխաների օժտվածության հոգեբանական բնութագիրը, 28 էջ, տպ. 30:
87. *Նիգիյան Ս. Ա., Խաչոյան Լ. Օ., Հակոբյան Վ. Ռ., Սարգսյան Լ. Ա.,* Թարգմանության տեսության դասընթացի խնդիրների լուծման մեթոդական ցուցումներ, 88 էջ, տպ. 150:
88. *Շահաբասյան Կ.*, Գերհոսելիություն և գերհաղորդականություն, հատուկ դասընթաց, 98 էջ, տպ. 100:
89. *Շևալիե*, Կիլիկյան Հայաստանի և հոգևորասպետական միաբանությունների փոխհարաբերությունների պատմությունից, ֆրանս. թարգմանեց Վ. Պողոսյանը, 125 էջ, տպ. 500:
90. *Շարուրյան Հայկանուշ*, Նորման Սեյլեր, Սպիտակ ձեզրը, ուսումնամեթոդական ուղեցույց, 158 էջ, տպ. 200:
91. *Պետրոսյան Դավիթ*, Գրական բանավեճերը դարասկզբի հայ մամուլում, մենագրություն, 368 էջ, տպ. 250:
92. *Պետրոսյան Ռ. Գ.*, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, երրորդ հրատ., 500 էջ, տպ. 500:
93. *Պետրոսյան Արմենուհի*, Վահրամ Փափազյանի «Հետադարձ հայացք» հուշագրության լեզուն և ոճը, մենագրություն, 150 էջ, տպ. 200:
94. *Պետրոսյան Ա. Ի.*, Բազմաչափ կոմպլեքս անալիզի հիմունքներ, դասագիրք, 150 էջ, տպ. 200:
95. *Սարգսյան Արամ*, Գերմաներեն տեքստերի ժողովածու գրականագետ մագիստրոսների համար, 102 էջ, տպ. 100:
96. *Սարգսյան Մուրազ*, Հուշեր, դժվարին մանկություն, 104 էջ, տպ. 1000:
97. *Սարգսյան Հ. Հ., Սարգսյան Ռ. Հ.*, Երկրաբանական տերմինների եռալեզու (ռուսերեն, հայերեն, անգլերեն) բառարան, 800 էջ, տպ. 400, «Զանգակ» հրատարակչության հետ համատեղ:
98. *Սաթյան Աշոտ*, Պատկերագիրք, 100 էջ, տպ. 500:
99. *Սաքայան Դորա*, Արևելահայերենը անգլիախոս աշխարհի համար՝ զուգադրական մոտեցմամբ, 580 էջ, տպ. 1000:

100. *Սիմոնյան Հակոբ*, Վերին նավեր, մենագրություն, 318 էջ, տպ. 500, տպագրվել է Գ. Կյուլպենկյան հիմնարկության հովանավորությամբ:
101. *Ստանիսլավսկի, Չեխով,* Դերասանի տեխնիկայի մասին, թարգմանեց և հրատ. պատրաստեց Ռ. Զրբաշյանը, ուսումն. ձեռնարկ, 248 էջ, տպ. 500:
102. *Վարդանյան Ս. Վ., Մուշեղյան Լ. Գ., Մանուչարյան Լ. Ա.*, Անալիզի լուսաչափական եղանակներ, ուսումնամեթոդական աշխատանք, 120 էջ, տպ. 150:
103. *Վարդանյան Ս. Վ.*, Ռեգիոնալ երկրաբանության դասընթաց, 50 էջ, տպ. 100:
104. *Տոնոյան Լիլիթ*, Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր, մենագրություն, 136 էջ, տպ. 500:
105. Տեսական փորձարարական և կիրառական հոգեբանության հիմունքները, երիտասարդ գիտնականների հոդվածների ժողովածու, 172 էջ, տպ. 120:
106. Քաղաքացիական իրավունք, գործնական պարապմունքների ձեռնարկ, 2-րդ մաս, 178 էջ, տպ. 500:
107. ՈՒսուցման պրոցեսների կազմակերպման մի քանի հարցեր, հեղ. խմբ., 104 էջ, տպ. 100:
108. ՈՒսուցման մեթոդները հայոց լեզվից, 28 էջ, տպ. 100:
109. *Օհանյան Լ. Պ., Ենգիբարյան Վ. Գ.*, Կրիմինալիստական տեխնիկա, վարժություններ, 120 էջ, տպ. 300:
110. *Օհանյան Լևոն*, Կրիմինալիստիկան ՀՀ-ում, մենագրություն, 408 էջ, տպ. 500:
111. *Օգանովա Ռ. Վ., Ղուկասյան Հ. Ա., Շահրամանյան Լ. Վ.*, Գերմաներեն-ռուսերեն-հայերեն բառարան, երկրագիտություն ուսումնասիրողների համար, 218 էջ, տպ. 200:
112. *Áîéíàðÿí Â.,* Ñêëîíû è ñêëîíåíèå ïðîöåññû Àðìÿíñêîãî íàãîðüÿ, ìîíîãð., 270 ñòð., 200 ýêç.
113. *Ãàáóçÿí À. À.*, Ïðîáëåìû ïðåñòóïíîñòè â Ðåñïóáëèêå Àðìåíèÿ â ïåðåõîäíûé ïåðèîä, 256 ñòð., 300 ýêç.
114. *Ìàðêàðÿí Ð. À.*, Î÷åðê ðóññêîé ìîðôîëîãèè â ñîñòàâëåíèè àðìÿíñêîé, 178 ñòð., 250 ýêç.
115. *Øàêàðÿí Í. Ã., Îðëóãÿí Ã. Þ.,* Ó÷åáíûå ïîñîáèå ïî ðóññêîìó ÿçûêó äëÿ ñòóäåíòîâ êèç÷åñêîãî è ðàäèîêèç÷åñêîãî êàôåäðîâ, 138 ñòð., 150 ýêç.
116. *Ìèíàñÿí Ì. Ì.*, Íåëèíåéíûå âîëíû è êîëåáàíèÿ â êèç÷åñêè àêòèâíûõ äèôðàêöèîííûõ ñðåäàõ, ìîíîãð., 188 ñòð., 200 ýêç.
117. Ïðèêëàäíûå âîïðîñû ãåîðãàôèè âîðíûõ îáëàñòåé àëüïèéñêîãî ãèìàëàéñêîãî ïîÿñà, ñáîðíèê, 190 ñòð., 200 ýêç.
118. *Ðóññêèé ÿçûê*, Òåîðèÿ è ïðàêòèêà, ñáîðíèê, 230 ñòð., 300 ýêç.
119. *Ðóññêî-àðìÿíñêèé ñëîâàðü* – ñïðàâî÷íèê ñîìàòè÷åñê. ôðàçåîëîãèçìîâ, 105 ñòð., 300 ýêç.
120. Ì åæäóíàðîäíàÿ íàó÷íàÿ êîíôåðåíöèÿ, ïîñâÿùåííàÿ 70-ëåòèþ ðóñèñòèêè â Àðìåíèè è 30-ëåòèþ ôàêóëüòåòà ðóññêîé êëàññè÷åñêîé ÅÃÓ, ìàòåðèàëû, 302 ñòð., òèðàæ 150.
121. *Համբարձումյան Ն. և այլն*, Texts for dictation, ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ուսանողների համար, 188 էջ, տպ. 500:
122. *Համբարձումյան Ն. և այլն*, Texts for dictation, Անգլերենը որպես երկրորդ լեզու ուսանողների համար, 289 էջ, տպ. 500:
123. *Gabricljan J., Manukjan H., Kopaljan N., Mnatsakanjan G.,* Praktische deutsche grammatik, 194 էջ, տպ. 300:
124. Բանբեր Երևանի համալսարանի, Մատենագիտություն (1967-2006), N 1, էջ 246, տպ. 300:
125. Բանբեր Երևանի համալսարանի, N 2, էջ 244, տպ. 300:
126. Բանբեր Երևանի համալսարանի, N 3, էջ 239, տպ. 300:
127. Գիտական տեղեկագիր, N 1, էջ 156, տպ. 150:
128. Գիտական տեղեկագիր N 2, 156 էջ, տպ. 150:
129. Գիտական տեղեկագիր N 3, 160 էջ, տպ. 150:

ՀԱՆԴԵՍՆԵՐ

1. **«ԵՊՀ գիտական տեղեկագիր»** - *բնական գիտություններ, լույս է տեսնում 1925 թ., տարեկան 3 համար, հայերեն և ռուսերեն*

Գլխավոր խմբագիր՝ *Հարությունյան Ռուբեն Միքայելի, կենս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Ճշգրիտ և բնական գիտությունների բնագավառի (մաթեմատիկա, մեխանիկա, ինֆորմատիկա, ֆիզիկա, ռադիոֆիզիկա, քիմիա, երկրաբանություն, աշխարհագրություն) հոդվածների հանդես: Լույս է տեսնում տարին 3 համարով, պարբերաբար՝ ապրիլ, հուլիս, դեկտեմբեր ամիսներին: Տպագրվում են նաև համալսարանի անվանի գիտնականների ակնարկային հոդվածներ, որոնք պատվիրվում են խմբագրության կողմից: Պարբերաբար տպագրվում են անվանի գիտնականների հոբելյանների, ինչպես նաև վերոհիշյալ մասնագիտությունների գծով կազմակերպված նշանակալի գիտաժողովների, կոնֆերանսների, դպրոցների մասին նյութեր:

Հաշվետու ժամանակահատվածում լույս է տեսել «Գիտական տեղեկագիր» հանդեսի 3 համար: Ինչպես միշտ, այս համարներում էլ տեղ են գտել ճշգրիտ և բնական գիտությունների բոլոր բնագավառներից գիտական հոդվածներ, հաղորդումներ, հոբելյաններին վերաբերող նյութեր և այլն:

2007 թ-ի հուլիսից հանդեսը տեղ է գտել համալսարանի ինտերնետային կայքում՝ www.ysu.am հասցեով:

2. **«Բանբեր Երևանի համալսարանի»** - հասարակական գիտություններ, քառամսյա հանդես

Գլխավոր խմբագիր՝ *Միրզոյան Հրաչիկ Ղազարի, փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Հիմնադրվել է 1967 թ., տարեկան լույս է տեսնում երեք անգամ՝ հայերեն (ռուսերեն ամփոփումով), ինչպես նաև՝ յուրաքանչյուր համարում որոշ թվով հոդվածներ ռուսերեն (հայերեն ամփոփումով):

Հանդեսն ունի հինգ բաժին՝ հոդվածներ, բանավեճ և քննարկում, հրապարակումներ և հաղորդումներ, գրքերի տեսություն, գիտական կյանք:

Յուրաքանչյուր տարվա վերջին համարում տպագրվում է տվյալ տարում հրատարակված նյութերի ցանկը:

Ծավալը՝ 20 հրատարակչական մամուլ, տպաքանակը՝ 300 օրինակ:

2003 թվականից համալսարանի Սեծ խորհրդի որոշմամբ հանդեսը ԵՊՀ ռեկտորի կողմից հաստատված ցուցակով հասցեատերերին է առաքվում անվճար:

Հաշվետու տարում լույս է տեսել հանդեսի 3 համար:

ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ

Հաշվետու ժամանակաշրջանում ձեռք են բերվել ուսանողական նստարաններ, սեղաններ, գրատախտակներ, պահարաններ և այլ գույք՝ 56 մլն դրամի չափով, օդորակիչներ, սառնարաններ, լաբորատոր սարքավորումներ՝ 14 մլն դրամի չափով, բենզին, դիզվառելիք և քսայուղեր՝ 16.5 մլն դրամի չափով, սպորտային գույք և սպորտային հագուստ՝ 3 մլն դրամի չափով:

Դասագիրքացվել է Երևանի պետական համալսարանին պատկանող աստղաղիտարանը, որը հագեցվել է ժամանակակից սարքավորումներով, այդ թվում՝ լուսաընդունիչով և աստղաղիտակով՝ 766 հազար դրամ արժողությամբ:

Վերանորոգվել է գրադարանի գրապահոցը, որտեղ տեղադրվել են 100 նոր մետաղյա գրապահարաններ՝ 7.6 մլն դրամի չափով: Գրադարանի համար ձեռք են բերվել ժամանակակից սարքավորումներ՝ 600 հազար դրամ արժողությամբ:

Կենսաբանության և քիմիայի ֆակուլտետների լաբորատորիաների համար ձեռք են բերվել մասնագիտական սարքավորումներ, այդ թվում՝ հալման կետի որոշման սարք և ավտոկլավ՝ 1.37 մլն դրամի չափով:

Ռադիոֆիզիկայի ֆակուլտետում գործարկվել է տերահերցային ֆիզիկայի լաբորատորիան, որի համար ձեռք են բերվել գերժամանակակից սարքավորումներ, այդ թվում՝ ֆեմտովայրկյանային լազեր և կարճ տևողությամբ իմպուլսների ուժեղացման և դետեկտման սարքեր՝ շուրջ 45 մլն դրամի չափով:

Դեղագործական քիմիայի ամբիոնին կից բացվել է դեղատնային արտադրական լաբորատորիան, որի համար ձեռք են բերվել 6.5 մլն դրամի չափով մասնագիտական սարքավորումներ և լաբորատոր միջոցներ:

2006/2007 ուսումնական տարում լայնածավալ աշխատանքներ են իրականացվել նաև կապիտալ շինարարության, շենքերի ու շինությունների վերանորոգման ուղղությամբ: Վերանորոգման աշխատանքների մեծ չափաբաժինը կատարվել է կենտրոնական մասնաշենքում: Բազալտե նախկին աստիճաններից անձրևաջրերը անարգել մուտք էին գործում ներքնահարկ, որտեղ գտնվում են բարձր լարման տրանսֆորմատորները, և ամեն րոպե դրանք կարող էին մեծ վթարի պատճառ դառնալ: Վերանորոգվել է ԵՊՀ գլխավոր մուտքի աստիճանահարթակը: Տեղադրվել են բազալտե նոր աստիճաններ, ամբողջովին նորացվել է նաև գլխավոր մուտքի սալահատակը: Վերանորոգման զգալի աշխատանքներ են կատարվել նաև կենտրոնական մասնաշենքի ներսում: Նախ և առաջ բարեկարգվել է կենտրոնական մասնաշենքի ճեմասրահը: Ամբողջովին վերանորոգվել են մասնաշենքի երկրորդ, չորրորդ և վեցերորդ հարկաբաժինների աշխատասենյակները, միջանցքները, սանհանգույցները: Վերանորոգվել են երրորդ և չորրորդ հարկերի աստիճաններին հարող երեսպատման սալիկները: Աշխատասենյակների մեծ մասում տեղադրվել են օդափոխիչներ: Բոլորովին նոր ալյումինե ցուցափեղկեր են տեղադրվել գլխավոր մուտքին հարող մասում, ճեմասրահում, գրադարանում և մասնաշենքի պահեստային մասում: Ամբողջովին մաքրվել է տարիների ընթացքում նկուղներում և տանիքում հավաքված աղբը: Հիմնովին փոխվել է տանիքի ջրահեռացման խողովակների մի մասը:

Ծավալուն աշխատանքներ են ձեռնարկվել կենտրոնական մասնաշենքի դիմացն ընկած և նրան հարող տարածքներում: Իրականացվել է այգու տարածքն ընդգրկող ոռոգման ցանցի, ջրավազանի և ցայտաղբյուրների, ինչպես նաև նրանց աշխատանքն ապահովող պոմպային համակարգի վերանորոգումը: Ամբողջովին ասֆալտապատվել են կենտրոնական մասնաշենքի ծառուղիներն ու հրապարակը, տնկվել են նոր ծառեր, ներկվել են առաջին հարկի ու գրադարանի պատուհանների ճաղավանդակները, էլեկտրական սյուները, խողովակաշարը, մետաղյա դարպասները, պատրաստվել և տեղադրվել են նոր նստարաններ: ԵՊՀ 3-րդ և 4-րդ մասնաշենքերում կատարվել են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ: Ապամոնտաժվել և տեղադրվել են ջեռուցման նոր մարտկոցներ, փոխվել, ներկվել և ջերմամեկուսացվել են տանիքի խողովակները, տեղադրվել են օդհան բաքեր, վերանորոգվել են ջրագծերը, փոխվել են տանիքի ջրահեռացման խողովակները: Իրավագիտության և միջազգային հարաբերությունների ֆակուլտետների մասնաշենքում կատարվել են աշխատասենյակների, լսարանների, միջանցքների մասնակի վերանորոգումներ: Մյուս կողմից, սակայն, ձևափոխվել և հիմնովին վերանորոգվել են «Ռոտոպրինտի» ինչպես նախկին, այնպես էլ ներկայիս զբաղեցրած սենյակները, փոխվել են դռները և պատուհանները: Հիմնովին վերանորոգվել են ջրագծերը, փոխվել են տանիքի ջրահեռացման խողովակները: ԵՊՀ 1-ին և 2-րդ մասնաշենքերում վերանորոգվել են աշխատասենյակներ, լսարաններ, միջանցքների և սանհանգույցների մեծ մասը: Լիովին վերակառուցվել են մուտքի աստիճանները և իրականացվել են սանտեխնիկական լայնածավալ աշխատանքներ: Մասնաշենքում նկուղային հարկի

պատուհանների համար պատրաստվել և տեղադրվել են թիթեղյա ծածկեր, պատուհանների առջև պատրաստվել են բետոնապատնեշներ, որով հնարավոր է եղել կանխել անձրևաջրերի մուտքը նկուղային հարկ: Ամբողջովին ասֆալտապատվել է Ալեք Մանուկյան փողոցի կողմից մասնաշենքի երկայնությամբ հատվածը: Այստեղ ևս մաքրվել է տանիքը, նկուղը, պահեստը և մասնաշենքի ընդհանուր տարածքը:

Կաթսայատանը տեղադրվել են ավտոմատ նոր գազայրիչներ, վերանորոգվել են կաթսաները և տանիքը: Հինգերորդ մասնաշենքում վերանորոգման աշխատանքները կրել են համալիր բնույթ. վերանորոգվել են մի քանի աշխատասենյակներ և մասնաշենքի 2-րդ մուտքի աստիճանահարթակը: Բետոնապլցվել է նկուղային հարկի (այստեղ է գտնվում Էկոլոգիայի ամբիոնը) ջրահեռացման հորանցքը (շախտա): Բացի դրանից, այս մասնաշենքում ևս կատարվել են սանտեխնիկական լայնածավալ աշխատանքներ. վերանորոգվել է ջեռուցման ամբողջ համակարգը, հիմնովին վերանորոգվել են ջրագծերը, կատարվել է կոյուղու մասնակի վերանորոգում և այլն: Այս մասնաշենքում հիմնովին փոխվել է տանիքը: Աբովյան 52 հասցեում գտնվող վեցերորդ մասնաշենքում վերանորոգվել են աշխատասենյակներ ու լսարաններ, հիմնովին բացվել է նորաստեղծ հնագիտության գիտահետազոտական լաբորատորիան, կատարվել է տանիքի մասնակի վերանորոգում: ԵՊՀ յոթերորդ մասնաշենքում իրականացվել են որոշ անհետաձգելի շինարարական աշխատանքներ: Մասնաշենքի հետնամասում կառուցվել է պատ, նույն մասում կառուցվել է նաև բետոնե պատնեշ, վերակառուցվել են գլխավոր մուտքի պատշգամբները, ընդարձակվել է համակարգչային սենյակը, վերանորոգվել են որոշ աշխատասենյակներ և լսարաններ: Մասամբ վերանորոգվել են դահլիճները: Պատրաստվել և տեղադրվել են նկուղային հարկի պատուհանների համար թիթեղյա ծածկեր, փոխվել են տանիքի անձրևատար խողովակները: ԵՊՀ ութերորդ մասնաշենքում վերանորոգվել են առանձին լսարաններ և աշխատասենյակներ, կատարվել է տանիքի մասնակի վերանորոգում: Սպորտային համալիրի մասնաշենքում կատարվել է տանիքի մասնակի վերանորոգում, փոխվել են տանիքի անձրևատար խողովակները, մաքրվել է տարածքը: ԵՊՀ օտարերկրյա քաղաքացիների նախապատրաստական ֆակուլտետի մասնաշենքում վերանորոգվել է կոյուղին, հիմնովին վերանորոգվել են ջրագծերը, կառուցվել է պարիսպ: ԵՊՀ աստղադիտարանում ևս կատարվել են վերանորոգման աշխատանքներ, մասնավորապես կատարվել է աշխատասենյակների մասնակի վերանորոգում, շենքի գազաֆիկացում և տանիքի վերանորոգում: Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայում վերանորոգվել է կաթսայատունը, տեղադրվել են նոր գազայրիչներ և հիմնովին փոխվել է տանիքի ծածկը:

ԵՊՀ համակարգչային տեխնիկայի, լոկալ ցանցի ներկա հզորությունները եւ զարգացման հեռանկարները

Ժամանակակից գիտությունը և, կյանքն ընդհանրապես, 21-րդ դարում հնարավոր չէ պատկերացնել առանց տեղեկատվական տեխնոլոգիաների, մասնավորապես առանց համակարգիչների և ինտերնետի: Այս տեսանկյունից Երևանի պետական համալսարանը, հանդիսանալով ՀՀ գիտության և կրթական հիմնասյուներից մեկը, չի կարող հետ մնալ արդի տեխնոլոգիաներից, և ժամանակակից մարտահրավերներին դիմակայելու, աշխարհի գիտական մտքին ինտեգրվելու համար գիտակրթական պրոցեսում կարևոր նշանակություն ունի վերը նշված տեխնոլոգիաների կիրառումը:

Այսօր ԵՊՀ բոլոր մասնաշենքերը, ներառյալ 6-րդ մասնաշենքը (սև շենքը), իրար միացված են օպտիկական մալուխներով, և իբրև առանձին լոկալ ցանց՝ դարձյալ օպտիկական մալուխներով միացված է գլոբալ ինտերնետ ցանցին, ինչը, ըստ էության, թույլ է տալիս օգտվել պրովայդերների կողմից տրամադրվող ցանկացած ծառայությունից:

Մինչև 2007 թ-ը այս հսկա ցանցը, ինչը թերևս Երևանում ամենամեծ ցանցերից է, սպասարկվում էր 1-2 հոգու կողմից, ինչը հնարավորություն չէր տալիս իրականացնել և ապահովել շուրջ 1100 համակարգիչների, 10 սերվերների և բազմաթիվ հարակից ու ցանցային սարքավորումների անխափան և արդյունավետ աշխատանքը, որն ուսումնական պրոցեսի անբաժան մասը կարելի է համարել:

Մինչև 2007 թ-ը ԵՊՀ-ն ինտերնետին էր միացված «shared channel» սկզբունքով, այսինքն՝ նույն կանալով ինտերնետ էր տրամադրվում մեկից ավելի հաճախորդների, և արագությունը, կախված տվյալ պահին կանալում եղած հաճախորդների թվից, ընկնում էր, իսկ կապի որակը ուղղակի դառնում էր աննկարագրելի:

Բարեփոխումներից հետո՝ 2007 թ. փետրվարի 1-ից գործում է համակարգչային ցանցի և համակարգիչների սպասարկման բաժինը, որն ապահովում է ինչպես ցանցի, համացանցի (ինտերնետի), էլ.

փոստի անխափան և անվտանգ աշխատանքը, այնպես էլ համակարգչային տեխնիկայի արդյունավետ սպասարկումը: Բարեփոխումների արդյունքում թարմացվել են նաև սերվերների մի մասը. մասնավորապես թարմացվեց էլ. փոստի սերվերը, որը նախկինում գործում էր Pentium 2 համակարգչի վրա և չէր բավարարում ԵՊՀ հզորություններին, ինչի արդյունքում տեղի էին ունենում էլ. փոստի աշխատանքի հաճախակի խափանումներ: Այդ խափանումների մի մասն էլ պայմանավորված էր խնդրի ծրագրային լուծումով:

Բարեփոխումներից հետո էլ. փոստի սերվերը այժմ գործում է «Core 2 Duo» պրոցեսորի հիման վրա, 250Gb կոշտ սկավառակով և 4Gb օպերատիվ հիշողությամբ, ինչը թույլ է տալիս մեծ արտադրողականությամբ և հուսալիությամբ մշակել էլ. փոստի շուրջ 600 օգտագործողների էլ. նամակները: Այսօր ամբողջ աշխարհը պայքարում է, այսպես կոչված, «սպամ»-երի, այսինքն՝ անհնում նամակների, ռեկլամների դեմ, ինչը մեզ մոտ մինչև բարեփոխումները չէր իրականացվել, որն էլ թերևս հանդիսանում էր էլ. փոստի սերվերի խափանումների հիմնական պատճառներից մեկը: Այժմ նոր սերվերի վրա աշխատում են հակասպամային լուրջ ֆիլտրեր, որոնք ապահովում են նմանաբնույթ նամակների մոտ 85-90% բլոկավորում: Այս թիվը հնարավոր է հասցնել նույնիսկ 100%-ի, սակայն այս դեպքում վտանգ կա, որ ֆիլտրերը կարող են բլոկավորել նաև որոշակի քանակությամբ նորմալ նամակներ, ինչը մշտապես վերահսկվում է էլ. փոստի սերվերի ադմինիստրատորի կողմից:

Համեմատության համար նշենք, որ եթե հին սերվերի պրոցեսորի միջին ծանրաբեռնվածությունը օրվա ընթացքում «սպամերի» պատճառով մշտապես ~98%-ի սահմաններում էր, ապա այժմ այն ամենածանրաբեռնված պահին չի գերազանցում 7 %-ը:

Հակավիրուսային խնդրի լուծման համար առաջարկվել և այժմ իրականացվում է կենտրոնացված հակավիրուսային սերվերի գաղափարը, որի էությունը հետևյալն է. տեղադրված է հակավիրուսային սերվեր, որին ծրագրային եղանակով միացված են ԵՊՀ լոկալ ցանցի բոլոր համակարգիչները: Սերվերն օրվա ընթացքում մի քանի անգամ ինտերնետից ստուգում է արդյոք նոր թարմացումներ չկան: Որևէ թարմացման առկայության դեպքում սերվերը քաշում է այն և ավտոմատ կերպով տարածում իր բոլոր հաճախորդներին (օգտագործողներին), և նրանք նույնիսկ չեն էլ իմանում, թե իրենց համակարգիչը հակավիրուսային թարմացում կատարեց:

Այս լուծումը թույլ է տալիս կենտրոնացված եղանակով ղեկավարել բոլոր համակարգիչները՝ բարձրացնելով անվտանգության մակարդակը, ինչպես նաև տասնյակ անգամ խնայել թրաֆիկը՝ թարմացումները անելով ընդամենը մեկ համակարգչի՝ սերվերի վրա: Ծրագիրը թույլ է տալիս ստանալ նաև բազմատեսակ հաշվետվություններ օրվա, շաբաթվա, ամսվա և տարվա կտրվածքով, ինչպես նաև բարձր վտանգավորության աստիճան ունեցող վիրուսների հայտնաբերման դեպքում SMS հաղորդագրություն ուղարկել ադմինիստրատորին կամ անհրաժեշտության դեպքում անջատել վարակված համակարգիչը: Այդ հաշվետվությունների վերլուծությունը ադմինիստրատորին հնարավորություն է տալիս բլոկավորել վտանգավոր վեբ կայքերը, որոնք պարունակում են վտանգավոր վիրուսներ:

Բարեփոխումների կարևոր քայլ էր նաև ինտերնետի արագության և որակի բարձրացման հարցի լուծումը: Այժմ ԵՊՀ-ում կիրառվում է քարտային համակարգը, ինչի ներդրումը թույլ տվեց կապի արագությունը մի քանի անգամ մեծացնել և այժմ ԵՊՀ-ն ունի ոչ թե «shared channel», այլ ֆիքսված արագություն, ինչը մշտապես վերահսկվում է ինտերնետի ադմինիստրատորի կողմից: Այս լուծումը նա ինքնանպատակ չէր: Այն առաջ եկավ նախկին իրավիճակի բազմակողմանի վերլուծությունից հետո: Մասնավորապես, այցելած վեբ կայքերի վերլուծությունը ցույց տվեց, որ դրանց մի զգալի մաս են կազմում ինտերնետ ծանոթությունները, նկարներ ու վիդեո նյութեր պարունակող կայքերը, որոնք մեծ թրաֆիկ էին ծախսում և պարունակում բազմաթիվ վիրուսներ: Եվ այդպիսի կայքերի այցելության արդյունքում համալսարանը կրում էր նյութական վնասներ (ծախսվում էր մեծ թրաֆիկ, համակարգիչները փչանում էին):

Այսօր համալսարանի ամբողջ համակարգիչների (շուրջ 1073) միայն 48.6% կամ թվով 521-ն են կազմում Pentium 4: Համալսարանն ունի 312 տպիչ, որից 248-ը, այսինքն՝ մոտ 80% -ը լազերային է: Սակայն այստեղ էլ խնդիրներ կան նրանց քարտրիջների և բառաբանների հետ կապված: Այս տպիչների քարտրիջները նախատեսված են 3-4 լիցքավորման համար, որից հետո բառաբանները պետք է փոխել, մինչդեռ մեզ մոտ քարտրիջները լիցքավորվում են այնքան, մինչև որ վերջնականապես շարքից դուրս չեն գալիս: ԵՊՀ-ն ունի 64 սկաներ, որոնք առկա պահանջարկը ամբողջությամբ փակում են: Դրանք գտնվում են լավ վիճակում: Վերջին տարիներին դիպլոմային աշխատանքների պաշտպանության, տարբեր սեմինարների անցկացման համար կարևոր դեր են ստացել պրոյեկտորները: Այժմ ԵՊՀ-ն ունի ընդամենը 4 պրոյեկտոր, և քայլեր են ձեռնարկվում յուրաքանչյուր ֆակուլտետին գոնե մեկ հատ տրամադրելու համար:


Առկա համակարգչային ռեսուրսները ըստ տեսակի
600
500
400
300
200
100
0
521
147
77
109
28
2
48
31
79
18
2
2
8
1
P-IV
P-III
P-II
P-I
P ; P-MMX
notebook-P-IV
AMD>1000
AMD<1000
celeron>1000
celeron<1000
VIA-699
286
macintosh
SunSparc



Այդ համակարգիչները բաշխված են հետևյալ կերպ.


Ըստ ֆակուլտետների
120
100
80
60
40
20
0
48
21
64
123
67
54
12
70
13
16
4
82
13
8
35
38
12
18
9
39
17
ԱՄԹԵՍՏԻԿԱՅԻ
ՄԵԽԱՆԻԿԱՅԻ
ԻՆՖ. ԵՎ ԿՈՄ. ՍԻՍԹ.
ՖԻԶԻԿԱՅԻ
ՌԱԴԻՈՖԻԶԻԿԱՅԻ
ՔԻՄԻԱՅԻ
ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՔԻ. ՀԱՐԱԲ.
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՓԻԼԻՍՈՓ. ԵՎ ՀՈԳԵԲ.
ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ
ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ
ԺՈՒՌՆԱԼԻՍՏԿԱՅԻ
ՌՈՒԽ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ
ՌՈՒՍԱԼՈԳԵՐՄ. ԲԱՆԱՍ.
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ


Ըստ ստորաբաժանումների
120
100
80
60
40
20
0
3
12
2
2
7
21
9
70
54
19
111
ՄԻՆՉՀԱՄԱԼՍ. ԿՐԹ. ԿԵՆՏՐՈՆ
ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹ. ՎԱՐՉ.
ՀԱՄԱԼՍ. ԿՐԹ. ԶԱՐԳ. ՎԱՐՉ.
ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳ. ԿՐԹ. ՎԱՐՉ.
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏ. ՎԱՐՉ.
ՀԱՄԱՐԱԿ. ՀԵՏ ԿԱՊ. և ԼՐԱՏՎ. ՎԱՐՉ.
ՄԻՋԱԶԳ. ՀԱՄԱԳՈՐԾ. ՎԱՐՉ.
ՀԱՇՎԻՉ ԿԵՆՏՐՈՆ
ՀԱՇՎԻՉ ԿԵՆՏՐՈՆ(7-րդ ուս. մասնա...
ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ


Մոնիտորներ
450
400
350
300
250
200
150
100
50
0
6
251
33
1
3
399
311
64
2
LCD-19"
LCD-17"
LCD-15"
20"
19"
17"
15"
14"
13"


Հարակից սարքավորումներ
300
250
200
150
100
50
0
248
45
19
64
4
114
Print. Laser Jet
Print. Desk Jet
Print. Matrix
Scanner
Projetor
UPS

Վերջերս ձեռք է բերվել 40 հատ նոր Pentium 4 համակարգիչներ, որոնք բաշխված են՝ ըստ գրաֆիկի:



2006/2007 ՈՒՍՏԱՐՈՒՄ ԵՊՀ-ՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԻՇԱՐԺԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ www.ysu.am ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔԻ ԼՐԱՀՈՍԻ

[01.09.06] **ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՆՎԵՐԸ**
Սեպտեմբերի մեկին բոլոր առաջին կուրսեցիներին բաժանվեցին «Առաջին կուրսեցու ուղեցույց» փաթեթներ:

[05.09.06] **ՄԻՐԻԱՅԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՈՒՏԻՆ ԵՊՀ-ՈՒՄ**
Մեզ համար բարեկամ մի երկրի ու հարազատ ժողովրդի նկատմամբ սիրո եւ երախտագիտության զգացումը, որ յուրաքանչյուր հայի սրտում է, մեծանում ու ամրապնդվում է այսօր, երբ պատմությունը թույլ է տալիս տեսնել եւ գնահատել փաստերը:

[11.09.06] **ԵՊՀ ՌԵԿՏՈՐ ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՍԱՄՈՒԼԻ ԱՄՈՒԼԻՍԸ**
Լրացավ Երեւանի պետական համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Արամ Սիմոնյանի պաշտոնավարման 100 օրը:

[12.09.06] **ԻԻՀ ՄԵՋԼԻՍԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՍԱՅՐ ԲՈՒՀՈՒՄ**
«Հայերի եւ իրանցիների բարեկամությունը նման է ծառի, որի արմատները գտնվում են պատմության խորքում, իսկ հասակը եւ տերեւները այսօր մեր աչքի առջեւ են»:

[12.09.06] **ԵՊՀ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԸ ԵՐԴՎԵՑԻՆ**
Սեպտեմբերի 12-ին Երեւանի պետական համալսարանի մեծարման եւ առաջին կուրսեցիների երդման օրն էր: ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի առջեւ տեղի ունեցավ համերգ-միջոցառում:

[14.09.06] **ԿԱՐՈ ՀՈՎԱՍԱՓՅԱՆԸ ԿԴԱՍԱՎԻ ԱՇԽԱՐՀԻ 10 ԼԱՎԱԳՈՒՅՆ ԼԵՌՆԱԳՆԱՑՆԵՐԻ ՇԱՐՔԻՆ**
ԵՊՀ մշակույթի կենտրոնի նախաձեռնությամբ սեպտեմբերի 14-ին ամերիկահայ լեռնագնաց Կարո Հովասափյանը հանդիպեց Երեւանի պետական համալսարանի ուսանողների հետ:

[26.09.06] **ԱՅՍՕՐՎԱ ՀԱՄԱԿԱՐԳԻՉԸ ԿՐԹՈՒՄ Է ՎԱՂՎԱ ՍԱՄՆԱԳԵՏԻՆ**
«Սինովսիա» ընկերությունը Երեւանի պետական համալսարանին տրամադրել է Չարլզ Բեբիջի անվան դրամաշնորհ, որի արդյունքում էլ համալսարանում բացվել է համակարգչային համանուն երկու կենտրոն:

[28.09.06] **ԲԱՑՎԵՑ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑ**
Հայաստանի ժուռնալիստիկան միջազգային չափանիշներին մոտեցնելու նոր հնարավորություն ստեղծվեց: Սեպտեմբերի 28-ին Երեւանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետում կայացավ «Ժուռնալիստիկայի հայկական դպրոց» մագիստրոսական նոր միջազգային ծրագրի շնորհանդեսը:

[29.09.06] **ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ**
«ՈՒրախ եմ, որ ԵՊՀ նորակառույց մասնաշենքի հարեւանությամբ ձգվող գորշ պատին արված գրաֆիտիները ոչ միայն ուսանողներին արտահայտվելու հնարավորություն ընձեռեցին, այլեւ լուծեցին պատի գունապատման խնդիրը»,- նկատեց ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը:

[05.10.06] **ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՊՀ-ՈՒՄ**
«Եվրամիությանը միանալ ցանկացող երկիրը պետք է ունենա զարգացած տնտեսություն, առօրյա կյանքը պետք է նմանվի այդ երկրների կյանքին: Ամեն մի քաղաքացի պետք է հարուստ լինի իր երկրում»,- ասաց Ռումինիայի նախագահ Տրայան Բասեսկուն:

[18.10.06] **ԵՍ ՈՉ ՈՔԻ ՉԵՄ ՆԱԽԱՆՁՈՒՄ**
Հոկտեմբերի 18-ին ԵՊՀ Չարենցի անվան դահլիճում հյուրընկալվեց աշխարհահռչակ օպերային երգչուհի Հասմիկ Պապյանը: Երգչուհին հակիրճ խոսեց իր մասին եւ սիրով պատասխանեց ուսանողների հարցերին:

[20.10.06] **«ՀԱՅՖԵՍՏԻՆ» ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷՐ ՆԱԵՎ ԵՊՀ-Ն**
Հոկտեմբերի 4-ից 14-ը Երեւանում անցկացվեց «Հայֆեստ» 4-րդ միջազգային թատերական փառատոնը: Այս տարի փառատոնի մասնակիցներն անհամեմատ շատ էին՝ 31 երկրից 75 ներկայացում:

[25.10.06] **ՆՇԵՑ ԻՐ 15-ԱՄՅԱԿԸ**
Հոկտեմբերի 25-ին ԵՊՀ մեծ դահլիճում ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետը մեծ շուքով նշեց իր 15-ամյակը:

[27.10.06] **ԵՐԿՈՒ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ**
Երեւանի պետական համալսարանում միանգամից երկու նոր ամբիոն է բացվել՝ իրավագիտության ֆակուլտետում՝ «Եվրոպական եւ միջազգային իրավունքի ամբիոնը», եւ համահամալսարանական «Եվրոպական իրավունքի եւ ինտեգրման կենտրոնը»:

[03.11.06] **ԲԵՐՆԱՐԴ ԴՅՈՒՐԱՆԸ ԵՊՀ ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐ Է**
«Դիպլոմի հանձնումը, ըստ իս, շատ խորհրդանշական է. սա համագործակցության նոր փուլի սկիզբն է: Կարծում եմ՝ ԵՊՀ-ի հետ մեր համագործակցությունը բավականաչափ ակտիվ չէ, մենք ամեն ինչ կանենք այս բացթողումը շտկելու համար»,- ասաց ԵՊՀ պատվավոր դոկտոր Բերնարդ Դյուրանը:

[06.11.06] **ԵՊՀ-Ն ԱՌԱՋԻՆ ՏԵՂՈՒՄ Է**
Հոկտեմբերի 4-ին ԵՊՀ-ում անցկացվեց ACM ICPC ծրագրավորման ուսանողական թիմային միջազգային օլիմպիադայի հայաստանյան քառորդ եզրափակիչ փուլը:

[10.11.06] **ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ՍԿՍՎՈՒՄԷ ԵՊՀ-ԻՑ**
Սինչեւ 2007 թ-ի մայիս կընդունվի «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն»-ը:

[18.11.06] **ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՌԵԿՏՈՐԸ ԵՊՀ-ՈՒՄ**
Նոյեմբերի 17-ին ԵՊՀ ուսանողների եւ դասախոսների հյուրն էր ՌԴ արտաքին գործերի նախարարությանը կից դիվանագիտական ակադեմիայի ռեկտոր Ալեքսանդր Պանովը:

[01.12.06] **ՄԵՎ ՇԵՆՔԸ՝ 100 ՏԱՐԵԿԱՆ**
Նոյեմբերի 29-ին ԵՊՀ պատմության, տնտեսագիտության եւ աստվածաբանության ֆակուլտետները, որոնք այժմ տեղակայված են «Սեւ շենքում», նշեցին իրենց մասնաշենքի 100-ամյա տարեդարձը:

[04.12.06] **ՄԱՅՐ ԲՈՒՀԸ ՆՈՐՈՎԻ ՆԵՐԿԱՅԱՑԱՎ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻՆ**
«Երեւանի պետական համալսարանը զանգվածային լրատվամիջոցներում» թեմայով սեմինար-քննարկումն անցկացվեց ԵՊՀ Ծաղկաձորի ուսումնաարտադրական բազայում:

[06.12.06] **ՀԱՍԱԼՍԱՐԱՆԻ ԹԻՄԸ ԱՌԱՋԻՆ ՏԵՂՈՒՄ Է**
Ծրագրավորող ուսանողների միջազգային մրցույթին Երեւանի պետական համալսարանի թիմը ցուցաբերեց լավագույն արդյունքները:

[15.12.06] **ՌՈՄԱՆՈԳԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՀ ՈՒՆԻ**
ԵՊՀ ուսանողական խորհրդի նախագահ ընտրվեց նախորդ չորս ամիսներին ՌԱԽ նախագահի պաշտոնակատար, ինֆորմատիկայի եվ կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի ուսանող Համլետ Մանուկյանը:

[18.12.06] **ԳՈՒՐԳԵՆ ՍԵԼԻՔՅԱՆԸ 70 ՏԱՐԵԿԱՆ Է**
«Այսօր մտավորական կոչվելու իրավունք ունեն միայն այն մարդիկ, ովքեր տալիս են շատ, ստանում քիչ եւ բավարարվում են այդ քչով: Երջանիկ է նա, ով գիտե այդպես նվիրվել գործին»,- ասում է իր կյանքի 70 տարիներից 50-ը ԵՊՀ-ին նվիրած մտավորականը:

[18.12.06] **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀՅՈՒՐԸ ՎԱՐԴՈՒՀԻ ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆՆ ԷՐ**
«Նա մեր վերջին մոհիկաններից է: Մենք պարտավոր ենք անել ամեն հնարավորը, որ ուսանողները անձամբ շփվեն Վարդուհի Վարդերեսյանի նման մեծությունների հետ, ճանաչեն ու գնահատեն նրանց»,- ասաց ԵՊՀ մշակույթի կենտրոնի տնօրեն Կարինե Դավթյանը:

[27.12.06] **ԸՆԴՈՒՆՎԵՑ ԵՊՀ ՌԵԿՏՈՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ**
Երեւանի պետական համալսարանի խորհրդի տարեվերջյան ամփոփիչ նիստը դեկտեմբերի 27-ին էր:

[23.01.07] **ԼՌԵՑ ՊԱԼՅԱՆ ՀԱՅԻ ՁԱՅՆԸ**
Վախճանվել է Երեւանի պետական համալսարանի անվանի դասախոս, ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի դոցենտ, շարականագետ, խմբավար եւ երգիչ Խորեն Պալյանը:

[24.01.07] **Մ ՊԱՆԵՑԻՆ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ՀԱՅ Է**
Երեւանի պետական համալսարանի ուսանողները դատապարտում են Թուրքիայի հայ լրագրող Հրանտ Դինքի սպանությունը:

[26.01.07] **ՆՇՈՒՄ ԵՆՔ ՔԱՆԱԿԻ 15-ԱՄՅԱԿԸ**
«1992 թ-ի հունվարի 28-ին Հայաստանի կառավարությունը ընդունեց «ՀՀ պաշտպանության նախարարության մասին» հիրավի պատմական որոշումը»,- իր ելույթում նշեց ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, գեներալ-գնդապետ Սիքայել Հարությունյանը:

[29.01.07] **ՎԱՉԳԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԸ 70 ՏԱՐԵԿԱՆ Է**
«Նրա գրիչը գրել է ե'ւ անցած դարի արհավիրքների ու մեծագույն երեւույթների, ե'ւ մեր օրերի նշանակալից իրադարձությունների մասին: Նա պատմության մեջ է եւ մեր օրերում»:

[08.02.07] **ՕԳՏՎԵ'Ք ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻՑ**
Գիտական աշխատանք գրելու համար, եթե ձեզ անհրաժեշտ են հումանիտար ու բնագիտական ոլորտներին վերաբերող գիտական հոդվածներ, կարող եք գրել elpub@ysu.am էլեկտրոնային հասցեով:

[09.03.07] **ԻՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ**
Մարտի 9-ին ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ալեքսանդր Գրիգորյանը հյուրընկալեց ԱՄՆ-ի Քոնեքթիքուտի համալսարանի սոցիալական աշխատանքի դպրոցի՝ Հայաստան ժամանած ուսանողներին:

[13.03.07] **ԾՆՈՒՆԴԴ ՇՆՈՐՀԱՎՈՐ, ՉԱՐԵՆՑ**
Չարենցն անմահ է, իսկ նրա պոեզիան՝ անծայր:

[14.03.07] **ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼՅԱՆԻ ԿԻՍԱՆԴՐԻՆ ԵՊՀ-ՈՒՄ**
«Այսուհետ համալսարանի կենտրոնական մասնաշենք մտնող ամեն մի մարդ կզգա մեծանուն գործչի բրոնզաձույլ ներկայությունն ու լուռ կողջունի նրան»,- իր ելույթում նշեց ԵՊՀ ռեկտոր, պրոֆեսոր Արամ Սիմոնյանը:

[21.03.07] **ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ՅՈՒՅԱԴՐԵԼՈՒ ՀՐԱՇԱԼԻ ԱՌԻԹ**
«Ուսուցումը Հայաստանում 2007» VI միջազգային ցուցահանդեսին այս տարի առաջին անգամ մասնակցեց նաեւ ԵՊՀ-ն:

[27.03.07] **ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ**
Խորապես վշտացած ենք ՀՀ վարչապետ, պետական ու քաղաքական ակնառու գործիչ Անդրանիկ Մարգարյանի անժամանակ մահվան կապակցությամբ:

[29.03.07] **ԳՆԱՀԱՏՎԵՑ ՄԻՋԱԶԳԱՅՆՈՐԵՆ**
ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Գառնիկ Անանյանը միջազգային պարգեւ է ստացել:

[03.04.07] **ԵՊՀ-ՈՒՄ ԾԽԵԼՆ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է**
«Ծխախոտի իրացման, սպառման եւ օգտագործման սահմանափակումների մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարումն ապահովելու նպատակով Երեւանի պետական համալսարանի ռեկտոր Արամ Սիմոնյանը մարտի 20-ին ընդունել է հրաման ԵՊՀ մասնաշենքերում ծխելն արգելելու մասին:

[03.04.07] **ՆՈՐԱՅՐ ՍԻՍԱԿՅԱՆԻ 100-ԱՄՅԱԿԻՆ**
Գենետիկայի վերածնունդը Խորհրդային Միությունում հենց նրա շնորհիվ էր:

[04.04.07] **ԷՆԹՈՆԻ ԳՈԴՖՐԻՆ ԵՊՀ-ՈՒՄ**
«Ես կարծում եմ, որ բանակցային այս փուլում Ղարաբաղին՝ որպես բանակցող կողմ, ներգրավելը բանակցության համար հետընթաց քայլ կլինի»,- ասաց Էնթոնի Գոդֆրին:

[16.04.07] **ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՂ ԳՐԱԴԱՐԱՆ**
Այսուհետ ուսանողը կարող է իրեն անհրաժեշտ գիրքը փնտրել եւ գտնել հայաստանյան 14 գրադարանների համահավաք էլեկտրոնային քարտարանում:

[16.04.07] **ԱՄԲԻՈՆԸ 10 ՏԱՐԵԿԱՆ Է**
Ապրիլի 16-ին ԵՊՀ «Սեւ շենքում» նշվեց ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայ արվեստի պատմության եւ տեսության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոնի հիմնադրման տասնամյակը:

[26.04.07] **ՄԱՅՐ ԲՈՒՀԻ ԼԵԳԵՆԴՆԵՐԸ**
Երեւանի պետական համալսարանի զոհված ուսանող ազատամարտիկների «Վարդանանք» ռազմահայրենասիրական դաստիարակության ակումբը 10 տարեկան է:

[27.04.07] **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀՅՈՒՐԸ ՀՀ ՆԱԽԱԳԱՀՆ ԷՐ**
«Հայաստանում բազմակարծությունը ակնհայտ է, նույնիսկ մի քիչ շատ է: Այն երբեմն կարող է շփոթություն առաջացնել»:

[03.05.07] **ԻՆՏԵԳՐՎՈՒՄ ԵՆՔ ԵՎՐՈՊԱՅԻՆ**
Մայիսի 3-ին ԵՊՀ գրադարանի սրահում տեղի ունեցավ Եվրոպական իրավունքի եւ ինտեգրման կենտրոնի բացման արարողությունը:

[03.05.07] **ՎԱՐՉԱՊԵՏԸ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍԱՀԻՆ**
«Ավելի լավ է պետպատվերի շրջանակներում ընդունվող ուսանողների թիվը սահմանափակել, բայց այն ուսանողը, որին մենք պատրաստում ենք, դառնա լիարժեք մասնագետ եւ օգուտ բերի»:

[04.05.07] **ԻՆՔՆԱԲՈՒԽ ՇԱՐԺՈՒՄ**
Կրթական հիմնախնդիրներով մտահոգված ուսանողներն այսօր իրենց պահանջը նամակով ներկայացրել են ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանին:

[08.05.07] **ՊԱՏԱՄԽԱՆԸ ՉՈՒՇԱՑԱՎ**
«Հայաստան, Հայաստան…», «Կեցցե Հայաստանը» բացականչություններով այսօր Երեւանի պետական համալսարանի մեծ դահլիճում ուսանողները դիմավորեցին ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանին:

[14.05.07] **ԿԱՐԾ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԿՐԻ ՀԵՏ**
Մայիսի 14-ին Երեւանի պետական համալսարանի հյուրը հայտնի տիեզերագնաց, պրոֆեսոր Յուրի Բատուրինն էր:

[18.05.07] **ՀՅՈՒՐԵՐ ՎԱՐՇԱՎԱՅԻՑ**
ԵՊՀ ռեկտորի հրավերով Երեւան էր այցելել Կարդինալ Ստեֆան Վիշինսկու անվան համալսարանի պատվիրակությունը՝ ռեկտորի գլխավորությամբ:

[29.05.07] **ՄԵՆՔ՝ ՈՒՀԱ ՉԵՄՊԻՈՆ**
ՈՒրախների եւ հնարամիտների ակումբի ուսանողական լիգայի եզրափակիչ փուլում հաղթեց ԵՊՀ թիմը:

[08.06.07] **ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
Հունիսի 9-ին Երեւանի պետական համալսարանի եւ Գերմանիայի Տրիերի համալսարանների միջեւ կնքվեց համագործակցության պայմանագիր:

[15.06.07] **ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ-2007**
21 ուսանողներ Երեւանի պետական համալսարանի բոլոր ֆակուլտետներից արժանացան «Լավագույն ուսանող - 2007» մրցանակին:

[22.06.07] **ՊԱՀԱՆՋՎՈՒՄ Է ԱՇԽԱՏՈՂ**
Սեկնարկեց «Տեղեկատվական տեխնոլոգիաների կարիերայի առաջին ցուցահանդես-2007»-ը:

[25.06.07] **ՆՈՐ ԱՄԲԻՈՆ, ՆՈՐ ՍԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**
Ամբողջ աշխարհում օրեցօր ավելի մեծ պահանջարկ ունեցող ակտուար մաթեմատիկայի մասնագետներ այսուհետ պաշտոնապես կպատրաստի նաեւ ԵՊՀ-ն:

[27.06.07] **ԼՈՒԾՎՈՒՄ ԵՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԼՈՒՐՋ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**
Երեւանի պետական համալսարանի երիտասարդ գիտնականները շուտով կապահովվեն բնակարաններով:

[27.06.07] **ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՊՀ ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐ Է**
Պաշտոնական այցով Հայաստան ժամանած Հունաստանի նախագահ Կարոլոս Պապուլիասը հունիսի 27-ին ԵՊՀ հյուրն էր:

[20.08.07] **ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԵՆԱԽՈՇՈՐ ԳԻՏԱԺՈՂՈՎՆ ԱՆՑԿԱՑՎՈՒՄ Է ԵՊՀ-ՈՒՄ**
Այսօր ԵՊՀ կենտրոնական մասնաշենքի մեծ դահլիճում մեկնարկեց աստղագիտական «JENAM 2007» գիտաժողովը:

[30.08.07] **ՄԻԿՐՈԷԼԵԿՏՐՈՆԻԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**
Միկրոէլեկտրոնիկայի հայաստանյան երկրորդ օլիմպիադան կմեկնարկի սեպտեմբերին:

[30.08.07] **ԵՊՀ-ՈՒՄ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԿԱ**
Երեւանի պետական համալսարանում 28 մասնագիտությունների գծով հեռակա ուսուցման ծրագիր է իրականացվում: